

Անտիս Ժափազեան



**ՀԱՒԱՍՏԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊՈՒՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**



9(47.925)

Ք-31

հշ.

Աւերիս Փափազեան

ՀԱՐԱՍՏԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

5691

Լուս Անճելրս

2007



Այս գրքի հովանաւորութիւնը ստանձնեցին՝

Տէր եւ Տիկին Փիեռ եւ Ասպէրուիի

Սիմոնեանները



Հեղինակը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը
յարգարժան մեկենասներին

«Մէն մի վերապրող տարագիր իր առանձին պատմութիւնը ունի. մէկունը միւսէն այնքան եղբրական, այնքան առանձնայատուկ ու սրտակեղէք, այնքան քստմնելի, որոնցով կարելի էր երկարապատում հատորներ լեցնել եւ կազմել աշխարհի ամենամեծ եղեռնագործութեան հսկայ պատմութիւնը, եւ զոր գրելու համար, ըստ Նարեկացոյն, ծովերը թանաք ըլլան, շամբուտները՝ գրիչ, եւ անհուն տարածութիւնք՝ դաշնօրէից թուղթ, անբաւական էին լիովին պարփակելու-պատկերելու գայն»:

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲԻԿԵԱՆ

«Եղեռնապատում»

Պոսթըն, 1924, էջ 506.

Առաջաբան

Արեւմտահայութեան զանգուածային կոտորածների եւ յատկապէս 1915թ. երիտթուրքական կառավարութեան կողմից կազմակերպուած եւ գործադրուած մեծ եղեռնի վերաբերեալ առ այսօր հրատարակուել եւ դեռ շարունակուում են հրատարակուել բազմաթիւ լեզուներով ուսումնասիրութիւններ, վաւերագրերի ժողովածուներ, ականատեսների վկայութիւններ, վերապրողների յուշագրեր, տարբեր երկրների դեսպանութիւնների պաշտօնական զեկուցագրեր, եւայլն:

Այս հատորը հիմնականում բովանդակում է 2005թ. հայոց մեծ եղեռնի 90-ամեայ տարելիցին նուիրուած հեղինակի հետեւեալ երկու յօդուածաշարքերը:

Ա. Մեծ եղեռնի վերապրողների վկայութիւնները:

Բ. Օտար գործիչների վկայութիւնները հայոց ցեղասպանութեան մասին:

Հատորի սկզբում, որպէս պատմական ակնարկ՝ «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» խորագրի տակ տրում է Սուլթան Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում եւ այնուհետեւ երիտթուրքերի իշխանութեան օրօք գործադրուած հայաջինջ քաղաքականութիւնը:

Բերուած նիւթերը լիովին հաստատում են 20-րդ դարի սկզբում տեղի ունեցած հայերի ցեղասպանութիւնը:

Առաջին յօդուածաշարքը լոյս է տեսել «Նոր Կեանք» շաբաթաթերթի Փետրուար-Օգոստոս, իսկ երկրորդը՝ «Նոր Օր» շաբաթաթերթի Փետրուար-Յուլիս համարներում:

Առանձին գրքով հրատարակելու ընթացքում, ընդգրկուեցին նաեւ այս թեմայի հետ առնչուող հեղինակի նախկինում եւ 2006-2007 թթ. գրի արած յօդուածները, որոնք լոյս են տեսել «Նոր Հայաստան» օրաթերթում եւ «Մասիս» շաբաթաթերթում:

Մաս Առաջին

Մեծ եղեռնի ականատես վերապրողների վկայութիւնները, յուշերը, նամակները, աղիողորմ ողբալի երգերը հաւաստի սկզբնաղբիւր են եւ անսակարկ վաւերականութեամբ հաստատում են 20-րդ դարի սկզբում հայ ժողովրդի նկատմամբ գործադրուած առաջին ցեղասպանութիւնը:

Վերապրողները մանուկ կամ պատանի հասակում իրենց ծնողների հետ բռնի տեղահանուել են Արեւմտեան Հայաստանի տարբեր շրջաններից, քաղաքներից, գիւղերից եւ ականատես եղել հայութեան սպանդին: Մի կերպ ազատուելով մահուան ճիւղաններից, սովից, հիւանդութիւններից, որբանոցներում բարեխիղճ մարդկանց ներդրած ջանքերի շնորհիւ ապրել են, մեծացել եւ կրկին վերադարձել իրենց ծնող ժողովրդի գիրկը:

Անցել է 92 տարի եւ իրաջքով ազատուած վերապրողները այսօր համարեայ թէ հեռացել են այս աշխարհից, բայց շատերի եղեռնային յուշերը փոխանցուել են իրենց ժառանգներին: Այնպէս որ, այդ յուշերի հաւաքման ու հրատարակման գործը դեռեւս շարունակուում է նաեւ մեր օրերում:

Այս բոլորով հանդերձ, Հայոց Մեծ եղեռնի տարելիցների նախօրեակին թուրքական կառավարութիւնը, «Թուրքական Պատմութեան Հիմնարկութիւնը» (Türk Tarih Kurumu) առանձին կազմակերպութիւններ առաւել թեժացնում են մթնոլորտը, ժխտելու համար 20-րդ դարի սկիզբին Երիտ-թուրքերի կողմից գործադրուած հայոց ցեղասպանութիւնը:

Մեծ եղեռնի 92-ամեայ տարելիցին նուիրուած մեր այս աշխատութեան մեջ վերապրողների գրքերից բերել ենք որոշակի տեղեկութիւններ առաջաբաններից եւ առանձին հատուածներ քաղուած նրանց վկայութիւններից:

Այդ գրքերի մեծ մասը այսօր հազուագիւտ են եւ անմատչելի ընթերցող լայն հասարակութեան համար:

Բնականաբար այս յօդուածաշարքում բերուած գրքերի շարանով չի սահմանափակուում Մեծ եղեռնից վերապրողների վկայութիւնները:

Այս մասին զգալի նիւթեր կան նաեւ Արեւմտեան Հայաստանի քաղաքների ու գիւղերի պատմութեան նուիրուած գրքերում, յուշամատեններում, ուր խօսուում է նաեւ Մեծ եղեռնի ընթացքում հայ ժողովրդի կրած տառապանքների, Երիտթուրքերի գործադրած բռնի տեղահանութեան եւ բնաջնջման դաժանութիւնների մասին:

«Արեւմտահայութեան Համայնքներու Յուշամատենները» խորագրով բժիշկ Սարգիս Ե. Գարայեանը մամուլում հրատարակած յօդուածում, անհրաժեշտ ծանօթագրութիւններով եւ մեկնաբանութեամբ բերել է 134 հատորներից բաղկացած այդ գրքերի ցանկը: Իր եզրակացութեան մեջ Սարգիս Գարայեանը նշում է. «Այս յօդուածին

մէջ տրուած հարիւր երեսուկէ աւելի հատորները որ կը կազմեն մօտ 75,000 էջ, կու տան Արեւմտահայութեան մասնակի պատմութիւնը միայն: Այսուամենայնիւ, անոնք պերճաբան ապացոյցը կը հանդիսանան անհերքելի այն իրողութեան, թէ թուրքը կատարած է 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը» (Տէն «Նոր Կեանք», Յունուար 6, 13, 2005: «Նոր Օր», Յունուար 8, 15, 2005):

Այնպէս որ յետագայում շարունակուելու են այս ուղղութեամբ կատարուող մեր աշխատանքները, որպէսզի ամբողջական պատկերացում կազմուի Մեծ Եղեռնի վերապրողների թողած գրաւոր ժառանգութեան, ինչպէս նաեւ օտար գործիչների փաստագրական վկայութիւնների մասին:

Մաս Երկրորդ

Մեծ Եղեռնի ընթացքում եւ յետագայում աշխարհի տարբեր ազգութիւնների պատմաբաններ, հրապարակախօսներ, լրագրողներ, դիւանագետներ, ինչպէս նաեւ պետական բարձրաստիճան գործիչներ, իրենց էլոյթներում, յօդուածներում եւ աշխատութիւններում ցատուով դատապարտելով երիտթուրքերի կողմից կատարած հրեշտար չարագործութիւնները հայ ժողովրդի նկատմամբ, հաւաստի եւ անաչար գնահատական եւ վկայութիւններ են տուել հայերի ցեղասպանութեանը:

Այնպէս որ 1915-1923 թթ. Հայոց Ցեղասպանութեան վերաբերող կան բազմաթիւ փաստագրական նիւթեր, այդ թում նամակներ, հեռագրեր, բարձրաստիճան դիւանագետների զեկոյցներ, ականատեսի վկայութիւններ, որոնք բոլորն էլ հաւաստի են եւ ճշգրիտ պատկերացում են տալիս 20-րդ դարի սկզբում կատարուած հայ ժողովրդի մեծագոյն ողբերգութեան մասին: Աշխարհի տարբեր արխիւներում ու գրապահոցներում գտնուող այդ նիւթերի մեծ մասը հրապարակուած են անգլերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, իսպաներէն, հայերէն եւ այլ լեզուներով:

Դեռեւս այսօր էլ փաստավաւերագրական նիւթերի հրապարակումը շարունակուած է եւ պիտի շարունակուի, քանի որ դրանք անսակարկ հաստատում են Հայոց Ցեղասպանութիւնը:

Ընթերցողին ներկայացուող այս երկրորդ յօդուածաշարքում տրուած է անցած 92 տարիների ընթացքում Հայոց Մեծ Եղեռնի վերաբերող օտար հրատարակութիւններից առանձին հատուածներ:

Սոյն հատորում առանձին պատառիկներ հրապարակելով օտար գործիչների գրքերից եւ ականատեսների վկայութիւններից, ցանկացանք երիտասարդ սերնդի ուշադրութիւնը բեւեռել եւ գոնէ մասամբ ծանօթացնել եւ յարգանքի տուրք մատուցել նաեւ դրանց հեղինակների յիշատակին:

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԱՊՏՈՒ ՀԱՄԻՏԻ ԲՈՆԱՎՏԻՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1878 թ. Պերլինի վեհաժողովից յետոյ, երբ հայկական հարցը միջազգային բնոյթ ընդունեց, սուլթանական կառավարութեան ազգային ու կրօնական հալածանքները, կեանքի ու զոյքի ապահովութիւնը, հարկային ծանր լուծն ու դաւառային պաշտօնեաների չարաշահումներն աւելի մեծ չափերի հասան: «Խիստ հսկողութեան տակ առնուեցին հայ պաշտօնեաները եւ հայկական հրատարակութիւնները: Այդ պահից սովորական երեւոյթ դարձաւ աքսորը: Կուսակալների կողմից քննութեան առնուեցին հայոց եկեղեցիների եւ դպրոցների մասին տրուած հրովարտակները, փակուեցին այն հայկական դպրոցները, որոնք բացուել էին ոչ թէ հրովարտակով, այլ միայն կառավարութեան թոյլտուութեամբ: Խստութիւններ ու բռնութիւններ գործադրուեցին նաեւ հարկերի գանձման հարցում»¹, գրել է թուրք գործիչ՝ Օսման Նուրին: Հրահանգ տրուեց մամուլի գրաքննչական վարչութեան՝ արգելել «Հայաստան» բառի, հայ ժողովրդի պատմութեանը եւ աշխարհագրութեանը վերաբերող անունների յիշատակումը: Բնականաբար այս բոլորը նախաձեռնուած եւ հրահանգուած էր Սուլթան Ապտուլ Համիտի կողմից:

Պերլինի վեհաժողովից անմիջապէս յետոյ Օսմանեան կայսրութեան մեծ վէճիւր հայատեսաց Քեամիլ փաշան ցինիկաբար յայտարարում էր. «Հայ ազգը վերացնելու, անհետ եւ անձիտ ընելու ենք: Եւ այդ ի դուրս հանելու համար բան չի պակսի մեզ. ամէն գործիք պատրաստ ունինք՝ քուրտ, չէրքէզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապէս ամենայն ինչ, կրօնական պատերազմ մը կը հրապարակենք եւ դիւրին պատերազմ այնպիսի ազգի մը դէմ, որ ո՛չ զէնք ունի, ո՛չ զինուորութիւն եւ ո՛չ պաշտպան, երբ ընդհակառակն, մենք զէնք էլ ունինք, զինուորութիւն էլ, աշխարհիս ամենամեծ տէրութիւններէն մէկը (Անգլիան-Ա.Փ.) եւ ամենէն հարուստը մեզ զինակից է եւ մեր Ասիական աշխարհքին երաշխաւոր: Եւ եթէ այդ հայ ազգը բնաջինջ լինի եւ քրիստոնեայ Եւրոպայ կրօնակից մը փնտռէ եւ չի գտնէ տաճկական Ասիոյ մէջ, կը թողու զմեզ հանգիստ եւ այն ատեն կը գրադինք ներքին գործերով եւ բարեկարգութեամբ»²: Քեամիլ փաշայի այս նենք մտայղացումը իրօք որ դարձաւ արեւմտահայութեան բնաջինջման հարցում թուրքական պետական քաղաքականութեան առանձրը:

1891 թ. Ապտուլ Համիտի նախաձեռնութեամբ կազմակերպուեցին հիմնականում քրտերից կազմուած անկանոն զորագնդեր, որոնց գլխաւոր նպատակներէրց մէկն էր հայածել ու կոտորել հայ բնակչութիւնը: Ժամանակի մեծ վէզիրներէրց Սայիտ փաշան ահա թէ ինչ բնութագրութիւն է տալիս այդ զորագնդերին իր յուշագրութեան մէջ. «Համիտիէ հեծելագնդերը, տուրքերից ազատուած լինելով հանդերձ, իրենց շահերի համար բռնութիւններ են գործադրում բնակչութեան վրայ: Թէ՛ վիլայէթի (վարչութեան) եւ թէ՛ բնակչութեան բողոքներից պարզուում է, որ Տիրապէքիրի շրջանում գտնուող «Համիտիէ» հեծելագնդի հրամանատար Մուսթաֆա փաշան, որը նաեւ աշիրէթի առաջնորդն է, զինուած աշիրէթի մարդկանց, բառիս բուն իմաստովը, դարձրել է բռնութիւն գործադրելու կատարեալ մի գործիք, վտանգելով շրջանի բնակչութեան ապահովութիւնն ու անդորրը»³:

Հայերին զանգուածաբար բնաջնջելով եւ նրանց թիւը արհեստականորէն նուազեցնելով, թուրքական կառավարութիւնը ձգտում էր մոռացութեան մատնել Պերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը, ինչպէս նաեւ մայիսեան բարենորոգումների ծրագիրը: Միեւնոյն ժամանակ սուլթանական կառավարութիւնը մեծ ջանքեր էր թափում թուլացնելու եւ ապակողմնորոշելու միջազգային հասարակայնութեան կարծիքը կոտորածների կապակցութեամբ:

Արխիւային նիւթերը ցոյց են տալիս, որ հայերի բնաջնջման խնդրում կատարուող բարբարոսային կոտորածներից բացի Ապտուլ Համիտը սիստեմատիկաբար կիրառել է նաեւ հետեւեալ նենգ ու դաժան գործօնները, որոնք պիտի նպաստէին հայերի վերացման Օսմանեան կայսրութիւնում. բռնի մահմետականացում, կրօնական սրբապղծութիւն, հայապատկան հողերի եւ ունեցուածքի կողոպուտ, ծանր հարկային քաղաքականութիւն, ստիպողական արտագաղթ, անտեղի ձերբակալութիւններ, բանտ եւ աքսոր. միտումնաւոր վարչական փոփոխութիւններ կատարելու միջոցներով հայերի թուաքանակը նուազեցնելու քաղաքականութիւն: Երկրի երեսից ջնջել հայաբնակ գիւղերն ու ավանները, վանքերն ու եկեղեցիները, փոփոխել հայկական բնակավայրերի անուանումները եւայլն:

Հարկային ծանր գանձումների, կողոպուտի, կաշառքի, եկեղեցիների եւ վանքերի սրբապղծման եւ աւերման, մարդկային տարրական իրաւունքների ոտնահարման նկարագրութիւնը հայաբնակ նահանգներում տրուած է Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Մատթէոս Իգմիրլեանի կողմից 1895 թ. Փետրուարի 8-ին Թուրքիայի Արդարադատութեան եւ պաշտամունքների նախարար՝ Ռեզա փաշային ուղղուած ուղերձում, որտեղ մասնաւորապէս ասուած է. «Հարկերը հաւաքելու

համար պետութիւնն 80-ական հեծեալ ոստիկաններ է ուղարկում այնպիսի գիւղեր, որոնք 30 ծխից աւելի չունեն եւ գիւղացիներն ստիպուած են կացարան եւ սնունդ տրամադրել մարդկանց ու ձիերին: Հարկահաւաքները փայտերով ծեծում են գիւղացիներին ու ծխական քահանաներին, անարգում են քրիստոնէական կրօնը եւ պաշտամունքի առարկաները: Նրանք խլում տանում են երկրագործական գործիքները, վերջին իսկ հագուստն են պոկում նրանցից ովքեր չեն կարող հարկը տեղնուտեղը վճարել: Իսկ նրանց, ովքեր բնաւ, ոչինչ չեն ունենում, բանտ են նետում: ...Գիւղացիները, կայսերական գանձարանին վճարուող հարկերից բացի, պարտաւոր են նաեւ քիւրտ աւատապետերին վճարել մի հարկ, որը յայտնի է քեաֆիրատ (անհաւատների հարկ) անուանումով»⁴:

Արեւմտեան Հայաստանը հայթափ անելու միջոցներից մէկն է եղել բռնի արտագաղթի հետեւողական քաղաքականութեան իրականացումը թուրքական կառավարութեան կողմից: Այս երեւոյթը տեղի է ունեցել ոչ միայն կոտորածի օրերին, այլեւ յետագայ քիչ թէ շատ խաղաղ տարիներին, այն նենգ նպատակով, որպէսզի հայութիւնը ի սպառ չքանայ իր հայրենիքից:

Բանտային տանջանքների եւ ամէնօրեայ հալածանքների սպառնալիքի ազդեցութեան տակ հայերը ստիպուած լքել են իրենց բնակավայրերը եւ հեռացել դէպի Ռուսաստան եւ այլ օտար երկրներ:

Թուրքական կառավարութիւնը յաճախ բռնի տեղահանութիւններ է կատարել հենց երկրի ներսում, յատկապէս լեռնաբնակ վայրերից դէպի դաշտային շրջանները: Օրինակ, այդպիսի բռնի տեղահանութեան է ենթարկուել Սասունի գիւղերի բնակչութիւնը դէպի Մշոյ դաշտ, որպէսզի գրկուեն իրենց պաշտպանելու հնարաւորութիւնից: Իսկ հայթափ եղած գիւղերում եւ քաղաքներում թուրքական իշխանութիւնները բնակեցնում էին այլ վայրերից տեղափոխուած թուրք, քուրտ եւ այլ մահմետական զաղթականներին: Որպէսզի պատկերացումը կատարեալ լինի այս կապակցութեամբ ամբողջութեամբ բերում ենք Պէյրութի ռուսական հիւպատոս Կ. Լիշինի 1898 թ. Սեպտեմբերի 12-ին Կ. Պոլսի ղեսպանին ուղղուած հետեւեալ զեկուցագիրը.

«Վերջին ժամանակներս այստեղ լուրեր են տարածուում մահմետականներին հաւաքագրելու մասին, որպէսզի բնակեցնեն Էրզրումի, Պիթլիսի եւ Վանի վիլայէթների ջարդից սպաննուած կամ փախած հայերին պատկանող հողերում: ...Չնայած տեղական թուրքական իշխանութիւնների բացասական պնդումներին, ինձ թւում է, թէ դէպի Ռուսաստանին սահմանամերձ մարզերը մոռուցմաններին արուող տեղափոխման հրաւէրը իրօք գոյութիւն ունի: Այդ միջոցառումը

կարծես թէ Կ. Պոլսից է հրահանգուած: Գաղթականներին մեծ արտոնութիւններ են խոստանում, տասը տարով ազատել զինուորական ծառայութիւնից, ճրի երթեւեկութիւն, ճրի հողաբաժին (հայկական, այսինքն՝ յարմար եւ համեմատաբար լաւ մշակուած հողերից) եւ դրամական նպաստ՝ ճանապարհի ու նոր տեղում բնակութեան առաջին երեք ամիսների համար, օրական երեք դուռուշ՝ տղամարդկանց, երկու դուռուշ՝ կանանց եւ մէկ դուռուշ՝ երեխաներին: Ըստ լուրերի, Պէյրութում ապրող ազդեցիկ շէյխ Ապտուլուհաման Նախասը հաւաքագրում է Հայաստան մէկնել ցանկացող մուսուլմաններին: Մատնանշում են մի քանի անձանց, որոնք գրուել են գաղթականների ցուցակում»⁵:

Ապտուլ Համիտի վարչակարգի հայահալած քաղաքականութեան դէմ ուղղուած ժողովրդական յուզումները լայն թափ ստացան յատկապէս Սասունում: Հայ ժողովուրդը սկսեց բուռն պայքար մղել թօթափելու թուրքական ծանր լուծը: 1890-ական թուականներից սկսած սասունցիները ինքնապաշտպանական կռիւներ մղեցին թուրք բռնակալների դէմ եւ շեշտակի հակադրոհներով ետ շարտեցին թուրքական յարձակումները: Սակայն թշնամու գերակշռող մարտական սպառազինութեան դէմ չկարողացան մինչեւ վերջ դիմակայել եւ ազատագրական պայքարը հասցնել իր յաղթական աւարտին:

1894 թ. Օգոստոսին թուրքական բանակը ծաւալուն յարձակում է նախաձեռնում Սասունի վրայ: Տեղի ունեցաւ մի սարսափելի ջարդ, որին զոհ գնացին հայ տղամարդիկ, կանայք եւ երեխաներ: Այն կատարել էին «Համիտիէ» քրտական զօրախմբերը եւ թուրքական կանոնաւոր բանակի զինուորները: Քեամիլ փաշայի յուշերում եւս պարզ կերպով նշում է, որ ջարդը տեղի է ունեցել Ապտուլ Համիտի հրամանով եւ այն իրագործել է Պիթլիսի Կ-րդ բանակի հրամանատարութիւնը, Մուշիր Ձէքի փաշայի գլխաւորութեան:

Սասունում յարակից հայաբնակ նահանգներում, ինչպէս նաեւ Կ. Պոլսում տեղի ունեցած կոտորածները մեծ յուզում առաջացրին ամբողջ քաղաքակիրթ աշխարհում: Բողոքների ճնշման ներքոյ, ի վերջոյ սուլթանական կառավարութիւնը համաձայնեց յանձնաժողով ուղարկել Սասուն՝ հանգամանքները ուսումնասիրելի համար: Սակայն այդ յանձնաժողովի հետաքննութիւններն առանձնապէս արդիւնք չտուեցին, քանի որ Ապտուլ Համիտը վաղօրօք յանձնառարել էր առանց քննութեան արդարացնել տեղական իշխանութիւններին եւ մեղադրանքը բարդել հայ գիւղացիութեան վրայ: Միւս կողմից մեծ տէրութիւնները, սեփական շահերից ելնելով, իրենց ներկայացուցիչներին հրահանգել էին չսրել յարաբերութիւնները թուրքական յանձնախմբի հետ:

Ժամանակակից թուրք պատմաբանները ժխտում են Սասունի հայութեան 1894 թ. կոտորածների փաստը: Բայց հաւ թէ ինչ էր զրել այդ մասին թուրք գործիչ Օսման Նուրին. «Անատոլիայից (իմա՝ Արեւմտեան Հայաստան - Ա.Փ.) հասած տեղեկութիւնները չափազանց աղետալի էին: Ջարդը շարունակոււմ էր սոսկալի չափերով: Քաղաքային եւ զինուորական իշխանութիւնների տուած հրամաններով քրտերը յարձակուել էին գիւղերի վրայ, բայց ետ էին մղուել, որից յետոյ զինուորական ուժեր ուղարկելու անհրաժեշտութիւն էր առաջացել: Այդ ժամանակ զինուորները այրել էին գիւղերը եւ կոտորել լրագմաթիւ մարդկանց»⁶:

Արեւմտահայ հոգեւոր առաջնորդներն ու մտաւորականութիւնը տասնամեակներ շարունակ դիմել են սուլթանական կառավարութեանը եւ աղերսել՝ թեթեւացնելու իրենց վիճակը, բայց դիմումներն ու աղերսանքը որեւէ արդիւնք չեն տուել: Գոյքի յափշտակումը, պատուի ու սրբութիւնների ամենաբիրտ ոտնահարումները, կրօնաբարոյական անարգանքը, կոտորածի սարսափը հայ բնակչութեանը հասցրել էին ծանր աստիճան՝ յուսահատութեան: Յատկանշական է, որ Թանգիմաթի շրջանի՝ սուլթանական կառավարութեան ազգային փոքրամասնութիւններին վերաբերող միջոցառումներից ոչ մէկը չէր կիրառոււմ կեանքում: Հայը երբեք չէր կարող իր դէմ կատարուած չարաշահումների համար բողոքել կառավարութեանը, քանի որ յանցադործութեան առկայութիւնը փաստելու համար նրան հարկաւոր էր երկու մահմետականի վկայութիւնը: Թուրքերի կիրառած դաժանութիւնը պատահական չէր, այլ՝ բնայատուկ եւ տեւական: Նրանց իրաւական սիստեմն իր էութեամբ ծայր աստիճան անարդար էր քրիստոնեայ հպատակների հանդէպ: Մահմետականը կարող էր առեւանգել, թալանել, սպաննել քրիստոնեային եւ ապահովաբար մնալ անպատիժ:

Իրականում հայկական հարցը, երբ Պերլինի վեհաժողովում դարձաւ միջազգային դիւանագիտութեան հարց, հայ ժողովրդի վիճակը առաւել վատթարացաւ: Սուլթանական կառավարութիւնն սկսեց իրագործել հայաշատ նահանգներում հայկական տարրը նօսրացնելու իր նենդ քաղաքականութիւնը: Ապտուլ Համիտն սկսեց կոտորածների միջոցով իրագործել Արեւմտեան Հայաստանն իր վաղեմի եւ իսկական բնակչութիւնից դատարկելու յանցագործ ծրագրերը:

Միւս կողմից Արեւմտեան Հայաստանի բարենորոգումների իրագործման վերաբերող 61-րդ յօդուածը դարձաւ մեծ պետութիւնների ձեռքին դիւանագիտական շահարկման առարկայ, որը ինչպէս տեսանք խիստ բացասական հետեւանք ունեցաւ արեւմտահայերի ճակատագրի համար:

Եզրակացնելով նշենք, որ Սուլթան Ապտուլ Համիտի գահակալութեան շրջանում, Սասունում եւ Օսմանեան կայսրութեան հայաբնակ այլ վայրերում, ինչպէս նաեւ Կ. Պոլսում տեղի ունեցած կոտորածներին զոհ գնացին մօտ 300,000 անմեղ հայեր: Այդքանն էլ ստիպողաբար լքեցին իրենց հայրենի բնօրրանը եւ տարագրուեցին օտար երկրներ:

Ծանօթագրութիւններ

1. Osman Nuri, Abdul Hamid Sani ve devri Saltanati, Istanbul, 1327, s. 838 (արաբատառ):
2. «Փորձ», Ազգային եւ գրական միամսեայ հանդէս, թիւ 7-8, Տփղիս, 1879, էջ 204-205:
3. Said Pasani Hatirati, Istanbul, 1328, c. 2, s. 372, (արաբատառ):
4. Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Մ.Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1991, էջ 73-74:
5. Նոյն տեղում, էջ 198:
6. Օսման Նուրի, նշլ. աշխ. էջ 828, 858:

ԵՐԻՏՅՈՒՐՔԵՐԻ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՋԻՆՋ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ԸՆԹԱՅՔՈՒԲ

1908 թ. Յուլիսին Օսմանեան կայսրութիւնում երիտթուրքերի յեղափոխութիւնից յետոյ հայ ժողովուրդը այն հաւատքն ունէր, որ սահմանադրութեան վերահաստատումով կ'ապահովուին մարդկային տարրական իրաւունքները, կեանքի, պատուի եւ ունեցուածքի անձեռնմխելիութիւնը:

Հաւատեսութեամբ ընդունելով սահմանադրութեան հռչակումը, շատերը միամտաբար կարծում էին, որ այն կեանքի կոչելով կրկին տէր կը դառնան Ապտուլ Համիտի ժամանակաշրջանում իրենցից բռնի խլուած հողերին, քանի որ իրենց ձեռքում գտնուում էին պաշտօնական կալուածագրերը: Մինչդեռ շատ շուտով պարզուեց, որ հակառակ հրապարակուած հրամանագրերին թուրք պաշտօնական անձինք բոլորովին անտարբեր էին մնում այդ բոլորի նկատմամբ:

Դժբախտաբար հայերի խանդավարութիւնը այդ ուղղութեամբ շատ կարճ տեւեց: Ատանայում եւ Կիլիկիայի մի շարք վայրերում տեղի ունեցած հայերի կոտորածը կրկին բացեց ժողովրդի սրտում խորացած Ապտուլ Համիտեան շրջանի արիւնահեղութեան ծանր վէրքերը:

Փաստերն անհերքելիօրէն վկայում են, որ Ատանայի նահանգում կազմակերպուած ջարդերը նախօրօք նախապատրաստուած եւ հրահրուած են երիտթուրքերի կուսակցութեան կողմից, որ հայերը ոչ մի մեղք չունէին եւ հայկական ապստամբութեան մասին նրանց յօրինած հեքիաթը լոկ պատրանք էր: Ապրիլեան այդ կոտորածների ընթացքում հայերը կորցրին 30 հազար մարդ:

Այո՛, տապալուեց արիւնոտ բռնակալը, բայց նրա հայաջինջ քաղաքականութիւնը սկսուեց աւելի հետեւողական եւ վայրագօրէն գործադրուիլ «Իթիհատ վէ Թերաքքի» (Միութիւն եւ առաջադիմութիւն) կուսակցութեան պարագլուխների գործադրած ջանքերով:

Շատ կարճ ժամանակից յետոյ յայտնի դարձաւ, որ գաւառներում կրկին տեղի են ունենում վայրագ սպաննութիւններ, բռնաբարութիւններ, ունեցուածքի յափշտակութիւններ, իսկ յանցագործները մնում էին անպատիժ: Հասկանալի է, որ հայկական հալածանքների հիմնական դրդապատճառը տուեալ ժամանակ կապուած էր հայկական հարցի աշխուժացման հետ, քանի որ հայաբնակ 6 նահանգներում (էրզրում, Վան, Պիթլիս, Տիարպէքիւր, Սվազ, Խարբերդ) բարեփոխումներ անցկացնելու նպատակով բանակցութիւններ էին տեղի ունենում:

մեծ տէրութիւնների շրջանակում: Չնայած այն ի վերջոյ ստորագրուեց թուրքական կառավարութեան կողմից (Յունուար 26, 1914 թ.), սակայն հենց սկզբից թուրքերը դէմ էին դրսից պարտադրուող բարենորոգումներին եւ հսկողութեանը: Յետագայում Առաջին Համաշխարհային Պատերազմի մէջ մտնելուց յետոյ, Թալեաթը, Ճեմալը եւ միւս պարագլուխները բացայայտ յայտարարում էին այն, որ իրենք մտան պատերազմի մէջ, որպէսզի ազատուեն իրենց վզին փաթաթուած նման պարտադրանքներից:

Ելնելով հայերի օրհասական ծանր վիճակից Կ. Պոլսի հայ պատրիարքութիւնը բազմիցս բանաւոր եւ զրաւոր բողոքագրեր է յղել Բարձրագոյն դրանը, որտեղ փաստացի տուեալներով յայտնուում է տեղի ունեցող անարդարութիւնների, չարաչահումների, կողոպուտի, բռնաբարութեան, սպանութիւնների եւ ընդհանրապէս հայերի դէմ նախապատրաստուող զանգուածային կոտորածի մասին:

Դեռեւս 1911 թ. Փետրուարի 14-ին Կ. Պոլսի հայ պատրիարքութիւնը պաշտօնապէս դիմում է ներկայացնում Թուրքիայի Արդարադատութեան նախարարութիւն, նախագգուշացնելով, որ հայաբնակ գաւառներում ծանր վիճակ է ստեղծուած: Տեղեկացուում է հայկական հալածանքների, սպանութիւնների, անօրէն գանձուող հարկերի եւ այլ չարաչահումների մասին:

Մատնանշուում է նաեւ, որ այդ բոլորի մասին Բարձրագոյն դրանը բազմիցս կատարուած բողոքարկումները մնում են թղթի վրայ եւ չեն ձեռնարկուում անհրաժեշտ միջոցներ յանցագործներին պատժելու եւ իրողութիւնը բարելաւելու ուղղութեամբ: Հետեւանքը լինում է այն, որ հայերը ստիպուած լքում են իրենց հայրենիքը եւ ապաստան փնտռում արտասահմանում: Միւս կողմից՝ նրանց ունեցուածքին եւ հողերին տիրում են այլ տեղերից գաղթած թուրք մուհաճիւրները:

Այստեղ հարկ ենք համարում նշելու նաեւ, որ 1911 թ. Նոյեմբերի 28-ին, Օսմանեան մէծլիսի պատգամաւորի իրաւունքից ելնելով Գրիգոր Զօհրապը մեծ վէզիր Սայիդ փաշային ներկայացնում է մի խնդրագիր, որտեղ անհրաժեշտ փաստերի հիման վրայ բացայայտում է կառավարութեան անբարեացակամ վերաբերմունքը, կամայականութիւնն ու զեղծումները հայերի հանդէպ եւ Թուրքիայի հայաբնակ նահանգների ծանր դրութիւնը բարելաւելու եւ հողային հարցը լուծելու միտումներով առաջարկում է հաւանական թուացող միջոցառումներ:

Որպէսզի ընթերցողը աւելի պարզ պատկերացում ունենայ իրավիճակի մասին բերում ենք Գրիգոր Զօհրապի կազմած այդ խնդրագրից մի հատուած:

«Չնայած սահմանադրութեան հռչակումից անցել է չորս տարի, սակայն հայերով բնակեցուած վիլայէթներում բարեփոխման ոչ մի նշան չի երեւացել: Ընդհակառակը, վերջին երկու տարիներին հայերի վիճակը անտանելի է դարձել: Յիշեալ վիլայէթներում ունեցուածքի, պատուի եւ կեանքի ապահովութեան մասին խօսք անգամ լինել չի կարող, ջարդի սպառնալիքները բնակչութեանը պահում են մշտական սարսափի մթնոլորտում: Ստացուած տեղեկութիւններից պարզուում է, որ կան մարդիկ, որոնց ջանքերով բնակչութեան համար տեւական վտանգաւոր իրավիճակ է ստեղծուում: Ակնյայտ է, որ ամբողջապէս հայերով բնակեցուած այդ վիլայէթները կրկին նետուում են արեան յորձանուտը...»:

Գրիգոր Զօհրապի եւ այլոց ներդրած բոլոր ջանքերը ինչպէս նաեւ Պատրիարքութեան ձեռք առած միջոցառումները անցան ապարդիւն եւ հայերի վիճակը աստիճանաբար դարձաւ աւելի վտանգաւոր եւ օրհասական:

Առաջին Համաշխարհային Պատերազմի նախաշեմին «Իթիհատ օլ Թերաքքի» կուսակցութեան ղեկավարները իրենց գաղտնի նիստերում երբ ընդունեցին հայերին բռնի տեղահանելու, կոտորելու եւ խալառ ոչնչացնելու որոշումը, դա պատահական չէր, քանի որ նախորդ տարիներին արդէն նկատուում էին դրա պարզորոշ նշանները, ուղղակի սպասում էին յարմար ժամանակի: Եւ այդ յարմար ժամանակը՝ Համաշխարհային Պատերազմն էր:

Եւ սկսեցին կոտորել հայերին, այն էլ ինչպիսի բարբարոսական ձեւերով:

Արեւմտահայութիւնը ամենադաժան հալածանքների եւ ֆիզիքական ոչնչացման ենթարկուեց յատկապէս Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարութեան գործադրած նենգ եւ անմարդկային քաղաքականութեան հետեւանքով:

Արեւմտահայութեան զանգուածային կոտորածների նախաշեմին տեղի ունեցած Կ. Պոլսի առաջին մահասարսուռ դէպքերի ժամանակակից Ա. Ալպոյաճեանը գրում է. «Առաջին ազդանշանը ու անդրանիկ սարսափը, որ Կ. Պոլսի բնակչութիւնը անակնկալի մը առջեւ կը դնէր, 1915 Ապրիլ 11 (24)ի ձերբակալութիւնները եղան: Մէկ դիշերուան մէջ Կ. Պոլսոյ մտաւորական դասակարգի ամէնէն կարկառուն դէմքերը եւ ժողովուրդին ամէն դասակարգերէն 250 հոգիի չափ անձեր, ձերբակալուեցան եւ Չանկըրը եւ Այաշ տարագրուեցան»¹:

Չանգուածային տեղահանութիւններն ու կոտորածները Արեւմտեան Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում, ինչպէս նաեւ Փոքր Ասիայի տարածքում գտնուող հայաբնակ վայրերում, չէին առնչուում

ուսումնական նկատառումներով կատարուող միջոցառումների հետ, քանի որ հայութեան բնաջնջման հարցը նախօրոք մշակուած եւ որոշուած էր «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից: Հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրել էին արեւմտահայութիւնը իսպառ բնաջնջելու ճանապարհը: Եւ պատերազմը պատեհ առիթ հանդիսացաւ, որպէսզի նրանք ոչնչացնեն ոչ միայն հայերին, այլեւ հաշուեյարդար տեսնէին քրիստոնեայ միւս ժողովուրդների հետ:

«Ամէնուրեք սկսեցին հաւաքել հայերին,- գրում է թուրք գործիչ Մեվլան Չատէ Ռիֆաթը,- նոյնիսկ առանց հաշուի առնելու հիւանդներին, ծերերին ու երեխաներին: Նրանց, ովքեր ընդունում էին մահմետականութիւն, ժամանակաւորապէս դուրս էին հանում քարաւաններից, իսկ միւսներին խմբերով, ժամտարմաների հսկողութեան ներքոյ ուղարկում էին նախատեսուած ճանապարհներով»: Այնուհետեւ այդ անգէն ու անպաշտպան քարաւանները մարդկանց տեսողութիւնից հեռու, ամալի վայրերում ենթարկւում էին հայերի բնաջնջման նպատակով ստեղծուած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի (Յատուկ կազմակերպութիւն) հրոսակախմբերի յարձակմանը: Իսկ հրաշքով ազատուածները, քաղցից եւ ծարաւից ծայրաստիճան հիւծուած ու ոսկրացած ուրուականների նման յայտնուում էին Միջագետքի եւ Սիրիայի անապատներում:

Արեւմտահայութեան զանգուածային բռնազաղթի ու գազանային կոտորածների լուրը շուտով տարածուեց ամբողջ աշխարհով մէկ ամէնուրեք առաջացնելով բուռն զայրոյթ ու բողոք: Առաջադէմ մարդկութեան ներկայացուցիչները, առանձին կազմակերպութիւններ դատապարտում էին երիտթուրքերի գործադրած բարբարոսային ցեղասպանութեան քաղաքականութիւնը եւ պահանջում անյապաղ դադարեցնել այն, տարագրուած հայերին վերադարձնել իրենց բնակավայրերը: 1915 թ. Մայիսի 24-ին Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կառավարութիւնները համատեղ նախագրուեցրին Բարձրագոյն դրանը, յայտարարելով հետեւեալը.

«Ամբողջ վերջին ամսուայ ընթացքում Հայաստանում տեղի են ունենում հայկական կոտորածներ քրտերի ու թուրքերի կողմից, Օսմանեան իշխանութիւնների բացայայտ թողտուութեամբ, իսկ յաճախ էլ ուղղակի համագործակցութեամբ: Նոր տոմարով Ապրիլի կէսերին հայկական կոտորածներ են տեղի ունեցել էրզրումում, Դերջանում, Պիթիաում, Մուշում, Սասունում, Չէյթունում եւ ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակայ հարիւրաւոր գիւղերի բնակիչները մորթուել են մինչեւ վերջին մարդը: Բուռն վանում հայկական թաղամասը պաշար-

ման մէջ են առել քրտերը: Միեւնոյն ժամանակ, Կ. Պոլսի թուրքական կառավարութիւնը ձերբակալում եւ աներեւակայելի ճնշումների է ենթարկում հայ ազգաբնակչութեանը: Մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ Թուրքիայի կատարած այս նոր յանցագործութիւնները նկատի ունենալով, Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի դաշնակից կառավարութիւնները այսու հրապարակաւ յայտարարում են Բարձրագոյն դրանը, որ իրենք այդ յանցագործութիւնների համար անձնական պատասխանատուութիւնը դնում են թուրքական կառավարութեան բոլոր անդամների, ինչպէս նաեւ նրա՝ տեղական այն իշխանութիւնների վրայ, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածին»³:

Երիտթուրքերի կառավարութիւնը, սակայն, անողոք դաժանութեամբ շարունակեց իրականացնել իր որդեգրած քաղաքականութիւնը, որի գոհը դարձան աւելի քան մէկուկէս միլիոն հայեր:

Փաստերը վկայում են, որ տեղահանուեց ու աքսորուեց ճակատամերձ գօտիներից ընդհանրապէս շատ հեռու գտնուող շրջանների, գիւղերի եւ քաղաքների հայ բնակչութիւնը: Այս մասին թուրք պաշտօնեայ Նալիմ պէյի յուշագրութեան մէջ կարդում ենք. «Եփրատի ափերին արտաքսուածները ոչ միայն Ստանպուլի շրջակայքից էին, այլեւ՝ Ռոդոստոյից, Նիկոմեոսիայից, Պարտիզակից, Ատապազարից, Ճիզըէից (Ճեզըէ), Քոնիայից, մի խօսքով, նրանք Կեսարիայի եւ Անատոլիայի երկաթգծի երկարութեամբ ընկած տարածքից աքսորուած հայերն էին: Այս նոր տարագրումը ընդհանուր զարմանքի առիթ տուեց: Անհասկանալի էր, թէ ինչու մարդկանց քշում էին Տէր Ջօրի ուղղութեամբ: Սակայն անհանգստանալու համար առաւել էական պատճառներ կային: Ռաս ուլ Այնում եւ այլուր տեղի ունեցած կոտորածները տարածուեցին նաեւ Մեսքենէում: Մի քանի տարի շարունակաբար կատարուող կոտորածները զաղտնի չմնացին նաեւ խուլ անապատում: ...Կառավարութեան նպատակը ամբողջ հայերի ոչնչացումն էր: Նրանք իրաւունք չունէին այլեւս գոյատեւելու»⁴:

Որ տեղահանութիւնն ու կոտորածը կատարուում էին կանխամտածուած ծրագրով, հաստատուում է նաեւ Մեվլան Չատէ Ռիֆաթի բերած փաստարկներով. «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութիւնը որոշում կայացրեց՝ ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով սպաննել եւ ոչնչացնել հայերին: Այս հրամանը իրականացնելու համար նախագահութիւնը ստեղծեց Բեհաէդդին Շաքիր, Դոկտ. Նազըմ եւ հանրակրթական նախարար Շիւքրի պէյերից կազմուած մի յանձնաժողով՝ տալով «Երեքի գործադիր կոմիտէ» անուանումը: Այս երեքի գործադիր կոմիտէն «Թեշքիլաթ-ը մահսուսէ» անուան տակ սկսեց բնատեղից հաւաքագրել քրէական յանցա-

գործներին եւ ստեղծել չեթէների՝ հրոսակներ: «Թեչքիլաթ-ը մահ-սուէ» պիտակի տակ ստեղծուած այս չեթէների կատարած յանցա-գործութիւններն ու բռնութիւնները, արատաւորելով թուրք ժողովրդին աշխարհի հասարակայնութեան առջեւ, արիւնալի եւ բարբարոսական էջեր արձանագրեցին նրա պատմութեան մէջ»:

Տեղահանութեան եւ կոտորածի ընթացքում գործի է դրուել նաեւ հայերին մահմետականացնելու քաղաքականութիւնը: Այդ քայլը ջատագովել է երիտթուրքական հանրայայտ կին գործիչ Հայիտէ էտիպը, չնայած աշխատել է ցոյց տալ, որ ինքը դէմ է եղել երեխաներին մահմետականացնելու ծրագրին: Մինչդեռ նրա ժամանակակիցների վկայութիւններից յայտնի է դառնում, որ Հայիտէ էտիպը եւս, «հայ որբերին հաւաքելով, մահմետականացնում էր եւ դաստիարակում որբանոցներում որպէս թուրքերի»⁵:

Տեղահանելով հայերին, թուրքական իշխանութիւնները նաեւ կեղծ բարբաջանքներով ջանում էին հաւաստիացնել, թէ իբր նրանց թողած հողային ունեցուածքն ու գոյքը պահպանուելու են պետութեան կողմից եւ պատերազմի աւարտից յետոյ կրկին վերադարձուելու են: Այս կապակցութեամբ թուրքական կառավարութիւնը հայերի ունեցուածքի բացայայտ կողոպուտն ու թալանը աշխատեց «օրինականացնել» մի շարք օրէնքներով, որոնք բնաւ չգործադրուեցին⁶: «Այսպէս ժողովուրդին բոլոր շարժական ստացուածքը կը փճանար կամ լաւ եւս է ըսել՝ թուրքերու ձեռքը կ'անցնէր, կառավարութիւնը ոչ մէկ տեղ հոգածու չգտնուեցաւ այդ գոյքերը հաւաքելու կամ դրամի վերածելու»⁷, վկայում է Ջաւէն Պատրիարքը:

Կ. Պոլսում ամերիկեան դեսպան Մորկընթաուն այս փաստի մասին վկայում է. «հազիւ թէ նախկին սեփականատէրերը հեռանային գիւղէն՝ մահմետական մուհաճիրներ- թուրքիոյ այլ կողմերէն գաղթողներ կը փոխադրուէին հայկական բնակավայրերէն ներս: Նոյնպէս հայերուն բոլոր արժէքաւոր առարկաներ - դրամ, մատանիներ, ժամացոյցներ եւ գոհարեղէններ - կը տարուէին ոստիկանատուններ «ապահով պահուելու համար» մինչեւ հայերուն վերադարձը եւ ապա կը բաժնուէին թուրքերուն»⁸:

Առկայ են բազմաթիւ հեռագրեր, հրահանգներ, առանձին կարգադրութիւններ, առաքուած երիտթուրքերի կառավարութեան կողմից, որոնք լիովին բացայայտում են հայութեան ունեցուածքը կուլ տալու ծրագիրը: Յ.Գ. Ինձիկեանի հաշուումներով կողոպուտի ու ոչնչացման են ենթարկուել 66 քաղաքների ու 2500 գիւղերի հայ ու քրիստոնեայ ազգաբնակչութիւնը, կողոպուտել ու քանդուել են աւելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ եւ վարժարաններ:

Ազգային յատուկ յանձնաժողովի տուեալներով, Օսմանեան կայսրութիւնում միայն հայ ժողովուրդին հասցուած նիւթական վնասը 1919 թ. կուրսով կազմել է մօտ 15 միլիարդ ֆրանք⁹:

Գերմանիան եւս յանցաւոր է հայկական ջարդերի համար: 1915 թ. Յուլիսի 14-ին թուրքական կառավարութեանն ուղղուած գաղտնի գրութեամբ Գերմանիան լիովին հաւանութիւն է տուել եւ պաշտպանել երիտթուրքերի հայաջինջ ծրագիրը: Գերմանական հիւպատոսները իրախուսել, իսկ գերմանացի սպաները մասնակցել են երիտթուրքերի վայրագութիւններին: Այդ օրերին բողոքի բուռն ցատկումով հանդէս եկած միջազգային բանուորական շարժման ակնաւոր գործիչ Քարլ Լիրկնեխտը, անարգանքի սիւնին գամելով Գերմանիայի իմպերիալիստական կառավարութեան դաւադիր գործողութիւնները, նկատում է. «Թուրքական կառավարութիւնը կազմակերպեց հայկական զարհուրելի կոտորածները, ամբողջ աշխարհն այդ զիտէ եւ ամբողջ աշխարհն այդ ոճրագործութեան համար յանցաւոր է համարում նաեւ Գերմանիային, չէ՞ որ Կ. Պոլսում թուրքական կառավարութեանը ղեկավարում են գերմանական սպաները: Ո՛չ մի բան չգիտեն միայն Գերմանիայում, որովհետեւ գերմանական մամուլի բերանի մէջ դրուած է գելարան»¹⁰:

Ժամանակակից թուրք պատմաբաններն ու պետական գործիչները արդարանալու միտումով յաճախ աշխատում են զանազան պատճառաբանութիւններ յօրինել հայերին մեղադրելու ուղղութեամբ: Մեր կարծիքով, իրականում մէկ պատճառ կար հայկական ջարդերը կազմակերպելու խնդրում: Հայերի «մեղքը» կայանում էր նրանում, որ նրանք ապրում էին այդ տարածքում, աւելի ճիշդ դարերից ի վեր իրենց հայերի բնօրրանում: Եւ որպէսզի Օսմանեան կայսրութեան արեւելեան մասում մի երկրորդ Պուլկարիա չստեղծուի, երիտթուրքական կառավարութիւնն ու կուսակցութիւնը դիմեցին ամենավայրագ միջոցի, այն է՝ մէկընդմիջ ազատուել հայերից, նրանց բնաջնջելով:

Այս խնդրում միանգամայն ճիշդ հետեւեալ դատողութիւնն է կատարել ֆրանսիացի հանրայայտ պատմաբան Իվ Թեռնոնը.

«Իսկ ինչ վերաբերում է թուրքերին, դա ոչ թէ նշանակում էր ազատուել ատելի մի հասարակութիւնից, այլ պարզապէս թուրքիայի կենդրոնական մասը, մասնաւորապէս Անատոլիան եւ Կիլիկիան մաքրել հայութիւնից, որ անմիջական ներկային եւ ապագային վտանգաւոր էր թուրքիայի ազատագրական եւ տարածքային ամբողջականութեան համար: Հայերը սպաննուեցին ոչ թէ նրա համար, որ ատելութեան թիրախ էին, այլ սպաննուեցին, որովհետեւ այնտեղ էին: (Ընդգծումը մերն է. - Ա.Փ.) Ազգայնամոլ, նուաճողական եւ բռնագրաւած հողերը

ես չվերադարձնելու քաղաքականութեան գիծ ունեցող մի թուրքիա չէր կարող հանդուրժել հայերի ներկայութիւնը»¹¹ :

Եւ այս բոլորի տրամաբանական շարունակութիւնը եղաւ այն, որ արեւմտահայերի բեկորների հալածանքի, բնաջնջման քաղաքականութիւնը շարունակուեց նաեւ յետագայում՝ քեմալականների վարած ազգայնական շարժման շրջանում: 1919-1922 թուականներին նրանք զանգուածային նոր կոտորածներ կազմակերպեցին Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանում, Կիլիկիայում եւ թուրքիայի մի շարք վայրերում, որոնց զոհ զնացին մօտ 250 հազար հայեր:

Ծանօթագրութիւններ

1. Ա. Ալպոյաճեան, Անհետացող Դէմքեր, Գրիգոր Զօհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 210:
2. Mevlan Zade Rifat, Türkiye inkilabının iç yüzü, I-ci fasıl, Halep, 1929, s. 119 (արաբատառ):
3. Եւրի Բարսեղով, Հայերի Յեղասպանութիւնը յանցագործութիւն է մարդկութեան դէմ, «Լրաբեր» Հայաստանի ԳԱ, Երեւան, 1987, թիւ 4, էջ 34 (ռուսերէն):
4. Aram Andonian, The Memoirs of Naim bey, Watertown, AHRA, 1960, p. 33-34:
5. Mevlan Zade Rifat, նշլ. աշխ., էջ 108:
6. Ա. Հ. Փափագեան, Վաւերագրական Նիւթեր Արեւմտահայերի մասին (ՀՍՍՀ ԳԱ Գիտ. Ինֆորմացիոն Պիւբլիտէն, Երեւան, 1983, թիւ 2 (56), էջ 16-18:
7. Զաւէն Արքեպիսկոպոս, Պատրիարքական Յուշերս, Վաւերագրեր, Գահիրէ, 1917, էջ 318:
8. Morgenthau Henry, Ambassador Morgenthau's Story, New York, 1918: Մէջբերում է ըստ ամերիկեան դեսպան Մորկընթաուի յիշատակները եւ Հայկական Եղեռնին գաղտնիքները, գրքից, Կ. Պոլիս, 1919, էջ 258:
9. Յ. Գ. Ինճիրկեան, Օսմանեան Կայսրութեան անկումը, Երեւան, 1984, էջ 301:
10. Ս. Մ. Յակոբեան, Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում եւ Իմբերիալիստական Գերմանիայի պատասխանատուութեան հարցը (ՊԲՀ, 1963, թիւ 1, էջ 512):
11. Իվ Թեռնոն, Պատմական Ճշմարտութիւնը սակարկութեան առարկայ չէ: (Տէս «Նոր Օր», եռօրեայ, Ապրիլ 23, 1994, էջ 5):

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ

ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1922 թուականին Պետրոս Տօնապետեանը Փարիզում հրատարակեց «Չայն Տառապելոց» (Այս է Արձան Հայ Տանջանաց 1915-1918) խորագիրը կրող նամակների ժողովածուն, որտեղ ընդգրկուած են բունագաղթից եւ Ջարդերից հրաշքով ազատուած տարբեր տարիքի եւ սեռի հայ տառապեալների, թուով 280 սրտամորմոք նամակներ: Ժողովածուն սկսում է համառօտ առաջաբանով, իսկ վերջում գետեղուած է պատմագիտական ընդարձակ մի ուսումնասիրութիւն հայկական հարցի եւ հայոց ցեղասպանութեան խնդրի շուրջ՝ «Անդունդէ անդունդ» վերնագրով:

Նամակներում խօսում է հետեւեալի մասին. Բունագաղթի եւ բարբարոսային Ջարդերի, խոշտանգումների նկարագրութիւններ. կանանց եւ երեխաների բռնի յափշտակում եւ թուրքացնելու քաղաքականութեան բազմաթիւ փաստեր. դէպի Տէր Զօր աքսորի ճանապարհին, կիզիչ անապատներում սովի, ծարաւի, վարակիչ հիւանդութիւնների հետեւանքով տեղի ունեցած մահացութիւններ. իրենց երեխաների, ծնողի եւ հարազատ ազգականների կորստեան ողբօգնութեան աղերսներ որք երեխաների եւ ծայրաստիճան հիւժուած եւ ոսկրացած մարդկանց կեանքը փրկելու համար. կարօտը՝ կորցրած հայրենիքի հանդէպ եւ անհուն կսկիծով վերջիչումը իրենց բնակավայրերի, տան, գիւղի, քաղաքի, եկեղեցու, վանքի, օդի, ջրի մասին, եւ հաւատքով եւ յոյսով ներշնչուած կրկին հայրենիք վերադառնալու պատրանքը:

Այսօր ըստ արժանւոյն եւ բարձր պէտք է գնահատել Պետրոս Տօնապետեանի իր ժամանակին կատարած քրտնաջան աշխատանքը, եղեռնից վերապրողների նամակներն հաւաքելու եւ հրատարակելու գործում, քանի որ նա առաջինն էր, որ լծուեց դրանք կորստից փրկելու նուիրական գործին:

Ստորեւ ընթերցողի ուշադրութեան ենք ներկայացնում վերապրողների մի քանի նամակներից ամբողջական եւ առանձին հատուածներ:

*
**

Եղբայրս,

Յաւալի է մեր վիճակը, վէրքերով լեցուն մեր սրտերը. ո՛հ, որքան ցաւալի եւ տխուր է մեր անցուցած կեանքը, որ բաժնուած ենք մեր սիրելիներէն. ո՛հ, որքան արցունքներ թափած եմ եւ պիտի թափեմ մինչեւ վերջ որ կորսուեք եմ եւ պիտի չտեսնեմ. եւ աչքերէս թափուած արցունքներ մաշեցին երեսս եւ խոր ահօսներ բացին այտերուս վրայ: Ի՞նչպէս գրեմ եւ ի՞նչպէս հասկցնեմ, շշորած ապշած կը մնամ թէ ի՞նչպէս գրեմ մեր սիրելի մայրի մասին կամ մեր ազնիւ քոյրի համար կամ մեր միւս ազգականաց համար թէ ուր մեռան կամ ուր մնացին...:

ԶԱՐԹԻԿ ՍՈՂԻԿԵԱՆ
(էջ 1)

*
**

Տէր Զօր

Աղբարիկս,

Արիւնի ճամբէն սկսանք քայլել յառաջանալով դէպի Մալաթիա, որը Կարինէն մեզի ընկերացող թուրք պաշտօնէութիւնը յանձնեց մեզի Մալաթիոյ կառավարութեան: Այս վերջինս ալ Ատիամանի գայմագամին, որուն հրամանին ներքեւ կը գտնուէր բաւական ժանտարմաներ, ինչպէս բաղեջի հրամանատար էմին էֆէնտի եւ Աշէյնալ անուն մի իւրտ պէյ իր գազանաբարոյ արբանեակներով: Հոս մեր դժբախտ կարաւանէն խլուեցան հարիւր եօթանասունէ աւելի այրեր, որոնք ամէնն ալ վերօյլիչեալ քիւրտ պէյի հրամանով չարաչար մահուամբ փակեցին իրենց աչքերն իրենց սիրելիներու ներկայութեամբ իսկ: Մեր ընտանիքէն մինակ ես կամ. մնացած մէկ առ մէկ աչքովս տեսայ ամէն մէկուն սոսկալի սպաննելիլ կամ տառապանքէ ու անօթութեանէ մեռնելիլ, ես ալ նոյն ճակատագիրը պիտի ունենամ: Ինչ կ'երազէր մեր ազգը ինչ եղանք:

ԹՇՈՒԱՆ ՔՈՅՐԻՂ՝
ՍԱԹԵՆԻԿ
(էջ 5)

*
**

Սիրելի Յովհաննէս,

...Թուրք եւ քիւրա գինուորներով մեր գիւղը պաշարեցին, այնպէս որ ազատելու հնար չկար. սուրը դեռ մեր վրայ չբարձրացած՝ մեր մահը կը տեսնէինք. եւ ժողովուրդի ազադակի ձայնը երկինք կը թնդացնէր. մայրերու, հայրերու եւ փոքրիկ երեխայից հեկեկանքը բոլորովին երկիր կը շարժէր, եւ երբ հոս ու հոն մարդիկ կը գարնուէին ու վար կ'իյնային եւ արիւնը կը վազէր, ամէն ոք խելքերնին կորսուած կը փախչէր, եղբայրը քոյրը կը ձգէր, մայրն իւր երեխան գետինը կը թողուր կամ ջուրը կը նետէր եւ անանկ մը կու գայ ինձ թէ ամէնա խելագարածի պէս եղած էինք սարսափէն. ինչպէս փախայ եւ ինչպէս ազատեցայ չգիտեմ, բայց ինձ նման ազատած հայերու շատ հանդիպեցայ ձորերու եւ լեռներու մէջ ուրիշ գիւղերէ...:

ՎԱՀԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ

*
* *

Ումուտում գիւղ կարնոյ,
Ապրիլ 10, 1917

Գրիչս ձեռք առնելով չեմ գիտեր թէ ինչ պէտք է գրել, նկարագրել հասարակ դէպք մը, նկարագրել ցեղի մը բնաջնջումը, նկարագրել անմեղ եւ մատաղատի երեխայից քարաջախջախսումը, թէ մանկամարդ եւ փափկասուն օրիորդաց բռնաբարումը, լլկումը եւ խեղդամահը. ասոնց եւ ոչ մէկը չեմ կարող նկարագրել, որովհետեւ միայն ու միայն Քղիի շրջանէն 50,000 հայ ժողովուրդ կորսորուած է, այլազան տեսակներով եւ չարչարանքներով, որով իւրաքանչիւր մարդ կամ անհատ, ունի իրեն առանձինն երկար եւ ցաւալի դէպքերով պատմութիւնը...որո՞ւ պատմութիւնը աղեխարչ եւ անլսելի ու ցաւելու արժանի չէ: Վախսուն տարեկան հասակէն յետոյ հոգեկան անմխիթար վիճակի մը հասայ եւ կենդանի մեռածի մը նման կ'ապրիմ առ այժմ. չկան զաւակներս, չկան եղբայր, եղբորորդիներս, չկայ ընտանիք եւ սիրելիներս:

ՆԱԶԱՐԷԹ ՓՈՍՏՈՅԵԱՆ
(էջ 116)

*
* *

Սիրելիք,

... (Քղիի) գաւառի 18,000 հայ բնակչութիւնը խումբ խումբ իրար հետեւ քարաւանի նման կը բռնէին մարտիրոսութեան անծայրածիր ճանապարհը: Յունիս 1-ին (1915 թ.) տեղահանուեցան քաղաքի հայ բնակչութեան մի մեծ մասը եւ Խուսի, Սերկելիլի, Ճըպըրգիւղի հայերը: Օր մը յետոյ Առէքցիներն, յետոյ Թեմրանցիներն, յետոյ Ծերմաք, Օսնակ, Ապողնաք, Սեղանք, Ասողաբերդ, Չարիպաչ եւ Օրոր գիւղերու հայերն եւ այսպէս շարունակաբար...:

Երեք օր վերջ, մինչ գաւառի հայ ազգաբնակչութեան քարաւանի մէկ ծայրը հերթի կը սպասէր ճանապարհորդուելու, տեղահանումներու առաջին խումբը կը հասնէր Ազփունդարի ձորերը, կանխապատրաստուած ողջակէզի սեղանի վրայ: Հոն հրացաններով եւ թուրերով կը սպասէին դահիճները՝ հայերու բարի դրացի քիւրտերն, դեկավարութեամբ կառավարութենէն նշանակուած պարագլուխներու: Տեղահանուածներու քարաւանին կը հրամայուի կանգ առնել: Տանջանքի, յոգնածութեան բեռան տակ ճնշուած կիներն, երեխաները կը փուռին գետին պահ մը հանգստանալու. եւ տղամարդիկ ալ պահակներու նման գլխիկոր կը հսկեն անոնց վրայ... վիշապն յանկարծ կը շարժի, դժոխքը կ'որոտայ եւ դժոխքի դուներէն կրակ կը տեղայ գոհերու դիտին: Ահաբեկած երեխաներու ճիչն ու լացը, խելակորոյս մայրերու ողորն ու կոծը, սարսափած եւ նուազող կոյսերու ազադակն ու շիւանը, անգէն տղամարդկանց գոռում գոչումը խառնուելով հրացաններու որոտումներուն հետ, կը ստեղծէին երկնային գահը սասանեցնող մարդկային փոթորիկը: Բնագըզ գերագոյն թափով երեւան կու գար գոհերուն մէջ, եւ բանականութիւնը յաղթահարուած տեղի կու տար. մայրը իր մանուկը կը ձգէր, սիրահարն՝ իր սիրուհին, ամուսինն իր կինը եւ իրար կոխոտելով կը վազէին, կը փախչէին, մոլեգին հսկայ այլքներու նման բաղխելով մէկ կրակէ շրջապատէն միւսը...: Չենք գիտեր քանի վայրկեան տեւեց այս վիճակը, որու ընթացքին գոհերու շարքերը զգալի չափով կը նօսրանային: Ապա քիւրտերը սկսան իրենց գիրքերէն ցած վազել իրենց գոհերուն մէջ: Քիւրտ կիներն ալ անոնց կը հետեւէին զինուած մանգաղով եւ թոնրի շիշերով: Փախչելու չյաջողած տղամարդիկ կը սպաննուէին, երեխաները կը յափշտակուէին, դիակները կը կողոպտուէին, եւ կէս-ողջերն կը մերկացուէին... վե՞րջը: Երեսի վրայ մնացած մի քանի կիներ, մանուկներ կը հաւաքուէին շարունակելու իրենց ընդմիջուած ճանապարհը: Կը տարուէին անոնք, աւելի

ճիշդ կը հարածուէին փայտերով եւ հրացաններով, մինչ հարուածներու տակ բոլորովին անգորներն, յղի կանայք, կ'իյնային կէս ճանապարհին այլեւս չկանգնելու համար...:

ՊՕՂՈՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ
(էջ 259-260)

*
* *

Պաղտատ, Ապրիլ 3, 1917

Սիրելի եղբայր Վահան

...Նախճիրներու պատմութիւնը չպիտի ընեմ քեզ, որովհետեւ վստահ եմ, թէ բաւական ծանօթութիւն ունիս ու կորուստին մեծութիւնը կը զգաս: Իբրեւ ազգ գոյութիւն չունինք այլեւս թուրքիոյ մէջ. վեց կուսակալութիւններու ժողովուրդը անխնայ աքսորուեցաւ եւ իրենց քաղաքէն հազիւ 1-2 օրուան ճամբայ, բոլոր այրերը դժոխային միջոցներով սպաննուեցան, իսկ թուրքիոյ միւս կողմերը գտնուող հայերը աքսորուեցան, ջարդուեցան մինչեւ որ հասան իրենց համար որոշուած աքսորավայրը...:

Ս. ՇԻՐՎԱՆԵԱՆ
(էջ 128)

*
* *

Երեւան, Հոկտ. 19, 1917

Մարգար ջան,

...Մուշը բոլորովին տուն չէ մնացած, քաղաքը բոլորովին դաշտի է նման. իսկ այդ սոսկալի կոտորածից ազատուած հատ ու կտոր ժողովուրդն էլ ապրում է Գիւմրի եւ Ղարս...:

Մի տարի առաջ որ Մուշ գնացի, մի օր ելայ տեսնելու գիւղերու վիճակն. ահա քեզ արդիւնքը. մինչ Մօկունք հասնելուս անկարելի էր որ ձիւ մի քայլ առնէր առանց ոտքը մի կնոջ կամ երեխայի ոսկորներուն դպելու: Վերջապէս հասայ գիւղն. ինչ տեսնեմ, փողոցներ, տուներ եւ ձորեր լիքն են հայերու անթաղ ոսկորներով. շատ չկրցայ հոն մնալ, անցայ Սոխոզոմ, ուր տարուած ու վառուած էին Մշոյ բոլոր կին ու երեխէքը. մի 30 հատ մեծ մարագներ այրուած. երբ փայտովը կը խցես

մարազը, ալ հոտից պէտք է ժամերով փախիս. է՛հ Մարգար ջան, էլ է՛դ մասին ներէ որ երկար չպիտի կրնամ գրել, աչքերս նորից լեցուեցան, արիւնս գլուխս թռաւ...:

Արիւնոտ սրտովս Եղբայրդ
ՀԱՅԿ ՄԻՐԻՃԱՆԵԱՆ
(էջ 164-165)

*
* *

Երուսաղէմ, Դեկտ. 17, 1917

Վեհափառ Տէր, Կաթողիկոս
Ամենայն Հայոց,

...Ժողովուրդը ուղիղ գծով Սուրիոյ անապատները չեն քշած, այլ խոտոր ճամբաներով անմատչելի լեռներէ, անդնդախոր ձորերէ եւ անանցանելի գետերէ առաջնորդելով, անոնց մեծ մասը ճամբուն վրայ մեռած, գետերու մէջ խեղդուած, անօթութեան եւ համաճարակ հիւանդութիւններու զոհ գացած են:

Հայ աքսորականները ամբողջ մէկ ու կէս տարի հանգիստ առնելու հաստատուն կայան մը չեն ունեցած նոյնիսկ Սուրիոյ ամայի անապատներուն մէջ: Դահլիճները խարազան ի ձեռին հալածած են գանոնք տեղէ տեղ, մերկ, հիւանդ, սոված վիճակի մէջ: Հայու բնաջնջումին գլխաւոր ազդակներէն մէկը այդ տեւական թափառումին մէջ պէտք է փնտռել...:

Պատրիարքական Փոխանորդ
Հայոց Կ. Պոլսոյ
ԵՐՈՒԱՆԴ. ՎԱՐԴԱՊԵՏ
(էջ 248)

*
* *

Սիրեցեալ Պետրէ,

...Եւրոպական գաղութը կարծես մոռցաւ Ս. Էջմիածինն ու
դադարակաճ գործը: Կարճ պիտի գրեմ: Սովը իւր ահռելի բերանը
բացած կեցած է դիմացնիս, հայութեան փրկուած բեկորները կլանելու:
Եթէ կարող էք՝ անմիջապէս դրամական օգնութիւն հասցրէք թէ այդ
տեղիցն, թէ Մանչեսթրից եւ այլ տեղերից... դրութիւնը սոսկալի է,
ապագան՝ մութ, դաժան ու յուսահատ աստիճանի: Մեր մտաց աչքերի
տուաջ հայութեան մահուան խաչարձանն է կանգնած: Մնացածը դուք
ինքնին կը կուահէք:

Կաթող. Դիւանապետ
ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ
(էջ 211-212)

*
* *

Թիֆլիս, Նոյեմբեր 12, 1917

Յեղափոխական ընկերս,

...Այդ ամէն մեծաբանութիւններէ յետոյ, երբ կարգը եկաւ
ժողովուրդը պաշտպանելու անխուսափելի կոտորածէն կամ գէթ
ինքնապաշտպանութիւն ընելու, մէջտեղը մարդ չմնաց: Միթէ՞ այս
դաւաճանել չէր մեր նուիրական պարտականութեան: Բայց ինչ արած,
մեր մէջ ամէն ինչ խօսք՝ ոչ թէ գործ...:

ԲԵՆԻԱՄԻՆ ՏՆՐ ՅԱԿՈԲԵԱՆ
(էջ 194)

*
* *

Սիրելի եղբայրս,

Կը գրես թէ միտք ունիս Ամերիկայէն դառնալով Պոլիս հաս-
տատուիլ երբ պատերազմը վերջանայ: Բայց արդեօք բաւական չէ որ
փոխանակ Պոլիս երթալու, հաւաքուինք Հայաստանի հողին վրայ:
Մենք որ փոքրութենէ վարժուած եւ սնած ենք հայրենիքի նախանձա-
խնդրութիւններով, մինչեւ ե՞րբ պանդխտութեան ճիրաններուն մէջ
ստաւապինք. չէ՞ որ օտար երկրի հարուստը իր հայրենիքէն զրկուած
աքսորական մը կը սեպուի. հապա ո՞ւր մնաց մեր նախանձախնդ-
րութիւնը, որ ուրիշներուն Հայաստանը կը քարոզենք: Մտածենք եւ
յետոյ խօսինք: Ո՞վ պիտի լեցնէ աւերակ եւ հայէ ամայացեալ Հայաս-
տանը եթէ մենք չորոշենք մեր կեանքը տնկելու անոր սուրբ հողին վրայ:

ԲԱՂԷԲ ՇԱՀՊԱՋԵԱՆ
(էջ 11-12)

*
* *

Երոստաղէմ, Դեկտ. 21, 1917

Սիրելի աղջիկս,

...Այլեւս չունինք տուն տեղ, չունինք ինչք եւ ապրանք, չունինք
պատիւ եւ բարոյական: Ասոնց ամէնն ալ կորուսինք: Տուններնիս
յափշտակուեցաւ. իսկ ընտանեկան եւ կրօնական սրբութիւններ
խապառ եւ իսպառ պղծուեցան. եւ որ ամենէն ահռելին եւ սոսկալին այն
է, որ միլիոն ու կէս անմեղ հայ հոգիներ ոչնչացան. սպաննուեցան,
խողտողուեցան, սրոյ եւ հրոյ ճարակ եղան, ողջ ողջ գետերը
թափուեցան: Ո՞ր մէկն ըսեմ եւ որ մէկը թողում: Մենք ալ մեր կարգին
բաժին ունեցանք խմելու այս դառն բաժակէն. ամէն բան կորցնելէ
վերջ, մեծ զաւակն եւ հարսս ալ նահատակուեցան բարբարոսներէն.
միայն ես եւ երկու աղջիկ թողներս նախախնամութեան վերին տնօրէ-
նութեամբ ազատուելով, տարիէ մը աւելի Երոստաղէմ կը գտնուէինք,
Հայոց Ս. Յակոբայ վանքը, բոլորովին աղքատ, տնանկ, մերկ եւ բոպիկ,
անօթի ու ծարաւ...:

Մնուցիչ կաթնամայրդ
ԲՐԱԲԻՈՆ ԿՏԱԿԵԱՆ
(էջ 294-295)

Մեծ եղեռնի դժոխային ճիրաններից մազապուրծ ազատուած սիրաստացի Կարապետ Գաբրիկեանը մասնագիտութեամբ եղել է ուսուցիչ:

Նա սկանաւտես է եղել Սեբաստիոյ նահանգի հայութեան զանգուածային տեղահանութեան եւ դաժան կոտորածներին: Մեծ Եղեռնի արհաւիրքներից անմիջապէս յետոյ նա գրի է առել այդ բոլորը եւ «Եղեռնապատում» խորագրով հրատարակել 1924 թ. Պոսթընում:

Կարապետ Գաբրիկեանը իր գրքում ընդգրկել է նաեւ Եղեռնին սկանաւտես այլ վերապրողների պատմածները, ինչպէս նաեւ Եղեռնը իրագործող դահլիճ-ոճրագործների խոստովանութիւնները՝ իրենց կատարած հրէշային արարքների, սպանութիւնների, խոշտանգումների, բռնաբարութեան եւ այլ անմարդկային բռնարարքների մասին (էջ 514-526):

«ԴԱՀՃԱՊԵՏՆԵՐ, ԴԱՀԻՃՆԵՐ» վերնագրի տակ, մէկ առ մէկ մատնանշուով է Սեբաստիոյ նահանգի պաշտօնատար անձանց, Երիտթուրքական կուսակցութեան գործիչների անունները, պաշտօնները եւ նրանց կատարած ոճրային գործողութիւնները նահանգի հայ բնակչութեան նկատմամբ (էջ 590):

Գրքի վերջում տրուած է նաեւ Սեբաստիոյ նահանգի հայ ազգաբնակչութեան վիճակագրութիւնը, նախքան բռնագաղթի ենթարկուելը (էջ 596):

Այս կապակցութեամբ Կ. Գաբրիկեանը նշել է. «Կանուխէն բանասիրական աշխատութիւններուս մաս կազմած էին Սեբաստիոյ եւ Վիլայէթի Պատմական-Ազգագրական, շատ տեղեր այցելած-շրջած, ի մէջ այլ տեղեկութիւններու, հայ ազգաբնակչութեան ճշգրիտ թիւը ունենալու հետամուտ եղած էի. սոյն վիճակագրութիւնը հիմնուած է իմ այդ պրպտումներուս վրայ: Եւ որուն ճշգրտութիւնը կրնայ վստահելի ըլլալ ամէն անոնց, որոնք այս նիւթով կը հետաքրքրուին: Ինչպէս մենք ուրիշ առթիւ մը ըսեր էինք, Սեբաստիա թէ գիւղերը պահած էին նահապետական օրհնայից կեանքը, եւ տան մը մէջ հայր ու զաւակներ, եղբայրներ, հօրեղբայրներ, իրենց հարսներովը, զաւակներովը կը բնակէին երկար տարիներ միասին, որով տուն մը կը բաղկանար միջին հաշուով 8-էն մինչեւ 20 եւ աւելի անդամներէ»: (էջ 596):

«Եղեռնապատում» գրքից ամբողջութեամբ ընթերցողին ենք ներկայացնում հեղինակի «Երկու խօսքը», ինչպէս նաեւ մի հատուած սերաստահայերի կրած տառապանքներից:

Արտաքին թելադրանքի մը՝ մարդկային մտքին վրայ ունեցած ազդեցութիւնը մեծ է ու խորունկ: Արիւնի ճամբան բռնելու վերջին վայրկեանին, երբ սիրեցեալ եղբօրմէս հրաժեշտ կ'առնէի, իր այն խօսքերը թէ՛ «ողջ պիտի մնաս, ամէն բան աչքովդ տեսնես ու պիտի պատմես մօտիկ ապագային» մեծագոյն թելադրանքը եղան ինձի, եւ արդարեւ ողջ մնայս եւ «Եղեռնապատում»ս ատոր կը պարտիմ:

Չնայելով որ Արիւնի ճամբուն վրայ շարունակ մահն էր որ կը ճակատէր մեզի, ու մենք կենտնտող-կենտնամահերու մատնուած, կարծես միաքս անջատաբար կը գործէր, առօրեայ անցքեր չէին վրիպեր այրէս օրովն ու տեղովը:

Սեբաստիայէն ելլելէնս վերջ ի Սուրուճ եւ ապա Բազա պատմութեանս կմախքը ուրուազծեցի: Զինադադարին՝ 1919-ի սկիզբները երբ Հայէպ հասայ, ժամանակը եկած տեսայ «Եղեռնապատում»ս ի գիր առնելու, եւ որ թերթօնուեցաւ «Եր. Հայաստան»ի մէջ:

«Եղեռնապատում»ս կ'ընդգրկէ Սեբաստիան եւ Փոքր Հայքը, իսկ թէ՛ զանց ըրած չեմ այլ տեղերու տարագեալներու գլխէն անցած անցքեր ալ, որ մեզի հետ առընթերակայութիւն ունեցած են:

Հայ տարագրութեան մասին ցարդ երեւան եկածները մասնակի բաներ են, որոնց մէջ Սեբաստիան եւ Փոքր Հայքը խիստ անցողակի յիշատակուած են. հարկաւ օր մը Հայ Տարագրութեան ընդհանուր պատմութիւնը պիտի գրուի: «Եղեռնապատում»ս կը խորհիմ, գլխաւոր աղբիւրներէն մին պիտի կազմէ մի այդպիսի աշխատասիրութեան:

Ընդհ. Զօրակոչէն մի քանի տարիներ դէպի ետ գնացած եմ. Սիրաստիոյ նոր ու եռամեծ Լէնկիթիմուր արիւնարբու Մուամմէրի Սիրաստիոյ կուսակալ կարգուած թուականներէն սկսած, որի ատեն հայահալած հայաջինջ քաղաքականութիւնը կը դարբնուէր դիւահանճար Իթիթիհատի աւերիչ օճախին մէջ, եւ որուն մահաշուք հետեւանքները սկսած էին երեւան գալ ամէն կողմ, ինչպէս եւ ի Սեբաստիա:

Պատմութեանս աղբիւրը ես իսկ եմ, իբրեւ ահանատես մը մինչեւ վերջը: Տարի առաջ - ի Սեբաստիա - օրական տեղի ունեցած անցքերը կը նօթէի. թէեւ ատոնք ամէնը վերջէն ոչնչացուցի, բայց թէ՛ նոյն շարքը մնաց մտքիս մէջ: Ամէն մէկ վերապրող սակայն ունի իր «Պատմութիւնը». ընտրովի առած եմ շատերու ալ տեղեկութիւնները:

Որեւէ պատմութեան համար անցքերու տեղն ու թուականը խիստ կարեւոր էին. գործիս ընթացքին նախանձախնդիր եղած եմ ատոր, պատմագրի մը յատուկ խղճմտութեամբ:

Գրական ասպարեզի վրայ բանասէրի, լաւ եւս բանահաւաքի համեստ անուն մըն է որ շինած ըլլալ կը կարծեմ. չոր ու ցամաք գրականութեան մը հետեւած ըսել, եւ որ սրտի, հոգիի հետ գործ չունի: Բայց թէ իբրեւ ժողովուրդի գաւակ, անոր ծոցը ծնած, սնած ու ապրած՝ մանաւանդ որ անոր տառապանքներուն հաղորդ եղած, յընթացս գործիս ես ընտրեի եմ այն լեզուն, ոճն ու ասացուածը՝ պատկերոտ, նկարէն ու բնական, որքան եւ զգայնիկ ու ցնցող, որ յատուկ է այդ ժողովուրդին, սեփականութիւնն է Հայաստանցի կնոջ: Շատերու խորթ թուի, ռամկական թուի, բայց թէ ժողովուրդին ցաւերը իր իսկ լեզուովը կրնայի պատմել. ատկէ դուրս արուեստականութիւն միայն կ'ըլլար:

Ամէն կողմէ բուն փափաք կը յայտնուէր «Եղեռնապատում» առանձին գրքով հրատարակուելու: «Սեբաստիոյ Վերաշինութեան Միութեան» պատուարժան վարչութիւնը գոհացում կուտայ այդ բաղձանքներուն, մեկենասելով գործիս տպագրութեանը: Այսու նոյն ատեն անմահացնելու մեր գեղեցիկ Սեբաստիոյ քաղցրիկ յիշատակը եւ յարգանքի մեծագոյն բաժինը բերելու մեր նահատակեալ բիւրաւոր հայրենակիցներուն:

Խորին շնորհակալութեան եւ մեծարանքի հաւաստիքները միայն ունիմ աստանօր յայտնելու ամերիկաբնակ մեր Սեբաստացի պատուական հայրենակիցներուն եւ ի մասնաւորի «Սեբաստիոյ Վերաշինութեան Միութեան» կեդր. Պատ. Վարչութեան, որ Սեբաստացիներու յատուկ ձեռնդրեցութեամբ՝ ըլլայ Մայր Քաղաքին, ըլլայ Գաղթավայրերը ապաստանեալ մեր վերապրող հայրենակիցներու բիւր ցաւերուն, ծով պէտքերուն կը հասնին այնքան առատաձեռնօրէն:

Իբրեւ երկար տարիներու ուսուցիչ, Հայ մանկտին եղեր է սրտիս ամենէն մօտիկը: Արիւնի ճամբուն վրայ, ամենէն աւելի սրտիս ազդողը Հայ Տղեկին կրած տառապանքը, անոր՝ անողոքօրէն բնաջնջումը եղած է: Ուստի, որոշեցի «Եղեռնապատում» ձօնել անոնց անթաւամ յիշատակին, եւ ազգու պաղ ջուր մը սրսկած ըլլալ անոնց կրակովը մորմոքող, տապկուող սրտիս:

Աստուած վրէժխնդիր ըլլայ մանկակոտոր վագերատիպ դահճապետներուն, բորենատիպ դահիճներուն:

ՍՊԱՆԴԱՐԱՆԷ ՍՊԱՆԴԱՐԱՆ

ՀԱՍԱՆ-ՉԷԼԷՊԻ, ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՍՊԱՆԴԱՐԱՆԸ - Սեբաստիա-Խարբերդ խճուղիին վրայ արտաբնակ մեծ գիւղ է. միւտիր-լիկ, սուրհանդակի եւ ճամբորդներու կայարան. Սեբաստիայէն 30 ժամ, ուր կը հասնինք մեր ելքի տանսեւհինգերորդ օրը:

Հոս պիտի բանանք փակագիծ մը. մինչեւ հոս - Հասան-Չէլէպի - ճամբու ընթացքին մասնակի սպանութիւններ էր որ տեղի կ'ունենային: Երբբայի եւ Քէօթիւի խաները, ինչպէս տեսանք, միայն կարեւոր անձերը, երիտասարդներ, մտաւորականներ կը սպաննէին. գրեթէ սահմանափակ թուով մը՝ 50-60-ական:

Հայաջինջ քաղաքականութեան դժոխային ծրագրովը կանխորոշուած էր թէ՛ տարագրեալներու կարաւանները ինչ ճամբաներով պիտի երթային, եւ թէ՛ այդ ճամբաներուն վրայ Հայ արու արմատին գանդուածային ջարդերու մասնաւոր վայրերը - սպանդարանները - ո՛ր տեղի պիտի ըլլային:

Չգիտեմք, ինչ հեռաւորութեամբ, եւ թերեւս իւրաքանչիւր տեղի կառավարութիւնը ապագայ հաւանական պատասխանատուութեանէ խուսափելու մտօք, բայց ա՛լ աւելի, ապագայ հետախուզութիւններու առջեւ տարագրելոց հետքերը մոլորեցնելու դիտումով, ընդհանրապէս տեղւոյ մը տարագրեալները՝ իրենց պատկանած վիլայէթի սահմաններէն ելլելէ վերջ է որ, միւս վիլայէթի սպանդարանները կը տարուէին կը սպանուէին: Այսպէս, Սամսոն-Ամասիա-Թոգատի կարաւաններուն ալրերը Շար-Գըլչա առնուած ջարդուած են. Կարնոյ Գ-րդ կարաւանի ալրերը Քէմախ տասանորդուելէ վերջ, մնացեալները Ձէյնայի սարը առնուած ջարդուած են. Երզնկայէն Բալուէն ելլող կարաւանները ջարդած Արածանի լեցուցած են. Երզնկացի մայր մը եւ աղջիկ մը միայն տեսայ Հալէպ հասած. Չնդուշի կարաւանները ջարդած՝ Տուտան ըսուած անդունդը լեցուցած են. Տրապիզոնը ջարդած են Կիւմիւշխանէ. Կալբակ Արապեանը միայն հասած է ըսին Հալէպ: Կեսարիոյ այրերը՝ կէմէրէի մօտերը: Եօզկաթի Առաջնորդին հետ 500 այրեր Սեբաստիա գրկուած եւ Գարտաշարի ձորերը - Տաշը-Տէրէ սպաննուած են. Սեբաստիոյ Ամէլէ-Թապուրիի 2500 տղաքը Շար-Գըլչայի ճամբուն վրայ Գայա-Տիպի ջարդուած են:

Մէկ վիլայէթէն միւս վիլայէթը վալիները, մութասարիֆները իրենց տեղին նշանաւոր հայերը ու կարաւանները մէկզմէկու դուրպանցու կը զրկէին: Մեր բորենին Մուամմէր - հուշակաւոր՝ իբրեւ ամենակատաղի եւ արիւնախանձ թշնամի հայերու - նոյն Մողոք-Բահաղական պատիւին արժանացած է բազմիցս: Ճամբան քիւրտ պէկեր, քիւրտեր, կարաւան մը զարնել, կողոպտել, առեւանգումներ ընելէ վերջ, այլեւս յղփացած, մնացեալներուն կ'ըսէին. Հայտէ՛, ձեզ ալ Արարներուն զուրպանցու կը զրկենք. քիչ մըն ալ անոնք թող զարնեն-ձոյն, առեւանգեն:

Վերջապէս, Թուրքիոյ անիծապարտ սահմաններուն մէջ չզրտ-նրւեցաւ իսլամ տարր մը որ անբաժին մնար Մեծ Աւարէն. չմասնաւոր

րէր մեծ կողոպուտէն, ոճրագործ ձեռքը չթաթխէր Հայ անմեղ արիւնը- շառեւանդէր, չգերեզմարէր ծաղկատի հայուհիներ, պարման մանուկներ: Հասպա գիշակեր թռչուննե՞ր, սեւ ագռաւնե՞ր, չարագուշակ բուռնե՞ր, անապատի անգղնե՞ր, բարձրադիր ժայռերու արծիւնե՞ր, վայրի դազաննե՞ր, շուննե՞ր, շնագայլե՞ր, գերեզմանափոր բորենիննե՞ր, ամէ՛նքը, ամէ՛նքը յղփացան, սրտըղեցան հայու արիւն լափլիզելէն, միսը յօշոտե- լէն, ոսկերքը փշրելէն:

Բայց չչեղինք, դառնանք մեր ըսելիքին:

Ընդհանրապէս այս սպանդանոցները ընտրուած էին շա՛տ ամբաւարիկ տեղեր - անմատչելի լեռնամէջեր, աղամորդու ոտք չկոխած խորունկ ձորեր, երկրաշարժէ, հրաբուխէ բացուած անյատակ անդունդ- ներ, խորխորատներ, գահավէժ ժայռեր, սառնարաններ, ճախնուտներ, լճակներ, մթին անտառներ:

Սպանդանոցի մերձակայ գիւղի կամ տեղւոյ վայրագ խուժանին դործադրել կուտային սպանդը. եկէ՛ք, ձեր հայրերը, ձեր զաւակները պատերազմի մէջ սպանողները գերի բերեր ենք, եկէ՛ք, դուք ալ զանոնք ջարդեցէ՛ք, ձեր վրէժը լուծեցէ՛ք, սրտերնիդ պաղեցուցէ՛ք, ըսելով: Գոր- ծագրութեանը կը հսկէին ժանտարմաներ, տեղւոյն կառավարիչը, փօլիս գօմիսէրը, իթթիհատէն ներկայացուցիչներ, գիւղապետները:

Սպանութիւնները կը կատարուէին խիստ մարդախոշոշ եղանա- կով. մանգաղներով, նաճախներով, մահակով, կացինով, սրածայր ձողերով, սղոցով: Խեղճ գոհերը ինքզինքնին բարբեաղդ պիտի համա- րէին, եթէ գնդակով մը սպանուէին, ո՛րքան կ'աղաչեն եղեր անխիղճ դահիճներուն՝ գնդակով մը մէկ անգամէն սպանել գիրենք. բայց այդ իսկ կը խնայեն. մէկ գնդակին 2 ոսկի գին ուզելով: Ժամերով կը տուայտէին, կը տապըլտկէին, կը չարչրկուէին արեան ճապաղեաց մէջ, ահուելի հոնդիւններով, ոգորումներով, գալարումներով: Զոհե- րուն զգեստները, վրանուն ելած դրամ, ժամացոյց կը բաժնէին ջարդա- րարներուն, իսկ արիւնոտ չուանները կը դարձնէին կարաւան տէրերուն:

Հասան-Չէլէպի ալ Սվազի վիլայէթէն դուրս Խարբերդի վիլայ- էթին հողին վրայ սահմանուած էր Սեբաստիայէն եւ Փոքր Հայքէն եկող կարաւաններուն էրիկմարդոցը սպանդարանը ըլլալու:

Տեսանք որ Սեբաստիոյ ընդհանուր բանտարկութեան օրը մօտ 5000 հոգի բանտարկուեցան. ասոնցմէ դուրս դեռ շատ էրիկմարդ մնացած էին տուները: Տեղահանուած 15 կարաւաններէն իւրաքան- չիւրին հետ առնուազն 300-500 էրիկմարդ կը գտնուէր, ասոնց մեծա- գոյն մասը Հասան-Չէլէպի առնուած-սպանուած են - որով այդ դժոխմ- րեր տեղին անիծապարտ, անյիշատակելի անունը այնքան անբաժանե- յիօրէն կապուած է Սեբաստիոյ բռնագաղթի պատմութեան հետ:

Հասան-Չէլէպի անուն վերապրող մէն մի Սեբաստացիի արիւնած սրտին վրայ անմարելի կրակ մը, լերդը ծակող հրաշէկ գամ մը եղած է: (ԿՁ 107-170):

ՉՕՍԱԽԼՈՒ

Արիս Գալֆայեան

«Արգէոսի փէշին փռուած, արեւոտ ու ծիծղուն երկինքով գիւղի մը պատմութիւնն է այն, Փոքր Ասիոյ մէջ տարածուած հազարաւոր փոքրիկ ու շէնչող գիւղերու նման, որը իր սկզբնական շրջանին գոյութեան պայքարներով եւ իր ցաւոտ վերջաւորութեամբը պատե- րազմի եւ տարագրութեան ահաւոր օրերուն՝ պատմութիւնն իսկ է միւս նոյնաբախտ բոլոր գիւղերուն...»:

Այսպէս է սկսում այս փաստագրական գրքի սկզբում տրուած «Երկու խօսքը»:

Գրքի «Յառաջաբանը» գրել է հանրայայտ պատմաբան Հայ- կազն Գ. Ղազարեանը, 1930 թ.: Այն ներկայացնում ենք ընթերցողին որոշ կրճատումներով: Տրւում է նաեւ մի հատուած Արիս Գալֆայեանի յուշապատումից:

Այն էլ նշենք, որ այս գրքում ընդգրկուած է նաեւ հայերի լքեալ գոյրին վերաբերող մի շարք հեռագրերի օսմաներէն բնագրերն ու թարգմանութիւնները, որոնք նոր լոյս են սփռում հայութեան բնաջնջ- ման եւ նրանց ունեցուածքը կուլ տալու ընդհանուր գործին:

*
* *

Թէեւ 15 տարիներ անցան 1915-ի Հայկական աշխարհասասան ջարդերու եւ տարագրութեանց վրայէն, եւ սակայն անոնց մրմուռը կը վառէ եւ կը մորմոքէ հայ սրտերը: Հայաստանի 66 գլխաւոր քաղաք- ներու 2,000 Հայ գիւղերու, 2,000 հայ եկեղեցիներու քանդումը, եւ 2,000,000 թրքահայ ժողովուրդի կոտորումի տրաման, ոչ թէ տարիներով, այլ դարերու ընթացքին պիտի չմոռցուին:

Ժամանակակից ոչ մէկ պատմագիր կարող է եւ երբեք պիտի կարողանայ իր լիութեանը մէջ պատկերացնել 1915-ի սեւ օրերու Մեծ Եղիւնը:

Իթթիհատական Հիզրան հայ արիւնը հոսեցուց ձորերու մէջ եւ Քիւմարական «Արեւմտականացած» կառավարութիւնը գործուած ոճիրը լրացուց եւ նուիրագործեց, փորձելով ծածկել նահատակաց ոսկորո-

տիրքը եւ հոսած արեան հեղեղները: Կարճ հաշիւ մը: Եթէ իւրաքանչիւր նահատակի յատկացուէր միայն քառորդ էջ, կէս միլիոն էջեր պիտի գրուէր այդ չգրուած Մարտիրոսագրութիւնը: Անգլիերէն ամենէն մեծածաւալ հրատարակութիւնը Բրիտանական Համայնագիտարանն է, եւ 1900ական էջոց 32 հատորներէ կը բաղկանայ, առնուազն 190 հայ 32 հատորոց, Համայնագիտարաններու չափ ծաւալով գրութիւն մը պիտի լեցնէր Հայկական Մարտիրոսագրութիւնը, եւ որուն համար կ'ըսենք թէ, ոչ մէկ պատմաբան կարող պիտի ըլլայ գայն գլուխ հանելու:

Աշխարհասասան ոճիրը որ գործադրուեցաւ, պետականօրէն կազմակերպուած էր եւ կառավարութեան օրկաններու գործակցութեամբ գլուխ եկաւ:

Տարագիր հայութիւնը իր գլուխը հանգչեցնելու տեղ մը գտած չէ տակաւին իր անցեալը առարկայօրէն պրպտելու, եւ իր գլխուն եկածը իր մերկութեամբը պարզելու իր մուկ մնացած բոլոր կողմերով...

...Ուսուցիչ Ա. Գալֆայեանի գիրքը, որ կը խօսի Կեսարիոյ Չօմախլու գիւղին մասին, որ կը գտնուի Արգէնոս լեռան ստորոտը եւ էվէրէկ Տէվէլուի մօտիկն է, պիտի ունենայ ընդհանուր տարագրութեան պատմութեան մէջ իրեն յատուկ տեղը: Եւ որովհետեւ Եղեռնը նոյն նահանգի գիւղերուն վերաբերեալ նոյն սխալմով գործուեցաւ, լուսաւորութեան ջահ մը պիտի ըլլայ ուրիշ գիւղերու պատմութեանց համար ալ:

Պր. Գալֆայեան ականատես վկայ մըն է, եւ զո՛հ մը: Ան կու տայ թրքական փաստաթուղթերու տրցակ մը, որոնց հարազատութեան չկասկածելով հանդերձ, լաւագոյն պիտի ըլլար եթէ թուրքերէն բնագիրներուն լուսանկարովը հրատարակուէր:

Հայութիւնը պէտք է կարգայ այդ սարսուզեցիկ մանրամասնութիւնները, եւ չի մոռնայ իր անցեալը եւ ըստ այնմ պատրաստուի իր սպազային: (էջ 5-8):

*
* *

ՈՒՐ ՄԱՍԻՆՔ

«Տարագրութեան գուզընթաց երբ հայ գիտնորներն անորոշ ուղղութեամբ տարուբերել, նեղել, կրօնափոխութեան ստիպել եւ վերջապէս ջարդել սկսան, Չօմախլուցի գիտնորներս ալ քչեցին Արգէնոսի սառնարանը, ուրկէ մինչեւ Կեսարիա ջրուղի պիտի բանանք:

Արգէն գիւղերը, որոնց կարգին եւ Չօմախլուն պարպուեր էին, մնացել էր միայն էվէրէկ քաղաքը եւ էյլէզլին:

Օգոստոս 16, Աստուածածնայ Կիրակի առաւօտ Ֆէնէսէի կարասներ շարժեցաւ, քանի մը օր վերջ ալ էվէրէկը պիտի հետեւէր մեզի, բայց ուրիշ ճամբով, այնպէս ալ եղաւ:

Գարահիսարի մօտերը էյլէզլին ալ մեր կարաւանին խառնուեցաւ: Կոնջական տարագով կը հետեւիմ կարաւանին, միշտ ալ լրտեսող աչքերէ խուսափելով, բաւական հանգիստ ենք:

Այս կարաւանին հետ մեկնող Չօմախլուցիներս էինք, ես եւ մայրս, վահան Գալֆայեան 4 հոգի, Ներսէս Գալֆայեան տէր եւ տիկին, Տէտէ Կէպէնյեանի (գինուոր) ընտանիքը 3 հոգի, Պէնտիեան Նշան 4 հոգի, Հայկրեան Մնացական՝ 4, էյլէզլիներու մէջ Իսէփեան Կարապետի ընտանիքը՝ 12 հոգի, Մէնէնտեան Սարգիս՝ 7, Գայլումճեան Կարապետ՝ 4, էվէրէկցիներու հետ Սեղրակ Դաւիթեան՝ տէր եւ տիկին, եւ Պէնտիեան Թորոս՝ 3 հոգի: Ընդամէնը 48 հոգի:

Օգոստոս 29-ին Տարսոն հասանք, հող զանազան տեղերու հետ էվէրէկի կարաւանն ալ մեզի հասաւ, եղանք հսկայ բազմութիւն, ա՛լ փարստական փնտուղն ո՛վ է, ամէնքս ալ մահուան դատապարտեալներ ենք, ուստի նետեցի կոնջական տարագր մէկդի:

Սեպտ. 9-ին Ինթիլի հասանք Էնճէսուլի կարաւանին, ա՛խ, ի՛նչ թշուառութիւն էր ան...:

Սեպտ. 11-ին հասանք Գաթմա: Հազարաւոր վրաններ, ամպի գուլաներու նման ճանճեր, կիսաթաղ, անթաղ դիակներ, աղտոտութիւն, դարահոտութիւն, անօթութիւն, համաճարակ, դժո՛խք...: Թշուառագոյններն էին Էնճէսուլիք եւ Չէյթուցիք:

Սեպտ. 23-ին, Հալէպի Գարլըզը վրաններ բացինք: Ներսէս Գալֆայեանը հող զո՛հ տուինք համաճարակի: Լուռ առինք Չօմախլուցիները արգէն մեկներ էին, բայց ո՛ր կողմ, չենք գիտեր:

Սեպտ. 24-ին, մեզ, 700 ընտանիք, 3500-ի մօտ ժողովուրդ ճամբայ հանեցին դէպի Արեւելք:

Մէսքէնէ, Համամ, Ապուհարար անցնելով Հոկտ. 2-ին Բազգայի դէմ Շամիլէ հասանք: Հող գտանք 40 տուն թօմարգացի եւ 3 տուն Գարաճէօրէնցի, որոնց մէջ էր Տէրտէրեան Մարթա եւ իր հարսը: Եփրատի եզերքն ենք, Արաբները երեք ամիսէ ի վեր գետին ջուրը չեն խմեր, որովհետեւ գիշեր-ցերեկ ջուրը հայու դիակ կը քէշ...:

Հոկտ. 28-ին, 600 ընտանիք առնուեցանք Բազգա, ուրիշներ դրամով մտեր էին, բայց մենք ըստ բախտի: Մենք Բազգա անցնելէ վերջ, Թօմարգացիք, Գարաճէօրէնցիք եւ Էնճէսուլիք, բացի Փանոս Օհանեանի ընտանիքէն, որուն հետ էր նաեւ Չօմախլուցի Լուսարեկը

Խրչանան, երկրագործ ժողովուրդ քչեցին Համամի շէյխին ազարակը: Անոնցմէ քանի մը Թօմարգածի եւ Տէրտէրեան Մարթայի հարսը ողջ մնացին, բիւրաւոր հայութիւն քշուեցան Սեփդա եւ Տէր-Ձօր, որոնց պատմութիւնը ծանօթ է...:

Մեր հետ Բագգա մտնող Իսէփեան ընտանիքէն Արշաւիր եւ Նշան ողջ մնացին, միւսները մեռան: Իսկ մենք, Ֆէնէսէցի Ուզուն կարապետեան Գրիգոր, Արմաղանեանները, Ինճէսուցի Խաչատուր աղա, Գալֆայեանները եւ ես մտանք հավուշ մը:

Հետզհետէ անդարձ բաժնուեցան Արմաղանեան Թագուհի, Նագելուհի, այս վերջնոյն գաւակները, Գալֆայեան (Կէպէնլեան) Զարուհի, Գալֆայեան, եւայլն, եւայլն: Քանի մը վայրկեան ես ալ մեռայ: Ինճմէ գատ մեր պարագաներէն՝ ողջ մնացողներէն՝ Արմաղանի թուր Խաչեր, Գալֆայեան, Վահանի տղան Կիւլպէնկ տարին քիւրտները, երբ ես հիւանդ պառկեր էի: Զարուհիի աղջիկը մնաց Արաբներու մօտ, Վահանի աղջիկը Սաթենիկ՝ Բաբելոն՝ Հայ որբանոց ղրկուեցաւ, Պէնտիեան Վահան եւս Պոլիս: Միւսները բոլորն ալ մեռան...:

Իսկ ի՞նչ պատահեցաւ Չօմախլուցի զինուորներուն:

Հայ ժողովուրդի հաշիւը մաքրելէ վերջ կարգը եկած էր հայ զինուորներուն, զանոնք եւս պէտք էր փճացնել, արդէն մինչեւ այդ ծրագրի գործադրութիւնը մեր Չօմախլուցի տղոցմէ շատեր մեռան հոս ու հոն...»:

Այնուհետեւ, գրքի հեղինակ Արիս Գալֆայեանը մէկ առ մէկ անուաներով մանրամասն պատմում է կոտորածի կամ վարակիչ հիւանդութիւնների զոհ զնացած Չօմախլուցիների մասին, որոնք հրաշքով ազատուելով մահուան ճիրաններից, մնացին ողջ:

Ամենավերջին, Արիս Գալֆայեանը լաւատեսական յոյսերով եւ հաւատքով լցուած, հետեւեալ կոչն է ուղղում իր հայրենակիցներին.

«Այժմ, այս բոլոր պայքարէն, անհամար զոհերէն, անհաշիւ զոհողութիւններէն ետքը՝ Չօմախլուի բուռ մը ժողովուրդը պիտի մնա՞յ հոս ու հոն ցրուած, ջարդ-փշուր: Բախտի անողոք հովերուն յանձնուած պիտի հլածի՞, պիտի հալի՞, պիտի մաշի՞, պիտի սպառի՞...: Ո՛չ: Պէտք է շարժի՛ր...: Թո՛ղ մեզմէ ամէն մէկը աշխատի ամէնքին եւ ամէնքը մէկին օգնել, եւ աս՝ միայն մէկ նպատակով: Մեր ցաւագին զլուխները հանգ-չեցնելու քար մը ապահովել Մայր-Հայրենիքի մէկ անկիւնը: Այս է կտակը մեր մեռնողներուն. ա՛յս պէտք է ըլլայ նպատակը ապրողներուն»: (էջ 145-151):

ՍԱՐԱՇ ԿԱՍ ԳԵՐՍԱՆԻԿ ԵՒ ՅԵՐՈՍ ԶԷՅԹՈՒՆ

Գրիգոր Հ. Գալուստեան

944 էջերից բաղկացած այս ստուարածաւալ աշխատութիւնը լոյս է տեսել 1934 թ. Նիւ Եորքում, Ամերիկայի Մարաշի Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ:

Այս հատորը ընդգրկում է Մարաշի համապարփակ պատմութիւնը իր անցեալով ու ներկայով, կենցաղով, դէմքերով ու դէպքերով:

Բնականաբար, այն չի սահմանափակում միայն Մարաշով: Գրքում մանրամասն խօսուում է Կիլիկիայի քաղաքների ու գիւղերի, գաւառների եւ դաւառակների մասին, վերջում կանգ առնելով նաեւ Արդուլհամիդեան բռնատիրութեան եւ Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականութեան վրայ: Այդ շարադրուած է փաստագրական նիւթերի եւ վկայութիւնների հիման վրայ, ուր ընդգրկուած են տարբեր բնոյթի 250 նկարներ եւ առանձին քարտէզներ: Գրքի վերջում խօսուում է նաեւ մարաշի 25 հայրենակիցների մասին, որոնց սերտ համագործակցութեամբ եւ օգնութեամբ լոյս աշխարհ է եկել գիրքը:

Այս բարձրարժէք երկասիրութեան հեղինակն է բնիկ մարաշի Գրիգոր Հ. Գալուստեանը (ծնուած 1879 թ.), որը երկար տարիներ Մարաշի, Ատանայի, Տարսոնի հայկական դպրոցներում դասաւանդել է Հայոց պատմութիւն, լեզու եւ գրականութիւն: Միեւնոյն ժամանակ, 1910-1913 թթ. աւարտելով Կ. Պոլսոյ համալսարանի իրաւագիտութեան ճիւղը, զբաղուել է նաեւ փաստաբանութեամբ:

Թերթում եմ ու ընթերցում այս ստուարածաւալ երկասիրութիւնը եւ գալիս այն համոզման, որ այսպիսի գիտական բարձր մակարդակով շարադրուած աշխատութիւնը կարող էր կատարել պատմագիտական խորը գիտելիքներով զինուած եւ իր ժողովուրդին, իր հայրենի քաղաքին անհուն սիրով ու նուիրածութեամբ լցուած մի անձնաւորութիւն: Յարգանք նրա անմահ յիշատակին:

Ստորեւ տրւում է հատուածներ քաղուած հեղինակի առաջաբանից, ինչպէս նաեւ մի երկու վկայութիւններ Մեծ Եղեռնի ողբերգութեան մասին:

*

* * *

...Հատորիս հրատարակութեան նպատակն է Յիշատակարանով մը յարգել մեր հին ու նոր բերաւոր նահատակներու խնկելի ու յաւէտ անմոռաց յիշատակը, փրկել Մարաշի կորսուելու դատապարտուած կարգ մը արժէքները՝ ինչպէս Գաւառաբարբառը, Անգիր գրականութենէն նմոյշներ, եւ այն բոլորը՝ որոնք պատմական քաղաքի մը արձանագրութեան արժանի յիշատակներն են, ամրապնդել հայրենակցական բարոյական կապը շուրջ 15,000 այն բոլոր Մարաշցիներուն մէջ, որոնք թէեւ 1895-1920 երկարաձգուող քսանհինգամեայ շրջանին իրենց թիւին կէսը կորսնցուցին, սակայն հայրենի յիշատակներով կ'ապրին՝ ցրուած աշխարհիս տարբեր ցամաքամասերուն վրայ, եւ մանաւանդ սա յոյսն ու խրախոյսը ներշնչել ապրող Մարաշցիներուն թէ՛ իբրեւ ճշմարիտ հայեր պէտք է անվհատ եռանդով շարունակեն Յեղին շինարար ջանքերը: Նոյն ատեն կը փափաքինք օրինակ ըլլալ ուրիշ քաղաքներու միութեանց՝ սոյնօրինակ հատորներու մէջ ամփոփելու իրենց հայրենի աւանդներուն եւ քաղաքներուն յիշատակը: որովհետեւ՝ որչափ գիտենք՝ երկիս ծրագրով ու ծաւալով հրատարակութիւն մը ցարդ չէ եղած հայրենի միակ քաղաքի մը շուրջ...:

*
* *

ՄԱՐԱՇ կամ **ԳԵՐՄԱՆԻԿ**, Արեւելեան Կիլիկիոյ այս կարեւոր քաղաքը, իբրեւ հայաքաղաք, Հայերու համար պատմութեան անցած է այլեւս: Անոր երէկի հոծ բնակչութեան կէսէն աւելին հայրենի հողը իր նահատակի արիւնով ոռոգած՝ ու վերապրողներն ալ Սուրիա, Պաղեստին, Եգիպտոս, Յունաստան, Ֆրանսա ու մինչեւ Նոր Աշխարհի հեռաւոր ափերը ցրուած են: Անոր ազգային յիշատակարանները եկեղեցի, ուխտատեղի, դպրոց, գերեզմանոց, կա՛մ գետնահասար քանդուած եւ կա՛մ բռնազրաւուած են: Ազգային կամ անհատական ամէն տնտեսութիւն, ստացուածք ու կալուածք կա՛մ քայքայուած եւ կա՛մ յափշտակուած են: Սակայն, վերապրող բոլոր մարաշցիներու սիրտերուն մէջ, իրենց հայրենի քաղաքը, իր բերաւոր նահատակներուն յաւէտ անմոռաց ու խնկելի յիշատակներով, պապենական տուններու քաղցր ներշնչումներով, հայ կեանքի ու կենցաղի մաքրամաքուր յուշերով կ'ապրի անմեռ, եւ պիտի շարունակէ ապրիլ՝ ցորչափ իւրաքանչիւր մարաշցի իրեն համար նուիրական պարտականութիւն մը համարի այս հայրենի յիշատակները փոխանցել սերունդէ սերունդ:

Եւ ահա այդ բաղձալի նպատակին համար, **ՄԱՐԱՇ** կամ **ԳԵՐՄԱՆԻԿ**, իբրեւ պայմաններու ներած չափով համեստ մէկ երկասի-

րութիւն, պիտի ջանայ տեւականացնել յաւէտ անմոռանալի հայրենի քաղաքին յիշատակը, գոնէ չափով մը փրկելով զայն խաղաւ մոռացումէ: Մա՛նաւանդ անոր համար որ վերապրող սերունդին հետ յախտնապէս կրնան մոռացուիլ շատերը այն յիշատակներէն, որոնք այսօր դառնանուշ յոյգերով կ'ուռեցնեն մեր սիրտերը եւ աղի արցունքներով կը լծացնեն մեր աչքերը:

*
* *

Յովսէփ Վարդանեանի Մարաշի Չարդը գրքոյկին մէջ, հետեւեալ տեղեկութիւնները կը գտնենք զօրաշարժի եւ տարագրութեան այս շրջանին մասին:

...«1915 - 7 Օգոստոսն է, Շաբաթ օրը՝ նախորդ իրիկուընէ լուրը ամէն շրջանակի մէջ տարածուած էր թէ քրիստոնեայք պարտին վաղուան համար պատրաստուիլ, սա պայմանաւ որ նախ ամուրիներ - երիտասարդներ տան մը մէջ նեցուկ մը մնալով, միւս այրերը պարտ կ'ին մեկնիլ եւ ետքն ալ ընտանիքի տէրեր. սակայն շատեր չուզելով բաժնուիլ իրենց սիրելիներէն եւ տան անդամներէն, միասին ճամբայ կ'ելլին՝ գրեթէ յանպատրաստից եւ խուռն բազմութեամբ. անանկ որ, ճամբու երկայնք ու դաշտ կը ծածկուին ամբոխով մը, որուն ի տես կը պարմանար կառավարութիւնը եւ Ատանայէ եկող զինուորներ ետ կը պարձնէր, կամաց կամաց ու ետքէն դացէք ըսելով. քանզի զսա անանկ համոզած էին տեղական թուրքեր, որ Մարաշցիներն ալ պիտի սպստամբէին ու դէմ դնէին. իսկ այժմ սոյն գաղափարը կը ջրուէր:

Եւ այսպէս օր օրի վրայ, թաղ թաղ եւ կամ ընտանեօք ցանկեր կը պատրաստուէին ու կը հաղորդուէին տէրերուն պատրաստ ըլլալ որոշեալ օրը մեկնելու համար, կառավարութիւնը ոմանց կը պարտադրէր, տարապարհակ բռնուած փոխադրական միջոցներ, գրաստ, էշ եւ այլն, որոնք սակայն ճամբու ընթացքին գիշերանց փախուստ կու տային յաճախ բեռով միասին ու անդարձ:

Ասանկ օրեր, շաբաթներ կ'անցնէին ու քաղաքին քրիստոնեայ բնակչութիւնը կը ցանցառնար գամ քան զգամ, օր մ'ալ հրաման կ'ելլէր թէ Բողոքականք չպիտի երթան եւ յիւրաւի ոմանք ճամբէն եւ ոմանք ալ մինչեւ իսկ Այնթապէն ետ կը վերադարձուէին, բայց ոչ շատ ետք կրկին կը դրկուէին:

Կառավարութիւնը լքեալ գոյքերու եւ կալուածներու արձանագրութեանց համար մասնաւոր յանձնախումբ մը կազմած էր, որ թէ՛ պացողներու տուններուն մէջ մնացած կարասիները կ'արձանագրէր եւ

թէ՛ դիւղերէ բերուած կամ քաղաք մնացածները, ինչպէս նաեւ անշարժ կայուածներ, օրին մէկը բոլորն ալ իւրացնելու եւ կողոպտելու համար անտարակոյս: Ոմանք ալ օտարներու՝ այն է Ամերիկացիներու կամ Գերմաններու կը յանձնէին իրենց ապրանքներէն մաս մը:

Այսպէս կը շարունակէ գաղթը 3-4 ամիս, ապա ատեն մը, իբր 9 ամիս դադար տրուելէ ետքը, կրկին անգամ մնացեալներէն մաս մը կ'աքսորուի, որ կը գուգադիպէր Այրան-Ինթիլի փապուղիին եւ շրջակայից մէջ աշխատող հայ գործաւորներու տարագրութեան. այսուհանդերձ, քաղաքը բոլորովին չի պարպուիր եւ բաւական թիւով հայեր՝ մօտ 3 հազար անձ՝ կը մնային, ընդ որս կը մնար նաեւ իր հոգեւոր հովիւ Տ. Խաչատուր Մ. Վրդ.: Տէր Ղազարեան, որ Զէյթունի վանուց եւ եկեղեցեաց անօթներն ու կա՛հ կարասին բերած կը նստէր Ստեփաննոս եկեղեցւոյ մէջ:

Մարաշի պատերազմական ատեանը պարապ չէր կենար, կը գործէր ան. մէկ կողմէ կը տարագրէր, միւս կողմէ կը կախէր եւ այսպէս քաղաքին տարբեր կէտերուն վրայ Գանլը Քէօփրիւի, Գանլը Տէրէի եւ Բէօթի մօտ տասնեակ եւ հնգասունեակ խումբերով կախաղան կը հանէր երեք հարիւրի չափ բանտարկեալներ ու կը մաքրէր բանտը:

Սոյն բոլոր սպաննուածները խոստովանցուցած են Տ. Յակոբ քհնյ. Ապանեան, Շիվիլի գիւղի Տ. Մանուէլը եւ Խաչատուր Վարդապետ:

Ի տես սոյն կախաղաններու, հայ ժողովուրդը կը սահմուկի եւ շատեր առանց կարգի սպասելու ինքնաբերաբար մեկնած են, առանց գիտնալու թէ ի՞նչ դժբախտութիւն կը սպասէր իրենց քիչ անդին կամ երթալիք տեղին վրայ: Մնացածը ծանօթ է արդէն:

1915-18 պատերազմի տարիներ եղան եւ հայ ժողովուրդը տարագրութեան եւ ջարդի դառն բաժակը ցմբուր քամեց, որուն նկարագրութիւնը դուրս է մեր կար եւ նպատակէն, ամէն մէկ վերապրող կենդանի վկայ եւ անգիր պատմութիւն մըն է ինքնին:

Ինչպէս տեսանք՝ 1915-ին ընդհանուր եւ հայաջինջ տարագրութեան կը մասնակցէր Մարաշցիին ալ, որ սակայն մեծ մասամբ Սուրիոյ կողմերը գացած ըլլալուն՝ բաղդատմամբ հայաբնակ այլ գաւառներու՝ քիչ կորուստով դուրս կու գայ, գրեթէ առ հարիւր 35-40 գո՛հ տալով եւ ողջ մնացողներ, շուրջ 26-27 հազար անձ կը վերադառնային 1918-1919-ին, սոյն թիւին մէջ կը գտնուին նաեւ շրջակայ գիւղերէն եւ այլ հայկական նահանգներէն մաս մը հայեր՝ շատերը այրիներ:

Տէր-Զօրի եւ Բաս-իւլ-Այնի կողմ գացողներ առանց բացառութեան ջարդուած կամ մեռած են»:

*
* *

Մեր հայրենակից Սարգիս Սէրայտարեան, ներկայիս Երուսաղէմի Ս. Յակոբի վանքի միաբաններէն, ականատեսի հետեւեալ տեղեկութիւնները կուտայ տարագրութեան եւ Մարաշի վերջին աղէտի լրջաններու մասին:

«1914 Յուլիս 21-ին (Հ. Տ.) երբ զօրաշարժ (սէֆէրպէրիք) յայտարարուեցաւ, Մարաշի Իթթիհատի Ակումբը եւ տեղական կառավարութիւնը պատեհ առիթ գտան քրիստոնեաները փճացնելու իրենց գիւսային ծրագիրը գործադրելու համար: Այդ գիւղերէն յիշենք կարգաւ.

Նախ Զէյթունը տեղահանեցին ամէն տեսակ նախատինքներ եւ վայրագութիւններ գործադրելով: Առաջին խումբերէն 500-ի չափ էրիկ-մարդիկ բանտարկեցին եւ ծերերը, կիներն ու մանուկները տարագրեցին, բարբարոսական տառապանքներու ենթարկելով գանոնք: Այդ 500 սյրերէն 150-ը իրարու սեղմօրէն կապած, շուկաները պտըտցուցին: Նապարէթ Չաւուշը սոսկայի դանակոծելէ եւ մահամերձ վիճակի հասցնելէ ետքը՝ թուրքեր զայն պատգարակի վրայ առած՝ քանիցս իբր թէ արկածով գետին ձգելով, քաղաքէն դուրս հանեցին, լուսանկարեցին: Յետոյ բանտ բերին, ուր դեղագործ Լութֆի տուած թունաւոր դեղով թունաւորելով, մեռցուցին նոյն գիշեր:

Բանտարկուած Զէյթունցիներէն շուրջ 100-ը իրարու կապուած քաղաքին արեւմտակողմը ձորի մը մէջ գնդակահարեցին: Մնացեալ Զէյթունցիներուն համար տարբեր թուրք թաղերէ սուտ վկաներ հայթայթելով՝ Զինուորական Ատեանի առջեւ իբր թէ դատեցին եւ կախաղան հանեցին: Կախուողներէն 25 հոգի Մարաշցի կամ մօտիկ տեղերէ, իսկ մնացեալները Զէյթունցիներ էին:

Երբ Մարաշը տեղահանել ծրագրուած էր՝ կառավարութիւնը Զինուորապետի վրայ դրկելու համար Ատանայէ զօրք բերել տուաւ եւ երբ Զինուորապետ նուաճեցին, զինուորական հրամանատարը Մարաշ եկաւ եւ տեղահանութիւնը յայտարարեց. նախ կաթոլիկները մնալու արտօնեց, ու երբ ժողովուրդը հնազանդ կերպով մեկնեցաւ քաղաքէն, յոխորտաց թէ ապստամբ ըսուած հայերը իր մէկ հրամանովը քաղաքէն մեկնեցան: Այսպէս, ժողովուրդին մեծամասնութիւնը խումբ խումբ տարագրուեցաւ: Զինուորի ընտանիքներէն շատերը, մանաւանդ զեղաղէմ հարսերը, տեղահանութեան սպառնալիքով անպատմելի խայտառակութեանց ենթարկուեցան: Իթթիհատի փոխ-նախագահ Գօճապաշ օղլու Օմար զինուորի ամուսին հարս մը խայտառակեց: Նոյնպէս ուրիշ կողմերէ տարագրուած աղջիկներ եւ կիներ կը բերուէին Մարաշ՝ թուրքերու կիներուն ենթարկուելու համար: Անոնցմէ շատերը ունեցան սրտակեղեք մարտիրոսութիւն, զոր նկարագրել շատ երկար պիտի ըլլար:

Սէրայտարեան ջանացած է անոնցմէ ոմանց օգնել՝ պահելով եւ պատսպարելով զանոնք»։ (էջ 778-780)։

1915. ԱՂԷՏ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆՂ

ԼԵՆՆ ՄԵՐՈՎ

Այս խորագրով գիրքը լոյս է տեսել Փարիզում 1952 թուականին, Լենն Մերովի նախաձեռնութեամբ եւ հայրենասիրական պարտքի կատարման խորը գիտակցութեամբ։ Գրքի շապիկում մատնանշուած է, որ հեղինակներն են Արեւմտեան Հայաստանի Մեծ Եղեռնի աղէտից վերապրողները։

Բովանդակալից, գիտականօրէն յագեցած եւ մանրամասն վերլուծումներով շարադրուած ներածութիւնը գրել է՝ Լենն Մերովը։ Այն ամբողջապէս ներկայացնում ենք ընթերցողին, տալով նաեւ մի երկու հատուած վերապրողների յուշերից։

*
* *

Համաշխարհային պատերազմի ընթացքին տեղի ունեցաւ ահաւոր դէպք մը. աւելի ահաւոր քան թէ պատերազմի բոլոր արհաւիրքները. երկուքուկէս միլիոն Հայերու տեղահանութիւնը իրենց չորս հազար տարուան բնաշխարհէն եւ անոնց մեծ մասին սպանդը։

Ոճիր մը, որ չունի իր նախընթացը մարդկային տարեգրութեանց մէջ, սկսելով ամենահին ու խաւար դարերէ մինչեւ ներկայ ժամանակները, կամ ասորական բարբարոսութեանց արձանագրութիւններէն՝ մինչեւ քաղաքակիրթ կամ լուսաւոր կոչուած դարաշրջանին 1915 թուականը։

Չանգուածային բնաջնջումը՝ հայ ազգին ամբողջութեան կէսին, բարբարոսներու ձեռքով եւ դիւալին ծրագրով, յղացուած՝ Օսմանեան սահմանադրութեան ծածկոցին տակ։

Ամենէն զարհուրելի ոճիրը, զոր թուրք ցեղը աւելցուց իր բազմաթիւ ոճիրներուն վրայ, հայ ազգին դէմ, եւ քաղաքակիրթ կոչուած աշխարհին դէմ, եւ ամբողջ մարդկութեան խղճին դէմ։

Անասելի յանցանք մը, զոր Դաշնակից կառավարութիւնները, հակառակ իրենց հանդիսաւոր յանձնառութեանց, ձգեցին անպատիժ եւ, քանի մը տարի ետք, իրր անմիջական հետեւանք՝ թափուած հայ անմեղ արեան, աշխարհը չարաչար պատժուեցաւ հիթլերական սարսափով։ Արդարեւ՝ Հիթլէր, իր իսկ խոստովանութեամբ, քաջալերուած՝

1015-ի հայկական սպանդին մոռացումէն, սարքեց ցեղաջինջ նոր սպանդ Ռուսոպոլի սրտին վրայ...։

Թէ ի՞նչպէս ձեռնարկուեցաւ Մեծ Եղեռնի յուշերուն հրատարակութեան։

Յօդուածով մը թելադրած էի որ Աղէտէն վերապրողները այս տարուան (1951-ի) սգատօնին առթիւ, թերթերու մէջ իրենց յուշերը գրին։ Յօդուածը արտատպուեցաւ գաղութներու մէջ եւ վերապրողներ սկսան իրենց յուշերը զրկել հասցէիս, Ֆրանսայէն, հիւսիսային եւ հարաւային Ամերիկաներէն, Պալքանեան երկիրներէ, Սուրիայէն եւայլն։ Սոյանի եղաւ թէ Մեծ Աղէտին ցաւը, այսքան տարի ետք, տակաւին կը կատար 1915-ի սերունդին կուրծքին տակ, առաջին օրերու սաստկութեամբ։ Ոմանք կ'ըսէին թէ նոյնիսկ տարիներ առաջ գրած եւ պահած են իրենց յուշերը, աւանդ ձգելու համար իրենց զաւակներուն, որովհետեւ տպագրելու որեւէ յոյս չունէին։

Այս պայմաններուն մէջ, նուիրական պարտականութիւն էր գոհացում տալ ընդհանուրին ցանկութեան եւ ձեռնարկել յուշերու հաւաքման եւ հրատարակութեան։

Իրականին մէջ, իրենք, գաղութներու մէջ ցրուած վերապրողներն են այս գրքին հեղինակները, ամէն կողմէ միացած՝ նոյն բաղձանքով, թելադրութիւններով, քաջալերութիւնով։

Այս գիրքը չի հետապնդեր քաղաքական ոչ մէկ նպատակ, ոչ ալ պատմութիւնն է Մեծ Եղեռնին, այլ ականատես զոհերու վիպութեանց հաւաքածոն, որ ապագային կրնայ նիւթ հայթայթել 1915 - լիակատար պատմութիւնը գրողներուն։

Այս գրքին հրատարակութիւնը, Ոճիրէն երեք տասնամեակ եւ աւելի տարիներ ետք, կը դառնայ անյետաձգելի անհրաժեշտութիւն, որովհետեւ, վերապրող վիպները անհետանալու վրայ են։ Ոճիրը, տարիներու ընթացքին, սկսեւ է արդէն աղօտանալ եւ խեղաթիւրուիլ։

Չէ՞ որ, 1915-էն ի վեր, յաճախ փորձուեցաւ ճերմկցնել Ոճրագործը ի շահ եւրոպական նենգ եւ պղտոր դրամատիրութեան։

Չէ՞ որ, նոյնիսկ հիմա, 1951-ին, երբ դեռ կենդանի են տասնեակ հազարաւոր վերապրողներ, քաղաքակիրթ կոչուած ազգեր կամովին կը մոռնան Թուրքին Ոճիրը որ գիրենք եւ ամբողջ մարդկութիւնը ցնցեց 1015-ին։ 1951 Դեկտեմբերին, Փարիզ, ձայնասփիւռէն խօսող մը խղճի կատարեալ հանդարտութեամբ չբնեղացուց Ոճրագործը, յայտարարելով թէ Հայերը նոր կրօնք մը ուզեցին տարածել Քուրտիստանի մէջ եւ շարդուեցան Քուրտերո՛ւ ձեռքով...։

Չէ՞ որ, 1915-ի Մեծ Ոճրագործը հիմա բազմած է մեծ ազգերու կողքին։

Չէ՞ որ, Թուրքը, բոլորովին չփացած, սինիքորէն բողոքեց իր լրագրողներէն մէկուն բերնով. «Հայերը կը յանդգնին նախատել մեզ, վեհանաճն Թուրքերս, ստիպելով եւ փրօփականտ մը մղելով որ Անատոլի մէջ իբր թէ միլիոնաւոր հայեր կ'ապրին եղեր 1914-ի պատերազմին, որոնք իբր թէ ջարդուեր են Թուրքերու ձեռքով...»:

Այս ամէնը՝ երբ դեռ կանգուն են Թրքա-Հայաստանի հարիւր հազարաւոր հայապատկան շէնքերու, բազմադարեան կոթողներու, եկեղեցիներու եւ վանքերու աւերակները, եւ երբ տակաւին ողջ են Աղէտէն վերապրած հազարաւոր Թրքահայեր...:

Այս գիրքը գրողներէն շատերը հազիւ պատանիներ էին 1915-ին եւ, այդ պատճառաւ մնացած են կիսազրագէտ:

Սրբազրելով իրենց յուշերը, ջանացի պահել իրենց ժողովրդական պարզ ոճը եւ անկեղծ շեշտը, յաճախ գարմանալիօրէն ինքնատիպ եւ ուժեղ:

Մեր ժողովուրդն է, արտայայտութեան եւ զգացումի հարստութեամբ օժտուած հայ ժողովուրդը, որ կը յայտնուի այս տողերուն մէջ: Պատմողներուն ամենէն անուար, տառասխալներով իր գրութեանը մէջ, երբեմն գրական գեղեցկութիւններ եւ մտածման գոհարներ գետեղած է առանց անդրադառնալու, գեղեցիկին առհաւական իր բնագոյով:

Ատկէ գատ, այս էջերուն մէջ կը գտնէք թանկագին տեղեկութիւններ, որոնք այլապէս պիտի կորսուէին պատմութեան համար: Ինչպէս՝ Չօհրապի եւ Վարդգէսի ի պատիւ տրուած հացկերոյթը Թուրք վալիի մը կողմէ, անոնց սպանութեան նախօրեակին, կամ պոլսահայ մտաւորականութեան աքսորին եւ նահատակութեան առնչութեամբ անտիկ եւ ծանրակշիռ յայտնութիւններ:

Ընթերցողը այս գրքին մէջ պիտի գտնէ նաեւ գաղտնիքը թէ ինչպէս հայ ազգը կրցաւ վերապրիլ համատարած աղէտի մը փորձութենէն անցնելէ ետք, երբ ուրիշ ազգեր, իրմէ աւելի մեծ եւ ուժով, շատոնց փոշիացած եւ անհետացած են, չկրնալով դիմանալ շատ աւելի փոքր աղէտներու փորձութեան:

Այս գիրքը, այդ տեսակէտով, հաւատարիմ թարգմանն է Հայուն ցեղական առաքինութեանց եւ պանծացումը հայ կնոջ:

1915-ի աղէտը ծայրէ ծայր, եւ անոր դառնութեան մինչեւ յետին կաթիլը, հայ կնոջն է որ բաժին ինկաւ: Անոնք հարիւր հազարներով նահատակուեցան ու մեռան եւ հազարներով իբր ողջ նահատակ դեռ կ'ապրին իրենց դահիճներուն լուծին տակ:

Պիտի հանդիպիք այս գրքին մէջ հայ հերոս կիներու, նոյնիսկ աղջիկներու, որոնց շատին անունը անգամ կը մնայ անյայտ, եւ որոնք դիտցան անվթար պահել ազգային նոյն առաքինութիւնները, ամենա-

գմնդակ պայմաններու մէջ, երբ տղամարդիկ գանգուածօրէն բնաջնջուած էին եւ հայ կինը հեռաւոր կիրճերու եւ անծանօթ անապատներու մէջ մնացած էր բոլորովին անպաշտպան, անօթի եւ մերկ, յրջապատուած՝ մարդակերպ գազաններով...:

Յուշերու հաւաքման գործը անակնկալ եւ կսկծելի հարց մը ստեղծեց: Միջագետքի հայկական գաղութներէն, որոնց հետ կարելի եղաւ թղթակցել մեծ դժուարութեամբ, տեղեկացուցին թէ արարական վրաններու տակ դեռ գոյութիւն ունին կիսով կամ ամբողջովին արարացած հայ բնատանիքներ, կիներ ու որբուկներ որոնք ձգուած են իրենց բաղդին: Այդ դժբաղդներուն հանդէպ աններելի է անտարբերութիւնը ազգային մարմիններուն եւ այլազան միութիւններուն, մանաւանդ Բարեգործականին եւ վերջապէս իւրաքանչիւր հայ անհատին:

Մեր պատմութեան մեծագոյն աղէտին ամենատխուր վերջիլումն է այս գիրքը, բայց, միեւնոյն ատեն, մեր ժողովուրդին անընկճելի կենսունակութեան վաւերաթուղթը, եւ մեր լուսաւոր ապագային համար հաւատք ներշնչող խանդավառութեան աղբիւր:

Չորս հազար տարուան ազգ մը կիսով կոտորակուած եւ ամբողջութեամբը կորստեան անդունդին եզերքը հասած, կրցաւ վերածնել հէքեթներու փիւնիկին պէս, հակառակ դահիճներու, Թալաթին եւ նման հրէշներու ծրագրին, «առնուազն յիսուն տարի կիսամեռ պահել եւ «այվագութեան» աստիճանին իջեցնել հայը...»:

Եւ սակայն, 1915-ի աննախընթաց աղէտէն ետք, հայը արդէն վերածնած է տարագրութեան սոսկումներէն եւ Միջագետքի աւազուտին վրայ սփռուած անթաղ ոսկրակոյտերէն...:

Երբայական հին ու սրբազան բանաստեղծութեան մէջ գլուխգործոց երգ մը կայ որմէ մէկ էջ ընդդօրինակուած կը գտնէք քիչ անդին եւ որ գարմանալի եւ ցնցող զուգադիպութեամբ կը պատշաճի հայկական ողբերգութեան:

Եզեկիէլ, երբայցեցի մեծ բանաստեղծը կամ մարգարէն, ինչպէս կը կոչուէին Հրէաստանի բանաստեղծներն ու իմաստասէրները, մեր թուականէն երկու հազար հինգ հարիւր տարի առաջ ներշնչուեր է անյայտ սարսափով մը եւ կ'երգեր՝ ազգի մը վերածնունդը անապատին մէջ ցրուած ոսկրակոյտերէ:

«Դաշտը ոսկորներով լեցուն էր...»

Եւ ահա շարժում մը եղաւ, եւ ոսկորները իրարու մօտեցան, ոսկորը՝ իր ոսկորին...:

Եւ շունչը անոնց մէջ մտաւ ու կենդանացան...:

Եւ խիստ մեծ ուժ մը կազմուեցաւ...»:

Իրապէս ցնցող նմանութիւն, որովհետեւ դաշտը զոր կը նկարագրէ Եգիպտէի, նոյն Միջագետքն է ուր մեր նահատակները ինկան 1915-ին:

Իսկ հիմա, Միջագետքի նոյն աւագուտքին մէջ, հայկական փոքր բայց կենսալից գաղութներ են՝ Տէր-Ձօրը, որ հայկական աղէտին խորհրդանշանը դարձաւ, ձէզիրէն՝ սպանդի հաւաքավայրը եւ Բազգան՝ անթաղ մեռեալներու անծայր գերեզմանոցը, իւրաքանչիւր գաղութ՝ իր եկեղեցիով, դպրոց-մանկապարտէզով, մարզական միութիւններով եւ ֆանֆառի խումբով...:

Ունինք հայկական վերածնունդի ուրիշ պատկեր, անբաղդատելիորէն աւելի մեծ չափանիշով: Հայուն իբր ազգ գոյութեան վերջին պատնէշը, Կովկասեան Հայաստանը, վտանգուած էր Համաշխարհային պատերազմի վերջաւորութեան, կամ մասամբ արդէն ինկած: Անպաշտպան երկիր մը, արիւնաքամ ժողովուրդ մը, երեք հարիւր հազար թրքահայ փախստական, սով, համաճարակ եւ ջարդարար նոյն փաշաները Երեւանի դրան առջեւ, իրենց արիւնաներկ սուրով եւ սրուած ախորժակով...:

Այսօր՝ փոքր երկիր մը, ազատ եւ անկախ, որ Սովետական անպարտելի պատուարին կռթնած, հզօր է, ինչպէս չէր եղած իր պատմութեան ամբողջ ընթացքին:

Իր գոյութիւնը ապահոված փոքր ազգ մը, որ հսկայ ուժով դարբնելու վրայ է ազգային վերելք, աննախընթաց՝ իր բազմադարեան կեանքին մէջ:

Հայ ազգը 1915-ին գոհ տուաւ անհաշուելի հարստութիւն, մշակութային անփոխարինելի գանձեր եւ, ամենաթանկագինը, հարիւր հազարաւոր երեխաներ որոնցմէ պիտի ծլէին արուեստի եւ գիտութեան իր ապագայ յոյսերը:

Դիտեցէք, սակայն, այս գրքին լուսանկարը: Անոնց մէկ մասը քաշուած է Աղէտէն առաջ, ներկայացնելով հնարարեան կոթողներ, յիշատակարաններ, ընտանեկան եւ դպրոցական խմբանկարներ: Երկրորդ մասը՝ աղէտ, տարագրութիւն եւ սպանդ: Մնացեալները Աղէտէն ետքի պատկերներ են եւ կը ներկայացնեն նոր ծիւեր, նոր երիտասարդութիւն, հայ ժողովուրդին նոր յոյսերը, փրկարար ներգաղթը, մեր Սովետական Հայրենիքին յարաճուն վերելքը, մեր ազգին անհաւատալի վերածնունդը: (էջ 5-12):

ՄՇՈՅ ԴԱՇՏ

Նախշուն

Ծնուել է Մշոյ դաշտի Բագիճա գիւղում՝ Ս. Կարապետի մօտ: Գտնուում է Մ. Հ. Կ. Աշտարակի որբանոցում:

Ընտանիքի անդամները՝ Սահակ, հայրը, երկրագործ, Մարիամ, մայրը, Նախշուն՝ ինքը, Սեդրակ, եղբայրը, 9 տարեկան, Ալմաստ, քոյրը, 7 տարեկան, Ազնուտ, քոյրը, մէկ տարեկան:

«Նոր էի օճախը վառել եւ կաթը դրել վրան, երբ լսեցի մօրս ճիչը: - Ամա՛ն, Նախշուն, եկ՛ուր, մեր դրացի Մանէին սպաննեցին»:

Մեր գիւղում Քրդերը շատ քիչ էին: Եղածներն էլ մեզ հետ լաւ էին, մանաւանդ մեր հարեւանները՝ Հաջիենք: Նրանք յաճախ կրկնում էին, որ վտանգի դէպքում մեզ կը պաշտպանեն: Հայրիկս ու մայրիկս պատրով մօտալուտ վտանգը, յիշեցին Հաջիենց խոստումը եւ տան իրեղէնները հաւաքելով, փոխադրեցին նրանց մօտ: Բայց բանից դուրս եկաւ, որ գիւղում կոտորած չկար, այլ միայն հրաման էր եկել կառավարութիւնից, որ տղամարդիկ հաւաքուին գիւղի ուշտի մօտ, որտեղից նրանց պիտի ճանապարհէին չզբոսեմ ուր: Մանէն միայն չէր հնազանդուել ու դրա համար էլ պատժուել էր իր կեանքի գնով: Շուտով մեր տուն մտան մի քանի պաշտօնեաներ եւ հրամայեցին որ հայրս էլ հետեւի նրանց: Երբ հայրիկիս տարան, հետեւեալ օրը հրաման դուրս եկաւ, որ գիւղի բոլոր կանայք եւ երեխաներն էլ պիտի պատրաստուեն տղամարդկանց հետ ճանապարհ ելնելու:

Մենք դեռեւս պատրաստութիւն չէինք տեսել, երբ լսեցինք ձիերի սմբակների ձայնը, դուրս վազեցինք բակի դուռը եւ տեսանք, որ մի խումբ ասկեարներ առաջներն առած քշում են մեր գիւղի տղամարդկանց, ձեռքերը յետեւին շղթայած եւ միմեանց շողկապած:

Դրանց մէջ ես անմիջապէս գտայ հայրիկիս: Նրա կուններն էլ էին յետեւին կապել: Նա աչքերը ձգեց մեր տան վրայ, մեզ տեսաւ եւ լաց եղաւ: Մայրիկը նրան չէր նկատել, նա նրանց մէջ միայն իր քեռուն էր տեսել: Հենց որ տղամարդիկ անցան, նրանց յետեւից քշեցին մեզ: Առաջից գնում էին տղամարդիկ, յետեւից մենք: Ոտների տակից ելնող փոշին խեղդում էր մեզ, բայց մեզ թոյլ չէին տալիս մի քայլ անգամ միմիանցից գատուելու:

Բոլորը տրտում-տխուր առաջ էին գնում: Ոմանք հառաչում ու լաց էին լինում: Լսում մէկ մէկ շշուկներ, որոնք ասում էին.

- Մեզ տանում են Ս. Կարապետի վանքը, գիշերս այնտեղ պիտի մնանք:

- Իսկ յետո՞յ:

- Յետո՞յ, ի՞նչ գիտենք...Ո՛վ դու Ս. Կարապետ, մեռնինք քո սուրբ գորութեանդ...:

Կէսօրից յետոյ հասանք Ս. Կարապետի վանքը: Իսկապէս որ մեզ այդտեղ դադար տուին: Տղամարդկանց քշեցին ջոկ տեղ, իսկ մեզ՝ կանանց, լցրին գոմերն ու դռները մեզ վրայ փակեցին: Արեւը մայր

մտաւ եւ մուծը պատեց գոմը: Մեզ մօտ ոչ եկան եւ ոչ էլ ճրագ ուղարկեցին: Մնացինք մուծի մէջ սոված, դողը սրտերնիս:

Մայրս նստեց գետնին, բացեց կուրծքը եւ սկսեց Ազնուտին կերակրել: Ազնուտն անմիջապէս քնեց: Խորովը, ես եւ Ալմաստը գլուխներս դրինք մայրիկի ծնկներին ու լուռ պառկեցինք:

- Զեզի մեռնեմ, հաց չէ՞ք ուզում, հարցրեց մայրս:

Մենք բոլորս էլ պատասխանեցինք՝ ո՛չ: Գիտէինք, որ հաց չկար: Բայց եթէ լինէր էլ, միեւնոյն է, չէինք ուտի: Ախորժակ չկար:

Մի փոքր յետոյ քնեց եւ Ալմաստը: Իսկ իմ եւ Խորովի քունը չէր տանում: Մթուփեան մէջ մի խոնաւ բան թրջեց իմ ճակատը: Մօրս արտասուքն էր: Այդ որ նկատեցի, երեսս ծածկեցի մայրիկիս գոգում եւ սկսեցի թագուն լալ:

Խորովը չէր լալիս: Նա լուռ պառկած՝ կարծես մի ինչ որ բանի մասին մտածում էր: Արդէն բաւականին անցել էր: Թէ ես եւ թէ մայրս դադարել էինք լալուց, երբ յանկարծ դրան փականի մէջ լսեցինք բանալիի սխտորոցը: Դուռը բացուեց եւ ներս մտան երեք ասկար: Մենք շունչներս քաշեցինք: Միայն մեր աչքերը նրանց ձեռքի ճրագի ճառագայթներից անհանդիստ թարթում էին: Նրանք մի բան էին որոնում: Մէկը մօտեցնում էր ճրագը եւ միւսները որոնող հայեացքով նայում էին մեր դէմքերին: Յանկարծ ճրագի բոցը կանգ առաւ մայրիկիս, ապա իմ դէմքի առաջ: Ինձ թուաց, որ իմ սիրտս այլեւս չէր բաբախում, բայց այդ ընդմիջում յետեւի ասկարը բոթեց իր ընկերոջն ասելով.

- Լաւ, գնա՛:

Նրանք թողին մեզ եւ հերթով մօտեցան միւսներին: Մէկ էլ կանգ առան գոմի անկիւնում կանգնած Մարիամի առաջ: Մարիամը մեր գիւղի երիտասարդ եւ ամենից գեղեցիկ աղջիկն էր:

- Վեր կաց գնանք, ասաց ասկարներից մէկը նրա ձեռքը բռնելով:

Մարիամը ճչաց եւ կպաւ իր մօր կռնից:

- Վեր կաց քեզ ասում եմ, թէ ոչ՝ այս ընդմիջում քեզ կը մորթեն, ասաց միւս ասկարն ու ձեռքը ձգելով աղջկայ կռնատակերը բարձրացրեց: Մարիամը նորից եւ նորից ճչաց, բայց նրան կռնատակերից բռնած քաշեցին դուրս եւ դուռը նորից կողպեցին մեզ վրան: Մարիամի ձայնը կտրուեց: Մենք մնացինք կրկին մթուփեան մէջ ահաբեկուած ու լուռ:

Հենց որ ասկարները դուրս եկան, մայրիկս ինձ պառկեցրեց երեսս դէպի պատը եւ ինքը նստեց առաջս: Բայց իմ քունը մինչեւ լուսաբաց չտարաւ: Մտածում էի խեղճ Մարիամի մասին, որ այդ գիշեր այլեւս չեկաւ: Լուսաբացին, դրսից թնդաց հրացանագարկ: Կարծես երազում էի եւ ամպերն էին որոտում: Տեսայ՝ կանայք խոնուած գոմի լուսանցքի մօտ՝ դէպի դուրս են նայում, կոծում ու գլխներին տալիս:

Իսկ երկխաները, կուտուած գոմի անկիւնում, լաց են լինում: Ուզեցի մտնելու լուսանցքին եւ դուրս նայել, մայրս արգիւեց: Այդ ընդմիջում յասանցրից դէպի գոմը շարժուեց հրացանի մի խողովակ եւ լուսեց ասկարի գոռոցը:

- Ի՞նչ էք գոռոցներդ գցել, միեւնոյն է, ձեզ էլ նրանց պէս պիտի սպանենք: Կտրէք այս ընդմիջում ձեռք ձայնը:

Իմ մարմնով մի սարսուռ անցաւ եւ ոտներս թուլացան: Զգիտեմ ինչ ո՞ւր լացս չեկաւ: Դուրսը նորից եւ նորից թնդացին հրացանները: Գաղարեցին միայն կէսօրին:

- Գնացին ճաշի, ասացին գոմում:

Օդ տուելով հանգամանքից, ես մօտեցայ լուսանցքին եւ դուրս նայեցի: Եւ ի՞նչ տեսնեմ:

Դիակների մի ահագին կոյտ՝ մէկը միւսը վրայ թափթփած, մերկ ու ոտարուպիկ, երեսները դէպի վար: Վախեցայ, մի գուցէ նրանց մէջ ձանաչեմ հօրս: Աչքերս իսկոյն վեր բարձրացրի եւ, չգիտեմ ինչու, յստեցի ծառերի միջից երեւացող Ս. Կարապետի գմբէթին: Այդ ընդմիջում գոմի մէջ լսեցի տղամարդու ձայներ: Յետ նայեցի՝ ասկարներ էին: Հաց էին բերել մեզ բաժնելու:

Երեք օրից յետոյ, մեզ դուրս բերեցին գոմից, որ տանին Մուշ: Մեզ հետ այլեւս հայ տղամարդ չկար: Բոլորին կոտորել էին: Մուշից մեզ քշեցին Կոմուէ: Շէխլարի տակ, ճանապարհին, մի մուփ գիշեր մայրս յանկարծ բռնեց մեր թեւից ու մտաւ մի թփի տակ: Երբ մենք փորձեցինք ձայն հանել, մայրս ձեռքը դրեց մեր բերանին եւ նշան արաւ որ լուսեք: Կանանց եւ երեխաների կարաւանը առաջ անցաւ եւ ասկարների կողմից մենք մնացինք աննկատ: Մենք ազատուել էինք: Բայց ինչ ազատութիւն էր դա, երբ ազատ շարժուելու հնարաւորութիւն չուներինք: Մենք դուրս եկանք ճանապարհից եւ սկսեցինք քայլել մացառոտ եւ քարքարոտ դար ու փոսերով: Ողջ գիշերը Ազնուտը նուրբ էր մայրիկի կաթը ցամաքել էր, դրա համար էլ չէր կարողանում նրան կերակրել եւ հանգստացնել: Մայրիկի կռնքն էլ սաստիկ յոգնել էին, բայց եւ այնպէս նրան գրկած անդադար օրօրում էր: Այդպէս քայլեցինք ողջ գիշերը, ինքներս էլ չգիտէինք դէպի ուր: Երբ լուսացաւ, բարձրացանք ի բլուր եւ պատասպարուեցինք մի քարի տակ: այդտեղ մեզ տեսնել չէին կարող: Ողջ օրը մնացինք ահա սրտերնիս, թէ մի գուցէ մեզ նկատեն: Միայն Ազնուտն էր որ չէր հասկանում մեր դրուժիւնը եւ անվերջ նուրբ էր, ինչպէս նախնիժաց գիշերը:

Սաստիկ սոված էինք, բայց որտեղի՞ց գտնէինք հաց:

Հենց որ օրը մթնեց, մենք իջանք հովիտը: Մայրիկն ասաց որ ամբողջ գիշերը կրկին ճանապարհ պիտի գնանք: Ազնուտը կրկին չէր

հանդատանում: Նա իմանալով, որ մայրիկի կաթը ցամաքել է, այլևս չէր մօտենում մայրիկի կրծքին: Իսկ յոգնած եւ սոված մայրիկն իր կոների մէջ այլևս ոյժ չունէր նրան անդադար օրօրելու: Յամառել էր Արմաստը, յոգնել էր եւ չէր ուզում քայլել: Մինչդեռ մենք ողջ գիշերը պիտի գնայինք:

Ներքեւ անցնում էր մի գետ: Մենք իջանք նրա ափը եւ մայրս նշան ըրաւ, որ նստենք: Նա Ազնուտին իր գիրկն առաւ եւ սկսեց սրտագին համրուրել: Ապա ոտքի կանգնեց, առաւ իր մէջքը Արմաստին, որ այլևս մի քայլ առնել չէր կարողանում, բռնեց մեր երկուսի՝ իմ եւ Սեդրակի թեւից ու բարձրացաւ կրկին բլուրները:

Այդպէս մենք չորս օր ճանապարհ գնացինք: Գիշերները գնում էինք ու ցերեկները թագնուում: Չորրորդ օրը լուսաբացին հասանք մեր գիւղը եւ բաղնիքները մեր հարեւան քուրդ Հաջիենց տան դուռը: Հաջին պարմանքով մեզ ընդունեց, բայց վերին աստիճանի սլորալիւր էր եւ կարեկից: Նա մեզ կերակրեց եւ հրաւիրեց, որ հանգստանանք: Մեզ առաջնորդեցին այն սենեակը, ուր անվնաս ու լիովին սարքուած էին մեր՝ նրան պահ տուած իրեղէնները:

Մեր գիւղը բերել էին ուրիշ տեղերից գաղթեցրած Քրդեր ու տեղաւորել հայերի տներում: Մի քուրդ ընտանիք էլ ապրում էր մեր տանը: Բայց մօրս սրտին չտուեց, որ գնայ տեսնի մեր տունը: Հետեւեալ օրը, երկու ասկար մտան Հաջիենց տունը եւ ասացին, որ այստեղ Հայեր են պատսպարուել, պիտի անմիջապէս իրենց յանձնուեն:

Բայց ծերունի Հաջին դուրս եկաւ եւ նեղացած՝ ասաւ.

- Ես կին չեմ տայ, որ դուք տանէք սպանէք, կ'ուզէք ինձ սպանէք: Ասկարները հեռացան:

Մի շաբաթից յետոյ, Հաջին մեզ տեղափոխեց իրենց հարեւան Սաֆարենց Մկոյի տունը, որ գիւղի գաղթից յետոյ դատարկ էր մնացել: Այդտեղ մենք մի տեսակ յարմարեցրինք եւ տեղաւորուեցինք: Մայրիկս ամէն օր գնում էր Հաջիենց տունը բան անում ու գիշերները գալիս մեզ հետ քնելու: Այսպէս ապրեցինք մի քանի ամիս, մինչեւ ձիւնը եկաւ ու ծածկեց գետինը: Մի օր, Քրդերի մէջ իրարանցում ընկաւ թէ Ռուսը մօտենում է իրենց գիւղին: Նրանք շտապով պատրաստութիւն տեսան, որ գաղթեն: Առաջ տեղափոխեցին իրենց կայքը ու անասունը, ապա ընտանիքը: Տեղափոխուում էին եւ Հաջիենք: Նրանք իրենց տան եղածը՝ չեղածը բարձում էին իրենց անասուններին, մարդիկ մի բեռ էլ իրենք առնում ու գնում: Այդպէս երեք անգամ գնացին ու եկան: Ամէն անգամ տանում էին եւ մայրիկին, մի տոպրակ էլ նրա մէջքին բարձած:

Վերջին անգամ, երեկոյեան, երբ ճանապարհւում էին, արդէն հեռուից լսում էր հրացանների ձայնը:

Այս անգամ մայրիկը ցանկացաւ մնալ մեզ հետ, բայց Հաջիի փոքր եղբայրը սպառնալիքով ցոյց տուեց դաշոյնն ու ասաց.

- Ուզո՞ւմ ես: Ապա մի տոպրակ ցորեն դրեց մայրիկի մէջքին, առաջն ընկաւ ու գնաց: Գիւղում ոչ ոք չմնաց: Առաւօտեան փողոցներում լսեցինք ձիերի սմբակների տրոփոյն եւ տղամարդկանց ձայներ: Չվստահեցանք դուրս գալ: Վախեցանք մի գուցէ տաճիկ ասկարներ լինեն, որոնք կարող են մեզ սպաննել:

Այսպէս մնացինք ողջ օրը: Արդէն մութը պատել էր, երբ յանկարծ մեր դուռը բաց արին եւ հինգ զինուած տղամարդ մտան ներս: Մենք սարսափից ճչացինք եւ միմեանց զրկելով, կուչ եկանք սենեակի անկիւնում: Մէկը նրանցից հայերէն ասաց.

- Հա՞յ էք բալէքս:

Մենք խկոյն ընդառաջ վազեցինք եւ երեքովս փարուեցինք նրան: Հայ զինուոր էր:

Մենք այնչափ ուրախացանք, որ վերջապէս Ռուսները եկան եւ մեզ ազատեցին: Երանի շուտ եկած լինէին, չէր սպաննուի հայրիկս եւ այժմ, ո՞վ գիտէ ո՞ւր, չէր տառապի մայրիկս, որին չգիտեմ ի՞նչպէս մոռանամ»: (էջ 192-199):

ՊՈԼԻՍ

ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՔՍՈՐԸ

Օհաննէս Թէրլէմէզեան

1915 Ապրիլ 10-23-ի երեկոյեան, Պոլիս, խանութիս մէջ զբաղած էի, երբ ոստիկան մը գալով զիս պահականոց առաջնորդեց, առանց թոյլ տալու մէկ վայրկեան որ գոյքերս հաւաքեմ:

Պահականոցին մէջ երկար սպասեցի: Հետզհետէ ուրիշ ձերբակալուածներ ալ եկան եւ առանց հարցաքննութեան զրկուեցանք կեդրոնական մեծ բանտը:

Այդ գիշեր եւ յաջորդ առտու ձերբակալուեցան հայ կարեւոր դէմքեր՝ մտաւորական, յեղափոխական գործիչ, բժիշկ, եւ այլն, մօտաւորապէս 200 անձ:

Յաջորդ գիշեր, Ապրիլ 24-ին, բանտէն քամիոններով փոխադրուեցանք Սարայ-Պուռնու, ուր արդէն յատուկ շոքեհաւ մը կը սպասէր: Շատեր վախցան որ ծով թափուելու համար շոքեհաւ կը դրուէին: Բայց Հայտար Փաշա տարուեցանք եւ, մասնաւոր գնացքով, մեզ ճամբայ հանեցին դէպի Էնկիւրիւ: Գնացքին մէջ Ակնուսին եւ

րնկիրները կ'ըսէին, թէ «Ոչինչ սխալութիւն մը կայ: Վաղը Վարդգէսը թայլատին գիմելով վերադարձուելու հրաման կ'առնէ մեզի համար»:

Էնկիւրիւ հասնելէ առաջ, Այաշի կայարանին մէջ զատեցին աչքի ինկող յեղափոխականները եւ ղրկեցին Այաշի բանտը: Անոնցմէ քիչեր միայն ազատուեցան, իսկ մնացեալները ի վերջոյ չարաչար խողտողուած էին (Ակնուռի, Խաթակ, Տոքթ. Տաղաւարեան, Ռ. Զարդարեան, Հրանդ Կիրճեան, Հրաչ Թիրեաքեան, եւայլն):

Այաշի կայարանէն Էնկիւրիւ տարուեցանք, ուր արտօնեցին որ Պոլիս մեր ընտանիքներուն հեռագրենք: Վերջէն տեղկացանք թէ հեռագիրները չէին ղրկուած:

Էնկիւրիւէն, բեռան կառքերով մեզ ղրկեցին Չանղըրը: Երկրորդ իրիկունը Չանղըրը հասանք եւ մեզ բանտարկեցին քաղաքէն քիչ հեռու հին զօրանոցի մը մէջ:

Յաջորդ օրը, բոլոր բանտարկեալներս հաւաքուեցանք եւ հսկում կատարեցինք: Երեք վարդապետ - Կոմիտաս, Պալաքեան եւ Յովնան Կարապետեան - «Տէր Ողորմեա» երգեցին: Ամէնքս ծունկի եկած էինք: Կոմիտաս վարդապետ շատ յուզուած էր եւ կ'արտասուէր: Այդ «Տէր Ողորմեա»ն անմոռանալի եղաւ բոլորիս համար:

8-10 օր ետք, արտօնուեցանք քաղաքին մէջ բնակելու, պայմանաւ, որ ամէն օր ներկայանանք ոստիկանատուն:

Կոմիտաս եւ Յովնան վարդապետները, Տիրան Քէլէկեան, Յակոբ Քարեան եւ ես, Չէրքէզեան անուն հայու մը տունը վարձեցինք: Միւսներն ալ ուրիշ տուներ:

Յաջորդ Կիրակի, Կոմիտաս վարդապետ պատարագեց: Անոնք որ ներկայ եղած են իր պատարագին, գիտեն թէ ինչ հոգեգմայլ հանգէսի մը ներկայ կը գտնուէին, բայց այդ օրը Կոմիտաս գերազանցեց ինքզինքը: Երբ յուզուած եւ սքանչացած կ'աղօթէինք, Կոմիտասի արձակման հեռագիրը հասաւ: Առաջին աքսորեալն էր որ պիտի վերադառնար Պոլիս: Իր ազատ արձակման հրամանը կը վերագրուի Ամերիկեան դեսպանին եւ կամ գահաժառանգ Մէծիտ էֆէնտիի միջնորդութեան, որովհետեւ երկուքն ալ սիրահար էին գեղարուեստին:

Կոմիտասէն ետք, քանինքն եւս յաջողեցան հետզհետէ ազատիլ եւ վերադառնալ Պոլիս իսկ մնացեալները դէպի անապատ ճամբայ հանեցին եւ ամէնքն ալ անխնայ սպաննեցին:

Չանղըրի Իթթահատականներու պետին աղջիկը կը հիւանդանայ այդ օրերը եւ աքսորեալներէն Տոքթ. Տինանեանը կը կանչուի զինքը դարմանելու: Այդ միջոցին կը հասնի Տոքթ. Տինանեանի ազատ արձակման հրամանն ալ, որով, Տոքթ. Սեւակը կը յաջորդէ Տոքթ. Տինանեանին, յիշեալ աղջիկը դարմանելու համար:

Աղջիկը կը սիրահարի Տոքթ. Սեւակին:

- Դուք ամէնքդ ալ դատապարտուած էք մահուան կ'ըսէ աղջկան չալլը Տոքթ. Սեւակին: Կ'ուզեմ քեզ ազատել, պայմանաւ որ խլամանաս եւ ամուսնանաս աղջկանս հետ:

Տոքթ. մեր տունը եկաւ խորհուրդ հարցնելու: Յովնան Վրդ. Քէլէկեան եւ ամէնքս խորհուրդ տուինք իրեն, խլամութիւնը ընդունիլ եւ ամուսնանալ: Ապագային, երբ պարագաները փոխուին, ըստ այնմ վարուիլ: Ըսինք թէ իր մահը ոչ մէկ օգուտ կը բերէ ոչ ազգին, ոչ իր ընտանիքին:

- Չեմ կրնար համոզուիլ այն դադափարին հետ, ըսաւ տոքթ. Սեւակը, որ մահէն վախնալով ուրանամ ազգ եւ ընտանիք:

Եւ նախընտրեց մեռնիլ...:

Պոլսոյ մէջ, կնոջս եւ բարեկամներուս դիմումին շնորհիւ, իմ ազատութեան հրամանն ալ եկաւ: Տոքթ. Սեւակ, Վարուժան եւ Քէլէկեան յանձնարարեցին որ Պոլսոյ մէջ այցելեմ իրենց ընտանիքներուն եւ հաղորդեմ, թէ ինչ վտանգաւոր դրութեան մէջ են, մանաւանդ Սեւակին տիկնոջ, որ Զուլեյխիսի էր, որպէսզի դիմէ զուլեյխիական դեսպանատունը: Դժբախտաբար դէպքերը տարբեր կերպարանք ստացան երբ հազիւ 47 օրէն յաջողեցայ Պոլիս վերադառնալ: Աքսորի յիշեալ թանկագին ընկերներս, մեկնումէս ետք արդէն սպաննուած էին:

Ազատութեան հրաման ստացողներէն վերջինները եղանք, Յակոբ Քարեանը, ատամնաբոյժ Վահան Ալթունեանը եւ ես:

1915 Օգոստոս 6-ին Չանղըրէն մեկնելով, Օգոստոս 8-ին Էնկիւրիւ հասանք: Նոյն օրը անծանօթ ուղղութեամբ ճամբայ հանուած են մեր միւս ընկերները, բացի 10-12 անձէ: Արամ Անտոնեանը, որ աքսորուածներուն հետ էր, բարեբաղտ արկածով կ'ազատի մահուանէ: Բեռան կառքի ցնցումներէն նեղուած, երբ կը փորձէ դիրք փոխել, կառքէն կ'իյնայ եւ ծանրապէս կը վիրաւորուի: Զինքը մեր կառքը փոխադրեցին եւ տարինք Էնկիւրիւ, ուր երկար ատեն հիւանդանոց մնալով ազատեցաւ:

Հակառակ մեր ազատութեան վճռին, Էնկիւրիւի դաժան կուսաչալլ տեղւոյն կաթողիկ հայերուն հետ մեզ բանտարկեց եւ Օգոստոս 17-ին ճամբայ հանեց դէպի հիւանդանոց:

Բանտէն դուրս կը կանչէին չորսական հոգի: Կը կարծէինք որ հարցաքննութեան կ'երթանք, մինչդեռ դուրսը, Էնկիւրիւի կառավարական պաշտօնեաներու ներկայութեան, 8-10 մարդիկ վրանիս յարձակեցան եւ մեր բազուկները իրարու կապեցին: Այսպէս, կարաւան կազմեցինք, 750-800 անձ եւ ճամբայ ելանք: Տեղացի հայեր, որոնք գիտէին թէ իրենցմէ առաջ 400 հոգի նոյն ճամբուն վրայ ջարդուած են, սկսալ լալ եւ ողբալ: Այդ օրը անակնկալ դէպք մը պատահեցաւ: Մեր

հանկէն սրարշաւ հասան քանի մը ճիւղեր եւ մեզ առաջնորդող ժանտարմաներուն յանձնեցին հրամանագիր մը: Ժանտարմաները, փոխանակ մեզ ջարդելու, Գարա-Կէտիկ գիւղը տարին, ըսելով որ ներման արժանացած ենք եւ աղօթենք կայսեր համար: Ի վերջոյ իմացանք թէ Պապին Պոլսոյ նուիրակը, Մոնսէնէէօր Տոլչին տեղեկանալով էնկիւրիի կաթոլիկ հայերուն սպառնացող եղբրական վախճանը, կը դիմէ Աւստրիոյ դեսպանին, այս վերջինն ալ՝ Թալաթին եւ կը յաջողի կաթոլիկ հայերը փրկել: Կուսակալը երեք օր բանակցելով կը յաջողի որոշում ձեռք բերել որ կաթոլիկ հայերը, փոխանակ էնկիւրիւ վերադառնալու, քշուին Միջագետք:

Օգոստոս 20-ին, Գարա-Կէտիկ գիւղէն մեկնելով եւ ճամբուն վրայ սահմուկեցուցիչ դէպքերէ եւ տեսարաններէ անցնելէ ետք, անօթի, ծարաւ 21 օր քայլելով հասանք Պոզանթի:

Ժանտարմաները ազատ կը ձգէին որ մեր սարսափելի ծարաւը յազեցնենք ճահճային ջուրերէ: Մաքուր առուներէ խմել յանդգնողները անխնայ կը ծեծէին:

Պոզանթիի մէջ գտանք ամէն կողմէ աքսորուած հայերու բազմութիւն մը: Այդտեղ տեսայ օսմանեան հանրային պարտուց հայ պաշտօնեայ մը, որուն սիրուն աղջիկները ժանտարմաներու խենէշ յարձակման կ'ենթարկուէին: Խեղճ հայրը դրամ խոստացած էր զաւակները փրկելու համար, բայց չէր կրցած գոհացնել ջարդարարները:

Պոզանթիէն քշուեցայ Տարսոն, ուր, քաղաքէն դուրս հաստատուած էր տարագրեալներու ընդարձակ վրանաքաղաք մը: Անընդհատ կը հասնէին նոր կարաւաններ եւ մաս առ մաս կը ճամբուէին դէպի Տէր-Զօր:

Օր մը յաջողեցայ վրանաքաղաքէն Տարսոն երթալ եւ հեռագրել Պոլիս: Կինս եւ բարեկամներս կրկին դիմումներով կը վերստանան ազատութեանս հրամանը:

Տեղւոյն սէվքիաթի (աքսորի) տնօրէնը, հազարաւոր տարագրուներու մէջ զիս գտաւ եւ ըսաւ. «Եթէ յիսուն դեղին ոսկի տաս, քեզ կը վերադարձնեմ Պոլիս: Եթէ չտաս, անմիջապէս ճամբայ կը հանեմ դէպի անապատ, եւ կը հեռագրեմ որ այդ անունով անձ չկայ այստեղ»:

Եւ թոյլ տուաւ որ քաղաք երթամ ու հեռագրով դրամ ուզեմ Պոլսէն: Աքսորակից ընկերներս՝ Քարեանն ու Ալթունեանը ինծի հետ քաղաք եկան եւ տեղւոյն զայմագամին իմացուցին եղելութիւնը: Գայմագամը Պոլսէն հարցուցեր է մեր երեքին արձակման մասին եւ հաստատական պատասխան ստանալով, կառք մը վարձեց եւ մեզ վերադարձուց երկաթուղոյ կայարանը, որ մէկ օրուայ ճամբայ էր:

Սեպտեմբեր 19-ին մեկնեցանք Տարսոնէն եւ 22-ին հասանք Պոլիս, հայտար-Փաշա: (էջ 236-242) Յրանսա 1951:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ԱՎԱՆԱՏԵՍ ԿԵՐԱՊՈՂՈՂՆԵՐԻ ԿՎԵՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՐԵՒԱՆ 2000

Վերժինէ Սվազեան

ՀՀ ԳԱԱ Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի աւագ գիտաշխատող, բանասիրական գիտութիւնների դոկտոր Վերժինէ Սվազեանը, դեռեւս 1950-ական թուականների սկզբից անձամբ շրջագայել է Հայաստանի քաղաքներն ու գիւղերը, հանդիպումներ ունեցել Մեծ Եղեռնից հրաշքով փրկուած վերապրողների հետ եւ գրի արել նրանց աղիողորմ նկարագրութիւնները: Իր այս հայրենանուէր աշխատանքով, Վերժինէ Սվազեանը յետագայ սերունդների համար կորստից փրկեց Մեծ Եղեռնի սահմուկեցուցիչ տեսարաններին եւ Տէր-Զօրեան կիզիչ արեւի տառապանքներին ականատես վերապրողների յուշապատումները, պատմական ընդթի գրոյցներն ու երգերը: Եւ այս ստուրածաւալ հատորում ամփոփուած են նրա երկար տարիների տրնաջան աշխատանքի արդիւնքը, որն ունի պատմա-վաւերագրական խիստ կարեւոր նշանակութիւն:

Ստորեւ տրուում է հեղինակի ներածականից հատուածներ, իսկ այնուհետեւ վերապրողներից մէկի՝ Մարիամ Բաղդիշեանի պատմած կիւրճային յուշապատումը:

*
* *

Ներածութիւն

Որքան տարիներն անցնում են, այնքան աւելի է մեծանում հետաքրքրութիւնը Հայոց Յեղասպանութեան նկատմամբ, մանաւանդ որ, թուրք ու թուրքմէտ պատմաբաններն առ այսօր ամէն կերպ ճգնում են խեղաթիւրել Հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած 1915-1922 թթ. պատմական ստոյգ իրողութիւնները:

Հայոց Յեղասպանութեան մասին տարբեր լեզուներով լոյս են տեսել բազմաթիւ ուսումնասիրութիւններ, փաստաթղթերի ժողովածուներ, քաղաքագէտների եւ հասարակական գործիչների ասոյթներ, գեղարուեստական ստեղծագործութիւններ, սակայն հրատարակուած այդ գրականութեան մէջ բացակայել են պատմական յիշեալ իրադարձութիւններից անմիջական տպաւորութիւններ ստացած ականատես-վկայ վերապրողների պատմած յուշերն ու հաղորդած ժողովրդական

կրկերը, որոնք եւս պատմաճանաչողական եւ փաստավաւերագրական կարեւոր արժէք են ներկայացնում: Քանի որ հայ ժողովուրդն ինքն է կրեկ այդ բոլոր անասելի տառապանքները, հետեւաբար, ժողովուրդն ինքն է այդ զանգուածային ոճրագործութեան առարկան (object): Եւ ինչպէս ամէն մի յանձագործութիւն բացայայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նոյնպէս եւ այս պարագայում պէտք է յենուել նաեւ ականատես վերապրողների վկայութիւնների վրայ, որոնցից իւրաքանչիւրն ապացուցողական նշանակութիւն ունի Հայ Դատի արդարացի լուծման եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչման գործում...:

Պատմական այդ իրադարձութիւնների ընթացքում արեւմտահայութեան զգալի մասն անխնայ բնաջնջուել է, իսկ հրաշքով փրկուածները, գաղթի ճամբաների գրկանքները ճաշակելով եւ բազմաթիւ զոհեր տալով, հասել են Արեւելեան Հայաստան կամ՝ սփռուել աշխարհի տարբեր երկրներ: Յետագայում այդ մնացորդացի որոշ մասը Կ. Պոլսից, Յունաստանից, Ֆրանսիայից, Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Եգիպտոսից, Պալքանեան երկրներից եւ Ամերիկայից պարբերաբար ներգաղթել են Մայր Հայաստան եւ բնակութիւն հաստատել իրենց երբեմնի բնօրրանների յիշատակները խորհրդանշող Երեւանի մերձակայ նորակառոյց թաղամասերում (Այգեստան, Սարի դաղ, Նոր Բուծանիա, Նոր Արեւ, Նոր Խարբերդ, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նոր Եղեսիա, Նոր Այնթապ, Նոր Արաբկիր, Նոր Մարաշ, Նոր Հաճըն, Նոր Զէյթուն, Նոր Մուսա լեռ, Նոր Կիլիկիա), ինչպէս նաեւ Վաղարշապատում, Արմաւիրում, Արարատում, Թալինում, Հրազտանում, Գլմրիում, Վանաձորում, եւ այլուր:

Հայոց Յեղասպանութիւնից հրաշքով փրկուած վերապրող ականատես-վկաներին մենք մշտապէս հանդիպել ենք ինքնամփոփ ու լուռ՝ իրենց մտորումների մէջ մտասոյգ: Այդ խորհրդաւոր լուռութիւնը եւս ունեցել է իր պատճառը, քանի որ տասնամեակներ շարունակ խորհրդային հայրենիքում տիրող քաղաքական արգելքները թոյլ չեն տուել իրենց անցեալի մասին ազատ ու անկաշկանդ պատմել կամ վիպել: Հետեւաբար, այդ կարգի նիւթերը մեծ դժուարութեամբ ենք յայտնարեւել եւ գրի առել:

Քառասունչինգ տարիների ընթացքում մեր հետեւողական պրպտումներով, ինչպէս Հայաստանի տարբեր շրջաններում, նոյնպէս եւ Յունաստան, Ֆրանսիա, ԱՄՆ եւ Թուրքիա կատարած մեր անձնական կարճատեւ ուղեւորութիւնների ընթացքում մշտապէս որոնել, յայտնաբերել ենք Հայոց Յեղասպանութիւնից վերապրող ականատեսների աւագ, միջին եւ կրտսեր սերունդների ներկայացուցիչներին, մօտիկից ծանօթացել նրանց հետ, թափանցել նրանց հոգու խորխորատ-

ները: Տեղի տալով մեր թախանձագին յորդորներին՝ նրանք, պոռթկալից յուզումով կրկին վերապրելով իրենց տխուր անցեալը, արցունքախառն հեկեկոցներով սկսել են պատմել իրենց յիշողութեան մէջ անթեղած սրտամօրմոք յուշերը, թէ ինչպէս երիտթուրքական ոստիկանները բռնի տեղահանել են իրենց պապենական շէն ու առատ օճախներից եւ իրենց աչքերի առաջ անմարդկայնօրէն յօշոտել իրենց ծնողներին ու նորագատներին, պատուազրկել իրենց մայրերին ու քոյրերին, քարերով ճիւղ նորածին մանուկներին...:

Ականատես վերապրողներից իւրաքանչիւրն իր կեանքի յուշը պատմել է իրեն հարազատ հայերէն խօսուածքով, յաճախ նաեւ՝ բարբառով կամ օտարախառն հայերէնով եւ կամ՝ թուրքերէն, քրդերէն եւ այլ լեզուներով:

Մեր գրի առած, ձայնագրած ու տեսագրած ժողովրդական բանաւոր նիւթերն ականատես վերապրողների անմիջական տպաւորութիւնների վերյուշերն են, նրանց խոհերն ու մտորումները՝ արեւմտահայութեանը բաժին ընկած ճակատագրի կենդանի պատկերների ստոյգ ու ճշմարտացի վերարտադրութեամբ:

Ականատես-վկաների պատմած յուշերում արտացոլուած են նայրենի բնաշխարհի գեղեցկութիւնները, նրանց նահապետական առօրեայ կենցաղն ու սովորոյթները, նրանց ապրած ժամանակաշրջանը՝ հասարակական-քաղաքական կեանքի պայմանները, նշանակալից պատմական իրադարձութիւնները, երիտթուրքական կառավարութեան պարագլուխների (Թալէաթ, Էնվեր, Ճեմալ, Նազիմ, Բեհհէդդին Շաքիր...) գործադրած դաժանութիւնները (հարկահաւաք, զօրահաւաք, զինահաւաք, ողջակէզ, բռնազաղթ, ջարդ, կոտորած), վերջիններիս կազմակերպուած բռնի տեղահանութիւնները դէպի ամալի անապատներ (Տէր-Ջօր, Բաս-ուլ-Այն, Բագգա, Հոմա-Համա, Մեսքէնէ, Սուրուհ...), նայրի կրած անասելի տառապանքները (զայլք ու ժասպառուելու աստիճան, ծարաւ, քաղց, համաճարակ, մահուան սարսափ...), ինչպէս նաեւ արեւմտահայ տարբեր հատուածների մղած արդար ու ազնիւ ոգորումներն ընդդէմ բռնութեան՝ պաշտպանելու համար իրենց ապրիւր տարրական իրաւունքը (1915 թ. Վանի հերոսամարտ, Շատախի, Շապին-Գարահիսարի, Սասունի գոյամարտեր, Մուսա լեռան, Ուրֆայի, աւելի ուշ՝ 1920-1921 թթ. Այնթապի, Հաճընի հերոսամարտեր), այդ ինքնապաշտպանական հերոսամարտերու մարտիրոսացած ազգային հերոսներ (շապին-գարահիսարցի Անդրանիկ Օզանեան, վանեցի Արմենակ Եկարեան, Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան), մուսա լեռցի Ասայի Եաղուպեան, ուրֆացի Մկրտիչ Եօթնեղբայրեան, այնթապցի Ատուր Լեւոնեան, գէյթունցի Արամ Չուրքեան, ազգային վրիժառու

Սոցիոմոն Թեհլիրեան) եւ բազմաթիւ յայտնի ու անյայտ հայորդիներ, որոնք ժողովրդական գանգուածների հետ միաձուլուած պայքարել են, նահատակուել, նաեւ դիմակայել ու վերապրել...

Հատորի Պատմաբանագիտական ակնարկում պատմական ստոյգ փաստերը համադրուած, մանրամասնուած, ու լրացուած են ակնանատես վերապրողների հաղորդած վաւերական վկայութիւններով...:

Աւարկայօրէն վերարտադրելով տուեալ ժամանակաշրջանի կեանքը, նիստ ու կացը, բարքերը, քաղաքական-հասարակական յարաբերութիւնները, վերապրողների հաղորդած յուշերը ճշմարտացի են, վաւերական եւ ունեն հաւաստի վկայութիւնների արժէք...:

Այսպիսով, անհետ կորստից փրկուած, սոյն հատորով սերունդներին աւանդուող ակնանատես վերապրողների հաղորդած յուշերն ու պատմական բնոյթի երգերն իրենց պատմաճանաչողական արժէքով դառնում են Հայոց Յեղասպանութիւնը եւ դրան յաջորդող պատմական իրադարձութիւնները ժողովրդական պարզ լեզուով լուսաբանող վկայութիւններ, հաւաստի, առարկայական եւ փաստագրական վաւերագրեր, որոնք ոչ միայն անցեալի վկայութիւնն են, այլեւ՝ ապագայի նախագգուշացում...:

Ահա թէ ինչու առանձնապէս կարեւորուած է Հայոց Յեղասպանութեան անմեղ նահատակների ու կորցրած Երկրի մասին ժողովրդական խոհերն ու մտորումները սոյն հատորով լոյս աշխարհ հանելն ու գիտական շրջանառութեան մէջ դնելը, քանի որ ժողովրդի ակնանատես վկաներն են հաղորդել իրենց տեսածն ու յիշածը՝ ցաւագնորէն վերապրելով իրենց ողբերգական անցեալը: Անցեալ, որը հայ ժողովրդի անցեալն է, նրա պատմութիւնը, նրա հաւաքական պատմական յիշողութիւնը, որը պէտք է ներկայացուի աշխարհին ու մարդկութեան արդար դատին: (էջ 13-17):

ՍԱՐԻԱՍ ԲԱՂԴԻՇԵԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ

(Ծնուած 1909 թ., Մուսա Լեռ)

1914 թ. Մուսա լեռան Հաջի-Հաբիբլի գիւղէն պապայիս տարին օսմանեան բանակ: Ձահել մէրս երեք փոքր երեխայով չհասցրեց լեռ բարձրանալ, եւ մենք ընկանք քարոտականների թափօրի մէջ՝ Արաբստանի չոլերը: Կը յիշեմ, թուրք ժանդարմէքը էկան խրբաջը՝ մտրակը ձեռքերնին, սկսան մեզ մխտելով, ծեծելով տանիլ Տէր Զօր: Էնպէ՛ս կը ծեծէին, որ մի ծերուկ ճամբին ընկաւ գետին, հոգին փչեց: Չտեսնուած շատ ժողովուրդ կար: Ամէն կողմէն հայեր կային, Դէօրտ-եղէն, Հաճընէն, Ձէյթունէն, ուրիշ շատ տեղերէն հայերին բերել, լցրել էին:

Ինտեղ մնացինք արեւի տակ: Բոլորին տարան Տէր Զօր: Պապս, որ մեզ լեռ էր, չգնաց, քանի որ իր տղէն, այսինքն իմ հէրը, թուրք բանակի գինուր էր: Էդպէս մենք ազատուանք Տէր Զօրէն: Անկէ ետքը մեզի տարան Հոմս: Կառավարութենէն ամը՝ հրաման էկաւ. «Շներին թոյնէք»: Ան կ'ուզէր հասկցնել, որ հայերուն գլուխը ուտեն, ամմա մեմալ փաշան մեզի տէր կանգնաւ: Ան իսկական շներին թոյնել տուեց, հայերին ազատեց մահէն, ամմա ըսաւ՝ ձեր անունները պիտի փոխէք, թուրքի անուններ պիտի դնէք, որ ձեզ չսպանեն...: Կ'ըսէին քի ձեմալ փաշան փոքր ժամանակ հայ կնկան կաթ ծծած է, անոր համար հայերուն աղէկ աչքով կը նայէր: Ան վերջը հրաման տուաւ, որ մեր անունները փոխենք, մէկը՝ Շուքրի, մէկը՝ Ահմէդ, մէկը՝ Հիւսէին գործաւ, կնիկներուն, աղջիկներուն անուններն ալ փոխեցին, որ գրուին փորձանք չգայ:

Էսպէսով հայ մնացինք: Մեզի ըսին, ձեզի հալէպ կը տանենք, ամմա Հալէպ չտարին, թողին Հոմսում: Հոն ամէն տեղից շատ մարդ կար, արեւը շատ տաք կ'այլէր, մարդիկ եորդանների երեսները հանել, լողը էին սարքել, տակը մտել, որ արեւը չխանձէ: Շոգ էր: Զուր չկար: Թընէիր, թուրք գետնին չէր հասներ: Պուճուր քոյր մը ունէի, անունը վարդուհի էր, լաց էր լինում, խաղող էր ուզում: Մայրս՝ որ շատ գեղեցիկ կին էր, ձեռքը դռնին խփելով սկսաւ լալ. «Մեր բաղի թարմեքի ձիւղերը կտտրուում էին հասած խաղողի ծանրութենէն, իմ բալան խաղող կ'ուզէ, ես չեմ կրնայ տալ»:

Յետոյ էլ պուճուր քոյրս ջուր ուզեց, ամմա ջուր ալ չիկար: Խեղճը՝ ջո՛ւր, ջո՛ւր ըսելով, մօրս գիրկին վրայ մեռաւ... Պապիս հետ հողը մի կողմ քաշեցինք, մէջը երեխուն դրինք, անցանք, գնացինք: Հասանք մի տեղ, էդ գիշերը մնացինք քարերուն, ժայռերուն մէջը: Մեր մէջ մի քանի հիւանդ, ծեր, քոռ, թօփալ տղամարդիկ կային, մնացածը՝ կնիկ էին ու էրեխայ: Մէկ էլ տեսանք, թուրքերը էկան թալանելու: Պապս էնտեղ մեռաւ...:

Կը յիշեմ, գիշերը պառկելու տեղ չիկար, մամաս պառկած էր գետնին, մենք ալ՝ ես ու խաթուն քոյրս, մայրիկիս մագերը կը հիւսէինք, անոր մագերուն հետ կը խաղայինք, մէկ ալ կնիկ մը էկաւ, անցաւ նայեց մեզ, ըսաւ. «Ամա՛ն իտեղճ մախարմ եաւրունները խաբար ալ չեն, քի մայրերնին մեռած է...»: Մենք չոջուխ էինք, ի՛նչ գիտնանք, որ մեր մէկ հատիկ մաման ալ չիկայ:

Մեր ծանօթ Մարգարին կնիկը օյա՝ ասեղնագործութիւն կ'ընէր, արաբներուն կը ծախէր: Արաբ կնիկ մը անոր կ'ըսէ՝ պգտիկ աղջիկ մը չիկա՞յ, ինձի օգնական ըլլայ: Աս հայ կնիկը ինձի ըսաւ՝ քալէ քեզի տանիմ արաբի մը տուն: Ես էլա, հետը գացի: Հարուստ, շատ բարի

կնիկ մըն էր այդ արարը, եթէ արդէն մեռեր է - օղորմի իրան: Ան մողիստրա էր, տանը դերձակութիւն կ'ընէր: Հարուստ խանուամներ կուգային, կ'երթային խահուէ կը խմէին, ջղարա կը ծխէին, ես ալ հեռու ջրհորէն լուսավիկով՝ փարչով ջուր կը բերէի, բուրդ կը մանէի...»

Տարիքս ի՞նչ էր՝ հնգ-վեց տարեկան: Ես անտէր մնացի չորս տարի վերջէն, երբ գերմանացին Հոմսէն դուրս եկաւ, թուրքն ալ ինկաւ, անգլիացին ու Ֆրանսացին էկան, մտան: Օր մը նորէն լուսավիկս ձեռքիս ջրհորին գլուխն եմ, մէյ մըն ալ յոյն տէրտէր մը եկաւ, արաբերէնով ինձ հարցուց. «Ե՛մ՝ բընթի, էնթա էրմա՞ն (Ա՛յ աղջիկ, դուն հա՛յ ես)»:

Ես ըսի - Բիթըմ՝ իսլամ,բըլ ալիմ՝ արման, այսինքն լեզուով իսլամ եմ, սրտով՝ հայ:

Ըսաւ - Շո՛ւտ արի տանեմ քեզ ձերոնց քովը:

Ես տուն տարի լուսավիկով ջուրը, ոտնամաններս հանեցի, որ ձայն չելլէ, կամաց-կամաց տունէն դուրս էլա, գացի տէրտէրին ետեւէն: Ղուբբան էղնեմ Աստուծուն: Տէրտէրն ինձ տարաւ Հոռոմի թաղի որբանոցը, հոն շատ որբեր կային, անոնց մէջէն գտայ իսթուէն քոյրիկիս: Գտայ, ուրախացանք, բայց ես հայերէն խօսելու մոռացել էի, արաբերէն էի խօսում: Մեր լեզուն մոռացել էի...:

Ժամանակ մը ետքը որբանոց էկաւ հօրաքոյրս, մեզ գտաւ, արաբայով տարաւ Անթաքիա՝ Անտիոք, քեռուս տունը: Քեռիս ալ նոր էր ամուսնացել: Իր կնիկին ըսաւ - էս երեխքի խաթրին չես կպնի, մայր ու աղջկայ պէս կ'ապրինք...:

1919 թուի աշնանը նստած էինք քեռուս տանը, մէկ էլ լսում եմ. «Խարիկէնց Սարգիսն էկաւ թուրքական բանակէն»: Մէկ էլ տեսնամ, երկու հոգի ներս մտան, սկսաւ կարօտով ինձ ու քրոջս պաչել: Չգիտեմ ո՞ր մէկն էր իմ հէրը: Բանակում թուրքերը կ'իմանան, որ պապաս հայ է, կը խփեն: Խեղճ հէրս թուրք ասկերի շորերով ընկած կ'ըլլայ գետնին: Անգլիացիները կուգան, կը կարծեն թուրք գինուոր է, չեն ուզեր մօտենալ: Հէրս խաչ կը հանէ, որ ցոյց տայ, որ քրիստոնեայ է: Անգլիացիները կը տեսնան, որ քրիստոնեայ է, կը տանեն, վերքերը կը կապեն, ուտելիք կու տան, կաթ կը խմցնեն, երբ կը լաւանայ, կ'ըլլայ կ'երթայ Հոմս՝ մեզ փնտռելու: Միլլէթ Ֆեքիլը՝ այսինքն այնտեղի մեծաւորը, տեսարակը կը բանայ, կ'ըսէ՝ քու հարազատներդ հոս չեն: Հէրս հարցնելով, հարցնելով կու գայ մեզ կը գտնայ...: Արդէն հրաման ելած էր, որ ով ուզէ՝ կրնայ իր տեղը երթալ: Հէրս վերցրեց մեզ, տարաւ Մուսա լեռ: Հոն ո՛չ տուն կայ, ո՛չ մի բան: Քեռուս կ'ինը մի բարակ վերմակ էր տուել, երեք հոգով տակը կը պառկէինք...: Հէրս գնաց ածուխ բերեց, հողից աման-չաման բերեց: Նոր՝ տուն-տեղ էղանք: Նոր մօրս հետ ալ ամուսնացաւ, երկու եղբայր ալ ունեցայ...:

Տարիներ անցան, ես ալ մեծցայ, ամուսնացայ Արարայի ճակատամարտէն նոր վերադարձած կամաւոր Կարապետին հետ: Տուն-տեղ էղանք: 1939-ին, երբ Ֆրանսացին անգլիացիին հետ Ալեքսանտրէիթի սանջակը, Մուսա լեռան ալ հետը, տուին թուրքին, մենք չուզեցինք թուրքին, մենք չուզեցինք թուրքին հետ ապրիլ, մեզի տարին Այնճար՝ Հոն սկսանք ծայրէն՝ նոր տուն շինել, ջուր բերել, այգի, ծառ, ծառաստան տնկել...վերջ ալ ամէն ինչը թողինք, 1946 թուին եկանք Հայաստան...:

Շատ դարդ եմ տեսել, շատ կորուստ եմ տեսել, շատ չարչարուել, հիւանդացել եմ: Առաջ Լեւինական մնացինք: Երկար տարիներ աշխատեցի Լեւինականի տեքստիլ-տրիկոտաժի Փաբրիկայում: Յետոյ փոխադրուեցանք Երեւանի Մալաթիա թաղը: Հոս ալ նոր տուն շինեցինք, այգի տնկեցինք...Երեք տղաներս՝ Աւաքելը, Գէորգը, Սարգիսը եւ աղջիկս՝ Ագատուհին, ամուսնացած են, տուն-տեղ, երեխաների տէր են: Գէորգս բանասիրական գիտութիւնների թեկնածու է, Ակադեմիան կ'աշխատի, հիմա կիպրոս ղրկած են, Մելքոնեան վարժարանը հայոց լեզու կու տայ: Ես ալ կ'աղօթեմ, որ խերով-բարով ետ վերադառնայ: (էջ 304-305):

Survivors: An Oral History of the Armenian Genocide

Donald E. Miller and
Lorna Touryan-Miller

(Վերապրողներ. Հայոց Յեղասպանութեան
Բանաւոր Պատմութիւն)

Անգլերէն հրատարակուած այս գրքում ընդգրկուած են Հայոց Մեծ Եղեռնի դաժան ողբերգութիւնից ազատուած 100 վերապրողների վկայութիւնները:

Այդ բոլորը ձայնագրել եւ գրի են առել Տէր եւ Տիկին Տոնալտ Ի. Միլլերը եւ Լորնա Թուրեան-Միլլերը ու այնուհետեւ առաջաբանով, մեկնաբանութիւններով եւ ծանօթագրութիւններով հրատարակել 1993 թ. Լոս Անջելեսում:

Հենց սկզբից նշենք, որ այս բովանդակալից աշխատութեան հրատարակման շարժառիթ են հանդիսացել Լորնա Թուրեանի Եղեռնից վերապրած ծնողները՝ Վահրամ եւ Ատելինա Թուրեանները:

Հարցը նրանումն է, որ ճակատագրի բերումով երբ Լորնան ամուսնանում է Տոնալտ Ի. Միլլերի հետ, իրենց ծնողների հետ հանդիպումների ընթացքում յաճախակի խօսք է բացւում Մեծ Եղեռնի ընթացքում կրած իրենց տառապանքների մասին: Ամուսինները այն

քան են ազդում ու ներշնչում այդ պատմութիւններին, որ վճռում են գրի առնել իրենց ծնողի յուշերը:

Այդ ընթացքում (1978 թ. սկսած), մտադրանում են նաեւ փնտռել, գտնել եւ հարցազրոյց ունենալ այլ վերապրողների հետ եւս: Այս նպատակով նոյնիսկ կազմում են յատուկ հարազրոյցի ուղեցոյց, որը բերուած է գրքի 196-205 էջերում: Միեւնոյն ժամանակ Տոնալտ Միլլերը սկսում է լուրջ հետազոտական աշխատանքներ կատարել եւ ուսումնասիրել հայ ժողովրդի պատմութիւնը, յատկապէս Հայկական Հարցն ու Մեծ Եղեռնի փաստագրական նիւթերը:

Այն էլ նշենք, որ գրքի վերջում բերուած ծանօթագրութիւնից տեղեկանում ենք, որ Տոնալտ Միլլերը եւ Լորնա Թուրեանը կրօնագիտական մասնագիտութիւն ունեն: Տոնալտ Միլլերը Հարաւային Քալիֆորնիայի Համալսարանի կրօնագիտութեան դասախօս է:

«Մեր հանդիպումների ընթացքում իւրաքանչիւր վերապրող ներազդում էր իմ բարոյական եւ հոգեկան զգացմունքների վրայ, - գրքի առաջաբանում գրել է Տոնալտ Միլլերը, - վերապրողների պայքարը մահուան հանդէպ, ներազդում էր իմ վրայ եւ խորհրդածել էր տալիս ինձ, իմ կեանքի նշանակութեան մասին... (էջ 3): Եւ որքան շատ տեղեկացայ 20-րդ դարի առաջին այս ցեղասպանութեան մասին, առաւել համոզուեցի, որ Հայոց Յեղասպանութեան պատմութիւնը պէտք է ներկայացնել հիմնուելով վերապրողների վկայութիւնների վրայ» (էջ 9):

Իրօք որ թերթելով 242 էջերից բաղկացած այս ուշադրաւ գիրքը նկատում ենք, որ այն հիմնուած է վերապրողների յուշապատումների վրայ, բայց միաժամանակ կատարուած է նաեւ մի այլ լուրջ եւ խիստ կարեւոր աշխատանք:

Վերապրողների պատմած այս կամ այն դրուագի ճշմարտացիութիւնը բացայայտելու համար համեմատութիւններ են կատարել տարբեր երկրների դիւանագիտական աշխատողներին՝ դեսպանների, հիւպատոսների, օտար ակնաստեանների տուած պաշտօնական գրութիւններրի եւ գեկուցագրերի հետ:

Պարզում է, որ գրքում բերուած այդ 100 վերապրողների պատմածները ճշմարիտ են եւ լիովին համընկնում են փաստա-վաւերագրական պաշտօնական նիւթերի հետ:

Մի խօսքով, կատարուած է բարձր գնահատանքի արժանի մի խորիմաստ աշխատանք, ի հարկէ հիմնուելով 100 վերապրողների յուշապատումների վրայ:

Այն էլ նշենք, որ վերապրողների անունները ալբրեհակաճ կարգով տրուած է 206-208 էջերում, նշելով նրանց ծննդեան տարեթիւն ու վայրը:

Գրքում ընդգրկուած են նաեւ մի շարք վերապրողների նկարները, ինչպէս նաեւ տեղահանութեան եւ հայ մանուկների որբանոցային կեանքը պատկերող լուսանկարները:

Ստորեւ անգլերէն բնագրից թարգմանաբար տրւում է մի հատուած:

*
* *

ՏԵՂԱՅԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ

1915 թ. Մայիս 27-ին մի պաշտօնական հրաման հրապարակուեց տեղահանութեան մասին:

Տեղահանութեան հրամանները հայութեան մեծ մասի մօտ կատարեալ շփոթութիւն առաջացրեց: Չմշկածագից վերապրող Սարգիսի մեկնաբանութիւնը լիովին համընկնում է մեր հարցազրոյցների ընթացքում տրուած այլ վկայութիւնների հետ: Սարգիսն ասաց, որ ինքը մարգանքի դասի է եղել դպրոցում, իր մարզիչի կինը գալիս է եւ յայտնում իր ամուսնուն, որ դպրոցի տնօրէն՝ Վերապատուելի Արշակին ձերբակալել են:

«Ինչպէս տեսնում էք, նրանք (Թուրքերը) առաջին հերթին տարան հեղինակաւոր մտաւորականներին: Թուրքերը նրանց տարան մի տուն, որը վերածել էին բանտի: Եւ սկսեցին նրանց տանջել, որպէսզի խօսեցնեն: Եւ այդպէս երբ լուր եկաւ, որ վերապատուելի Արշակը ձերբակալուել է, մեր դասերը ընդհատուեցին եւ մեզ կարգադրեցին գնալ մեր տները: Բնականաբար, մենք զնացինք մեր տները: Հայրս տանը չէր: Հօրեղբայրս փախել էր: Թաքցնելու միտումով մերոնք կանացի զգեստ էին հագցրել հօրեղբօրս տղային, չնայած որ նա դեռ պատանի էր: Հօրս հօրեղբայրը նոյնպէս բանտում էր: Այնպէս որ, ուսումով երիտասարդներին ձերբակալելուց յետոյ, սկսուեցին հաւաքել նաեւ մեծերին»:

Սարգիսը դեռեւս պատանի լինելով, նրան վտանգ չէր սպաւում բանտարկութեան համար: Այնպէս որ, իրենց ընտանիքը նրա միջոցով ուսելիք է ուղարկել բանտ, հօրեղբօր համար: Բանտում առաջին անգամ Սարգիսը զգացել էր, որ հայերի համար շատ աղետալի մի բան է պատահելու:

«Ես գնալու եմ եւ նստելու եմ բանտում նրա հետ (հօրեղբօր հետ): Մի օր երբ ես ուսելիք էի տանում բանտ, տեսայ բազմաթիւ

ոստիկանների, որոնք արգելեցին այդ օրը ճաշ տալ բանտարկեալներին, քանի որ նրանք մեկնելու էին: Ես տեսայ, որ բանտարկեալները երկու առ երկու շղթայուած էին իրար հետ: Ես չկարողացայ ճաշը յանձնել եւ վերադառնալով տուն յայտնեցի իմ տեսածի մասին: Ես ասացի մերոնց, որ նրանք բոլորը շղթայուած են, գալիս են այս կողմի վրայ եւ պիտի անցնեն մեր տան մօտով, քանի որ այլ ճանապարհ չկայ դէպի Խարբերդ գնալու:

Շուտով բանտարկեալների ընտանիքները տեղեկացան այս բոլորի մասին եւ թափուեցան փողոց, տեսնելու համար իրենց հարազատներին: Բարձրանալով մեր տան տանիքը, ես սկսեցի բացականչել՝ հօրեղբայր, հօրեղբայր:

Բանտարկեալների շարքում կար տարիքն առած մի բժիշկ: Երբ նրա կինը տեսաւ նրան եւ վազեց մօտը ողջագուրուելու համար, ոստիկանը հրացանի կոթով հեռացրեց նրան: Եւ այդպէս, մարդիկ քայլեցին հեռանալով իրենց կանանցից եւ ընտանիքից, որոնք լացում էին եւ ողբում: Քաղաքից մօտ 20 ըուպէ հեռաւորութեան վրայ ծառերով եւ ջրով մի տարածութիւն կար. այդտեղ հաշուառում կատարեցին իմանալու համար, որ բացակայողներ չկան: Այնուհետեւ նրանց տարան Եփրատի ափերն ու սպանեցին բոլորին»:

Սարգիսը շարունակելով իր պատմութիւնը ասաց, որ մարդկանց այդպէս ոչնչացնելուց յետոյ տեղահանութեան հրաման եկաւ կանանց եւ երեխաների համար եւս: Նրանց քաղաքից տեղահանութեան նիւթարկել երկու առանձին խմբերով, 15 օրուայ տարբերութեամբ: Ինքը ընկել էր երկրորդ խմբի մէջ: Բայց զոջումով նչեց. «Ես կը փափաքէի առաջին խմբի մէջ լինել, քանի որ նրանք ուղեւորուեցին դէպի Հայէպ»:

Մեկնումից առաջ, Սարգիսի ընտանիքը իրենց կահ-կարասին եւ ամբողջ ունեցածուածքը ապահովութեան համար ի պահ են թողել իրենց թուրք տանտիրոջը, իսկ գորգերը յանձնել են իրենց տան կողքին գտնուող հասարակական բաղնիքին: «Մենք յայտնեցինք նրանց, որ վերադառնալուց յետոյ այդ բոլորը մեզ կը վերադարձնեն: Բայց մենք դեռ պիտի վերադառնանք...»:

Մի շարք վերապրողներ մատնանչեցին, որ նախքան տեղահանութեան սկսուելը, իրենց թուրք հարեւանները ուժ գործադրով ձգտել են տիրել իրենց ունեցուածքին:

Օրինակ՝ ձիախնից մի վերապրող հաղորդեց հետեւեալը.

«Յաջորդ օրը նրանք հաւաքեցին հեղինակաւոր մարդկանց եկեղեցու մէջ: Նրանց մէջ էր նաեւ իմ հայրն ու նրա եղբայրները: Եւ սկսեցին խոշտանգել նրանց եկեղեցու բակում: Մենք պատանիներ

էինք, ես ընդամէնը 6 տարեկան էի: Մենք զնոււմ էինք եւ տեսնում թէ ինչպէս էին ծեծում մեր հայրերին եւ լացում էինք: Իմ հօր լաւագոյն (թուրք) ընկերներից մէկը, որը շաբաթուայ ընթացքում յաճախակի սովորութիւն ունէր մեր տուն այցելելու, հիմա ծեծում էր հօրս, ասելով որ իրեն յանձնի իր բոլոր ունեցուածքը: Իմ խեղճ տանջահար հայրս ստիպուած համաձայնել էր: Եւ այդպէս, հենց դատարանի բակում այդ մարդը բերեց թուղթերն, որպէսզի հայրս ստորագրի: Հայրս կատարեց նրա ցանկութիւնը, թէ իբր ինքը իսկապէս վաճառել է իր ամբողջ ունեցուածքը Իսմայիլ պէյին»: (էջ 68-69):

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆԹՂԻ ԴԱՅՈՑ»

«Նոր Այնթապը՝ դէպի Մասիս...
Այս է երազը երազներիս»:
Յովհաննէս Շիրազ, 1972թ.

Այս խորագրի տակ հրատարակուել է խիստ կարեւոր եւ քարձարժէք մի աշխատութիւն երեք հատորից բաղկացած:

Փրոֆ. Գէորգ Սարաֆեանի հեղինակած Ա. եւ Բ. հատորներում լնդդրվուած են Այնթապի պատմութիւնը վաղ ժամանակաշրջանից մինչեւ 1953 թուականի իրադարձութիւնները:

Իսկ 1200 էջերից բաղկացած ծաւալուն եւ նոյնպէս ծանրակշիռ երրորդ հատորի խմբագիրն է վաստակաշատ ուսուցչապետ, երկարամեայ տնօրէն, պատմագիտական արժէքաւոր գրքերի եւ բազում հրատարակախօսական յօդուածների հեղինակ՝ Երուանդ Պապայեանը:

Փրոֆ. Գէորգ Սարաֆեանի երկու հատորների մասին այսպիսի գնահատական է տուել Երուանդ Պապայեանը.

«Պատկառելի երկու հատորներու մէջ ամփոփուած են Այնթապի պատմութեան, աշխարհագրութեան, եկեղեցական կեանքին, կրթամշակութային գործունէութեան, գրականութեան, զիտութեան, արուեստներու եւ արհեստներու նաեւ մեր աւանդութիւններուն վերաբերեալ թանկագին տեղեկութիւններ: Տարիներու տքնաջան աշխատանքով ձեռք բերուած այս խիստ շահեկան աշխատասիրութիւնը պատիւ կը բերէ ողջ Այնթապցիութեան»: (էջ ԺԱ):

Այսպիսի բարձր գնահատանքի է արժանի նաեւ Երուանդ Պապայեանի խմբագրութեամբ կազմուած 3-րդ հատորը, որը լոյս տեսաւ 1994 թ. Լոս Անճելըսում:

Այս հատորը եւս բովանդակում է առանձին մասնագիտական յօդուածներ գրուած Այնթապցի տարբեր հեղինակների կողմից, որոնք նուիրուած են Այնթապի պատմութեան, աշխարհագրութեան, Այնթա-

պում ծաւարւած ինքնապաշտպանական հերոսամարտերին: Մանրամասն տեղեկութիւններ կան նաեւ Հայաստանում եւ Սփիւռքի տարրեր կրկրներում առկայ հայրենակցական միութիւնների, ազգային-հասարակական, կրթա-մշակութային գործունէութիւնների մասին:

Հատորի 9-րդ ծաւարուն մասում ընդգրկուած հանրաճանաչ Այնթապցիների կենսագրական գծերից տեղեկանում ենք նրանց կատարած ազգային-հասարակական, հայրենասիրական աշխատանքների մասին: Նրանցից շատերը իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ բարձր գնահատանքի արժանի ներդրումներ են կատարել Հայաստանի առաջնութացի եւ հայ ժողովրդի բարգաւաճման գործին:

Այստեղ տեղին է նշել, որ Այնթապահայերի ներդրումն ու օժանդակութիւնը Հայաստանին նոր թափ ստացաւ երբ Մասիս շրջանի Թագա գիւղը կառավարական հրամանագրով (1970, Սեպտեմբեր 10) վերանուանուեց Նոր Այնթապ՝ ի յիշատակ կիլիկեան Այնթապի Այնթապցի հայրենասէր բարերարների նախաձեռնութեամբ կառուցուեցին մի շարք գործարաններ, կրթա-մշակութային օճախներ, ինչպէս նաեւ Այնթապի հերոսամարտին նուիրուած հոյակերտ յուշահամալիրը:

Թերթում եմ եւ հետաքրքրութեամբ դիտում լուսանկարներով ուղեկցուող կենսագրականները, եւ ի՞նչ, պարզում է, որ նրանցից շատերը ծանօթ դէմքեր են ինձ համար: Շատերի հետ ունեցել եմ եւ ունեմ մտերմական կապեր ու յարգանք իրենց ազգային-հասարակական անխոնջ գործունէութեան նկատմամբ: Ահա այս հատորից է, որ տեղեկանում եմ նրանց Այնթապցի լինելու մասին:

Հատորում հետաքրքրութեամբ կարդացում են նաեւ Անթէպական ասոյթներն ու մանրապատմաները (անեկթոտները): Բնականաբար, Այնթապին նուիրուած այս հատորներում ընդգրկուած են նաեւ հայոց Մեծ Եղեռնի ողբերգութեան վերապրողների անձնական յուշապատմաներն ու ցաւալի վկայութիւնները եւս:

Յայտնի է, որ 1915 թ. երբ երիտթուրքերը սկսեցին գործադրել արեւմտահայութեան տեղահանութիւնն ու զանգուածային կոտորածները, առանձինն շրջաններում հայութիւնը «մահ կամ ազատութիւն» նշանաբանով դիմեց ինքնապաշտպանութեան: Այդ թուում յիշենք Վանի, Մուսա Լեբան, Մուշի, Ուրֆայի, Սասունի, Շապին Գարահիսարի եւ այլուր տեղի ունեցած ինքնապաշտպանական հերոսամարտերը, որոնք փրկեցին բազմաթիւ հայերի կեանքեր:

Աւարտուեց Առաջին Համաշխարհային պատերազմը եւ յաղթանակած դաշնակից պետութիւնները, այդ թուում՝ Փրանսիական վարչական իշխանութիւնները սկզբում օժանդակեցին Տէր Զօրի անապատներում եւ այլուր գտնուող կիլիկիահայերին վերադառնալու իրենց

անտիրոջ: Գժբախտաբար, կիլիկիահայերը երբ վերադարձան իրենց տները, շատ կարճ տեւեց նրանց խաղաղ-շինարար կեանքը, քանի որ Փրանսիական զօրքերը դաւադրաբար լքեցին հայերին եւ հեռացան կիլիկիահայութիւնը ենթարկուելով քեմալական հրոսակների բռնութիւններին, 1920-1921 թթ. ստիպուած եղաւ կրկին դիմելու ինքնապաշտպանութեան: Կրկին կենաց-մահու կռիւներ տեղի ունեցան լուսնու, Այնթապում, Սիսում, Ուրֆայում, Մարաշում: Այնուհանդերձ, ուժերը անհաւասար էին, բայց առանձին շրջաններում կիլիկիահայերը հերոսական զինուած դիմադրութիւն ցոյց տուեցին թշնամուն:

Այս մասին բազմաթիւ փայլուն դրուագներ են արձանագրուել կիլիկիահայութեան նուիրուած հայրենակցական միութիւնների հրատարակած հատորներում:

Այդպիսի հայրենաշունչ ոգով գրուած մի վկայութիւն կայ նաեւ Ք. հատորում, որը պատկանում է զէպքերի ականատես Երուանդ Պապայեանին:

Այս հաղորդման վերջում, մենք նախընտրեցինք առանձին թարգմաններ բերել նրա վկայութիւնից, այն շարժառիթով, որ այս տարի, 2005 թ. լրանում է Այնթապի հերոսական ինքնապաշտպանութեան 85-ամեակը:

Միեւնոյն ժամանակ ցանկացանք կրկին անգամ իւրաքանչիւր հայի մտապատկերում կենդանացնել Այնթապում, Հաճընում, Ուրֆայում, Մարաշում, Սիսում եւ այլուր տեղի ունեցած կիլիկիահայերի ինքնապաշտպանական կռիւներն ու փառահեղ յաղթանակներ կերտող՝ հայ թաջերի անմահ յիշատակը:


*
* *

ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՐՈՍԱՍԱՐՏՈՒ

Մեծ Եղեռնէն վերապրող հայեր իրենց հայրենի տունները վերապարձան, հոն խաղաղութիւն եւ երջանկութիւն վերագտնելու յոյսով: Հաւատացեալ քրիստոնեայ ժողովուրդ, կը կարծէինք թէ քրիստոնեայ յաղթական «մեծերը» քրիստոնէավայել ընթացք պիտի ունենային մեզի հանդէպ: Ահոսս, սակայն, թուրքը սիրաշահելու իրենց դիւանագիտութեան մէջ կը ջանային զիրար գերազանցել: Ահաւոր վտանգը կը սպառնար իրենց պապենական երզիքներուն տակ խաղաղութիւն որոնող հայ բնակորներուն:

Չուշացաւ փոթորիկը: Առաջին հերթին հարուածը իջաւ Մարաշի հայութեան: Տխո՛ւր է պատմութիւնը:

Այնթապի հայերը կը զգային թէ թուրքերը լաւ դիտաւորութիւն չունէին իրենց հանդէպ: Մարաշի դէպքը եկաւ համոզելու այնթապցիները, թէ անհրաժեշտ էր միջոցներ ձեռք առնել ինքնապաշտպանութեան համար: Դիմագրաւելու համար վերահաս վտանգը, պէտք էր նախապատրաստուիլ:



Այլթապի Ս. Աստուածածին Եկեղեցին մզկիթի վերածուած

1920-ի Յունուարին ինքնապաշտպանութեան համար սկսուած խորհրդակցութիւնները յանգեր էին արդէն որոշ եզրակացութեան: Կազմուած էր Զինուորական Մարմինը: Ամէն պատրաստութիւն տեսնուած էր: Առաջին ազդանշանին պատնէշներ պիտի շինուէին հայկական թաղերու սահմաններուն վրայ, թուրքերուն առջեւ փակելու համար յոյս անցքերը: Հայաբնակ Այնթապը բաժնուած էր 11 շրջաններու, որոնց համար նշանակուած էին խմբապետներ եւ զինուորներ:

Զինուորական պատրաստութեանց հետ փութով յառաջ տարուեցաւ քաղաքային եւ վարչական կազմակերպութեան գործը: Կազմուեցան քաղաքապետական խորհուրդ, ոստիկանութիւն, հրէջէներու խումբ, պարենաւորման մարմին, լքեալ գոյքերու յանձնախումբ, դատական մարմին, ելեւմտական յանձնախումբ եւ այլն:

Այս բոլորը այնքան ներդաշնակութեամբ եւ կանոնաւորութեամբ կը գործէին Ազգ. Միութեան վերին հեղինակութեան ներքեւ, որ Հայկական Այնթապի մէջ հաստատուած էր կարծէք փոքրիկ, տիպար հանրապետութիւն մը:

Թուրքերն ալ, միւս կողմէ, նկատելի էր որ լծուեր էին ռազմական պատրաստութիւններու աշխատանքին: Քաղաքէն դուրս քեմալական լէթէներու գործունէութիւնը հետզհետէ կը ծաւալէր եւ սպանութիւնները կը դառնային յաճախակի:

Ահագանգը հնչեց վերջապէս:

1920-ի Ապրիլի մէկին, արդիական գէնքերով զինուած թուրքեր լուկայի մէջ անակնկալօրէն յարձակեցան հայերու վրայ եւ սպաննեցին ու վիրաւորեցին զանոնք առանց տարիքի եւ սեռի խտրութեան:

Ընդհանուր ջարդը անխուսափելի էր, եթէ անհրաժեշտ կարողութիւնները նախօրօք եղած չըլլային:

Խուճապի չմատնուեցանք. անակնկալի չեկանք, որովհետեւ ամէն վայրկեան կը սպասէինք արդէն տխուր այդ ազդանշանը...:

...Մեր հակաշարժակումները սակայն, առաջին իսկ գրոհին պատկուեցան յաջողութիւններով: Որովհետեւ «Մահ կամ Ազատութիւն» նշանաբանով ճակատ իջնող ու գէնք վերցնող այնթապցի հայր արհամարհեց մահը եւ ուխտեց իր արեան գնով փրկել պատիւը հայուն: Անկարելի էր չհիանալ այնթապցի հայ կտրիճներու քաջութեան եւ կորովին...:

...Փրանքօ-թուրք ընդհարումները տեւեցին երկու ամիս: Այս շրջանին մենք յաջողեցանք պահպանել մեր չէզոքութիւնը: Կարելի է երեւակայել թէ որքան նրբամտութիւն եւ ճկուն քաղաքականութիւն կը պահանջէր հաւասարակշռութեան պահպանումը երկու թշնամի կողմերու միջեւ: Սակայն, Սեպտեմբեր 29-ին, Փրանսացիք բռնարարե-

ցին մեր չէզոքութիւնը: Այն պահուն երբ Ազգ. Միութեան հրաւերով տեղի կ'ունենար խորհրդակցական լայն ժողով՝ չէզոքութեան մեր քաղաքականութիւնը վերաքննելու համար, Ֆրանսական ուժերը սկսան պրակտիկ իրենց համար կարեւոր նկատուած կեղերնները:

Ակամայ, Ֆրանսացիներու ստիպումով, խզեցինք մեր չէզոքութիւնը: 1920 Յուլիս 29-էն մինչեւ 1921 Փետրուար 9 կռիւները շարունակուեցան ընդմէջ Ֆրանսական ուժերու եւ թուրքերու: Մեր քաջերը պարտադրաբար կռիւներուն մասնկացեցան Սեպտ. 30-էն սկսեալ:

Վեց ամսուան դիմադրութենէ մը ետք, թուրքերը անձնատուր եղան Ֆրանսական հրամանատարութեան: Յայտարարուեցաւ պաշտօնապէս թէ Այնթապ ենթակայ էր Ֆրանսական հովանաւորութեան: Քանզու թէ ու հրդեհուած քաղաքը կենդանութեան նշաններ ցոյց տալ սկսաւ: Հայեր որոշ չափով ապահով կը զգային ու կը սկսէին իրենց աւերուած տուները վերաշինելու, խանութ, գործ կարգադրելու:

Ափսոս, սակայն, դարձեալ ի դերեւ ելան հայերու յոյսերը: Անգամ մը եւս «մեծերուն» շահերն ու քաղաքական հաշիւները յաղթեցին մարդկայնական սկզբունքներուն եւ զգացումներուն: Արդարութիւնն ու իրաւունքը պարտուեցան ու ոտնահարուեցան:

Ֆրանսայի ներկայացուցիչ Փիէռ Լոթիի եւ թրքական իշխանութեան միջեւ կնքուած համաձայնագրով Ֆրանսա թուրքերուն կ'ընծայէր կրիկիան, որպէս «վարձատրութիւն» Ֆրանսայի դէմ անոնց վարած նենգ քաղաքականութեան եւ 2 միլիոն քրիստոնեայ հայերու ողջակի գումին:

Այնթապի հայութիւնը, թուրքին վրայ տարած իր փառաւոր յաղթանակէն ետք, անծանօթ աղբիւրներէ գէնք, ուժ եւ քաջալերութիւն գտած, նոյն թուրքին արիւնոտ ճիրաններուն կը յանձնուէր անգթօրէն:

Բարեբախտաբար, Այնթապի հայերը, շնորհիւ իրենց ղեկավարներուն իմաստութեան եւ աշարժութեան, շատ քիչ կորուստով հեռացան իրենց հայրենի հողէն ու եկան ապաստան փնտռելու Լիբանանի եւ Սուրիոյ ասպնջական ափերուն վրայ:

Այնթապի Հերոսամարտը եղաւ էպպէս ինքնապաշտպանութեան կռիւ մը, որ ոչ միայն դրսեւորեց մեր պատմութեան ընթացքին բազմաթիւ առիթներով փորձուած հայու քաջասրտութիւնը, այլ յայտնաբերեց նաեւ անոր փայլուն յատկանիշները: Եւ այդ յայտնաբերումը եղաւ ժխտումը մեզի վերագրուած թերութիւններուն, եւ առաջին հերթին՝ անմիաբանութեան սխալ վարկածին:

Արդարեւ, Այնթապի ինքնապաշտպանութեան ամբողջ տեւողութեան, սկիզբէն մինչեւ վերջին օրը, մեր հայերը ցոյց տուին, այնպիսի ամուր միաբանութիւն, որ գլեց-անցաւ ամէն նախատեսութիւն,

այլութեան մատնելով ամենէն ծայրայեղ յոռետեսներն իսկ: Այսպէս, կոստակցականն ու անկուսակցականը, հայ առաքելականը, աւետարանականն ու կաթողիկէն, պատանի, երիտասարդ կամ ծերունի, այր թէ կիւ, բոլորը մէկ սիրտ ու մէկ հոգի՝ սիրալիր համերաշխութեամբ սեղծեցին անքակտելի միասնականութիւն եւ ուժ մը, որուն առջեւ խոնարհեցաւ մեր արիւնարբու թշնամին: Այնթապի ինքնապաշտպանութեան յաղթանակը մեծ բան կը պարտի այս միասնականութեան:

Այնթապի ինքնապաշտպանութեան կռիւներու ընթացքին յայտնաբերուած երկրորդ յատկանիշը եղաւ հայուն կազմակերպչական կարողութիւնը: Կարճ ժամանակի ընթացքին ստեղծուեցան զինուորական հրամանատարութիւն, բանակ, ոստիկանութիւն, զինուորական առեան, նախարարութիւններ, քաղաքապետական սպասարկութիւն: Կոյրութիւն առաւ փոքրիկ «հանրապետութիւն» մը՝ ռազմավարական գրութեամբ: Այս փոքրիկ «հանրապետութիւնէն» ներս կը տիրէր անթիւրի կարգապահութիւն ո՛չ միայն զինուորական մարզին, այլ ժողովուրդի առօրեայ կեանքին մէջ: Երբ սննդանիւթի պակասը զգալի դարձաւ, «պարենաւորման նախարարութեան» կողմէ բռնազրուուեցան վաճառականներու մօտ կամ տուներէ ներս ամբարուած բոլոր սննդեղէնները: Այդ գործողութիւնը կատարուեցաւ բացարձակ կարգապահութեամբ: Ո՛չ ոք համարձակեցաւ ընդդիմութիւն փորձելու: Այնուհետեւ հաստատուեցաւ պարենատոմսի դրութիւն՝ հարուստին եւ աղքատին համար հաւասարապէս:

Յայտնաբերուած երրորդ յատկանիշը եղաւ հայուն հնարամտութիւնը: Պարզ արհեստաւորները կարճ ժամանակի ընթացքին գարձան առաջնակարգ մասնագէտներ. վառօդ հնարեցին, գէնքերու երրորդութեան կողքին՝ փամփուշտ եւ ռումբ շինեցին: Հնարեցին հռչակաւոր վրէժ թնդանօթը, որուն արձակած աղմուկը ահ ու սարսափի մատնեց թշնամին: Օրը քսանչորս ժամ աշխատեցաւ զինարանը՝ մասնագէտներու հսկողութեան տակ միշտ:

Այսպէս, մեր փառաւոր յաղթանակով ապահովեցինք փրկութիւնը հապարաւոր հայրենակիցներու: Սակայն, մեծ պետութիւններու անարգ մրցակցութիւններէն օգտուելով՝ մեր դաւաղիր թշնամին խլեց մեզմէ մեր շէն օճախներն ու կալուածները, մեր հոյակերտ եկեղեցիներն ու զպրօցները, բայց չչաջողեցաւ յափշտակել մեզմէ ինքնապաշտպանութեան անբռնաբարելի հզօրագոյն մեր գէնքը՝ ազգային ոգին:

Եւ այսօր, 85 տարիներ ետք, այդ ոգին է որ կը պահէ մեզ Ռփիւռքի տարածքին վրայ: Այդ ոգին ծնունդն են մեր մտաւորական առաջնորդներն ու մեր ազնուասիրտ բարերարները, իրենց արմատին ամրօրէն կառչած աշխարհացրիւ մեր հայրենակիցները:

Տ. Ներսէս Ա. Քահանայ Պապայեան

2000 թ. առանձին գրքով անգլերէն լոյս տեսաւ բնիկ Անյթապցի Տէր Ներսէս Աւագ Քահանայ Պապայեանի եղեռնային յուշերը «Pages from my diary» («Էջեր իմ օրագրից») խորագրով: Մինչ այդ 1998 թ. հայերէն բնագիրը հրատարակուել էր նրա որդու՝ հանրաճանաչ ուսուցչապետ՝ Երուանդ Պապայեանի «Յիշատակներու արահետներով» գրքի սկզբում:

Տէր Ներսէս Պապայեանը (1887-1956) երկար տարիներ զբաղուել է ուսուցչական աշխատանքներով: 1910 թ. եղել է Ճիպլինի (Այնթապից 40 մղոն հեռավորութեան վրայ) հայկական դպրոցի տնօրէն, իսկ այնուհետեւ 1913 թ. օծուել է քահանայ եւ իր կեանքը նուիրել է Աստծուն, քրիստոնէութեան եւ իր ժողովրդի ծառայութեան վեհ գործին:

Գրքի սկզբում իր հօր նուիրուած երախտագիտութեան խօսքում Երուանդ Պապայեանը նշում է.

«...Տարագրութեան սարսափազդու տարիներուն միշտ մնաց իր հօտին հետ, որպէս խիզախ հովիւ: Տառապեցաւ անտրտունջ ամբօրէն կառչած իր հաւատքին եւ աղօթեց: Դժնդակ այդ տարիներուն, հակառակ իր տառապանքին, ցաւակից եղաւ, տառապեալներուն եւ արհաւիրքներէն ու տանջանքներէն հարուածուած շրջեցաւ վաղաժամօրէն...»:

Տէր Ներսէս Պապայեանը նոյնպէս եղել է հայոց Մեծ Եղեռնի վերապրողներից մէկը: Նա եւս հրաշքով ազատուել է Երիտթուրքերի գործադրած տեղահանութեան սարսափներից ու դաժան կոտորածներից եւ ականատեսի աչքով նկարագրել է հայութեան կրած տառապանքները: Տեղին է նշել, որ 110-120 հոգուց բաղկացած իր գերդաստանից կենդանի են մնացել 11 հոգի: Մնացեալները սպանուել, ոչնչացուել են Մեսքենէի եւ Տէր-Զօրի անապատներում:

Տէր Ներսէս Պապայեանը իր ականատեսի յուշերը կազմել է օրագրի ձևով, ճշգրիտ թուականներով, մարդկանց ստոյգ անուններով եւ անհրաժեշտ ծանօթագրութիւններով:

Օրագրութեան վերջի երրորդ մասում օրը օրին նկարագրում Այնթապի վերապրող հայութեան վերադարձը դէպի իրենց հայրենի տները եւ այնուհետեւ ինքնապաշտպանական մարտերը թուրք հրոսակների դէմ, որը ինչպէս ինքն է նշել իր օրագրի վերջում «Այնթապի հերոսամարտը փրկեց շուրջ 18,000 հայերի կեանքը»:

Որոշակի պատկերացում կազմելու համար նրա մղձաւանջային տառապանքների մասին, բերում ենք մի քանի հատուածներ օրագրու թիւնից:

*
* *

Տարագրութիւն

1915 Մայիս 16-ին, անակնկալօրէն ձերբակալեցին զիս, երբ եկեղեցիէն տուն երթալու կը պատրաստուէի: Հոն ներկայ եղող հաւատացեալներ շրջապատեցին զիս ձերբակալող զինուորներու խումբը եւ փորձեցին ազատել զիս. սակայն ի գո՛ւր: Պարտաւորուեցան տեղի տալ իրենց ուղղուած զէնքերու սպառնալիքին եւ հեռանալ իմ խնդրանքիս վրայ: Հաւատացեալներու ընդդիմութիւնը կրնար քանի մը հոգիի մահուան պատճառ դառնալ: Ինծի չթոյլատրուեցաւ տուն հանդիպիլ: Մայրս եւ երէցկիներ աղիողորմ արցունքներով հետեւեցան ինծի ժողովուրդին հետ, մինչեւ որոշ տեղ մը: Ի վերջոյ, յուսահատ, վերադարձան գիւղ: Երկու հեծեալ զինուորներու ուղեկցութեամբ կը քայլի դէպի ո՛ւր, չէի գիտեր: Ճամբան, տեղ տեղ, հանգիստի համար կը կենայինք: Զինուորներէն մէկը զբաւանդէն ճերմակ թուղթ մը հանեց եւ ինծի երկարելով, ըսաւ. «Կը տեսնե՞ս. այս թուղթին տակը ձեր մուկ-թարր ստորագրած եւ կնքած է: Վերը մեր ուզածը կրնանք գրել եւ դուն մահուան կը դատապարտուիս: Բայց մենք քեզի կը մեղքնանք. եթէ մեզի տասը օսմանեան ոսկի տաս, այս թուղթը հոս, աչքիդ առջեւ կը պատուենք, եթէ ոչ, հետեւանքը, ինչպէս ըսի, մահ է»: Սակարկութիւնը վերջ գտաւ հինգ ոսկիով:

Երկու ժամ ետք, հասանք Խալֆեթի: Նոյն ձիաւորները Խալֆեթիի շուկային եւ փողոցներուն մէջ պտտցուցին զիս. ապա տարին բանտ: Խալֆեթիի մէջ ծանօթներ շատ ունէի. ինծի անկողին ու կերակուր բերին: Երկու օր մնացի հոն: Երրորդ օրը, ձեռնակապով, զիս եւ էհնէշ գիւղէն ուրիշ հայ մը, բանտէն հանելով, երկու հեծեալ զինուորներու հսկողութեամբ, ճամբայ հանեցին դէպի Պերեճիկ...:

...Մեր բանտախուցը ունէր մէկ դուռ եւ երկու պատուհան. մէկը դէպի բակը կը նայէր, իսկ միւսը՝ դէպի Եփրատ: Աստուած իմ, ի՛նչ գարհուրելի աղեշարժ տեսարան: Սոսկումով կը տեսնէինք հազարաւոր մարդկային յօշոտուած մարմիններ՝ Եփրատի ալիքներուն հետ անդադար թաւարդ: Մեր անգօր գայրոյթէն կու լայինք ու կ'ողբայինք միայն: Մեզմէ ոմանք սաստիկ կը վախնային. ուրիշներ՝ անտարբեր

էին: կարծէք պատրաստ՝ Եփրատի ջուրներուն մէջ միանալու հազար հազարաւորներու: Ծխախոտը փաթկեց յաւատահական որեւէ բարակ թուղթի մէջ, կը ծխէին շատերը: Անգամ մը ստիպեցին որ ես ալ ծխեմ: Հագիւ երկու շունչ քաշած էի, սկսայ հազալ գէշ կերպով, կոկորդս ալրեցաւ, աչքերէս արցունք հոսեցաւ:

...Պերեճիկ հասնելու համար, փոխանակ կարճ սովորական ճամբային տանելու, անկանոն, քարքարոտ ճամբաներու վրայ չարչարեցին մեզ, հազար լուտանք եւ հայհոյանք տեղացնելով: Կը գիշերէինք զօրխային մթութեան եւ խուլ ամայութեան մէջ, սոսկումով: Ո՞վ կարող էր քնանալ: Պերեճիկի մօտերը, երբ հասանք Եփրատի եզերքը, հաւաքեցին այր մարդերը: Հաստ պարանով իրարու կապեցին մեզ եւ սկսան կացինները ճոճել լպիրչ խնդուքով: Ապա սկսան խուզարկել մեր գրպանները: Առին ինչ որ գտան: Ես ունէի 3 օսմ. ոսկի, առին: Ոսկի չըջանակով ակնոցս եւ ժամացոյցս, նոյնիսկ գրպանիս թաշկինակը առին: Գիշերուան խաւարին մէջ զարհուրելի էր Եփրատը: Մերթ մեզ կը մօտեցնէին Եփրատին, մերթ կը հեռացնէին: Կը քաշքուտէին անգամ մը պարանին մէկ ծայրէն, անգամ մը միւս ծայրէն: Ուժասպառ էինք բոլորովին: Մահը կը տենչայինք խոր անկեղծութեամբ, սրտանց: Աչքերս փակ, կ'աղօթէի, Աստուծո՛ւմ ինդրելով որ ա՛լ բաւ համար էր մեր տանջանքը: Մահը շնորհք մը պիտի ըլլար մեզի համար: Պիտի ըլլար մեր միակ փրկութիւնը...:

ՅՈՒՇԱՍՍՏԵԱՆ ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՑ

Քիլիսը դաշտային Կիլիկիայում գտնուող հայ ժողովրդի հնագոյն բնակավայրերից մէկն է: Այն գտնուում է Այնթապից հարաւ, Թուրքիա-Սիրիա սահմանագծի մօտ:

Վերոյիշեալ խորագիրը կրող հատորը Քիլիսի հայոց ամբողջական պատմութիւնն է վաղ միջնադարից սկսած մինչեւ 1968 թուականը:

Այս բովանդակայից եւ բարձրարժէք աշխատութեան հեղինակներն են քիլիսցի իրաւաբան Համբարձում Պէրպէրեանը եւ քիլիսցի հոգեւոր հովիւ Տէր Խորէն Ա. Քահանայ Ներսէսեանը:

Իր հայրենի քաղաքի պատմութիւնը գրելու նախաձեռնութիւնը պատկանում է Համբարձում Պէրպէրեանին: Դժբախտաբար իր առողջական վիճակի վատթարացման հետեւանքով այն չի կարողացել հասցնել աւարտին: Բարեբախտաբար մի այլ քիլիսցի հայրենասէր հոգեւորական Տէր Խորէն Ներսէսեանի ներգրած տքնաջան եւ բարեխիղճ ջանքերով գիրքը ամբողջացւում է պատմագիտական պատշաճ մակարդակով եւ հրատարակւում Պէյրութի, Հայէպի եւ Ամերիկայի

Քիլիսի հայրենակցական միութիւնների հովանաւորութեամբ 1960 թուականին Պէյրութում:

Գրքում մանրամասն տրւում է Քիլիսի պատմական անցեալը, այն համայնքի ազգային, եկեղեցական, կրթամշակութային, լեզուական եւ հասարակական-քաղաքական կեանքի պատմութիւնը: Այնուհետեւ խոսւում է քիլիսցի հանրայայտ գերդաստանների կենսագրական ցեղերի, հոգեւորականների, մտաւորականների, արհեստաւորների մասին, որոնք մեծ մասամբ ուղեկցւում են լուսանկարներով: Հեղինակները լեզվակից են զանազան երկրների մէջ ապրող քիլիսցի հայերի վիճակագրական ցուցակը, ինչպէս նաեւ տեղեկութիւններ տուել հայրենակցական միութիւնների գործունէութեան մասին: Ուշագրաւ է նաեւ քիլիսցիների վարք ու բարքի ու սովորութիւնների նկարագրութիւնները Նրանց կողմից գործածուած առօրեայ առածներն ու իմաստայից խոսքերը, անեկտոտները: Մի խօսքով հատորը ընդգրկում է հայկական Քիլիսի ամբողջական պատմութիւնը իր մշակութային արժէքների հետ միասեղ:

Այն էլ նշենք, որ Քիլիսի հոգեւոր կեանքում շատ մեծ դեր է խաղացել Ս. Յովհաննէս մայր եկեղեցին, որը կառուցուել է նախկին Փետնափոր վանքի տեղը 1856-ին մինչեւ 1872 թ. պոլսեցի Յակոբ Խալֆէ Թարտարապետի կողմից: Դժբախտաբար, այդ հոյակերտ եկեղեցին ուժանիւթով պայթեցուել է 1925 թ. քեմալական թուրք իշխանութիւնների կողմից, որպէսզի ոչ մի հետք չմնայ հայերի դարաւոր գոյութիւնից:

1915 թ. Մեծ Եղեռնի օրերին, մարդկային եւ նիւթական ծանր կորուստներ ունեցաւ նաեւ Քիլիսը: Այդ բոլորի մասին Համբարձում Պէրպէրեանը եւ Տէր Խորէն Ա. Քահանայ Ներսէսեանը գրքում ընդգրկել են նաեւ իրենց ականատեսի վկայութիւնները, ինչպէս նաեւ քիլիսցի այլ վերապրող հայերի կրած տառապանքների պատմութիւնները: Լկանատեսի վկայութիւններ կան նաեւ Ապտուլ Համիտեան բռնատիրութեան շրջանում 1895-1896 թթ. հայերի կոտորածների մասին, որը քաղուած է Սմբատ Ղազէլեանի յուշերից (ՏԵՍ էջ 77-91):

Ստորեւ «Յուշամատեան Քիլիսի Հայոց» հատորից տրւում է «Գաղթականութեան սեւ օրերու ականատեսի վկայութիւններ» խորագրով գլուխը:

*
* *


Խորէն Ա. Քհնյ. Ներսէսեան

Ինչպէս յիշուած է նախապէս, որ Քիլիսի հայերը օրական հարիւրաւոր ընտանիքներու կարաւանով ղրկուած են Գաթմայի կայա-րանը, ուր՝ ամիսներ շարունակ խիստ ողբալի կացութեան մէջ մնալէ եւ հալ ու մաշ ըլլալէ ետք, ղրկուած են զանազան ուղղութեամբ:

Օտ 200-250 ընտանիքներ աքսորուած են Յորդանանի Մասնա-րտուած աւագուտքը, իսկ փոքր թուով քիլիսցիներ՝ Րաս-Իւլ-Այն եւ Իսլահիէ: Ինթիլլիէն եւ Հալէպէն բաւական մեծ թուով քիլիսցիներ ղրկուած են Տէր-Չօր, ուր բնաջնջուած են գրեթէ ամբողջութեամբ:

Արդ, հոս կ'արձանագրենք Գաթմայէն Րաս-Իւլ-Այն աքսորուած գաղթականներուն մէջ գտնուող՝ քիլիսցի հայ ընտանիքի մը աղջկան ականատեսի վկայութիւնները, իր իսկ բերնով: Յիշեալը այժմ տարիքը առած կ'ին մըն է. եւ ամէն անգամ որ առիթը կը ներկայանայ ու մենք մեր այցելութեան միջոցին կը ստիպենք իրեն պատմել իր գլխէն անցած-ներն ու տեսածները, դժկամութեամբ կը պատմէ ու կը վերջացնէ արցունքներով:

«Գաթմայէն մեզ գիշերով ճամբայ հանեցին հետիոտն, (կ'ըսէ ու կը հառաչէ սրտի խորէն, կարծես՝ այդ օրերու սարսափելի տեսարան-ները կը պարզուին իր աչքերուն առջեւ, կը գունատի ու իքնզինք անհանգիստ կը զգայ) ծերուկ հայրս, գոյքերու շալակ մը կռնակին՝ քալած միջոցին հարցուց թէ՛ ո՞ր պիտի երթանք, «հո՛ս» պոռաց թուրք գինուորը եւ զօրաւոր ապտակ մը իջեցուց խեղճ հօրս երեսին: Երբ հասանք Միւսլիմիէ, մեզ վակոններու մէջ լցուցին: Ժողովուրդին լացն ու կոծը երկինք կը հասնէր...»



Քիլիս Ա. Յովհաննէս Եկեղեցին
Շինութեան սկսած է 1856-ին, ասարուած՝ 1872-ին եւ օծուած՝ 1873-ին.
քանդուած է 1925-ին...

Գիշերուան ժամը երեքին, հասանք Րաս-Իւլ-Այն, ուր իջեցուցին մեզ եւ թափեցին բաց դաշտին վրայ: Գիշերուայ մութին՝ շատ մօտիկ հեռավորութենէ մը լսելի եղան հրացանաձգութիւններու ձայներ, եւ՝ ւձեր Աստուածը կանչեցէք, թող զայ՛ց եւ ձեզ ազատէ մեր ձեռքէն» կը պոռային: Մեզմէ առաջ հոս բերուած հայերուն զնդակահարումի գործողութիւնն էր, որ կը կատարուէր, որոնց լացի ու աղաղակի աղիտ-գորմ ձայները մեզ կը սարսափեցնէին: Մեզմէ քիչ առաջ, մահուան պաշտը հասած գաղթականներէն՝ քիլիսցի ընտանիքի մը գեղեցկադէմ մկկ հարսը հայրս տեսնելով, վիզը փաթթուեցաւ ու լալով՝ - հայրիկ, մեկի ալ հայր ու պաշտպան եղիր, ես ո՞ր պիտի մնամ - ըսաւ:

Աւաւօտուն, երբ արեւը ծագեցաւ, տեսանք որ բազմահազար գաղթականներու կայան մըն է մեր իջած դաշտը: Ըստ պետական չէրքէզ պաշտօնեայի մը յայտարարութեան՝ 40,000 գաղթականներ կը գտնուէին հոն:

Ջրոյցի ընթացքին, հայ երիտասարդ մը յայտնեց մեզի, որ ինքը Զէյթունցի Պապա աղայի որդին է, եւ պատմեց թէ՛ երեսունի մօտ Զէյթունցի ընտանիքներ, որոնց մէջ գտնուած են նաեւ քահանաներ, Տէր-Չօրի մօտ զնդակահարուած ու ամբողջութեամբ բնաջնջուած են, միայն ինքը՝ վիրաւոր փախած ու հասած է Րաս-Իւլ-Այն:

Սոյն մահուան դաշտին վրայ համախմբուած գաղթականներէն, 4-6 օր վերջը մնացեր էին միայն 200 ընտանիքներ: Ասոնց համար կրահանգ եկաւ Տէր-Չօրի Մութասարըֆէն, որ կարողութիւն ունեցող-ների անմիջապէս անձնական տուններ շինեն ու բնակութիւն հաստատեն: Այս արտօնութեան ետին թաքնուած նպատակն է եղեր, հարուստ եւ ունեւոր ընտանիքները միւսներէն անջատել, կողոպտելու դիւրութեան համար, ինչ որ փաստուեցաւ քիչ վերջ: Հարուստները բաժնուեցան մէկ կողմ եւ մնացեալները խումբ-խումբ տարուեցան կէս ժամուայ հեռու ընտանիքներու ետին ու զնդակահարուեցան կամ դաշունահարուեցան:

Մնացեալ հայերուն առաջարկեցին կրօնափոխ ըլլալ: Մահուան սարսափէն՝ բոլորն ալ արձանագրուեցան: Քոյրս ալ զնաց ու արձա-նագրել տուաւ մեր անունները: Մօտաւորապէս տարի մը անցուցինք հոս, բայց թէ ինչե՛ր տեսանք ու անցուցինք...պատմելու սիրտ չունիմ, կը հիւանդանամ երբ կը վերջիչեմ այդ սեւ օրերը: Գիշեր մը, չէրքէզ-ները պաշարեցին մեր տունները եւ յայտնեցին թէ՛ երկու ժամէն բոլորս ալ պիտի ղրկուինք այլ գաղթականներ: Մեռելոցի օր մըն էր եւ տարուեցանք անապատ տեղ մը, ուր առանց սեռի խտրութեան մերկացուցին բոլորը, խուզարկելու եւ դրամական հարստութիւնները կողոպտելու համար: Բաւական թուով կեսարացիներ կային մեր մէջ, ստոնցմէ ա՛յնքան ոսկեղէն եւ ոսկեղրամ ելաւ որ, գետինը բարձր կոյս

Զորա Իսկէնտէրեան

մը գոյացաւ: Երբ մերկացնելու կարգը ինծի եկաւ, Աստուծոյ մէկ հրաշքով փախուստ տուի եւ ազատեցայ: Առաւօտուն՝ քննութիւնները կրկնուեցան: Այս կերպով, մերկ, կիսամերկ, անօթի եւ կողոպտուած հայ գաղթականներու խիսակները, մահացան, սպաննուեցան ու ոչնչացան: Ես, որ 8-10 տարեկան գեղեցկադէմ աղջնակ մըն էի, ինկայ Երևանի անունով չէրքէզի մը ձեռքը, որ զիս ձիուն վրայ նստեցնելով, տարաւ Էհմէտ Բէչօ անուն մէկուն տունը: Պատուիրեց որ ինծի հոգ տանին ու ինամեն: Էհմէտ Բէչօն, տարիքոտ եւ բարի մարդ մըն էր: «Հայրիկ» կ'ըսէի իրեն: Նոյնպէս կ'ընէ մօր մը պէս կը սիրէր զիս ու կը պահէր չար աչքերէն: Զորս ամիս վերջը, իմացանք որ, զիս այս տունը բերող չէրքէզ Երևանի վերջը գտնուած ու սպաննուած է, որով՝ ազատուեցայ անոր մտադրած չար նպատակէն: Տան տէրս օր մը առաջարկեց զիս ամուսնացնել իր քրոջ աղուն հետ: Նոյն գիշերը, երբ բոլորը քնացեր էին, ես անկողինէս դուրս ելլելով դացի հինգ վաղրկեան անդին գտնուող հոսուն ջուրին քով, աղօթեցի ու ինքզինքս նետեցի ջուրին մէջ, որպէսզի մեռնիմ եւ աղարտած չըլլամ ընտանիքիս ու ցեղիս պատիւը: Տեսեր էին ջուրը նետուելիս, եկան ու ազատեցին զիս:

Տան տիրուհիս շատ աշխատեցաւ զիս համոզել, բայց կարելի չեղաւ: Յետ այնու զիս կը պաշտպանէր, եւ ամէն անգամ որ ժամտարմաներ կամ չէրքէզներ կու գային զիս փախցնելու համար, արաբ մայրս զիս կը պահէր սուռնէն դուրս, դաշտին մէջ գտնուող խոտերու եւ թրիքներու ներքեւ:

Օր մը, արաբական տարազով պտոյտի եկանք Տէրտէսիէ, ուր հայ կին մը զիս տեսնելով, գիտցաւ հայ ըլլալս եւ լուր տուաւ տեղւոյն վրայ գտնուող հիւանդանոցին, որուն բժիշկն էր Տոքթ. Հրեշտակեան: Տոքթորը մի քանի հոգի դրկած էր, որոնք հետս խօսելով հասկցան որ ես հայ եւ կոյս աղջիկ մըն եմ եւ կը փափաքիմ իմ ազգիս մէջ ապրիլ, կարգադրութիւններ ըրին, տարին զիս հիւանդանոց ու պահեցին սենեակի մը մէջ: Յետոյ, տան տէրս դատ բացաւ Տոքթորին դէմ ու զիս պահանջեց, սակայն Տոքթորը, իմ կոյս աղջիկ ըլլալուս փաստարկութեամբ դատը շահեցաւ եւ փրկեց զիս: Յիշեալը, ինծի պէս շատ մը աղջիկներ փրկած ու մեծ ծառայութիւններ մատուցած է իր ազգին: Օրհնեալ ըլլայ իր բարի յիշատակը: Ես այսօր հայ կ'ապրիմ շնորհիւ իրեն»:

Զորա (Միաք) Իսկէնտէրեանը ծնուել է Սուէտիոյ Հաճի Հասիպի վրայ 1890 թ.: Նա զաւակն է Մարտին աղայ Իսկէնտէրեանի, որ իր ժամանակին առեւտրական աշխոյժ գործունէութիւն է ունեցել թուրք իսլամ: Միեւնոյն ժամանակ վարել է պետական կարեւոր պաշտօններ: Ամենավերջինը եղել է հարցաքննիչ դատաւորի (մուսթանթը) պաշտօնը:

«Որպէս ազգասէր ու հայրենասէր մարդ, - իր յուշերի սկզբում գրել է Զորա Իսկէնտէրեանը, - հայրս իր բարեկամ Եսայի Կարպեանի հետ հնչակեան ղեկավար Աղասին եւ ընկերները Սուէտիա առաջնորդած էր 1892-ին եւ գործակցած էր անոնց հետ: Սուէտացիք նոր շունչ եւ յեղափոխական ոգի ստացած էին այդ «Պարոն»ներէն: Սուէտացիք շատ սիրեցին Աղասին եւ իր ընկերները եւ զանոնք «Պարոններ» կոչեցին: Աղասին եւ կարգ մը ընկերներուն Ձէյթուն անցնելէն ետք, Սուէտիոյ յեղափոխական աշխատանքները ձեռնհասօրէն վարեց Շաւարշը (Աւետիս Երչմանեան)»:

Մարտին աղայ Իսկէնտէրեանը Սուէտիոյ յեղափոխական կեանքէն գործօն մասնակցութիւն ունենալու համար 1904 թ., որպէս քաղաքական յանցադործ ձերբակալուած է եւ բանտարկուած Անտիոքի բանտում: Նրա հետ բանտարկուած են նաեւ այլ հայրենասէր յեղափոխականներ, մօտ 30 հոգի:

Հօր յեղափոխական ըմբոստ ոգին եւ ազատատենչ նկարագրովը ազդել է նաեւ իր որդու վրայ: Այս մասին ահա թէ ինչ է գրել հեղինակը զրբի սկզբում բերուած իր «երկու խօսք»ում:

«Ունեցած եմ հայդուկային կեանք մը եւ մասնակցած հայ ազատագրական շարժումներուն քիչ մը ամէն տեղ եւ մասնաւորաբար Տէրթ-Եոլի եւ Մուսա Լերան շրջաններուն մէջ: Հակառակ անոր որ մասնակցած եմ շատ մը կռիւներու եւ յաճախ հակառակորդներու հարածանքին կամ մահափորձին թիրախ եղած եմ, բայց եւ այնպէս թիթեւ վէրք մ'իսկ չեմ ստացած, բան մը որ ծանօթներս այս պարագան վերագրած են որպէս հատուցում ըրած բարիքներու»:

Իր յուշերում Զորա Իսկէնտէրեանը մանրամասն պատմում է իրենց գերդաստանի կրած եղեռնային տառապանքների մասին:

Եղեռնի մահուան ճիրաններից ազատուելուց յետոյ, իր աւօրեայ գործին զուգընթաց, ազգային-հասարակական-կուսակցական անխոնջ աշխատանքներ է կատարում Կիլիկիայի տարբեր քաղաքներում, Իրաքի Մուսուլ, Քերքուք եւ Պաղատ քաղաքներում:

Այնուհետև, 1948 թ. վերջնականապես հաստատուում է Լիբանանի Պէյրուսթ քաղաքում, կրկին շարունակելով իր ազգանուէր գործունէութիւնը:

Զորա Իսկէնտէրեանի «Յուշերը» լոյս է տեսել Պէյրուսթում, 1974 թ. «Սեւան» տպարանում: Այն նկարագարող է:

Ստորեւ գրքից բերում ենք քաղուածաբար հատուածներ, որոնք լիովին պատկերացում են տալիս Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականութեան ծրագրին:

Ամենավերջում տրուած «Բերկրուհին» (Թուրքերէն Շագիէ) վերնագրով գրութեան պատմութիւնը կայանում է հետեւեալում:

Զորա Իսկէնտէրեանը 1923 թ. Սեպտեմբերին Պաղտատում պատահաբար ծանօթանում է երկու հայ պարուհիների հետ եւ լսում նրանցից մէկի Բերկրուհու սրտածմբիկ, եղեռնային զարհուրելի տառապանքներով լցուած պատմութիւնը: Հետագայում այն գրի առնելով առաջին անգամ հրատարակում է «Սփիւռք» շաբաթաթերթի մէջ (տես Մայիս 30, 1964): Այն ընթերցողին ենք ներկայացնում որոշ կրճատումներով:

*
* *

ԱՆՏԻՈՔԻ ԶԱՅԵՐՈՒՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ (1909)

Հայոց նորագոյն շրջանի արիւնոտ պատմութեան մէջ Կիլիկիոյ հայերու 1909-ի կոտորածը պիտի արձանագրուի իբրեւ ցնցող իրադարձութիւն մը: Իսկ 1909 Ապրիլ 6-ի Անտիոքի փոքրաթիւ հայերուն գազանային կոտորածը պիտի մնայ կոտորածներու այդ շարքին իբրեւ ամենէն քսամնելի դրուագներէն մէկը:

Արդարեւ այդ օրն էր որ կատաղած խուժանը Անտիոքի իշխանութիւններու աչքերուն առջեւ ու անոնց մեղսակցութեամբը՝ աննախընթաց վայրագութեամբ խողխողեց 100 տուն հաշուող հայութիւնը, 10-12 տարիքէն վեր այրերը, բացառութեամբ 7-8 անձերու, որոնցմէ մէկը այս տողերը գրողն է:

35,000 բնակիչ հաշուող Անտիոք քաղաքի մէջ 100 տնուոր հայութիւնը իր ձեռքերուն մէջ կեղորոնացուցած էր բոլոր արհեստներն ու արուեստները, եւ քաղաքին շինարար ու ստեղծագործ տարրը կր նկատուէր: Եւ պէտք է ըսել թէ Անտիոքի մէջ հայութիւնը միշտ յարգուած ու գնահատուած տարր մըն էր եղած. այս իսկ պատճառաւ

մարդ կը զարմանայ թէ ինչպէս պատահեցաւ որ խուժանը այսպէս մէկէն գազանային բնագրէ մը մղուած յարձակեցաւ անգէն հայոց վրայ եւ կտրեց այն ձեռքը, զոր օր մը առաջ կը համբուրէր:

Ապրիլ 5-ին, սուրհանդակի մը հետ, դրկած նամակով հայրս մեզ մէկէլ Մուսա կը կանչէր եւ կը թելադրէր նաեւ բոլոր հայերուն, ի մասնաւորի Արմենակ Էֆէնտի Շէրպէթճեանին (իրաւագէտ) եւ Մարտիրոս Էֆէնտի Կիրակոսեանին (վարչական ժողովի անդամ) որ ձգեն Անտիոքը եւ ապաստանին Ճէպէլ Մուսա, գոնէ մինչեւ որ կացութիւնը յստականայ եւ վտանգը հեռանայ:

Մեր դիմումները վերոյիշեալներուն քով ընդունելութիւն չգտան: Անոնք աւարկեցին թէ 6000 տնուոր քաղաքի մը մէջ 100 տուն հաշուող հայերուն մարդ ծուռ աչքով չի նայիր. անոնք կ'ամչնան հայոց վնասելէ: Այս ուղղութեամբ պնդելու որոշ պատճառները ունէին անոնք: Արդարեւ, 1906-06 սեւ տարիներուն երբ բովանդակ Հայաստան աշխարհը արեան ծովու մը մէջ կը լողար, Անտիոքի մէջ ոչ մէկ բան պատահեցէր: Քաղաքի աղաները, գործնապէս, դէմ կեցեր էին ամբոխին ցանկութիւններուն: Ասկէ գատ, անոնք հաւատք կ'ընծայէին նախ Սահմանադրութեան սկզբունքներուն որ հաւասարութիւն եւ եղբայրութիւն կը խոստանար խալիֆներուն եւ քրիստոնեաներուն: Այս ուղղութեամբ երգեր ալ յորինուած էին, զորս Հայերը եւ Թուրքերը կ'երգէին ամէնուրեք: Մայտնելով թէ չէին հաւատարմ ջարդի մը հաւանականութեան եւ մեզ եւս տարհամոզեցին որ չմեկնինք:

Այս հիման վրայ Մարտիրոս Էֆէնտի Ապրիլ 6-ի առտուն կը մեկնէր Գայմագամին մօտ անկէ ապահովութիւն պահանջելու: Այս վերջինը զինք հաւաստիացնելէ ետք թէ ոչինչ պիտի պատահէր, կը թելադրէր իրեն որ մեկնէր հայկական թաղը եւ հոն յայտնէր ժողովուրդին թէ մտահոգուելու պէտք չունէին եւ թէ կառավարութիւնը կ'երաշխտուրէր անոնց ապահովութիւնը. հետեւաբար ամէն ոք ըստ սովորականի իր գործերով կարող է զբաղիլ: Մարտիրոս Էֆէնտի հաւատացեր էր այս հաւաստիացումներուն:

Բարեմիտ եւ տարաբախտ Մարտիրոս Էֆէնտի... երբ ան հայկական թաղը մեկնելով Հայերը ապահովցնելէ ետք տուն կը վերադառնար, հայոց թաղի մուտքին գտնուող փուռին քով յարձակման ենթարկուելով նահատակուեցաւ, ժամանակին իր դարչապարը լիզող աւագակապետ Ալիդոյի կողմէ, ճիշդ այն պահուն երբ ժամանտարմաները կը հասնէին որպէս թէ անդորրութիւնը հաստատելու համար: Իրականութեան մէջ սակայն անոնք էին որ պետական իսկ գէնքերով կը խողխողէին անմեղ հայերը:

Ապրիլ 6, ժամը 2-ին, եղբորս հետ փաստաբան Ճորճի Էֆէնտի Եւրպէթճեանի քով գացինք, կացութեան շուրջ հետը խորհրդակցելու համար: Քիչ մը երկար տեւեց մեր խօսակցութիւնը: Ան ալ չէր հաւատար ջարդի հաւանականութեան: Ճիշդ այդ պահուն էր որ դուրսը իրարանցում մը սկսած էր եւ հեռուէն գէքներու ձայներ կը լսուէին: Քրիստոնեայ հոռոմ դրացին լուր տուաւ մեզի թէ թուրք խուժանը հայոց թաղին վրայ յարձակելով կոտորածի սկսած էր, եւ կառավարութիւնը ժանտարմաներ կը դրկէր զսպելու համար գազանացած ամբոխը: Այդ ժանտարմաները մեր կեցած տան առջեւէն կ'անցնէին: Իրաւ որ դիւրահաւատ ու պարզամիտ ժողովուրդ ենք եղած...: Ես ալ, ի տես անցնող ոստիկաններուն, կը խորհէի թէ անոնք շուտով կը հասնէին եւ կը զսպէին կատղած հորդաները եւ յանցագործները կը պատժէին...:

ԱՔՍՈՐ ԴԵՊԻ ՅԱՍԱ

...(1915) Յուլիսի տաք օր մը, կէսօրուան կիզիչ արեւին տակ մեզ կրկին զոյգ-զոյգ շղթաներով կապելէ ետք քաղաքին (Անտիոք) ծայրամասը առաջնորդեցին: Հոն լեցուած էին բռնագաղթի դատապարտուած հայ ընտանիքներ:

Երկու հարիւր գինուորներէ եւ ժանտարմաներէ չըջապատուած մեզ ճամբայ հանեցին:

Այսպէս քալելով հասանք առաջին կայանը Ճըսըր-Շուղուր տանող ճամբուն վրայ: Կարաւանի պատասխանատուն էր անտիոքցի վաճառական Մըսթաֆա Չէլէնկպաշը, որ բոլորիս ալ ծանօթ էր եւ խորքին մէջ բարի մարդ էր: Իրմէ ինդրեցինք որ քակել տար մեր ձեռքերու շղթաները: Ան պատասխանեց, թէ այդ մէկը իր կամքէն կախեալ չէր, սակայն պիտի փորձէր, եւ իւրաքանչիւրէս կէսական ոսկի հաւաքելով գինուորներու պետին մօտ գնաց եւ մեր ձեռքերուն ազատութեան արտօնութիւնը բերաւ:

Երկրորդ գիշերը կարաւանը կանգ առաւ Ճըսըր-Շուղուրի մերձակայքը՝ Որոնդէս գետի ափին: Տոքթ. Սայիտ անուկով արար բժիշկ մը, որ մեզ կը ճանչնար, տեսնելով մեր այդ վիճակը, գնաց եւ մեզի միս, հաց եւ այլ ուտելիքներ բերաւ:

Բացօթեայ երրորդ գիշեր մը եւս անցնելէ ետք, չորրորդ օրը հասանք հովմէացիներու օրէն մնացած եւ Մըսթաֆա Քալէ կոչուած բերդի մը ստորոտը, ուր մեզ բոլորս խոշոր խանի մը մէջ լեցուցին:

Մօտակայ գիւղէն արաբ բարի կին մը մեզի մօտենալով մաշած կապերտի կտոր մը տուաւ, որպէսզի վրան նստէինք, հաց, ջուր բերաւ,

կրակ վառելով մեզի տաք կերակուր մը եփեց, մինչ արցունքները կը սառնէին անոր աչքերէն՝ մեր այդ ողբերգական վիճակին ի տես:

Չորրորդ գիշերը անցուցինք Սեճար ըստած վայրին մէջ, ամբողջ գիշերը մտեղներու դէմ պայքարելով:

Հինգերորդ օրը եօթը ժամ քալելէ ետք հասանք Համայի շողեկառփի կայարանը, ուր լեցուած էին Հայաստանի բոլոր քաղաքներէն ու գիւղերէն բերուած հայ կանայք ու երեխաներ, այդ մարդ գրեթէ չկար:

Ահաւոր տեսարան մը կը պարզուէր մեր աչքերուն առջեւ: Պատկերահազարներով ծեր եւ ջահել կանայք արեւու կիզիչ ճառագայթներուն տակ ու փոշիներու մէջ նետուած էին այդ ընդարձակ բացատանին վրայ: Ոմանք սաւաններով վրան շինած էին պատսպարելու համար:

Ինչ սոսկալի պատկեր, ինչ ցնցիչ երեւոյթ, տեսնողին մարմինը կը փշարաղուէր:

Անոնք որ ականատես չեն եղած նման գաղթակայաններու, չեն կրնար ըմբռնել այդ ահաւոր վիճակը, որուն մէջ կը գտնուէին հայ գաղթականները...:

ԲԵՐԿՈՒՅԻՆ

(Ապրիլեան Եղեռնէն Իրական Պատմութիւն)

- Ո՞ր տեղացի ես...:

Պատասխանը եղաւ խոր հառաչանք, քովնտի նայուածք մը եւ... լուծիւն: Աւելի հետաքրքիր դարձայ. կարծես ներսէս մղում մը կը պարտադրէր եւ մեր մինակ ըլլալու պատեհութեանէն քաջալերուած, առաջին հարցումիս պատասխանը չառած կրկին հարցուցի:

- Արդեօք ի՞նչ է պատճառը ձեր հոս իյնալուն...:

Դէմքը յանցաւոր մէկու մը երեւոյթը առաւ, գոյնը քանի մը անգամ փոփոխութեան ենթարկուեցաւ եւ ապա խորունկ շունչ քաշելով պատասխանեց.- Պիտի պատմեմ, որովհետեւ այս պատմութիւնս որքան ալ նորոգէ անթեղուած ցաւերս եւ արծարծէ հին վէրքերով լի խորհուրդներս, պիտի պատմեմ, քանի որ սրտցաւօրէն կը հետաքրքրուիք...:

Եւ սկսաւ պատմելու...:

- Երբ մեր կարաւանը Հալէպի մօտ Գաթմայի կայարանը հասաւ, Շապիէն հոս կեցաւ պահ մը, հառաչ մը քաշեց եւ կրկին տամկացած աչքերով շարունակեց, - այն ատեն այսպէս չէի, զիս տեսնող աղջիկներն անցամ կը հրապուրուէին, հակառակ անոր որ աչքի չզարնուելու համար հին ու մին հազուատներ հաքեր էի եւ թափթիփած մազերով, միշտ աչքերէ հեռու մնալ կը փորձէի, մօրս պատուէրով...: Շատ զգոյշ էիմք մայրս եւ ես Իզմիտէն մինչեւ հոս, եւ հակառակ թաքնուելու մեր

բոլոր հնարքներուն, տեղույն վրայ ժանտարմա-գոմանտանի խալիլին աչքէն չէին կրցած վրիպել: Հետեւեալ օրը երբ մեր կարաւանը կը շարժէր շարունակելու իր դժբախտ ճամբան, չորս ժանտարմաներ զիս մինակս փրիշղա կառք մը նստեցնել ուզեցին: Մայրս եւ ես ընդդիմացանք: Ոստիկաններու սպառնալիքներուն տակ քոյրերս կուրսիսն ու բոլորս միացած օգնութիւն կ'աղաղակէինք: Տասներկու տարեկան պզտիկ քոյրս մօրս վրայ ինկած, մարդարտանման արցունքները իր այտերէն վար իրարու կը յաջորդէին: Մեծ քոյրս ա՛հ ու դողի մէջ էր, իսկ կարաւանի մեր ուղեկիցներուն մեզի մօտեցողներուն գլխուն լուտանքներ թափելով խարազանի հարուածներով ետ կը մղէին: Այս աղիողորմ ճիչերուն, աղաչանքներուն, լացուկոծին միայն թրքական բարբարոսներու գազանացած սիրտն էր որ չէր կարեկցեր:

Այս խառնիճաղանճին մէջ էր, երբ խալիլ մօտենալով մեզի, հրամայեց որ մայրս ու քոյրերս ալ միեւնոյն կառքին մէջ գետեղեն եւ ժանտարմաներէն մէկուն գաղտնի իր հրահանգը տալէ ետք, մեզի դառնալով ըսաւ.

- Մի վախնաք, ձեր բարիքին համար է, բան չկայ,- եւ մեր կառքը միւսներէն անջատելով երկու ժանտարմաներու ընկերակցութեամբ, արագընթաց շարունակեց իր ճամբան մինչեւ իրիկուն, երբ տան մը դրան առջեւ կանգ առաւ: Մեզ ներս տարին եւ հրամայեցին ծառային որ մեզի հոգ տանի եւ կերակուր տայ մինչեւ որ «Պէկը» գայ: Մենք մեր կարգին կը սպասէինք մեր դառն ճակատագրին, ինչպէս սպանդանոց տարուող ոչխարները:

Սպասուհիէն իմացանք թէ այդ տեղը Քեֆերթ խէյրիմ կը կոչուի, եւ խալիլ Պէկ այս շրջանի ժանտարմա-գոմանտանին է եւ ամենէն ազդեցիկ մարդը: Մէկ երկու ժամ ետք էր երբ խալիլ տուն եկաւ ու մեզ տեսաւ սենեակի մը անկիւնը կծկուած եւ իրարու կպած՝ մայր մը իր երեք աղջիկներով, ինչպէս ոչխարներ կռնակ կռնակի, կողք կողքի՝ վայրի գազանի մը յօշոտումէն սարսափած:

Անիկա սուրն ու ատրճանակը մէջքին՝ սենեակէն ներս մտաւ եւ յառաջանալով իր որսին, յաղթանակ մը տարածի գոհունակութեամբ եւ լպիրշ ու կեղծաւոր թուրքի մը շարժուածքներով ըսաւ.

- Այս տունը ձեր սեպհական տունն է, դուք հոս կրնաք ապրիլ պատ ու անկախ: Ասիկա ձեզի նախախնամական շնորհ մըն է: Անոնք որ դացին, գիտէ՞ք թէ մահուան ճամբան կ'երթան: Դուք հոս ամէն վտանգէ գերծ՝ ամէն ինչ պիտի գտնէք ձեր տրամադրութեան տակ եւ ես ձեզի պաշտպան պիտի կենամ. փոխէք ձեր անունը եւ հաւատարմօրէն կապուիք ու ծառայէք ինծի:

«Այդ պահուն աւելի պինդ կպայ մօրս, մէկ կողմէ աչքիս ետքովը խալիլին դաժան դիմագիծը կը դիտէի, իսկ միւս կողմէ ոչ միայն վանդակի մը մէջ բանտարկուած թուշուհի մը նման կը գողգողայի, այլեւ միանգամայն կը մտածէի մօրս տառապանքին մասին իմ պատճառաւ, եւ կոկոն քոթն համար վերապահուած աղետալի կեանքին վրայ կը խոկայի: Ի՞նչ պէտք էր ընել: Հաշտուիլ դառն ճակատագրին հետ շատ դժուար բան էր: Լաւագոյնն էր վերջ տալ այս անպատուաբեր կեանքին փոխանակ վաւաշտ թուրքին հաճոյքներուն գործիք դառնալու: Այդ ալ դիւրին չէր, եւ լուծում մը չէր: Գաւաթ մը թոյն ճարել, անհնարին էր, որովհետեւ դուրսի հետ ամէն յարաբերութենէ զրկուած էինք եւ անծանօթ՝ կացութեան ու միջավայրին:

«Այս եւ նման մտածումներ ահա կը շարձարէին միտքս, երբ խալիլ Պէկ մօտենալով դէպի ինծի՝ ըսաւ.

- Անունդ ի՞նչ է աղուոր աղջիկ...

Արհամարհոտ նայուածքով մը չպատասխանեցի իրեն:

Երկրորդ անգամ աւելի վճռական ու սպառնալից հարցուց: Վարանոտ եւ դողդոջուն ձայնով մը «Բերկրուհի» պատասխանեցի:

- Այդ ի՞նչ դժուարահնչիւն անուն է, այդ անունին թրքերէնը չկա՞յ:

- Շագիէ է, ըսի:

- Իսկ դուն պզտիկ գուժու (տատրակ)- մինչ քոյրս հրեշտականման ու անբիծ կոյսի ամօթխած երեսը գետին խոնարհած, առանց գլուխը վեր վերցնելու վախէն կը դողար. մայրիկս «Աստղիկ» է ըսաւ:

- Չ'ըլլար, պէտք է փոխէք այս անունները, չըլլա՛յ որ վտանգէք գութ ձեզ, ես կ'ուզեմ գիտնալ թէ այդ անուններուն իմաստն ու նշանակութիւնը ի՞նչ է, որպէսզի ըստ այնմ կանչեմ ձեզի: Ինչ կայ, հայերէն չէ, անոր թարգմանութիւնը թող ըլլայ:

Բարբարոս ցեղ, կարծես թէ սեպհական լեզու կամ մշակոյթ ունեցած ըլլար որ մեր անուններուն թարգմանութիւնը կ'ուզէր գտնել իր քերէնի մէջ:

Անցան օրեր, շաթաբներ եւ ամիսներ: Մենք կրեցինք բոլոր գառնութիւնները իրենց հաւաքութեամբ: Աղէտը կը տիրէր ցեղիս գաւակներուն բոլորին վրայ, մասնաւորաբար մեզի պէսներուն, որոնց գիտեցիկութիւնն ու երիտասարդութիւնը թշնամի էին իրենց համար: Հէզ ժայրս տառապանքի սուզն ու սեւը գրկած անկողին ինկաւ այս այլա՝ մերձ կրկինքին տակ եւ թաց ու բաց աչքերով մեկնեցաւ այս անիծեալ աշխարհէն, մեզ բոլորովին անմխիթար թողող մեր ցաւերուն հետ: Հիմա նոր շրջան մըն էր որ կը սկսէր ինծի համար, մօրմէս ինծի փոխանցուած մտալիւում մը: Ես անպատուուած էի եւ պարծանքի տառակայ ամէն սրբութիւնս կորնսցուցած, եւ ինչ որ եղած էի, եղած,

սակայն ոգի ի բուին կ'աշխատէի որ կոկոն քոյրս ալ իմ ճակատագրիս չհնթարկուէր: Կը զգայի խալիլին ներսը սքողուած չարանենգ ոգին, գիտէի անոր մէջ օր ըստ օրէ աճող անբարոյ ու վաւաշոտ խառնուածքը, որ պատրաստ էր ամէն վայրկեան իր որսին վրայ խոյանալու: Ատոր համար երբ խալիլ տուն գար, երբեք առիթ չէի տար քրոջս մօտենալու նոյնիսկ յաճախ տեսնելու զայն: Առ այդ ամէն հնարք ի գործ կը դնէի, հակառակ անոր որ առաջին իսկ օրէն ինծի խոստացած էր հաւատարմութիւն...: Այն չարանենգ գիշերը մինչեւ լոյս անքուն լացեր եւ լուսցուցեր եմ: Վերջապէս պոռթկաց եւ ուզեց բռնի ուժով տիրանալ որսին: Ի զուր եղան աղաչանքներս, անօգուտ եղաւ անցեալին իր ըրած հաւատարմութեան խոստումներուն յիշեցումը, ապարդիւն անցան արտասուլթոր աչքերով պաղատանքներս: Խեղճ քոյրս թռչունի մը պէս կը դողար քովի սենեակին մէջ, ամէն անգամ որ դուռը կոտորիւ սպառնալիքի ձայնը կ'իմանար:

Կրնաք երեւակայել թէ ինչ ահաւոր եւ ճգնաժամային վայրկեաններ էին անոնք: Վերջապէս գազանացած հրէշը, զիս խոշտանգելով սենեակին մէջ, դուռը վրաս գոցելէ ետք, յարձակած էր մատաղ քրոջս վրայ եւ զայն արիւններու մէջ թաթխած ու իր գազանային կիրքին գոհացում տուած էր: Ո՛ւր երթալ, որո՞ւն բողոքել այս պոռնիկ աշխարհին մէջ: Աստուած անգամ խուլ դարձած էր մեր պաղատանքները լսելու...:

ԿՐԿԻՆ «ՅՕՇՈՏՈՒՄ ԶԱՅԱՍԱՆ» ՓԱՍՏԱՎԱԿԵՐՈՎՐԱՎԱԿԱՆ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

1995 թ. Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի օրերին Լոս Անճելլոսում լոյս տեսաւ «Յօշոտուած Հայաստան» (Ravished Armenia) խորագրով գիրքը: Այն անգլերէն բնագրից առաջին անգամ լինելով հայերէնի էր թարգմանել գրականագէտ-լեզուաբան Դոկտ. Գուրգէն Սարգսեանը:

Այս գրքում բերուած պատմութիւնը Մեծ Եղեռնից հրաշքով փրկուած մի հայ աղջկայ՝ Արշալոյս Մարտիկանեանի ականատեսի վկայութիւնն է 1915 թ. Արեւմտահայութեան նկատմամբ կատարուած երիտթուրքերի ծանրագոյն ոճրագործութեան մասին: Նա դուստրն է եղել խարբերդից 20 մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Չմշկածաղ քաղաքի բնակիչ Մարտիկանեան գերդաստանի: 17 տարեկան Արշալոյսը (գրքում՝ Աւրորա) Մեծ Եղեռնի ահաւոր տառապանքներից եւ մահուան դաժան ճիրաններից մազապուրծ ազատուած վերապրողներից մէկն էր: Արշալոյսը խորը վշտով եւ հոգեկան ծանր ապրումներով պատմում է Տէր Զօրի անապատները քշուած ամբողջ հայ ընտանքիներին

տանջանքների եւ սպանութիւնների մասին, թուրքական հարեմներին վաճառուած կոյս աղջիկների, ճանապարհներին բռնաբարուած եւ քրոջպոտուած կանանց, սովամահութիւնից մեռնող մանկահասակ երեխաների եւ տեղի ունեցած այլ անմարդկային դաժանութիւնների մասին:

Արշալոյս Մարտիկանեանի հաղորդած վկայութիւնները 1917 թ. թարգմանչի միջոցով գրի է արել ամերիկացի յայտնի գրող Հենրի Լ. Ֆիլյոսը: Գրքի նախաբանը գրել է Նորա Վալնը եւ նախաձեռնել է անգլերէն հրատարակութիւնը 1918 թ. Դեկտեմբերին Նիւ Եորքում:

Հայերէն հրատարակուած գրքի վերջում Գուրգէն Սարգսեանը իր բովանդակալից գրութեան մէջ հանգամանօրէն վերլուծել եւ մեկնաբանել է այս գրքի հետ առնչուող մանրամասները, ինչպէս նաեւ կինոնկարի վերածման իրողութիւնը:

Պարզուած է, որ Գուրգէն Սարգսեանը անգլերէն լեզուով հրատարակուած այս հազուագիւտ ճառուող գիրքը դեռեւս կարդացել է 1941 թ. Պաղտատում: Տարիներ անց երբ նպատակադրուել է թարգմանելու հայերէն, չի կարողացել գտնել այն, ոչ Պարսկաստանի եւ ոչ էլ Հայաստանի կենտրոնական գրադարաններում: Յետագայում Լոս Անճելլոս բնակութիւն հաստատելուց յետոյ, կրկին շարունակել է իր որոնումները եւ ի վերջոյ կարողացել է 1918 թ. հրատարակուած սրինակը յայտնաբերել Սան Տիէկոյի հանրային գրադարանում, այն էլ միկրոֆիլմի վերածուած:

Գուրգէն Սարգսեանը անմիջապէս ձեռնամուխ է եղել այն հայերէն թարգմանելու գործին, որպէսզի հազուագիւտ դարձած այդ գիրքը գարձնի ընթերցող լայն հասարակութեան սեփականութիւնը:

Եւ այսպէս, 1995 թ. հայերէն թարգմանութիւնը պատշաճ մակարդակով լոյս տեսաւ Լոս Անճելլոսում Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի օրերին:

Այս բարձրարժէք փաստագրական գրքի հրատարակման հովանաւորողներն էին Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Քնարիկ Նազլիկեանները իրենց զաւակների անմիջական աջակցութեամբ:

Այն էլ նշենք, որ գրքի իմբագիրն է հայրենի գրականագէտ՝ Մարգո Ղուկասեանը, իսկ նկարիչը՝ Սարգիս Մուրատեանը: Գիրքը լոյս է տեսլ «Նոր Հայաստան» օրաթերթի թիւ 11 մատենաշարով:

Ինչպէս վերեւում նշեցինք, գրքի վերջում ընդգրկուած Գուրգէն Սարգսեանի բովանդակալից գրութեան մէջ մանրամասն վերլուծուել եւ համընհանուր մեկնաբանութեան են ենթարկուել գրքի անգլերէն հրատարակութիւններն ու այն կինոնկարի վերածման հետաքրքիր

պատմութիւնը: Ուստի մենք նպատակաշարժար գտանք Համառօտակի ընթերցողին ներկայացնել Գուրգէն Սարգսեանի այդ գրութիւնը:

Իսկ ամենավերջում որոշակի պատկերացում կազմելու համար բերել ենք մի հատուած «Հաջի Ղաֆուրի հարեմում» խորագիրը կրող գլխից:



Արշալոյս Սարտիկանեան

Նախքան այդ, անհրաժեշտ համարեցինք քաղուածաբար մի քանի գնահատականներ բերել նաև այս բարձրարժէք եւ խիստ կարեւոր գրքի մասին:

Այն նկատառումով, որ 2005 թ. յայտարարուած է Մեծ Եղեռնի 90-ամեակի տարի: Իսկ «Յօշոտուած Զայաստան» գրքի հայերէն հրատարակութիւնից անցել է 10 տարի եւ կրկին անգամ անդրադառնալը այս փաստավաւերագրական գրքի կարեւորութեանը, ընթերցողի մտապատկերում մէկ անգամ եւս կը կենդանացնի այդ տառապեալ հայուհու, մեծ հայրենասէրի անզուգական կերպարը:



«Յօշոտուած Զայաստան» գրքի կազմը Գործ նկարիչ՝ Սարգիս Մուրատեանի

*
* *

Ղախատականներ

«Այս ապշեցուցիչ իրադարձութիւնները փոքրիկ Աւրորան պատմեց ինձ, որպէսզի ես էլ, իմ մայրենի լեզուով, պատմեմ աշխարհին...»:

Ընթերցողը լիակատար վստահութեամբ կարող է կարդալ Աւրորայի պատմութիւնը, քանզի այնտեղ ամէն բառ ճշմարիտ է: Այն, ինչ որ պատահել է այս աղջկայ հետ, հաստատուած վաւերացում է»:

Հենրի Լ. Գէյտս

*
* *

«Աւրորա Սարտիկանեանը եկել է Ամերիկա՝ պատմելու իր ժողովրդի կրած տառապանքների մասին եւ իր կարելին անելու, որպէսզի հնարաւոր լինի վերակառուցել իր երկիրը: Աւրորայի՝ այս փոքրիկ ու փխրուն աղջկայ նպատակն է ամերիկեան ժողովրդին հաղորդակից դարձնել իր պատմութեանը՝ մամուլի, այս գրքի եւ կինոնկարի միջոցով, որն արդէն նախապատրաստուած է հայ-սիրիական ամերիկեան նպաստամատոյց կոմիտէի կողմից: Ես գիտակցում եմ, որ Աւրորան կատարում է այդ մեծ գործի մի մասը, որպէսզի վերահաստատուի խաղաղութիւն եւ բարի կամք իր՝ հնադարեան, պիպլիական երկրում»:

Նորա Վալն

*
* *

«Նա, ով կը կարդայ այս գիրքը, կ'իմանայ, թէ՛ արտաքինով գեղանի, քնքուշ, իսկ էութեամբ հպարտ եւ հայրենասէր այս հայուհին ինչպիսի ուժգնութեամբ է հնչեցրել զանգերը, օգնութիւն հայցելով ստարներէրից: Դարասկիզբին հնչած այդ զանգերի ղօղանջն է այսօր հասել մեզ, ասելու՝ միանանք ու համախմբուենք բոլոր հայերս միասնարար գործենք, յանուն մեր հայրենիքի՝ հայկական անկախ հանրապետութեան»:

Մարգօ Ղուկասեան

«ՅՕՇՈՏՈՒՄԾ ԶԱՅԱՍԱՆ» ԿԱՍ
«ՅՈՂԳԻՆԵՐԻ ԱՃՈՒՐՂԸ» ԳՐՔԻ ԵՒ ԿԻՆՈՆԿԱՐԻ ՄԱՍԻՆ

Գուրգէն Պ. Մարգսեան
Բան. Գիտութիւնների թեկնածու, դոցենտ

1917 թ. գարնան, երբ Արեւմտեան եւ Արեւելեան ռազմաճակատներում արիւնալի կռիւները շարունակուեցին, երբ Կովկասեան ճակատում ռուսական բանակը գրաւել էր էրզրումը, Երզնկան, Պիթլիսն ու Մուշը, երբ հայերից դատարկուած հազարաւոր գիւղերի ու քաղաքների փողոցներում վխտում էին գորշ դայիի զաւակները, երբ արեւմտահայ մտաւորականութիւնը գրեթէ ոչնչացուել էր, այդ օրերին, հայկական Մեծ Եղեռնի երկրորդ տարեկիցին, գրուեցին այդ ողբերգութեան ողջ մրուրը ճաշակած ականատեսի առաջին փաստավարագրական գիրքը: Այն պիտի կոչուէր «Յօշոտուած Հայաստան», իսկ յետոյ, 1919-ին, պիտի վերածուէր կինոնկարի եւ կրէր «Հոգիների աճուրդը» շատ խօսուն ու խորիմաստ վերնագիրը:

Այդ օրերին, երկու ամերիկացիներ, մէկը Թուրքիայի ամերիկեան նախկին դեսպան Հենրի Մորկնթաուն՝ իր երկրի պարբերական մամուլում, իրար ետեւից հայանպատ յօդուածներ էր հրատարակում, միւսը՝ յայտնի գրող Հենրի Լ. Գէյտսը, գրի էր առնում Մեծ Եղեռնից վերապրած մանկահասակ մի հայ աղջկայ՝ Արշալոյս (գրքում Աւորոս) Մարտիկանեանի պատմութիւնները 1915 թ. Ապրիլի 24-ից մինչեւ 1917 թ. գարնանը:

Գիրքն ունեցել է երկու հրատարակութիւն, առաջինը՝ սահմանափակ տպաքանակով՝ հայ-սիրիական ամերիկեան նպաստամատոյց կոմիտէի պատուէրով՝ նրա անդամների համար, իսկ երկրորդ հրատարակութիւնն իրականացուել է Լոնտոնում, 1933 թուականին:

... Արշալոյս Մարտիկանեանը, հայկական ժամանա դ'Արկը, ինչպէս նրան անուանեցին Ամերիկայում, կրելով Մեծ Եղեռնի երկու տարուայ մղձաւանջային բոլոր սարսափները՝ երկար թափառումներից յետոյ, 1917 թուականի գարնան սկիզբներին հասնում է էրզրում, երբ ռուսական բանակը նոր էր գրաւել այդ քաղաքը, հայկական նպաստամատոյց կոմիտէն կազմակերպում է Ա. Մարտիկանեանի ճանապարհորդութիւնը դէպի Պետերբուրգ, ապա այնտեղից, ամերիկեան դեսպանատան միջոցով՝ Ամերիկա:

Արշալոյս Մարտիկանեանը Անդրանիկից մի սրբազան պատգամ էր տանում իր հետ. «Երբ հասնես Ամերիկա, - ասուած էր պատգամում, - ասա, որ Հայաստանն ուժասպառ է, վիրաւոր ու արիւնածոր, բայց նա կը բարձրանայ նորից, եթէ Ամերիկան օգնի սովեալներին, իսկ պատե-

րագմից յետոյ, միջոցներ յատկացնի նրանց հայրենի տուն վերադարձրեցիւ համար»:

Ահա այս միջոցների ստեղծման մեծ գործին լծուեց Ամերիկայում ժամանա դ'Արկը՝ Արշալոյս Մարտիկանեանը:

«Յօշոտուած Հայաստան» գիրքը պատրաստ էր, երբ հայ-սիրիական ամերիկեան նպաստամատոյց կոմիտէն միտք յղացաւ գրքի սիւժէի հիման վրայ ստեղծել մի կինոնկար, որի ամբողջ հասոյթը, 30 միլիոն ամերիկեան տոլար, պէտք է տրամադրուէր Մերձաւոր Արեւելքում հաւարուած 60 հազար հայ որբերի սննդամթերքի, հագուստի եւ օթեւանի ապահովման համար...:

Այս կինոնկարը, ինչպէս ժամանակին դնահատել են ամերիկեան եւ անգլիական մասնագէտները, կինեմատոկրաֆիայի պատմութեան մէջ գրաւուեց մի եզակի տեղ: Կինոգիտողը էկրանի վրայ տեսնում է ոչ միայն կատարուած դէպքեր՝ կապուած Արշալոյսի կեանքի հետ, այլ այն, որ Արշալոյսն ինքն է խաղում եւ ճշմարտացիօրէն վերարտադրում տեսարաններ, որոնք արթուն թէ քնած, պահում են տեւական մղձաւանջային դրութեան մէջ, տեսարաններ, որոնք պատկերում են նոր սպանութիւնը, թուրք բարբարոս զապթիէների հարուածներից մահացող մօրը, փոքր քոյրերին ու եղբայրներին, վերջապէս, սահմուկեցիլ եւ նրա մարմնական ու հոգեկան խոշտանգումներն ու լլկումները: Ոչ մի փրօֆեսիոնալ դերասան չէր կարող երեւակայութեան ուժով վերապրել եւ խաղալ անցեալի հոգեկան տառապանքը նման պայմաններում, իսկ Արշալոյսը կարիք չուներ այդ բոլորին, քանզի նա պարզապէս վերապրում էր այն սարսափներն ու դաժանութիւնները, որ նա կրել էր երկու տարիների ընթացքում...:

«Հոգիների աճուրդը» կինոնկարի սահմուկեցուցիչ տեսարաններից է Տիարպէքիւրի պարիսպներից դուրս 16 հայ կոյս աղջիկներին խաչ հանելը, որ թուրքական բարբարոսութեան մի դասական օրինակ է: Սա կատարուել էր Քրիստոսին, քրիստոնէութիւնը վարկաբեկելու եւ, միամասնակ, խտտագոյնս զգուշացնելու այն հայ աղջիկներին, ովքեր կը յարունակէին յամառել եւ հաստատ մնալ իրենց կրօնին, իրենց հաւատին:

Կոյս աղջիկներին ողջ-ողջ խաչ հանել եւ ապա վայրագօրէն հսկաւ կատարածի վրայ, պատմութեան մէջ հաւասարը չունեցող ծանրագոյն ոճիր է...:

...Յաւալի է, որ մինչեւ այժմ էլ շարունակուեց մոռացութեան թանձր խաւարը Ա. Մարտիկանեանի, հայկական ժամանա դ'Արկի շուրջը մենք կարծում ենք, որ հայրենի կառավարութիւնը կը սրբագրի այս յանիրաւի, անարդար մոռացութիւնը եւ պատշաճ յարգանք մատուցե-

յուր յետոյ, նրա անուշով կ'անուանակոչի Երեւանում որեւէ դպրոց, մշակոյթի օճախ կամ փողոց:

Սպասենք եւ յուսանք:

ՀԱԶԻ ՂԱՖՈՒՐԻ ՀԱՐԵՍՈՒՄ

Տղամարդկանց ջարդից յետոյ Մալաթիայում սպասող բուն պաղթուածներին հրամայեցին պատրաստուել ճանապարհ ընկնելու:

Վաղ առաւօտեան մեզ հաւաքեցին քաղաքից դուրս: Բռնագող թրւածները ամբողջ բազմութիւնը բաղկացած էր կանանցից եւ երեխաներից եւ, հատ ու կենտ միայն երեւում էին տղամարդիկ: Թուրքերն ասացին, որ մեզ տանելու են Տիարպէքիր, որը գտնուում է 100 մղոն հեռավորութեան վրայ: Շատ քչերը յոյս ունէին այս հտապում կենդանի մնալ, քանի որ ճանապարհը խիտ կերպով բնակեցուած էր թուրք, չեչի եւ քուրդ գիւղական բնակիչներով: Նրանք ամենամոլեւանդ մահամետ կաններն էին: Ճանապարհների վրայ ընկած մեծ քաղաքների բնակիչները աւելի դաժան էին բռնագաղթուածների նկատմամբ, քան ասկեարները: Այս մոլեւանդ բնակիչները ձեռքից մեր ժողովրդի կրած դաժանութիւններից մի քանիսն այնպիսին էին, որ չեմ կարող նկարագրել:

Երբ մեր երկարաձիգ կարաւանը դուրս եկաւ Մալաթիայից, կարաւանում կային 15 հազար ծեր եւ երիտասարդ կանայք: Անձնական իր կամ ուտելիք շատ քչերն ունէին: Այնուամենայնիւ շատերն իրենց գոյութիւնը կարողացել էին պահպանել դրամի միջոցով: Վերջիններս պատրաստ էին իրենց ունեցածը բաժանելու չունեցողներին հետ: Դրամը միակ վստահելի երաշխիքն էր սննդի համար եւ միակ յոյսը՝ պաշտպանուելու սպանելու կրքից:

Իրենց կրօնն ուրացողների խումբը, որին թոյլատրել էին ինձ եւս միանալու, տեղաւորել էին շարքի առջեւում՝ ասկեարների յատուկ պահակախմբի հսկողութեան տակ: Զարթիները պաշտպանում էին այլ խմբեր, բայց դրանց թիւը շատ քիչ էր: Այդ շրջանի զարթիների մեծ մասն ընդգրկուել էր Միջագետքի բանակում: Ուրացողների խումբը, որի կազմի մէջ մտնում էին մօտաւորապէս 200 հոգի, լաւագոյն ձեւով պաշտպանուած էր: Մնացածներին ամբողջութեամբ յանձնել էին քրդերի, թուրք ու չեչեն գիւղացիութեան ողորմածութեանը:

Յունիսի վերջին օրերն էին, եղանակը շոգ էր: Մի քանի տասնեակ մեծահասակ կանայք, շոգից ու ծարաւից, ուժասպառ տապալուեցին գետին: Միակ բանը, որ մենք խնդրում էինք գիւղացիներից, ջուր էր: Իմ խմբի երկու աղջիկների մայրը, որ դուստրերի հետ անցել էր հարիւրաւոր մղոններ, հասել Մալաթիա, ետ մնալու համար ծեծեցին:

Եւ գետին ընկաւ եւ այլեւս չկարողացաւ վեր կենալ: Ասկեարները յիսկոյն կնոջն ուշքի բերել: Նրա երկու աղջիկներին թոյլատրեցին միայն հրաժեշտի համբոյրներով օծել մօր տանջուած դէմքը՝ թողնելով նրան ճամբեգրին:

Այս երկու աղջիկներից մէկը հարս էր, այրիացած հարս: Նա ասել էր իր ամուսնու ու հօր սպանութիւնը Քանդայ քաղաքում, Սվադի ճանապարհին: Այստեղ քրդերը փորձել էին սպանել նրա մօրը, սրովհետեւ նա շատ ծեր էր: Աղջիկը, մօտիկ կանգնած մի սպայի ինդրի էր, որ ազատի մօրը: Սպան ասել էր՝ միայն այն դէպքում, եթէ նորսն ուրանայ իր կրօնը: Հարսը, կրտսեր քրոջ հետ, համաձայնուել էր: Այժմ երկու քոյրերն իրար գրկած քայլում էին: Նրանք չէին համարձակուում իրենց շուրջը նայել, նոյնիսկ այնտեղ, որտեղ ընկած էր իրենց մայրը: Երբ արդէն անլսելի դարձան խեղճ մօր ողբն ու հառաչանքները, ես մօտեցայ երկու քոյրերին եւ խնդրեցի թոյլ տալ մնալու իրենց հետ: Ես հասկանում էի, թէ ինչ զգացմունքներ ունէին աղջիկները: Հրաշք կլինեք, եթէ իմ մայրը, իմ փոքրիկ եղբայրներն ու քոյրերը կենդանի լինէին: Մի ասկեար Մալաթիայում ինձ ասել էր, որ Վեչկաձագի բռնագաղթուածները շաբաթներ առաջ անցել էին այդ տեղերով եւ զնացել այս նոյն ճանապարհով դէպի Տիարպէքիր: Մի գուցէ, ասել էր նա, նրանք դեռ այնտեղ են, Տիարպէքիրում: Եթէ հասնե՛նք, եթէ երբեւէ հասնե՛նք:

Քաղաքից մի քանի ժամ հեռանալուց յետոյ, մեզ հրամայեցին կանգնել: Դադարները շատ էին մտահոգում մեզ, քանի որ նման կանգառները սովորաբար նշանակում էին նոր տագնապներ: Այս մէկն էլ բացառութիւն չեղաւ: Հենց որ դադարեցինք քայլելուց, գիւղացիները թափուեցին մեզ վրայ եւ սկսեցին թալանել:

Մայրամուտից առաջ լսուեց ահաւոր բղաւոց: Նայեցինք դէպի արեւմուտք: Բյուրներից մեր կողմն էին արշաւում մի խումբ հեծեալներ: Քուրդ ելուզակներ էին, ձիավարելու ձեւից արդէն ճանաչում էինք նրանց: Գիւղացիները վախեցած աղաղակեցին՝ «Քերիմ պէ՛յն է, Ջեբբարի ինկերը, անհրաժեշտ է հրուելը»: Գիւղացիները մագլցեցին բյուրն ի վեր, ըստ երեւոյթին վախենալով, որ Քերիմին՝ քուրդ աւազակապետին գուր չի գայ իրենց արարքը, նրան բաժին ընկած զոհերին իրենք արդէն թալանել էին:

Քերիմ պէյի՛ Ջեբբարի բարեկամ լինելն ինքնին բացայայտում էր աւազակապետի եւ նրա խմբի ժամանման իրաւունքը: Ջերբարի ֆէնտին շրջանի գիւնուորական պետ էր նշանակուել Պոյսի իշխանութիւնների կողմից, հայերին ճնշելու, տեղահանութեան ընթացքում հալածելու համար: Նրա խօսքն օրէնք էր, իսկ գործը՝ դաժան: Քերիմ եւ

Մուսա պէյերից բոլոր քուրդ ցեղապետերը վախենում էին. երկուսն էլ պատկանում էին Աղջա Դադի քրդական ցեղախմբերին: Քերիմ պէյն իր աւագակախմբի հետ իշխում էր գիւղական շրջաններին եւ յաճախ ապստամբում թուրքական իշխանութեան դէմ: Որպէսզի նրան դարձնի դաշնակիցը, Ջեբբար էֆէնտին նրան էր յանձնել հայ բռնազաղթուած կարաւանների «խնամքը»: Մալաթայից մինչեւ Սիրիական անապատը:

Հարիւրաւոր հեծեալներ կային Քերիմի աւագակախմբում: Նրանք շատ հեռուից էին գալիս եւ այժմ հոգնած էին, շատ էին հոգնած, շարունակելու իրենց ճանապարհը: Բայց այդ հոգնածութիւնը չէր խանգարում անմիջապէս սկսելու իրենց վայրենի խրախճանքը, որ մի քանի օր մեզ ահ ու սարսափի մէջ պահեց: Հազիւ էին քրդերն իրենց ձիերը փոքր խմբերով ոտնակապել, տարածուեցին մեր կարաւանի երկայնքով եւ սկսեցին իրենց տուրքը հաւաքել: Բարձրացան գլխովին հայցող ցաւի, վշտի ճիչերն ու աղաղակները եւ գիշերը լցուեց հայ կանանց հառաչանքներով եւ տնքոցներով: Մղձաւանջային հերթական գիշեր:

Այդ գիշեր ես ակնատես եղայ զարհուրելի արարքների, որոնց մասին անկարող եմ պատմել: Եւ այժմ, երբ Ամերիկայում եմ եւ ապահով, անցեալի մղձաւանջային օրերն ինձ հանգիստ չեն տալիս: Մի խումբ քրդեր այնպէս դաժանօրէն ու անգլխօրէն տանջեցին երիտասարդ կանանցից մէկին, որ մօտ կանգնած կանայք չդիմացան եւ խելագարուած՝ ամբողջ խմբով նետուեցին քրդերի վրայ՝ ազատելու աղջկան: Մի րոպէ, քրդերը խելագարուած կանանց ոտքերի կոխան դարձան, իսկ աղջիկն արագօրէն անհետացաւ:

Երբ քրդերն ուշքի եկան, քաշեցին իրենց սուր դանակներն ու նետուեցին խիզախ կանանց վրայ, բոլորին էլ ծակծկեցին, սպանեցին: Կարծում եմ, այդ խմբի մէջ կար յիսուն կին: Քրդերը սպանուածների դիակները իրար վրայ կիտեցին եւ կրակ տուին: Մինչ քրդերից մի քանիսը բորբոքում էին կրակը, միւսները փնտրում էին փրկուած աղջկան, բայց չկարողացան գտնել: Այսպիսով, անյաջողութեան մատնուելով, նրանք բռնտեցին մի այլ աղջկայ եւ տարան զէպի բոցավառուող մարդկային խարոյկը, նետեցին բոցերի մէջ: Երբ նա փորձում էր փախչել, նրան բռնում եւ շարտում էին կրակների մէջ: Նա այրուեց ու մոխիր դարձաւ: (էջ 100-103):

ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՄԵԾ ԵՂԵՈՆԻ

Լիպարիտ Ազատեան

Լիպարիտ Ազատեանի «Հայ Որբերը Մեծ Եղեռնի» երահատոր աշխատութիւնը, նրա երկար տարիների տքնաջան եւ դժուարին աշխատ

ասների արդիւնք է, որը կատարուած է հայրենասիրական մեծ նուիրումով եւ բժախնդրութեամբ, որովհետեւ ինքն էլ, իր ժամանակին մանուկ հասակից կորցնելով իր հօրը, ճաշակել է որբի դառը ճակատագիրն ու ցրկանքները:

Այս հատորներում յաջորդաբար տրուում է Մեծ Եղեռնից յետոյ սեկի նման աճած հայ որբանոցների համապարփակ պատմութիւնը, բարձր դնահատելով հայրենի եւ օտար բարեգործական կազմակերպութիւններին, բարերարներին, օտարազգի նուիրեալներին, միսիոնարներին, քոյրերին, որոնց ջանքերով վերապրեցին հազարաւոր հայ որբեր:

Հեղինակը բազմաթիւ նիւթեր է բերել Մեծ Եղեռնի հայ որբերի վկայութիւնների եւ ակնատեսի աչքով պատմած նրանց ահաւոր ստուպանքների եւ դժուարին, անմարդկային պայմանների մասին: Հակառակ ձեռք առնուած միջոցներին, նրանցից շատերը բռնի թրքացան, քրդացան ու արաբացան: Բնականաբար, որբերից շատերը հայ եւ օտար գործիչների ներդրած անձնուէր ջանքերով հայեցի դաստիարակութիւն ստացան, արհեստներ սորվեցան, մասնագէտներ դարձան եւ նախայիցին իրենց ժողովրդին:

Ստորեւ տրուում է Լիպարիտ Ազատեանի առաջին հատորի սկզբում գրուած «Երկու Խօսքը» եւ հայ որբերից մէկի՝ գէյթուեցի Միսաբ Պարսումեանի եղեռնային սահմուկեցուցիչ վկայութիւնը:



Լիպարիտ Ազատեանի «Հայ որբերը Մեծ Եղեռնի» գրքի կազմը

Թուրքը, 1915-էն մինչեւ 1918-ը, եւ յետոյ՝ մինչեւ 1922-ը, մէկ ու կէս միլիոն հայ ջարդեց, բայց չկրցաւ իր նպատակին հասնել, հայութիւնը բնաջնջել: Չհասաւ իր նպատակին, որովհետեւ այն պատերազմի մէջ, որուն ընթացքին ան ծրագրած էր ոչնչացնել ամբողջ հայութիւնը, Օսմանեան կայսրութիւնը պարտութիւն կրեց:

Անապատներուն մէջ, խոր ձորերուն եւ վիհերուն մէջ, խոպան ու անջրդի տարածքներուն վրայ ողջ մնացած հայ մանուկը որբացաւ, հայ ծերունին կբեցաւ, հայ մայրն ու մամիկը արիւնաքամ դարձան: Թուրքը կարծեց, թէ իր նպատակին կէս ճամբուն վրայ մնացած հայն ալ պիտի ոչնչանայ արեւին ու աւազին տօթէն, անձրեւի հեղեղներէն ու սամումներէն, համաճարակներէն եւ գիշատիչներէն:

Անոնք, այո՛, խլեակներ էին, սակայն չոչնչացան:

Անոնք ապրեցան:


Յաղթանակած դաշնակիցներու ժողովուրդները, եւրոպական եւ ամերիկեան ցամաքամասերուն վրայ իրենց կազմակերպած բարեսիրական եւ բարեգործական ընկերութիւններու միջոցաւ եւ մարդասէր անձնաւորութիւններու աջակցութեամբ, ձեռք մեկնեցին հայ խլեակներուն փրկելով զանոնք ամբողջական կորուստէ:

Աշխարհի մարդասիրական այս վերաբերմունքին մէջ իրենց մասնակցութիւնը ունեցան նաեւ Օսմանեան կայսրութեան տիրապետութենէն հեռու ապրող ազգասէր եւ անձնուէր հայորդիները:

Հայ խլեակները ապրեցան:

Հայու տոկունութիւնը եւ ապրելու աննկուն կամքը, ինչպէս եւ միշտ, յաղթանակեցին: Հայութիւնը վերապրեցաւ եւ այդ վերապրողներէն ունեցանք Արշիլ Կորքիներ, Գուրգէն Մահարիներ, Վարդան Աճէմեաններ, Նայիրի Զարեաններ, Անդրանիկ Մառուկեաններ, Յարութիւն Կալենցներ...:

Շատ գիրքեր գրուած են Մեծ Եղեռնի մասին, սակայն, այդ Եղեռնի խլեակներէն՝ որբերուն ամբողջական պատմութիւնը տակաւին գրուած չէ: Ատոր պակասը մասամբ մը լրացնելու նպատակով, քանի մը տարիներու անխոնջ ուսումնասիրութիւններէ ետք, ուզեցի իմ համեստ ուժերովս տպագրութեան յանձնել «Հայ Որբերը Մեծ Եղեռնի» սոյն հատորը:



Սվազի Ամերիկեան Գոլէճ-Որբանոցի հայ որբերը, 1922

Այս գիրքը ատաղձ մըն է ապագայ պատմաբաններու համար, մասնագիտական ուսումնասիրութիւններ կատարելու եւ աւելի մշակուած ու կատարելագործուած Եղեռնի որբերուն պատմութիւնը գրելու համար:

Առանց բարեկամներու օժանդակութեան, այս հատորը լոյս չէր կրնար ընծայուիլ: Մասնաւոր շնորհակալութեան խօսք ունիմ հայրենի վրդապիր Պրն. Ստեփան Ալաջաջեանին, բանաստեղծ Վահագն Դաւթեանին, արեւելագէտ-պատմաբան Տոթթ. Փրոֆ. Ռուբէն Սահակեանին, տեղարնակ գրագէտ «Նաւասարդ» հանդէսի վարիչ խմբագիր Պրն. Արմէն Տոնոյեանին, պատմաբան Պրն. Բիւզանդ Եղիայեանին, Ուոթըրթաուն, Պրն, Լեոն Յովսէփեանին, Երեւան:

Շնորհակալ եմ նաեւ բազմաթիւ այլ անձերէ, որոնց անունները յիշատակած եմ շնորհակալիք ցուցակին մէջ:

Աշխատած եմ հնարաւորին չափ հարազատ մնալ պատմական իրողութիւններուն, իրադարձութիւններուն, դէպքերուն: Եթէ որեւէ պարագայի սխալ կամ մոռացում եղած է՝ ապա կամքէ անկախ պատճառով է, եւ ոչ դիտումնաւոր: (էջ 1-2):

*
• *
•

1915 Մարտ 28-ին, թուրքերը կը հաւաքեն մեզ քաղաքէն դուրս տեղ մը, ու այնտեղէն կը սկսի Զէյթունի առաջին տեղահանութիւնը: Սարսափելի վայրագութիւններէ ետք, վերջապէս կը հասնինք Տէր Զօր ու ապա Եփրատ գետի միւս կողմը կ'անցնինք: Հիւանդութիւնը օրական հարիւրներով կը հնձէ գաղթականներէն: Հայրս սրտի տագնապ կ'ունենայ ու հոգին կ'աւանդէ:

Կը քայլենք անապատի կիզիչ աւազներուն վրայ: Ուժասպառ գաղթականներ՝ անօթութեան եւ ծարաւէ տառապելով, ճամբաներուն վրայ կ'իյնան՝ իրենց վերջին շունչը կը փչեն:

Խապուր գետը կը հասնինք, ու այնտեղ կը գիշերենք:

Առաւօտուն, ժանտարման փողը կը հնչեցնէ հացի բաշխումը յայտնելով եւ տղամարդիկ մէկ կողմ կը հաւաքէ:

Բոլորը մէկ կը տանին երկու բլուրներու միջեւ: Երկար ու անդադրում հրացանաձգութիւն մը կը լսուի եւ կը պարզուի, որ հացի

պատրուակով տարուած՝ անոնք կը գնդակահարուին: Անոնց մէջ էր իմ սիրելի եղբայրս՝ Գրիգորը:

Գիշերը ժանտարմաներն ու արիւնարբու չէչէնները կը սկսին կիները բռնաբարել: Մէկ կողմէն կիներ կ'աղօթեն, օգնութիւն խնդրելով Ամենակալէն, միւս կողմէն՝ հինգ աղջիկներ ձեռք-ձեռքի բռնած կը նետուին Սապուր գետը՝ պատիւնին փրկելու համար:

Մարսափելի տեսարաններ կը պարզուին: Կին մը հագուստները պատռուած ու բռնաբարուած՝ անշունչ ինկած է: Մահացած երեխայ մը, մօր ստինքին վրայ ինկած՝ մօր գլուխը ջախջախուած: Կանացի վայնասուններ, ճիչեր ու տնքոցներ: Ուր որ նայիս, կոտորած, քստմնելի եղևնագործութիւն...:

Յանկարծ փոթորիկ, կարկուտ ու տեղատարափ անձրեւ:

Սապուր գետի միւս կողմը պիտի անցնինք: Քանի մը նաւակներով երեխաները միւս ափը պիտի փոխադրեն: Նաւակները կը դարձնեն լողալ չզրկացողները կը խեղդուին: Ես լողալով ափը կ'ելլեմ:

Գետի ափին՝ երկու օր անդադար կու լամ, ու մօրս կը փնտռեմ Կին մը կը մօտենայ ու անունս կը հարցնէ: Երբ կը պատասխանեմ, կ'ըսէ.

- Մայրդ այն կողմն է, քեզ կը փնտռէ:

Ուրախութենէս կնոջ ձեռքը կը համբուրեմ ու երբ մօրս կը տեսնեմ, կարծես նոր արեւ մը կը ծագի: Կը նետուիմ անոր գիրկը, երկու ձեռքերով պինդ կը գրկեմ որ չկորսնցնեմ զինքը: Եւ ուրախութեան արցունքներով կ'ըսեմ.

- Մամա, մի հեռանար ինձմէ:

Խեղճ մայրս սպառած էր: Ճակատս ու թուշերս կը համբուրէ ու կուրծքին սեղմելով կ'ըսէ.

- Ախ ես վրամ, Միսաքս, դուն իմ կեանքս ես...:

Հագիւ մայրս գտած, հօրեղբօրս տղուն, չորս տարեկան Եղիան կը գտնեմ: Զիս տեսնելուն, աղիողորմ կու լայ, կը հառաչէ.

- Մայրս մեռո՞վ, մեռո՞վ...:

Եղիային աչքերը ուռած էին լացէն: Երբ կը տեսնեմ խեղճ մանուկը անապաւէն ու որբացած, ես ալ հետը կու լամ: Միասին կ'երթանք մօրս մօտ: Մեր կարողութեան սահմանին մէջ կը խնամենք խեղճ Եղիան:

Արարները Սապուր գետի ափին, հաց ու գարի կը ծախէին: Մենք անօթի էինք ու դրամ չունէինք: Կ'երթայի հաց կը գողնայի արարներէն ու մօրս եւ Եղիային կու տայի: Եղիան, իմ ու մօրս մէջտեղը կը թնայնէինք:

Օր մը առաւօտուն կ'արթթնամ, կը նայիմ որ Եղիան չկայ: Երբ փնտռելու կ'ելլեմ, մէկը կ'ըսէ.

- Այս կաթսայի մէջն է, կ'եփուի: Երբ պատրաստ ըլլայ, դուն ալ կրնաս ուտել...:

Մայրս ուժասպառ է, քալելու անկարող: Ժանտարման հրացանի կոթով կը հարուածէ մօրս ծոծրակին, ան կ'իյնայ ծունկերուն վրայ, երկրորդ հարուած մը՝ մայրս կ'իյնայ երեսի վրայ ու բերնէն արիւն կը նստի: Կը մօտենամ իրեն, հագիւ լսելի ձայնով, կ'ըսէ.

- Միսաքս, ես կը մեռնիմ, դուն լաւ նայէ քեզի:

Ժանտարման կ'ուզէ զիս ալ ծեծել. կը ցատկեմ ու կը փախչիմ:

Քիչ ետք, սիրտս տակն ու վրայ կ'ըլլայ ու կը ճմրուի: Աչքիս առջև կու գայ իմ թանկագին մօրս վերջին վայրկեանները: Կ'որոշեմ վերջին սեպամ մօրս տեսնել: Կարաւաններու շարքերէն դուրս ելլելով, կը վստիմ դէպի մօրս կողմը: Ի՛նչ զարհուրելի տեսարան: Մօրս խոշոր ու խոտոյ աչքերը չկային՝ ագռաւները կերած էին: Կ'իյնամ մօրս անշունչ մարմինը վրայ ու դառնագին կու լամ:

Յաջորդ օրը բաւական քալելէ ետք, վերապրողներս մեծ փոսի մը մէջ կը նետեն, փայտ ու տակառներով քարիւղ կը թափեն մեր վրայ ու կրակի կու տան: Վայնասուն, աղիողորմ կանչեր...ի գուր: Մուխ կը սկսի ելլել: Մարդկային մարմինները կը սկսին հրկիզուել ու երկինքը մոխրով կը լեցուի: Ժամանակ մը ետք, ձայները կը լռեն ու կը փոխա-րինուին տնքոցներով:

Ես մեռելներու տակն էի, չէի վառուած: Մուխէն շնահեղձ չըլ-լալու համար քիթս ու բերանս հողին տուած էի: Երբ մուխը կը թեթեւնայ, մեռածներու այլանդակուած դէմքերու եւ վառուած մարմիններու միջով կը յաջողիմ հասնիլ գետնուղիի մը: Թուրք ժանտարմաներ չկային: Իրիկնամուտին, քանի մը ողջ մնացած հայրենակիցներու հետ, կնոջ մը եփած ոտքը կը կտրենք ու կ'ուտենք: Միսը տակաւին տաք էր:

Բացի ինձմէ, 14 հոգի ողջ մնացած էին, 12 կին եւ 2 երիտասարդ սպաներ:

Գետնուղիի մէջէն ամէնքս դուրս կ'ելլենք ու անապատի միջով կը քայլենք: Երեկոյեան անձրեւէն հաւաքուած ջուր կը տեսնենք, ամէնքս մէջը կը նետուինք, ջուրը կը խմենք ու մէջի միջատները կ'ուտենք: Փորիւնիս կ'ուռի՝ ջուրին կողքը կ'իյնանք ու կը քնանանք:

Անծայրածիր անապատներէն կը քալենք, անօթի ու ծարաւ. օր մը կը հանդիպինք հինգ արաբ հովիւներու: Անոնք, երբ կը տեսնեն, որ մեր խումբի կիներէն ոմանք կիսամերկ են, կը հանեն իրենց գլխի եաշմաղը եւ կու տան անոնց, որպէսզի իրենց մերկութիւնը ծածկեն: Նախ հաց կու տան մեզի:

Մի քանի ամիս արաբի մը տունը մնալէ ետք, հայրենակիցներս գտնելու յոյսով փախուստ կու տամ:

Գիշերը լոյսեր կը տեսնեմ ու կ'ենթադրեմ, որ գիւղաքաղաքի մը մօտ կը գտնուիմ: Կ'որոշեմ քալել մինչեւ լոյսերը: Չափազանց յոգնած ըլլալով, երկու քարերու մէջտեղ կ'իյնամ ու կը քնանամ:

Արշալոյս է: Ձիւտոր պետեւի մը ձայն կու տայ ու կ'արթնցնէ զիս: Այս պետեւին կը տանի զիս Շէյխ Ֆէյսալ ըլ Շավրըին մօտ, որուն համար երկար տարիներ կը ծառայեմ որպէս հովիւ:

Շէյխ Ֆէյսալը հաւնած էր զիս: Ան կ'ուզէր ամուսնացնել զէյ թուսնի որբեւայրի կնոջ մը հետ, Մարիամ անունով, որ իր եղբօր Շէյխ Աճիլ ըլ Շավրըին կը ծառայէր: Երբ կը մերժեմ՝ ան կը պնդէ, եւ ես տեղի կու տամ: Այսպէս, երկու իսլամացած գէյթուսնի որբերս՝ ընտանիք կը կազմենք արաբներուն մէջ: Ամուսնանալէ ետք, իմ բարի շէյխս կ'օգնէ, որպէսզի առանձին ապրինք: Մեր սեփական վրանը կ'ունենանք, ոչխարներու ու ուղտերու տէր կ'ըլլանք: Աղջիկ մը եւ տղայ մը կ'ունենանք, Խազնա եւ Թուրքի անուններով:

Օր մը Ֆէյսալը գործով Մուսուլ կ'երթայ, զիս իր հետ կը տանի որպէս թիկնապահ: Հրացանը ուսիս, սկալը գլխիս, երկար մագերով ծոծրակս գոցած՝ Մուսուլի շուկային մէջ կը հանդիպիմ գէյթուսնի մունետիկին: Կը ճանչնամ ու կ'ուզեմ կեցնել զինքը: Մունետիկը տեսնելով հրացան, դաշոյն ու փամփոռներ՝ կը վախնայ: Արաբերէն կ'ըսեմ.

- Եղբայր, մի՛ վախնար, ես հայ եմ, գէյթուսնի եմ:

Թէեւ մունետիկը արաբերէն լաւ չէր գիտեր, սակայն, իմ հայ ըլլալս իմանալով, ձեւով մը կը համոզէ զիս հաստատուիլ Պաղտատ, ուր բաւական թիւով գէյթուսնիներ կ'ապրին:

Կը համոզուիմ ու գաղտնօրէն մէկ շաբթուան մէջ կը ծախսմ ոչխարներն ու ուղտերը եւ գիշեր մը՝ ընտանիքով կը փոխադրուիմ Մուսուլ, յետոյ կը հաստատուինք Պաղտատ:

15 տարի արաբներուն մէջ ապրելէ ետք, 1930-ին հայութեան կը վերադառնանք ու եկեղեցական արարողութիւնով կը պսակուիմ կնոջս Մարիամին հետ: Երեխաներս կը կնքեմ, աղջիկս կ'անուանեմ Արշալոյս, տղաս՝ Հայաստան: (էջ 116-119):

« ԵՍ ԵՐԲԵՔ ՉԷԻ ՅԱՆԿԱՆԱՅ ՆԱՍԸ ՈՐԲԱՆՈՅԻ ՅԵՏ ԳՈՐԾ ՈՒՆԵՆԱԼ »¹

¹ 1996 թ. Լոս Անճելըսի հայ մամուլով ես երկու յօդուած էի հրատարակել Մեծ Եղեռնի հայ որբերի դառը եակատագրի անճշութեամբ: Այս եւ յաջորդ «Ո՞վ է քագուտի Մանուկեանը» խորագիրը կրող գրութիւնը նշյնպէս ընդգրկեցի այս գլխուս: Առաջինը լոյս է տեսել «Նաւասարդ» ամսագրով, թիւ 170-171, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, 1996, էջ 49-50, երկրորդը՝ «Նոր Օր» շաբաթաթերթի Ապրիլ 20, 1996:

«Նաւասարդ» ամսագրի Մայիս 1996, թիւ 166-ի մէջ (էջ 17) մեր անցարուիւթիւնը գրաւեց Սալբի Բագրատունու գրախօսականը իր վարդափ ուսուցչի՝ Գառնիկ Բանեանի «Յուշեր Անթուրայի Որբանոցը» խորագիրը կրող գրքի մասին: Նշենք, որ հեղինակի յետմահու գիրքը հրատարակուել է 1992թ. Պէյրուտի, Համագգայինի «Կոմիտաս» մասնաճիւղի վարչութեան կողմէ, Հրաչ Պաղտասարեանի մեկենասութեամբ: Ասկանայի է, որ Գառնիկ Բանեանը իր յուշերում նկարագրել է Անթուրայի թուրքական որբանոցում ապրած դառը օրերը, սովը, ծեծը, անտապանքն ու սարսափը, ամենօրեայ մահուան սպառնալիքը, եւ «Հայր Մեր»ը շրթունքներին տեւապէս աղօթել է, որպէսզի շուտափոյթ ազատուի այդ դժոխք որբանոցից:


Փաստերը խօսում են այն մասին, որ հայ երեխաները չդիմանալով որբանոցի ծանր պայմաններին, ճարահատեալ դիմել են փախուստի եւ պատասպարուել մերձակայ անտառներում եւ քարայրներում:

Ընթերցելով Սալբի Բագրատունու վերոյիշեալ գրախօսականը, ես ակամայ մտաբերեցի, որ թուրքագիտական իմ ուսումնասիրութիւնների ընթացքում հաւաքել էի նաեւ առանձին նիւթեր, որոնք անշուտ էին Մեծ Եղեռնի հայ որբերու հետ: Դրանցից մէկն էր Հայրտէ Խիրը, որը Մեծ Եղեռնի ընթացքում մեծ դեր էր խաղացել հայ որբերին առաքելու եւ մահմետականացնելու գործում:

Իսկ ո՞վ է եղել նա:

Թուրք գրականագէտ եւ հասարակական գործիչ Հայրտէ Խիրը (1904-1964) դարասկիզբի Թուրքիայի մշակութային եւ քաղաքական կեանքում կարեւոր դեր խաղացած առաջին կին գործիչն է եղել: Նրա հրատարակախօսական գործունէութիւնը սկսուում է 1908 թուականից յետոյ, երբ դառնում է «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան գործունէայ քարոզիչներից մէկը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական բանակում մասնակցել է «Կարմիր Մահիկ»-ի աշխատանքներին, իսկ այնուհետեւ շեմալ փաշայի գլխաւորութեամբ, Սիրիայում ղեկավարել է որբանոցների կազմակերպման աշխատանքները: Հայրտէ Խիրը հայկական Հարցի նկատմամբ ունեցել է անարդարացի դիրքորոշում: Ամերիկեան հասարակութեան շրջանում ի լաճ թուրքերի կարծիք ստեղծելու նպատակով 1920-ական թուականներից սկսած շրջագայել է ԱՄՆ-ի խոշորագոյն քաղաքներում, նենգաբար քարոզչութիւն անելով, որ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իբրեւ թէ հայերն են բռնութիւն գործադրել թուրքերի նկատմամբ: (Տես՝ Mevlan Zade Rifat, Türk inkilabinin iç yüzü, Halep, 1920, s. 14, արաբատառ թուրքերէն):

Ինչպէս նշեցինք, Հայիտէ Էտիբը Մեծ Եղեռնի ընթացքում կարեւոր դեր է խաղացել Հայ որբ երեխաներին մահամեղականացներու եւ թրքացներու խնդրում: Չնայած նա իր աշխատութիւններում ձգտել է այն պատկերացումը ստեղծել, որ ինքը իբր թէ դէմ է եղել Հայ երեխաների մահամեղականացման ծրագրին, սակայն ժամանակակիցների վկայութիւնները ցոյց են տալիս, որ «նա Հայ որբերին հաւաքելով մահամեղականացնում էր»: (Տես՝ Մեւլան Ջատէ Րիֆատ, նշուած աշխ., էջ 145):



Թրքացուած Զայ որբեր.- Աստղանշով ցոյց տրուած կիս՝ Զայիտէ Էտիպ հանրմն է:

Սկարը քաղուած է Արամ Աստոնեանի «Մեծ Ոճիր» փաստա-վավերագրական գրքից, Պոսթըն, 1921թ.:

Կասկածից վեր է, որ Հայ երեխաներին մահամեղականացներով թրքացները կատարուած էր յատուկ կառավարական որոշմամբ: Նոյնիսկ, ոչ միայն որբերին, այլեւ ծրագրուած է եղել Սիրիա տարագրուած հայութեանը մահամեղականացնել: Ահա թէ ինչ է գրել այդ մասին երիտթուրքական գործիչ Ֆայիհ Րըֆիկը Աթաթըրքը. «Հայերին դէպի Սիրիայի խորքերը տարագրուած պատնէշ էր ստեղծելու արաբ խիտ բնակչութեան դէմ: Ինչպէս ասենք չերքէզների, քրդերի եւ այլոց նման»

կայիսկ հայերին հող եւ տուն տալու պայմանով նրանց մահամեղականացներու համար կազմուեց մի յանձնաժողով: Այս յանձնաժողովը մի անգամ հաւաքուեց իմ տանը, սակայն հետագայում գործնական արդիւնք չունեցաւ»: (Տես՝ Falih Rifki Atay, Zeytin dagi, Istanbul, 1957, s. 78):

Հայիտէ Էտիբի յուշագրութիւնը լոյս է տեսել անգլերէն լեզուով: (Տես՝ Memoires of Halide Edib,- New-York, London): Ստորեւ այս գրքից թարգմանաբար Հայ ընթերցողին ենք ներկայացնում մի հատուած, որն անչուում է Անթուրայի որբանոցի Հայ որբ երեխաների մահամեղականացման հարցի հետ:

*
* *

«...Նախքան Կ. Պոլիս մեկնելը, ձեմալ փաշան Նահիյէ Հանումին, Համտալլահ Սուպհիին եւ ինձ տարաւ Լիբանանի Անթուրայում գտնուող որբանոցը: Աւտոմեքենայում ես շատ հետաքրքիր գրոյց ունեցայ նրա հետ:

- Այս դժուարին օրերին,- ասացի ես,- դուք հնարաւորութեան սահմաններում լաւ վերաբերմունք ունեցաք Հայերի նկատմամբ, իսկ ինչ՞ով թոյլ տուիք, որ Հայ երեխաները կոչուեն մահամեղական անուններով: Մտապոլում է այնպէս, որ Հայերը մահամեղականացնում են եւ պատմութիւնը դրա համար մի օր վրէժ կը լուծի թուրք ապագայ սերնդից:

- Դուք իդէալիստ էք,- պատասխանեց նա՝ տրտմութեամբ,- եւ յոյս իդէալիստների նման կարիքն ունէք իրականութիւնը զգացումով ընկալելու: Դուք հաւատո՞ւմ էք, որ մի քանի հարիւր տղաների եւ աղջիկների մահամեղականացնելով ես իմ ազգին կարող եմ օգուտ բերել: Դուք արդէն Դամասկոսում տեսաք Հայերի կողմից կառուցուած հայկական որբանոցը: Դրանցում այլեւս ազատ տեղեր չկան: Բացի այդ, այլեւս դրամ էլ չկայ, որպէսզի նոր հայկական որբանոցներ բացուեն: Նկատի ունեցիր, որ այս մահամեղական որբանոց է եւ գրանում միայն մահամեղական որբերը իրաւունք ունեն մտնելու: Ես այս որբանոցն եմ ուղարկում բոլոր անտէր երեխաներին, որոնք Սիրիա են անցնում այն շրջաններից, որտեղ տեղի ունեցաւ տուեալ ողբերգութիւնը: (Նկատի ունի Հայերի բռնազաղթն ու կոտորածները,- Ա.Փ.): Թուրքերը եւ քրդերն եւս ունեն որբանոցներ: Սովահար թափառող երեխաներին եւ ուղարկում եմ Անթուրա: Ես պէտք է որ նրանց մի կերպ կենդանի պահեմ: Ես չեմ կարող տեսնել նրանց մեռելները փողոցներում:

- Իսկ յետո՞յ, հարցրի ես:

- Դուք նկատի ունե՞ք պատերազմից յետո՞՛յ, - հարցրեց նա: Պատե-
րազմից յետոյ նրանք կը գնան իրենց ժողովրդի մօտ: Ես կարծում եմ
նրանք այնքան էլ փոքր չեն, որ չհասկանան իրենց ազգութիւնը:

- Ես երբեք չէի ցանկանայ նման որբանոցի հետ գործ ունենալ:

Նա շարժեց իր գլուխը եւ ասաց, - դուք պէտք է գործ ունենաք:
Եթէ դուք տեսնէք նրանց խեղճութիւնն ու տանջանքները, կ'աշխատէք
նրանց հետ, նոյնիսկ առանց մտածելու նրանց անուռի եւ կրօնի մասին:
Դուք այնպէս էք խօսում, կարծէք ես ինչ որ անմարդկային բան են
անում: Ես մահմեդական որբերի հացի բաժինը կիսում եմ նրանց հետ:
Եթէ այդքան մեծ թիւով հայ որբերին ես չպահէի, ապա այդ դրամը ես
կը ծախսէի մահմեդական երեխաների վրայ»: (Տես՝ էջ 428):

Բերուած հատուածում ձեմալ փաշան արդարանալու նենդ
քայլերի է դիմում եւ ձգտում է այն թիւը պատկերացումը ստեղծել, որ
իրը ինքը մարդասիրական վերաբերմունք է ցոյց տալիս հայ որբ երե-
խաներին: Իրականում այդ բոլորը կեղծ են եւ մտացածին: Հայ որբ
երեխաներին մահմեդականացնելը, նրանց անուռները փոխելն ու թուր-
քացնելը իր հիմքում ունէր մէկ նպատակ՝ հայ ժողովրդի բնաջնջման
քաղաքականութիւն:

Նոյնիսկ որբանոցի այդ դաժան կացութիւնը նկատելով, Հալիտ
էտիրի նման մոլեռանդ թրքուհին անգամ չի թաքցնում իր նողկանքը
այդ չարամիտ երեւոյթի հանդէպ, ասելով, որ «ինքը երբեք չէր ցանկանայ
նման որբանոցի հետ գործ ունենալ»:

Իսկ ո՞ւմ յայտնի չէ, որ ձեմալ փաշան հայ ժողովրդի բռնի
տեղահանման ու կոտորածների խնդրում ունեցել է խորամանկ, քղար-
կըւած, երեսպաշտ դիրքորոշում, ձգտելով բացայայտօրէն խեղաթիւրել
իրականութիւնը:

Ձ. Կիրակոսեանը հանրագումարի բերելով ձեմալ փաշայի նենդ
էութիւնը, իր «Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտա-
հայութիւնը» գրքում գրել է՝ «ձեմալ փաշան ամէն կերպ ձգտում էր
թաքցնել իր մեղսակցութիւնը, խօսում էր հայերի «Գիւղատնտեսական
կոլոնիաներ» ստեղծելու մասին՝, սպառնալից հրամաններով արգելում
էր լուսանկարել հայ տարագիրների դժոխային կեանքի պատկերները,
սուտ տուեալներ հաղորդում արտասահմանեան լրագրողներին» (Տես՝
էջ 329):

1996 թ. լոյս տեսաւ հայոց Մեծ Եղեռնին նուիրուած իմ գիրքը
«Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում» խորագրով,
որի առաջին էջում որպէս ձօն արձանագրուած է հետեւեալը.

«Նուիրում եմ հօրս, հասարակական անխոնջ գործիչ լուսահոգի
Համբարձում Յակոբի Փափագեանին. հօրեղբօրս՝ թրքական բանակի
սպայ Աւետիս (Չառուշ) Յակոբի Փափագեանին, որը 1915 թ. իր ձիւ-
կրայ դաւադրաբար սպաննուեց թիկունքից նոյն թրքական բանակի
հրամանատարութեան կողմից, ինչպէս նաեւ նոյնպէս դաւադրաբար
եւ անողորօքէն գանգուածային ձեռով գնադակահարուած թրքական
բանակի հայ զինուորների, սպաների եւ բոլոր մեր անմեղ զոհերի
պայծառ յիշատակին»:

Ինչպէս նկատեցիք, հօրեղբայրս՝ Աւետիս Չառուշը եղել է թուր-
քական բանակի սպայ եւ իր առնականութեամբ եւ բարութեամբ լաւ
համբաւ էր ձեռք բերել իր շրջապատում: (Նշեմ, որ նրա յիշատակը
պայծառ պահելու համար տողերիս հեղինակին կնքել են նրա անունով):

1915 թ. բռնի տեղահանութեան օրերին թուրքական ջոկատը,
որի մէջ եղել է հօրեղբայրս, իջեւանել է ինչ-որ մի հայկական գիւղի
մտտակաջրում: Հրամանատարութիւնը ամէն գիշեր, թագուն եւ ընտ-
րովի գիւղի հայ աղջիկներին բերելով, բռնաբարել են, ենթարկել անար-
պանքի, իսկ դիմակայողներին նոյնիսկ սպաննել:

Այս բոլորը աննկատ չի մնում հօրեղբօրս աչքից: Ինչ որ ձեռով
ինքը տեղեկանում է, որ յաջորդ օրուայ զոհերն են վինելու խեղճ ու
կրակ երկու սիրասուն որբ քոյրեր՝ իրենց մօր հետ միասին: Հօրեղ-
բայրս թաքուն կազմակերպում է ոչ միայն նրանց, այլ 16 ուրիշ կոյս
հայ աղջիկները փախուստը: Գիշերը հրամանատարութեան պահանջով
«որսի» գնացած զինուորները վերադառնում են դատարկաձեռն:
Ռնականաբար կասկածում են հօրեղբօրս վրայ եւ ասում. «Bu Avedis
yusuyn isidir» (Սա Աւետիս Չառուշի արարքն է):

Յաջորդ օրը ձիւր վրայ դաւադրաբար թիկունքից կրակում են
հօրեղբօրս վրայ եւ սպաննում:

Մարիամ տատիկս երբ իմանում է իր զաւակի եղբրական մահուան
մասին, տեղն ու տեղը կորցնում է աչքի տեսողութիւնը եւ կարճ
ժամանակամիջոցին չդիմանալով ծանր վշտին մահանում է: Հօրեղբօրս
կիր Մարիգան զոհ է գնում աքսորի ճանապարհին:

Իրենց միմեծար՝ Ծ տարեկան սիրասուն աղջնակը որբանալով,
սկզբում յայտնում է թուրքերի ձեռքին, իսկ յետոյ նրան վաճառում են
երիտայ չունեցող արաբ մեծահարուստ մի ընտանիքի՝ Դամասկոսում:

Բարերախտաբար կարճ ժամանակամիջոցում հայրս՝ Համբարձում ֆափազեանը կարողանում է գտնել իր եղբոր միակ ժառանգի հետքերը:

Մի կողմից տեղի հայ առաջնորդարանի ներդրած եռանդուն միջնորդութեամբ, միևս կողմից հօրս թափած ջանքերի շնորհիւ (դատարան, կաշառք...) կարողանում են նրան ազատել: Այնուհետեւ, հայրս պահում եւ մեծացնում է իր եղբոր առջկան մեր յարկի տակ, որպէս իր հարազատ գաւակը:



Թագուհի Սանուկեան (1930 թ.)



Թագուհի Սանուկեան (1996 թ.)

Յետագայում, 1930 թ., ճակատագրի բերումով նա ամուսնանում է ամերիկահայ, ծագումով Հաճընցի մի հայրենասէր երիտասարդի՝ Թակոր Մանուկեանի հետ եւ մշտական բնակութիւն հաստատում Թիացիալ Նահանգներում:

Այսօր վերոյիշեալ այդ փոքրիկը, այսինքն իմ մեծ քոյրը՝ Թագուհի Մանուկեանը մօտ 85 տարեկան է եւ ապրում է բարեկեցիկ կեանքով Նիւ Եորքում իր զաւակների եւ թոռների համերաշխ շրջապատում:

Այո՛, 85 տարեկան, բայց հոգով-սրտով նուիրուած իր հայրենիքի բարդաւաճմանն ու բարօրութեանը:

Ինչպէս նկատեցիք քոյրս որք է մեծացել եւ իր մաշկի վրայ լաւ է պատկեր տեսնել տառապանքն ու հոգսերը: Եւ ահա, այսօր այդ ծերուկապարզ հասակում, իր տկար աչքերով եւ դողդողացող ձեռքերով հիւսել է 80 հատ գոյնզգոյն տաք վզնոցներ (scarf) եւ Նիւ Եորքի Ս. Վարդան եկեղեցիի միջոցով ուղարկել Հայաստան, որպէսզի ցուրտ-ձմրան լեթացրում հայրենիքի որբացած հայրդիները պատասպարուեն եւ տաքանան...:

Այդ տարիքում այդքա՞ն ուժ ու եռանդ, հայրենիքի հանդէպ այդքա՞ն սէր ու նուիրուածութիւն...: Ուղղակի այս վայրկեանիս բառեր լիմ գտնում առաւել բարձր գնահատելու նրա այդ վեհանձն արարքը: Իայց, կարծում եմ դրա կարիքը չկայ, քանի որ Ուաշինկթընի Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը ըստ արժանույն, արդէն բարձր գնահատական է տուել նրան՝ յատուկ վկայագրով:

Ստորեւ ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում Ուաշինկթընի Հայաստանի Հանրապետութեան մամուլի քարտուղար՝ Պրն. Միքայէլ Բագրատունու ստորագրութիւնը կրող, անգլերէն շարադրուած այդ վկայագրի թարգմանութիւնը:

Սիրելի Տիկ. Թագուհի Մանուկեան,

Ուաշինկթընի Հայաստանի դեսպանատան անունից կը ցանկալալիք յայտնել մեր անկեղծ երախտագիտութիւնը Հայաստանի նկատմամբ ձեր ցուցաբերած նուիրուածութեան եւ վեհանձնութեան առթիւ:

Հայաստանի երեխաների համար 80 վզնոցներ հիւսելով, դուք արտասպասեցիք ձեր մեծագոյն բարութիւնն ու անձնուիրութիւնը: Ձեր վարձուքը լաւագոյն օրինակ է, թէ ի՞նչ կարող է անել անհատը այլոց պէտքու համար:

Մենք երախտապարտ ենք, որ դուք այդքան շատ կորով եւ ժամանակ էք վատնել այս ծրագրի համար: Ձեր արարքը յատկապէս պիտի գնահատուի այն երեխաների կողմից, որոնք պիտի ստանան այդ վզնոցները: Հայաստանը բաւականին տառապեց ցրտաշունչ ձմեռներից, ինչպէս տաքացուող աններից եւ դպրոցներից. թէ եւ վիճակը տարեց-տարի

արդէն բարեկալուում է: Ձեր հիանալի նուէրները պիտի ընդունուեն ամե նայն սիրով:

Ես անձամբ կը ցանկանայի շնորհակալութիւն յայտնել ձեր ցուցադրած նման բարեգործութեան համար: Ձեր արարքով 80 հայ երեխաներ առաւել քիչ պիտի մտահոգուեն եւ հնարաւորութիւն պիտի ունենան կեանքը վայելելու առաւել ազատ:

Տիկ. Մանուկեան, Հայաստանի դժուարութիւնները մեղմացնելու համար ձեզ նման մարդկանց գործադրած պայքարով, ձեռք-ձեռքի տուած անձնական ջանքերով է գոյանում Միացեալ Նահանգների կառավարութեան մարդասիրական օգնութիւնը, որից Հայաստանը հիմնական ստացողներից երկրորդն է աշխարհում:

Կրկին շնորհակալութիւն եւ Աստուծոյ օրհնութիւնը ձեր վրայ:

ՊԱՏՈՒԹԻՒՆ ԱՏԻԱՍԱՆԻ

(Ինքնակենսագրութիւն)

Սարգիս Չուլճեան

2004 թ. ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ Երեւանում լոյս տեսաւ Սարգիս Չուլճեանի «Պատմութիւն Ատիամանի, (ինքնակենսագրութիւն)» խորագրով հատորը: Հեղինակը Մեծ Եղեռնից վերապրած ուսուցիչ լինելով, մանրամասն նկարագրել է պատմական Հայաստանի հարաւային մասում գտնուող Ատիամանի պատմութիւնը, աշխարհագրութիւնը, կլիման, բուսական եւ կենդանական աշխարհը, հայ բնակչութեան կենցաղն ու բարքերը: Բնականաբար մանրամասն կանգ է առել նաեւ 1894-1896 թթ. Ապտու Համիտեան բռնատիրութեան շրջանում տեղի ունեցած կոտորածներին, որոնց զոհ գնացին մօտ 300,000 անմեղ հայեր: Ականատեսի աչքով խօսում է նաեւ Երիտթուրքերի կատարած հայաջինջ քաղաքականութեան մասին:

Գրքի հրատարակութիւնը, որպէս որդիական պարտք կատարել է Սվին Չուլճեանը: Գրքի սկզբում բերուած իր երկու խօսքում իրաւացիօրէն նշում է, որ «ի տարբերութիւն Արեւմտեան Հայաստանի շատ քաղաքների եւ շրջանների՝ Ատիամանի մասին շատ քիչ է գրուել: Աշխատութիւնը կարող է, թէկուզ համեստ չափով սկզբնաղբիւր դառնայ, եթէ մի օր ձեռնարկուի Արեւմտեան Հայաստանի եւ Եղեռնի համապարփակ պատմութեան պատրաստութիւնը» (էջ 5):

Իրօք որ այս արժէքաւոր աշխատութիւնը խիստ կարեւոր գիտական նշանակութիւն ունի Ատիամանում եւ հայաբնակ հարեւան

քաղաքներում եւ գիւղերում Երիտթուրքերի դործադրած ցեղասպանական արարքները լուսաբանելու եւ հաստատելու տեսանկիւնից:

«Հայկական նահանգներէն տեղահանուած ժողովուրդին մեծ մասը խորուեցաւ Եփրատի ձախ ափին Տիգրանակերտ-Մոսուլ ուղղութեամբ եւ աջ ափին՝ Մալաթիա, Քեախթա, Ատիաման, Սամուսաթ ճանապարհի վրայ: Այս առթիւ պէտք է ճանչնալ թուրքը իր իսկական դիմագծով եւ հոգեբանութիւնով, կատարած անմարդկային նախճիրներով, աներեւակայի վայրագութիւններով անգէն ժողովուրդի մը հանդէպ, որ միակ լեցնող, զարգացնող եւ հաստեթաբեր տարրն էր երկրին համար», - գրել է հեղինակը իր ներածականում: (էջ 11):

Ստորեւ տրուում է «Ջարդեր եւ բռնագաղթ» խորագիրը կրող մասը, երրորդ գլխից:

ՋԱՐԴԵՐ ԵՒ ԲՐՆԱԳԱՂԹ

1915-ի Ապրիլին շատ խորամանկութեամբ սկսան տուները, գոբոցները, եկեղեցիները խուզարկել, որուն յաջորդեց մտաւորականներու, հարուստներու, ազդեցիկ եւ աչքի զարնող հայերու ձեռքակալութիւնը եւ մաս առ մաս սպաննութիւնը: Ատիամանի մէջ սկզբի օրերը յայտնի չընելու համար, հայ եւ թուրք միասին հաւաքեցին, մարախ ջարդելու կամ այլ աշխատանքներու պատրուակով, քաղաքէն հեռացնելէ յետոյ հայերը ջարդեցին եւ թուրքերը ազատ թողուցին, այսպէս յաջորդաբար: Երբ այլեւս վստահ էին, թէ որեւէ դիմադրութիւն ընող ոյժ չմնաց, սկսան բացէ ի բաց ջարդելուն, սակայն միշտ ամայի տեղեր՝ թողաքէն դուրս:

Ձերբակալուածները վայրագօրէն եւ անինսպ կը ծեծէին, տեսակ տեսակ տանջանքներու կ'ենթարկէին՝ խոստովանութիւններ կորզելու եւ գէնքերու տեղը իմանալու: Չունեցողները թուրքերէն դրամով կը կելին ու կը յանձնէին: Վերջապէս գտան վիժած եւ դաւաճան հայ մը, (անուկ Գահվէճեան անունով, որը սկսաւ մէկիկ-մէկիկ ցոյց տալ գէնքերու տեղերը եւ գէնք ունեցողները, բանակէն փախած հայերու տեղերը: Թշուառականը իսլամացաւ, իսկ կինը մերժեց իսլամանայ, ուստի թուրքերը առաջարկեցին, թէ՛ կինդ, որ իսլամութիւնը չընդունիր, պէտք է սպաննես, որ հաւատանք, թէ՛ իսկապէս անկեղծօրէն իսլամացած ես: Կինը սպաննեց եւ կոչուեցաւ Մանուկ-Մուսթաֆա՝ ամուսնանալով թուրք կնոջ մը հետ: 50-60-ի չափ երիտասարդներ ապաստանեցան Ռոֆա, կարգ մը երիտասարդներ 20-30 հոգի միացած եւ զինուած փախան դէպի Այնթապ եւ այսպէս մի քանի խումբեր, ճանապարհին թուրքերու եւ քուրդերու հետ կռուի բռնուելով մեռան: Թուրք կառավարութիւնը եւ Մանուկ-Մուսթաֆա իմանալով, որ 50-ի չափ

² Մամբորուիւն հեղինակի. Թագուհի Մանուկեանը իր մահկանացուն կ'ընէց Մարտ 18, 1999 թ.:

երիտասարդներ Այնթապ հասած են, Մանուկ թուրք ոստիկանի մը հետ
գնաց Այնթապ եւ հոն մէկիկ-մէկիկ ձերբակալել տալով, Այնթապէն 4-ն
քիլոմետր դուրս հանեցին եւ գնդակահարեցին, հազիւ հինգ հոգի
սպառուեցան եւ ապաստանեցան Հալէպ:

Տէր Կարապետ Ժամկոչեանը եւ հայ կաթողիկոսներու հովիւ Միքայիլ
Վարդապետ Աստուածատուրեանը Սեբաստացի, ուսումնական եւ գար-
դացած, ազգասէր եւ անձնուէր ու քաջ հայ մը, այս երկուքը զանազան
տանջանքներէ, ծեծերէ եւ լուտանքներէ յետոյ, Զակ գիւղին մօտ
ոտքերը պայտեցին, սպաննեցին ու վերջը գլուխները ճզմեցին քարերով
թուրքը շատ վայրագ է եւ անգուլթ՝ անգէն մարդկանց հանդէպ, թուրքին
նկարագրի գիծն է հետեւեալը, երբ դիմադրեցիր ու զարկիր՝ փախուստի
կը դիմէ, իսկ երբ փախար, մինչեւ վերջ կը հալածէ: Երեք կառկարուն
դէմքեր, որոնց ոչ միայն Ատիամանի հայուլթիւնը, այլ թուրքերն ու
քուրդերը երախտապարտ են եւ որեւէ դժուարութեան ու ծանրակշիւ
դէպքերու պարագային կը դիմէին ասոնցմէ մէկուն, անպայման իրենց
խնդիրը յաջող կերպով կը կարգադրուէր: Մանուկ Մանուկեանը եւ
Հաճի Պօղոս Մանուկեանը, որոնք 1895-ի ջարդին ազատուած էին
որպէս ուսանող Այնթապի Ամերիկեան Գոյէճը գտնուելուն համար եւ
Յովհաննէս Գալուզսորեան: Այս երեքը թուրք կառավարութեան եւ
թուրք ազաններու աչքին փուշն ու ախոյեաններն էին, շատ անգամ
հայերու եւ թուրքերու միջեւ պատահած դէպքեր ու խնդիրներ հարթած
են, միշտ ի նպաստ հայերու: Հաճի Պօղոս Մանուկեան հարցաքննիչ
դատաւոր էր, իսկ Մանուկ Մանուկեան եւ Յովհաննէս Գալուզսորեան,
միշտ կամ թուրք պետական վարչական խորհուրդի կամ թաղապետա-
կան խորհուրդի անդամներ էին: Այս երեք հայերը ծեծելէ, խոշտանգելի
պայտելէ, պայտուած ոտքերով քալել տալէ, մասնատելէ յետոյ, գլուխ
ները ճզմելով սպաննուեցան Զակ գիւղի մօտ: Այս երեք հայերը իրենց
բարոյական ու նիւթական բոլոր միջոցները կը տրամադրէին ի սպաս
Ատիամանի հայուլթեան՝ հայերու եւ թուրքերու միջեւ դժուարին,
կնճռոտ եւ վտանգաւոր դէպքերու պարագային: Մանուկի հայրը՝ Սար-
գիսը, մենք տեսանք արդէն 1895-ի Համիտեան ջարդի ատեն: Ատիամա-
նի շուրջը Պոզ-պեկին աղբիւրին քով, Մանուկեաններու պարտէզին մէջ
սպաննեցին 800 հայ պատանիներ: Մայրեր տանիքը ելած կը լսէին իրենց
հոգեհատորներու ճիչն ու աղաղակը: Մի քանի հարիւր երիտասարդներ
կը տանին Մենեստ-օղլու կաւառին քով (որու ջուրը կ'ոռոգէր հայոց
թաղի մօտիկ պարտէզները) եւ կը սպաննեն: Հայ կիներ կը տեսնեն, որ
կաւառի ջուրը արիւնի փոխուած է, հոսանքն ի վեր կ'երթան եւ կը
տեսնեն իրենց սիրելիներուն ու հարազատներուն յոշոտուած մարմինները:
Զօրանոցին եւ գինուորական գէնքի պահեստին մօտի ձորին մէջ կը

խորդեն 500 հայեր: Մեյրամ-Անայի աղբիւրին քով քաղաքին եզերքը,
տրին մէջ կը ջարդեն մի քանի հարիւր հայեր: Ղըզըլուկ գիւղի քով, կը
խորդեն 200 հոգի: Այս բոլորէն յետոյ կը սկսի տեղահանութիւնը, իսկ
խուրք բանակի մէջ եղող Ատիամանցի հայ գինուորները արդէն շատոնց
սպաննուած էին: Ատիամանցի Սըտրզ անունով թուրք ստահակ մը, իրեն
նման կարգ մը ընկերներով՝ Ատիամանէն տեղահանուած կարաւանները
կառաջնորդեն դէպի Սամուսատ եւ Ուրֆա, ճանապարհին կողոպտելը
եւ կիներէն դրամ պահանջելը չսպաննուելու համար շատ սովորական
էին: Հարիւրաւոր կիներ, պատանիներ եւ երեխաներ սպաննուեցան
այլ ճանապարհին վրայ, շատ մը սպաննուած մայրերու փոքրիկ երեխաները
նուալով, ճչալով, անսուաղ մեռան իրենց մայրերու կողքին, ճանա-
պարհին վրայ:

Սամուսատ ողջ հասնող կարաւաններու մէջէն շատ մը կիներ ու
այլիկներ նետուելով Եփրատ՝ սիրայոժար մահը գրկեցին, փոխանակ
խոյստուակ գոյուլթիւն մը քարշ տալու: Կարաւանի մը մէջ երեք
տարիքաւոր այրեր մինչեւ Սամուսատ ողջ մնացած էին, Սըտրզ եւ
յիկերները Եփրատ կը նետեն խեղդելու համար, երբ խեղճերը լողալով
եզերք ելլել կը փորձեն, կը սկսին հրացանով կրակել, երբ կը տեսնեն թէ
անպատճառ պիտի մեռցուին, Պոյաճի Աստոն, ձեռքը ջուրէն վեր
հանած, մնաք բարով կ'ըսէ իր հարազատներուն, եւ երեք ընկերներ
իրենք զիրենք կը յանձնեն Եփրատի հոսանքին եւ կը խեղդուին: Ճանա-
պարհին կիներու, աղջիկներու ու երեխաներու փախցուիլը եւս քուրդերու
կողմէ շատ սովորական էր: Ուրիշ կարաւան մը Ատիամանէն մինչեւ
ձովակ գիւղը շարունակ ջարդելէ, կողոպտելէ, փոքրերը փախցնելէ
յետոյ մնացեալներն ալ սպաննեցին:

Կարաւան մըն ալ Գարա-Գայրզ գիւղի մօտ (Եփրատի եզերքը)
ձորունէ-Րաշ գիւղի քով անջուր պահելով, քարերով եւ փայտերով բոլորը
սպաննեցին:

1895-ի ջարդին եղբօրն ու ամուսնին սպաննուիլը աչքերով տեսնելէ
յետոյ, Եղսա անունով մեր թաղեցի կինը, որ խենթացած էր եւ մինչեւ
1915 թուականը կապրէր խենթ վիճակով, այդ եւ նման ուրիշ հայ
խենթերն ալ սպաննեցին: Ամենէն վերջը մի քանի կոյրեր եւ քալելու
անկարող ծերեր մնացած էին Ատիաման, անոնք ալ հաւաքելով կը
խորդեն՝ պատկերը կատարեալ ըլլալու համար: Երկաթագործ Քուրդ-
Պօղոսեան Աւետիք, որ մինչեւ ջարդերու վերջնապարտ ողջ պահած էին
մեռնակապեր շինելու համար, Աւետիք թուրքերու երեսին կու տայ
իրենց կատարած խոյստարակութիւններն ու ջարդերը, թուրքերը կ'ըսեն
իրեն, «մի խօսիր այսպէս», Աւետիք կը պատասխանէ:

- Միեւնոյնն է, խօսիմ-չխօսիմ, գիտեմ, որ ինչպիսի լկտիներ եւ վայրենիներ էք ու նենգամիտ, զիս ալ պիտի սպաննէք, գոնէ խօսիմ եւ ձեր յանցանքները ձեր երեսին տամ ու մեռնիմ:

Ամէն ինչ վերջանալէ յետոյ Աւետիքն ալ կը սպաննեն: Ամենկէ վերջը կը սպաննեն Պեղրկէնեան Սարգիսը՝ Ատիամանի հայոց Մուխթարը, որը պահած էին մինչեւ այդ խուզարկութիւններու եւ զինուորութենէ փախածներ փնտռելու ատեն ընկերանալու համար, ամէն ինչ վերջանալէ յետոյ, ան ալ կը սպաննեն: Այս Սարգիսը շատ մը երիտասարդներու լուր տուած եւ անոնց փախուստը ապահոված էր:

Ատիամանցիներ Ուրֆա հասնելէ յետոյ ողջ մնացած պատանիներն ալ Ուրֆացի թուրքեր կը ջարդեն, մնացեալները կը քշեն դէպի Նիզիպ, Հալէպ ու Տէր Զօր:

Ատիամանցի 50-ի չափ երիտասարդներ փախած եւ Ուրֆա ապաստանած էին, որոնց մէջ կային մաս մը, որոնք Ուրֆայի որբանոցներուն մէջ մեծցած էին, իրենց ծանօթ հայերու քով թագնուած էին: Նոյնպէս շատ մը Ատիամանցի կիներ, աղջիկներ ու պատանիներ պահուած էին Ուրֆայի մէջ, այս բոլորը վրէժով լեցուած, ամբողջ ուժով կը մասնակցին Ուրֆայի ապստամբութեան եւ աննկարագրելի քաջութիւն ու հերոսական գործեր կը կատարեն՝ իրենց հարագատներու վրէժը լուծելով, քաջաբար եւ պատուով կը զոհուին, ոչ մի հատ ողջ չմնալու պայմանով: Նամանակահատիկ Եսթեր Մանուկեան (ծննդով թիւթեյեան, Մալաթիա) ամուսնացած Մանուկ Մանուկեանի հետ Ատիամանցի կիներու եւ աղջիկներու գլուխը անցած, այնպիսի հերոսական կռիւներ կը մղէ, որ քաջ տղամարդիկ իսկ ափ ի բերան կը մնան՝ ի տես Եսթերի կռուելու տաղանդին, կազմակերպչական կարողութեան, դիրքէ դիրք վազելով տուած գրոհներուն ու յարձակումներուն եւ կատարած քաջագործութիւններուն: Վրէժը լի ու լի լուծելէ յետոյ Ատիամանցի տարագիրներու հետ կ'երթայ Նիզիպ ու հոն կը մեռնի հիւանդութիւնով: Ցաւ ի սիրտ պէտք է ըսել, որ Ուրֆայի հերոսամարտ գրողներ տող մը իսկ չեն գրած Եսթերի եւ իր ընկերուհիներու մասին, Թերճումանեան Սարգսի, եղբայրը՝ Կարապետի, Շիշմանեան Վահանի, Չարիփախանեան Յովհաննէսի եւ Չուլճեան Խաչերի մասին՝ շատ մը ընկերներով, որոնք անհաւատալի գործեր կատարած են եւ բոլորն ալ պատուով ինկած:

Այս բոլորէն վերջ, երբ Ատիամանի մէջ հայ չի մնար եւ արհեստաւոր ալ չի մնար, հայկական նահանգներէ եկող կարաւաններու մէջէն արհեստաւորները կը գատեն ու կը պահեն, որոնք մինչեւ պատերազմի վերջը ողջ մնացին ու անցան Սուրիա: Թուրքեր սկսած էին իրարու մէջ խօսիլ, եթէ հայ արհեստաւորներ պիտի պահէինք, ապա

մերիներուն յանցանքը ի՞նչ էր, որ սպաննեցինք: Հայկական նահանգներու, Խարբերդի, Տիրահանկերտի, Ատիամանի եւ այլ տեղերու ասորիները խիստ պատուաբեր ընթացք մը բռնած են հայերու հանդէպ, եւ շատեր զոհուած հայերու հետ միասին, բայց Ուրֆայի ասորիները բոլորովին ստրկացած, անբարոյացած եւ կամաւոր կերպով իրենց պատիւը թուրքերուն ծախած, դաւաճան ու մատնիչ դուրս եկան: Ուրֆայի հայութեան նկատմամբ ամէն տեսակ լրտեսութիւններ եւ մատնութիւններ ընելէ յետոյ, երբ Ուրֆայի ապստամբութիւնը կը ճնշուի Ռեփի փաշայի բանակի, Հերն էքարթի եւ թուրք ու քուրդ խուժանի կողմէ, կռիւէն ազատուած եւ ողջ մնացած ժողովուրդը, երիտասարդներ եւ կիներ կ'իջնեն հորերը եւ կը պահուին թաքստոցներու մէջ: Պատեր ազատուեցան գիշերները փախուստ տալով, իսկ ասորիներ, որոնք հայախօս են, ամբողջութեամբ ընկերացած թուրք գինեալ խուժանին, ցերեկները կը պտըտին հայ թաղերու մէջ եւ ամէն կողմ, ամէն տեղ կը սկսին կանչել. «Ելէք, եղբայրներ, վտանգ չմնաց» եւ այլն: Պահուողներ կարծելով, թէ կանչողները հայեր են, ոմանք դուրս կ'ելլեն եւ անմիջապէս տեղն ու տեղը կը սպաննուին թուրքերու կողմէ: Այսպիսով պատճառ եղան շատ մը ողջ հայերու մահուան:

1918 թուի Նոյեմբեր 11-ին գինադադարէն եւ պատերազմը վերջանալէ յետոյ, նախ անգլիական բանակը Ուրֆան գրաւելէ, ապա ֆրանսացիներուն յանձնուելէ եւ 1921 թուին թուրքերու եւ ֆրանսացիներու միջեւ տեղի ունեցող կռիւներէ վերջ, Ուրֆան գրաւող ֆրանսական բանակը երբ հեռացաւ ու Շէպէքէի կիրճին մէջ դաւադրաբար խորհուեցաւ թուրքերու կողմէ, բանակի մէջի այճերիացի իսլամ գիւուորները զատեցին թուրքերը եւ ազատ թողուցին: Ուրֆայի հայութեան մնացորդները, որոնք վերադարձած էին Ուրֆա, կրկին լքեցին ամէն ինչ եւ ապաստանեցան Սուրիա: Ասորիները տեսնելով, որ իրենք են չպիտի կարողանան ապրիլ Ուրֆայի մէջ, գաղթեցին Հալէպ եւ Հալէպի «Դամասկոսի կայարան» կոչուած տեղւոյն քով հիմնեցին ինքնուկ թաղամաս մը եւ քարշ կու տան միեւնոյն անպատուաբեր գոյութիւնը, ինչ որ էին Ուրֆայի մէջ: (էջ 109-113):

ՍԿՐՏԻՉ ԷՄԻՆԵԱՆԻ ՅՈՒՇԵՐՈ

Տեղահանութիւն եւ ջարդ Սեբաստիոյ Փերքեւնիկ Գիւղիս

2005 թ. Փետրուար-Յուլիս ամիսներին Մեծ Եղեռնի 90-ամեայ տարելիցի առթիւ «Նոր Կեանք» շաբաթաթերթում «Հայոց Յեղասպանութեան վերապրողների վկայութիւնները» խորագրի տակ, պարբերաբար հրատարակեցինք Մեծ Եղեռնի վերապրողների վկայութիւնները

առանձին հատուածներ եւ տեղեկութիւններ այդ առթիւ լոյս տեսած յուշագրութիւնների եւ առանձին հատորների մասին:

Եւ ահա Հոկտեմբեր ամսի 14-ին Նիւ Փրովիտենս (Ռոտ Այլընտի նահանգ) քաղաքում բնակւող եւ «Նոր Կեանք» շաբաթաթերթի ընթերցող Պրն. Նշան Որբերեանից ստանում եմ Մեծ Եղեռնից վերապրող Մկրտիչ Էմինեանի յուշերի ձեռագիրը (ընդամէնը 14 էջ), որը այսօր ժամանակ մնացել էր անտիպ:

Բնականաբար յայտնում եմ իմ շնորհակալութիւնը Պրն. Նշան Որբերեանին, որը մասնագիտութեամբ քիմիագործ լինելով հանդերձ, հոգով-սրտով նուիրուած է հայ գիր ու գրականութեանը եւս:

Հայերէն բնագիրը ուշադրութեամբ կարդալուց յետոյ, որոշեցի այն անմիջապէս յանձնել հրատարակութեան, քանի որ Մկրտիչ Էմինեանի վկայութիւնները լիովին հաւաստի են եւ հաստատուում են նաեւ փաստագրական այլ վկայութիւններով եւս:

Այն էլ նշեմ, որ այս յուշագրութիւնը 2003 թ. պատշաճ մակարդակով թարգմանուել է նաեւ անգլերէնի Ժողէֆ Թոփալեանի կողմից: Դժբախտաբար այս թարգմանութիւնն էլ մնացել է անտիպ: Յոյսով եմ որ մօտ ապագային այն եւս կը հրատարակուի:

Իր յուշագրութիւնից բացի Մկրտիչ Էմինեանը անգլերէն շարադրուած ինքնակենսագրական մի ընդարձակ գրութիւն է ձօնել իր քրոջ՝ Բեկինայի թոռանը՝ Ճիւնիին: Այս ինքնակենսագրութեան մէջ անդրադարձել է նաեւ իր եղեռնային տառապանքների մասին եւս: Համակարգչային շարուածքը պատկանում է Ճօ Թոփալեանին:

Այս ինքնակենսագրութիւնից համառօտակի բերում ենք հետեւեալ տեղեկութիւնները:

Մկրտիչ Յովհաննէսի (Ճօն) Էմինեանը ծնուել է Կ. Պոլսում, 1900 թ. Օգոստոսի 17-ին: Զաւակն է Յովհաննէս եւ Մաննիկ-Մարթա Էմինեանների: Հայրը Կ. Պոլսում գրադուել է ածուխի եւ վառելափայտի առեւտրով:

Մկրտիչ Էմինեանի ծնողները բնիկ Փերքենիկ գիւղից են: Այդ գտնուում է Սեբաստիա (Սիվաս) քաղաքից ոչ շատ հեռու (մօտաւորապէս 10 մղոն հեռավորութեան վրայ) հիւսիսային լեռնային միջավայրում: Բնակչութիւնը հիմնականում եղել է հայ կաթոլիկ (մօտ 500 ընտանիքից բաղկացած): Փերքենիկը ունեցել է երկու դպրոց եւ հայկական Ս. Սարգիս եկեղեցին: Մեծ Եղեռնի օրերին գիւղը ամբողջութեամբ դատարկուել է, իսկ կարեւոր շինութիւնները աւերուել են: Նշեմ նաեւ, որ Փերքենիկում է ծնուել եւ հասակ արել հայ անուանի բանաստեղծ՝ Դանիէլ Վարուժանը:

Հարկ է նշել, որ Մկրտիչ Էմինեանի պապենական տունը գտնուել է Փերքենիկում: Ինքնակենսագրութիւնում մատնանշուած է, որ այստեղ են ունեցել են դարբնոցի եւ գորգի արհեստանոցներ:

Մ. Էմինեանը իր նախնական կրթութիւնը ստացել է Սեբաստիայում գործող «Տրանսիական Ճիզվիտ Հայրերի» դպրոցում: Այնուհետեւ ուսումը շարունակել է Ամասիայի դպրոցում, ապագային կրօնական գանձալու միտումով:

Մեծ Եղեռնի ընթացքում Մկրտիչը գտնուելով Փերքենիկ գիւղում ակամատես է եղել հայերի տեղահանութեան եւ կոտորածներին:

Ճակատագրի բերումով ողջ է մնացել եւ որպէս թերահաս տղայ կրկուցել է Մալաթիայի որբանոցը: Այստեղ մի թուրք հոգեւորականի (մոլլայի) կողմից կրօնափոխ է դարձել եւ ստացել Եռսուֆ Անունը:

Կարճ ժամանակ անց նրան յաջողում է խոյս տալ որբանոցից եւ 1910 թ. ապաստան գտնել Սեբաստիայում գտնուող կաթոլիկ եկեղեցում: Մասնակցում է կրօնական արարողութիւններին, իսկ ազատ ժամերին կատարում զանազան աշխատանքներ օրուայ հացի համար:

Նոյն թուականի Յունիս ամսին ճանապարհ է ընկնում եւ մեծ գտնարութիւններով հասնում Կ. Պոլիս իրենց տունը:

1920 թ. Դեկտեմբերի 11-ին թողնում է Կ. Պոլիսը եւ մեկնում Ա.Մ.Ն., միանալու իր երկու եղբայրներին:

1921 թ. Յունուարի 5-ին հասնում է Նիւ Եորք, այնուհետեւ մեկնում Վորսեսթըր, այստեղից էլ Պոսթոն: Երկար տարիներ աշխատում է կօշիկի գործարանում, հասնելով որոշակի յաջողութիւնների: Թոշակառու դառնալուց յետոյ, կեանքի վերջին տարիները անցկացնում է Պոսթոնի «Հայ տարեցների տանը», ուր եւ կնքում է իր մահկանացուն 1992 թ.:

Ստորեւ առաջին անգամ հրատարակում ենք Մկրտիչ Էմինեանի ինքնակալին ձեռագիրը նոյնութեամբ, պահպանելով նրա ոճը: Ուղղել ենք միայն վրիպակները եւ դրել կէտադրական նշաններ: Փակագծերում տուել ենք թուրքերէն նախադասութիւնների թարգմանութիւնները, իսկ վերջում համալրել այն անհրաժեշտ ծանօթագրութիւններով:

*
* *

Սիրելի հայ հայրենակիցներս 1915 Օգոստոս ամսոյն միջին օրերուն մէջ գիշեր մը որ հունձքի աշխատանքէ յոգնած կը քնանայինք յանկարծ վերջի մը ձայնը լսուեցաւ մինչ այս միջոցին գիւղացիներուն սիրտը ահ ու գոյի մատնուած էր:

Յաջորդ օրը երբ արեւը ծագեցաւ արդէն գիւղին չորս կողմը սիրտը օրծններուն եւ աւազակներուն կողմէ պաշարուած էր:

Մուսամէթ¹ ըստած ոճրագործին կողմէ ղրկուած էր նաև Սիրաստիոյ ժանտարմա փոլիս գօմանտանը² չերքեզ Քելեչ պէյը իր գունդին հետ: Ձէնքն ի ձեռն գիւղը պաշարեցին ամէն փողոցի անկիւն մէկ քանի պահակներ սպասեցնելով:

Ես ալ սովորականիս պէս եկեղեցի կ'երթայի Ս. Պատարագին սպասաւորելու քահանան: Պատարագը մատուցանելէն յետոյ Ռայիսին Սիմոնը ըստած տղուն հետ (որ ժամկոչութեան պաշտօնը կը վարէր եկեղեցիին) դուռը գոցեցինք եւ դէպի քահանային սենեակը յառաջացանք: Այս միջոցին ժանտարմայի արիւնարբու չավուչը, որ մեզ կը դիտէր արագ քայլերով եկեղեցիին բակէն ներս մտաւ ըսելով «խային էրմէնիլէր էօլէճէքսինիզ տահա կեալուրլուքտան վազ կէչմիյորսունուզ» (դաւաճան հայեր մեռնելու էք. դեռ եւս անհաւատութիւնից չէք հրաժարուում): Յետոյ տղուն ապտակ մը գարնելով եկեղեցիին բանային ձեռքէն առաւ:

Ժողովողպետ³ Գրիգոր Վարդպետ Պալեանը, որ եղելութիւնը հասկցած էր դիմեց Քելեչին: Ան ալ այսպէս պատասխանեց «բաբազ էֆէնտի հիչ մէրաք էթմէյինիզ սիզին իչին հիչ պիր շէյ եօք տուր, եալընըզ պիզիմ արատըլըմըզ պուտուրքի կէճէնին եարըւնտաքէօյլիւլէրտէն պիրի սէյֆէ⁴ պուլունան մէօլիէնտիզին աթընը վուրմուչ օ տախի վուրանը թանըյօր օնուկ իչին էրքէքլէր թորլայաճալըզ վէ քիմ օյտուղունու անլայը ճէգասընա մուսֆըզ օլաճագ վէ քիլիսէնին անախտարընը ալտըրըմըզտա մաքսատ պուքի քիմսէ սաքլանմասըն» (Տէր Հայր էֆէնտի, բոլորովին մի անհանգստացէք, ձեզ հետ կապուած ոչ մի բան չկայ: Մեր փնտռածը այն է, որ գիշերուայ կէսին գիւղացիներին մէկը սպաննել է ճամբորդութեան մէջ գտնուող ինժեներներին մէկի ձին: Նա ճանաչում է սպաննողին: Ուստի տղամարդկանց հաւաքում ենք, որպէսզի իմանանք յանցագործին եւ պատժենք: Եկեղեցու բանային վերցնելու մեր նպատակը այն է, որպէսզի ոչ ոք չթաքնուի):

Յետոյ Քելեչին հրամանով գիւղին բոլոր երիտասարդները ժանտարմաներու միջոցաւ եկեղեցույ դուռը հաւաքուեցան: Գժբախտաբար Ղափախ եագիսին⁵ գտնուող ամէլիէ թապուրին գիւղացի երիտասարդներուն բնաւ հրաման տուած չէին մինչեւ այդ օրը այդ սեւ օրը ամէնքն ալ գիւղ ղրկած էին ըսելով «այս օր օսմանեան բանակը Ռուսիոյ հողը մտած է ամէնքդ ալ տուն գացէք եւ վաղը կանուխ գործի»:

Այս խաբէութիւնով 360-է աւելի երիտասարդներ թակարդի բռնուած էին: Կէս օր եղաւ. գիւղին ամբողջ երիտասարդութիւնը որ 430 հոգի է կը բաղկանար ժանտարմայով պաշարուած քաղաք փոխադրեցին: Այս ալ երկրորդ ցաւ մը եղաւ գիւղացիներուն սրտին մէջ:

Մէկին հայրը, միւսին ամուսինը, եղբայրը կամ նշանածը սպանդանոց կը տարուէին:

Քելեչ ըստած ոճրագործը ասով ալ չբաւականալով հրաման րրաւ, որ «եթէ մինչեւ 3 օրէն գիւղէն չելլաք առանց ուսեստեղէն կամ հագնելիքի», գիւղէն դուրս պիտի նետէր: Ամէն մարդ կու լար կ'ողբար եւ կը հարցնէին թէ ինչ է պատճառը, որ գիւղէն ելլանք: Անոնց ալ կը պատասխանէին «թագաւորութիւն կ'ուզէք է՞: Նոր Հայաստան մը կազմուած է գացէք հոն ձեր թագաւորին հետ վայելելու»: Օրը Ուրբաթ էր ժողովուրդը 3 օրուան ժամանակամիջոցին մէջ լալով ու հեծեծանքով ճամբու պաշար պատրաստեցին: Վերջապէս 3 օրուան միջոցը լրացաւ:

Երկուշաբթի առաւօտ կանուխ կարգ մը ուրիշ պաշտօնեաներ ալ եկած էին, որոնք մեզի տուներնէս հանեցին եւ դռները կնքեցին: Երեկոյեան ժամը 4-ին ատենները զմեզ ճամբայ հանեցին անմեղ գառնուկներու հօտի մը պէս, բայց առանց հովիւի, միայն թէ հետերնիս ունէինք իբրեւ պաշտպան հօտի մը շուն Ազիզիեցի Ահմէտ չավուչը եւ 18 ժանտարմա: Այդ գիշերը գիւղէն ժամ մը հեռաւորութիւն ունեցող դաշտ ըստած տեղը անցուցինք: Յաջորդ օրը ճամբայ հանեցին զմեզ Ղարտաշլարի ճամբով դէպի Մալաթիա: Մեր մէջ գտնուող ծերերը կը հարցնէին թէ ուր կ'երթանք: Ժանտարմայի պաշ⁶ չավուչն⁷ ալ պատասխանեց թէ Մալաթիա պիտի երթաք մինչեւ հիմա տարագրուած բոլոր հայերը Մալաթիա կը սպասեն, որպէսզի մենք մինչեւ որ դոմիթէճիները⁸ պատժենք: Կառավարութեան հրամանը այս է: 4 օր ճամբորդելէ վերջ շատ դժուարութեամբ Ալաճա իրան հասանք: Ալաճա իրան օր մը սպասեցինք, հետեւեալ օրը դարձեալ զմեզ ճամբայ հանեցին: Կէս ժամ քալելէ յետոյ Գանլը տէրէ⁹ հասած էինք: Այս ձորին մէջը ժանտարմային մէկը դէպի մեզ կը վազէր պոռալով. «էյ, էյ տուրուն, տուրուն չէթէլէր կէլիյոր, ահալիյի սօյաճաքլար, պրաքմայալըմ» (հէյ, հէյ, կանգնէք, կանգնէք, հրոսակներն են գալիս, ժողովողին պիտի կողոպտեն, եկէք չթողնենք): Եւ ամէն ժանտարմաները միասին սկսան վէնք պարպել, իբր թէ թշնամիներուն կ'արգիլեն կոր: Այս խաբեբայութիւններով սկսան դրամ հաւաքել¹⁰. նոյն օրը կէս օրուան մօտ որ հասան Ձէյպլիի ձորը կը հասնէինք, կամուրջի մը տակէն հինգ հատ ձիաւոր չէթէններ ելան: Ժանտարմաները արգիլեցին զանոնք մեզի չմօտենալու համար, որովհետեւ իրենց որսը պիտի հատնէր: Չավուչը պոռաց. «էհ աղալար դաֆիլէյէ կիրմէին» (հէյ աղաներ, կարաւանի մէջ մի մտէք): «Բէք էյի պիզ մալ սաթըն ալաճալըզ» (շատ լաւ, մենք ապրանք ենք գնելու) ըսելով չավուչը խօսքի բռնեցին եւ ձիուն վրայ եղող չէթէ պաշին¹¹ չավուչին ձեռքէն գէնքը յափշտակեց: Ժանտարմաները այս տեսնելով կրակի պատրաստուեցան: Ձէթէ պաշին ալ գայրացած ըստ:

որ «եթէ պատիկ կրակ մը ընէք, ամբողջդ ալ կը մեռցնեմ: Շուտ պէնքերնիդ յանձնեցէք»: Ժանտարմաներն ալ վախերնուն զէնքերը յանձնեցին, որովհետեւ 5 հատ չէթէն հարիւրէ աւելի շատցան:

Չէթէները գործի վրայ

Նախ ժանտարմաներուն ձեռքերը կապեցին եւ ձորը ձգեցին, յետոյ ժողովուրդին սկսան՝ զիւղին պետերը եղող Պրն. Ստեփան Թօփալեան, Գրիգոր եւ Սահակ Տէր-Աստուածատուրեանները բռնելով կապեցին եւ պահանջեցին, որ ունեցած դրամին յանձնեն, թէ ոչ կեանքերնուն կը սպառնան: Այս որ լսեցին աղջիկները եւ հարսերը երեսներն ցելս քսեցին, վախնալով թէ դրամին փոխարէն զիրենք կը տանին: Կառքերը ձորին եզերքը կարգաւ կեցած էին: Չէթէներէն չորսը սկսան կարգաւ կիները եւ աղջիկները խուզարկել: Կառքերուն ամէնէն առջեւէն գացող Մկրտիչ Փապուճեանի կնոջը կառքին վրայի սնտուկները վար առին: Առանց համբերելու որ բանալիով բանան, կոտորեցին եւ մէջը գտնուած թանկագին գոյքերը առնելով մնացածները միասին սնտուկը ձորն ի վար գլորեցին: Յետոյ երկրորդ եւ երրորդ կառքերուն տէրերը եղող հետեւեալ ծերունիներուն՝ Գրիգոր Թօփալեան, Աբրահամ Եփրեմեան եւ Կէօզէլ օղլու Սարգիսը բռնելով երեքին վիզը իրարու կապելով կամուրջին տակը տարին, որ ժողովուրդը վախնալով դրամին յանձնեն: Կիներուն աղաչանքին վրայ չէթէ պաշին ըսաւ, որ եթէ կառքի գլուխ 3 ոսկի տան կապուած ծերունիները կ'արձակեն եւ մեզ հանգիստ զիւղ կը վերադարձնեն: 300 կառք ունէինք, բոլորէն ալ դրամ չորթիկ ետք չէթէ պաշին ըսաւ. «Երթամ ջուր մը խմեմ եւ ընկերներուս լուր տամ որ գանք եւ ձեզ գիւղ վերադարձնենք»: Յետոյ կծիկը դրաւ Արեւը մար կը մտնէր: Յանկարծ շրջակայքը գտնուած քիւրտ գիւղացիները կողոպուտի համար մեր վրայ յարձակեցան: Ես որ Միսոն ընկերոջս հետ չէթէներուն փախուստի առիթէն օգտուելով ժանտարմաներուն կապերը կը քակէինք, անոնց հետ մէկտեղ եւ գիւղացի կիները քիւրտերուն վրայ յարձակեցանք: Մենք քարով եւ ժանտարմաները զէնքով: Մէկ քանին վիրաւորեցինք եւ մնացածները առանց մեր կեանքին կորուստ մը պատճառելու ձի, էջ, եզ, կով եւ հագուստեղէն յափշտակելով փախան: Այս խառնակութեան միջոցին բոստան կ'անցնէր Մկրտիչ Թօփալեանի անդրանիկ որդին:

Հեծնելով փախաւ եւ Ղանդալ ապաստանեցաւ, որ հիմա ընտանեօք Սեբաստիա կը գտնուի: Հետեւեալ առտուն ժանտարմաները, որովհետեւ առջի օր մեզ իրենց չէթէ ընկերներուն զէմ լաւ պաշտպանած էին, դուրչուն բարասը¹² ըսելով դրամ հաւաքեցին:

Նոյն զիշերը Քէօթիւիւն խանը հասանք: Հոս, որովհետեւ Սիրաստիոյ սահմանը կը լմննար, ժանտարմաները եկան, որ օրը անգամ մը կը փոխուէին: Այս տեղն էր, որ բոլոր հայերուն մահուան ճամբան կը սկսէր¹³: Այդ օրը Հասան Չէյլպի հասանք: Տեղւոյն միւտիրը՝ քովերնիս եկաւ եւ ծաղրանքով մը ըսաւ. «Օհ, խոշ կէլտիւիդ. սիգի յրարմայա էմիր ետք խոի, սիգ էրմէնի դաթիլիքսինիդ, սիգ թէմամ դաթիլիք սինիդ, նէ իսէ Մալաթիայա գատար կիտիւիդ տէ օնտան կէրի տէ օնէր սինիդ» (Օհ, բարի էք եկել, ձեզ տեղահանելու հրաման չկար, պուք հայ կաթողիկէ էք: Դուք կատարեալ կաթողիկէ էք: Ինչ որ է, մինչեւ Մալաթիա գնացէք, այնուհետեւ այնտեղից ետ կը դառնաք):

Գիշերը, չարչանապացի հայերը մեզմէ 2 օր առաջ հոն եկած էին, անոնց մէջի այրերը գատելով 180-ի չափ անձեր ձեռնակապ տարին եւ ձորին մէջ սպաննեցին: Հետեւեալ օրը դէպի Հէքիմ խան յառաջացանք յարչանապացիներուն հետ միասին: Երանոս պապուկ Ղուզուճեանը, որ իր հարսին եւ թոռներուն հետ ետ մնացած էր, գող քիւրտի մը կողմէ պաշունահար սպաննուեցաւ, որպէսզի իշուկին եւ գոյքերուն տէր ըլլայ: Հէքիմ խան հասանք: Հէքիմ խանին միւտիրն ալ Հասան Չէյլպիինին պէս ըսաւ. «Սիգ դաթիլիքսինիդ, սիգէ սէֆք օլմայա էմիր ետուտու. սիգին պէօլիք ատամընըդ եող մու պէ¹⁴: 100 լիրա թորլայընըդ տէ Սվազա պիր թէյլկրամ վուրալըմ տէ, սիգ կէրի տէ օնէսինիդ. 2 լիրա, պու էմիր եէնի կէլտի, էրմէնի դաթիլիքեր վէ բրօթէսթանլար իշին» (Դուք կաթողիկէ էք, ձեզ տեղահանելու հրաման չկար: Մի՞թէ ձեր մէջ առաջնորդ մէկը չկայ: 100 լիրա հաւաքէք եւ դէպի Սեբաստիա մի հեռագիր ուղարկենք, որպէսզի դուք վերադառնաք, քանի որ այս հրամանը նոր եկաւ, հայ կաթողիկէների եւ բողոքականների համար):

Հոս ալ գմեզ խաբելով դրամ հաւաքեցին: Հետեւեալ առտուն ստիկաններ եւ ժանտարմաներ խարազանելով մեզ դէպի Հասան Պատրիկ քշեցին, հակառակ մեր աղաչանքներուն թէ միւտիրին մենք գրամ տուած ենք Սեբաստիա հեռագիր ղրկելու: Այս ճամբաները հայ ժողովուրդի դիակներով լեցուն էր, որոնք քիւրտերու եւ թուրքերու ձեռքով սպաննուած էին:

Հասան-Պատրիկ դէպի Մալաթիոյ Փըրընճըլար Գիւղ

Հասան Պատրիկին դաշտը, որ 12 ժամուան ճամբայ ունի, մինչեւ Քրըք Կէօզի¹⁵ Քէզը՝ ճամբան բնաւ ջուր չի գտնուիր, միայն թէ կէս ճամբան Եազը խան տեղը ձորին մէջ պատիկ առուակ մը կար, այդ առուակն ալ դիակներով լեցուած էր: Շատ նորածին մանուկներ ալ կային, որոնց մայրերը ծարաւութենէ նեղուած եւ մահուան տառա-

պանքէն...չըլլայ թէ քիւրտերը հուրով թէ սուրով սպանեն, հոն ձգած գացած էին: Անմեղ մանուկները անօթութեմէ եւ լալէ շատերը մեռած էին: Յուսարով որ մեզ ետ պիտի դարձնեն, պզտիկներէն մէկ քանին հետերնիս առինք: Քիչ մը առաջ գացինք որ 2 եղբայր հինգ-վեց տարեկան, իրենց մօր դիակին վերեւ նստած կու լային, մայրիկ պոռալով «Ելիր ամէնքը գացին մենք ալ երթանք»: Բայց ի գուր, մայրերնին մեռած էր: առաջարկեցինք, որ հետերնիս գան, բայց չեկան: Մենք ալ շիշ մը ջուր, կէս ձմերուկ եւ 2 հաց տարով հեռացանք: Այդ օրը Քըրր կէօզ հասանք որ Թօխմանու գետ ալ կը կոչուի: Գիշերը հոն անցուցինք, առաւօտուն մաս մը սամսոնցիներ ալ հոն հասան, որոնք ժանտարմաներուն կողմէ կը չարչարուէին:

Իրիկուան մօտ Թօփայեան Թորոսը, դիակները եւ ժանտարմաներուն կողմէ չարչարուիլը ու սպանուիլը տեսնելով խելագարուած ինքզինքը գետը նետեց եւ անհետացաւ ջուրին արագութեմէն: 2 ժամ վերջ նոյնպէս Գրիգոր Սընըրիճեան ծերունին խելագարուելով ինքզինք քարերուն զարնելով մեռաւ, թշնամիին սուրով, գէնքով չմեռնելու համար: Ժամ մը վերջ փոս մը փորեցինք, որ թաղենք, ժանտարմաները չթողուցին եւ ուզեցին որ գետը ձգենք, ինչպէս որ շատ դիակներ կու գային կ'անցնէին: Իսկ մենք կաշառք տարով յաջողեցանք մեռելը թաղել: Նոյն օրը Սիրվանոս Շաղլամեանին կինը որ Շաղլամեան վարդապետի մայրն էր 2 ուրիշ կիներու հետ կամուրջէն անդին անցած էին եզերը ասդին բերելու համար, երեքն ալ ծառերու ետեւ պահուրտած քիւրտերու կողմէ զոհ գացին: Երկրորդ օրը ինչպէս որ բոլոր հայերուս ըրած էին, նոյնպէս ալ մեր բոլոր եզներուն եւ ձիերուն վրայ երկաթէ աստղ մը տաքցնելով կնքեցին, որպէսզի թուրքերը ձեռքերնէս չկրնային առնել եւ գոյգի գլուխ հինգ-հինգ դրուշ հաւաքեցին:

Երրորդ օրը Մալաթիոյ քովէն անցնելով մեզ Չըրընճըլար տարին որ մահուան վճռատեղն էր: Այս անիծեալ տեղը կային նաեւ մաս մը սեբաստացի, թոքատցի, սամսոնցի եւ չարչանպացիներ, որոնց այրերը օր մը առաջ ժողված էին եւ վրաններէն քիչ հեռու տանելով սպաննած էին: Հետեւեալ օրը ի բացառեալ թոքատցիներէն եւ սեբաստացիներէն, մնացածները ամբողջ մէկտեղ դէպի Ուրֆա ճամբայ հանեցին: Օր մը վերջը ինչպէս որ հայ եղբայրներուն ըրած էին, կառքերը եւ անկողիները ձեռքերնէս առին, 14 տարեկանէն վեր եղող երիտասարդները եւ ամբողջ ծերերը հաւաքելով Խարլըխ ըսուած տեղը տարին: Ձեռքերնին կապուած ոմանց գլուխը կտրեցին, ոմանց ձեռքերը, ոտքերը, ոմանց ալ կացինին կռնակովը ճակատներնուն զարկին: Տեսակ-տեսակ չարչարանքներով սպանեցին: Գալով կանանց, ամբողջ ունեցածներնին ձեռքերնուն առնելով եւ գիրենք ալ մերկացնելով

իգօյուի ճամբով դէպի Ուրֆա ճամբայ հանեցին, որոնցմէ մինչեւ այսօր բնաւ լուր չկայ: Իսկ մենք որ 30 տղայ էինք որ մեր ծնողներէն եւ ազգականներէն զատած էին, մեր գոյքերը կառքերուն բեռնելով եւ քովերնիս սուրնաւոր ժանտարմաներով Մալաթիա տարին: Կառքերը եւ գոյքերը Թէքէլիֆիլ հարպիէ¹⁶ յանձնուելով հայ հոռոմէականաց եկեղեցին¹⁷ տարին ուրկէ ամիս մը վերջ եկեղեցիին բակը լեցնելով աճուրդով ծախեցին: Իսկ մեզ 30 որբերս Խարաղա ըսուած թաղը հայ բողոքականաց դպրոցը, որ որբանոցի վերածուած էր, մեզ հոն տարին ուր կային նաեւ 1000-ի չափ որբեր ու որբեւայրիներ մերկ ու անօթի: Այս որբանոցը Մալաթիոյ վաճառականներէն Հաճի Էֆէնտիի հրամանին տակ կը գտնուէր, որ ամէն օր քիւրտեր կու գային աղջիկներ եւ մանչեր գտնուելու, որոնք առնելով կը տանէին եւ կէս ճամբան առեւանգելով կամ մերկացնելով կը սպաննէին: Օրին մէկը երկու քիւրտ եկան, Սաման Գէօլի տարին զիս եւ սեբաստացի տղայ մը, որ հիմա մեռած է, այդ գիւղը մեզ 3 օր աշխատեցնելէ յետոյ զմեզ Խարլըխ տարին, որ մեծ փոս մըն է: Հոս բերին նաեւ 100-ի մը չափ երիտասարդներ եւ ծերեր, որոնց ձեռքերը, ոտքերը կապելով սկսան կացիններով եւ դաշոյններով սպաննել, մեզի ալ կ'ըսէին, որ եթէ իսլամ չըլլաք, ձեզի ալ ասոնց պէս կ'ընենք եւ ստիպուեցանք մեր ալ անունները փոխել եւ սկսանք ըսել «լա իլահ իլլա ալլահ»¹⁸: Այս քիւրտերը, որոնց մեծին անունն էր Թպօ Քրիմա, մեզ կը ստիպէր իրենց մզկիթը երթալ: Հայերը սպաննենք եւ կողոպտենք իրենց տանինք որ ուտեն, եթէ ոչ մեզ ալ կը մորթեն: Գիշերը երբ որ Քրիման կը քնանար, ընկերոջս Պետրոսին հետ մէկտեղ Մալաթիա փախանք, մեր վերադարձին տեսանք որ մեր ընկերներուն մէկ մասը մեռած էին եւ մնացածները քիւրտերը տարած էին: Մալաթիա գալէս վերջ Թեքէլիֆիլ Հարպիէն պզտիկ տղաքներ կը ժողվէին կառապան ընելու համար: Ես ալ գացի, նախ ինծի կառքերը մաքրել կու տային, յետոյ կառապան եղայ եւ սկսայ միւսներուն պէս եկեղեցիները երթալ եւ հայոց գոյքերը շուկան կրել, որոնք աճուրդով կառավարութեան հաշուոյն կը ծախուէին: Օր մ'ալ հայոց եւ լատինացիներուն եկեղեցւոյ զանգերը փշրելով տէօքմէճիին¹⁹ ծախեցին, որոնցմով կնիք կը շինէր:

Օր մը դարձեալ եկեղեցիէն գոյքերը կրելու գացած էի: Գոյքերուն մէջէն Խարբերդի հայ հոռոմէականաց Իսրայէլեան գերապայծառին լուսանկարը գտայ եւ ուզեցի պահել, բայց ձեզա ըէլիսին²⁰ նշմարելով զիս անխնայ ծեծել տուաւ: Հետեւեալ օրը սուրհանդակի մը նոսկի տուի, որ զիս Սեբաստիա տանի: Ձիս քաղաքէն դուրս հանեց եւ խարելով, որ կառքը գոնթօլ²¹ ընեն զիս կառքէն վար իջնուց եւ

փախաւ: Ժամի մը չափ յուսահատած լեռան մը գագաթը սպասեցի, յետոյ ճարս հատած ստիպուեցայ ճամբաս շարունակել դէպի Սեբաստիա:

15 օրէն նահատակներուն վրայէն անցնելով Սեբաստիա հասայ Բեռնակիրութիւն կ'ընէի ցերեկին եւ գիշերները եկեղեցի կ'երթայի, կը պառկէի: Ամիս մը յետոյ Գէչէճեան գերապաժառը վախճանելէն վերջ եկեղեցին բոցեցին: Ես ալ փողոցը մնացի: Յետոյ դերասան Սալիմ Պէյի միջնորդութեամբ, որուն կինը պոլսեցի հայուհի մըն էր Սեբաստիոյ Շէօպէ մէօհէնտիգին²² տղուն Լուիթֆի էֆէնտիին հետ գլխ հոս ղրկեց, Կ. Պոլիս, Բերա 1917-ի վերջերս:

Սեբաստիոյ Փերքենիկ գիւղէն
Յ. Էմինեանի որդի
Մկրտիչ Յ. Էմինեան

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տուեալ ժամանակ Սեբաստիոյ նահանգապետն էր:
2. Հրամանատար:
3. Պատուելի:
4. Այստեղ վրիպակ է: Հաւանաբար պէտք է լինէր sefer (գինուորական) կամ seyahat (ճամբորդութիւն):
5. Տեղի անուն:
6. Հրամանատար, առաջնորդ:
7. Կրտսեր սպայ:
8. Գաղտնի քաղաքական կազմակերպութեան կամ կուսակցութեան անդամ:
9. Տեղի անուն: Բառացի թարգմանութիւնը՝ Արիւնոտ ձոր:
10. Այստեղ եւ յաջորդ էջերում տեղ գտած ժանտարմաների եւ հրոսակների այսպիսի խաղերը ձեւական բնոյթ ունէին, քանի որ այդ բոլորը կատարեալ խաբէութիւններ էին: 1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքերի դատավարութեան արձանագրութիւններում եւ դատավճիռներում բացայայտ նշում է, թէ ինչպիսի նենգութեամբ ոչնչացրել են հայերին: Ահա մի ցցուն օրինակ.

«Մի շարք յանցագործ, անառակ մարդկանցից եւ նոյն մակարդակի մի քանի ժանտարմներից նրանց կազմած հրոսակախմբերը իբրեւ թէ ուղեկցելու էին տեղահանուած հայերի քարավանները: Մինչդեռ շտապ տեղահանութեան ենթարկուած եւ պաշտպանութեան միջոցներից զուրկ հայերի քարավանները քաղաքից հեռացուելուց յետոյ, ամայի վայրերում տղամարդկանց առանձնացրել են կանանցից եւ վերոյիշեալ յանձնագործներից կազմուած չէթէների հրոսակախմբերը յարձակուելով

կողոպտել են նրանց իրերը եւ այնուհետեւ անբնականաբար դատանութեամբ սպաննել եւ բնաջնջել բոլորին» (Տե՛ս Աւետիս Փափագեան, Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի, Երեւան, 1988, էջ 168):

11. Հրոսակապետ:
12. Փամփուշտի դրամ:
13. Խարբերում եւ Խարբերդի շրջաններում տեղի ունեցած կոտորածներին ականատես է եղել Թուրքիայում Խարբերդի Ամերիկեան հիւպատոս Լեսլի Դեվիսը 1914-1917 թթ.:
2001 թ. Երեւանում առաջին անգամ հայերէն լոյս տեսած «Սպանդի Նահանգը» գրքում, ամփոփուած են Լեսլի Դեվիսի հաշուետուութիւնը այդ բոլորի մասին, ինչպէս նաեւ Կ. Պոլսի Ամերիկեան դեսպան՝ Հենրի Մորգենթաուին հասցէագրուած նրա գեկուցագրերը:
14. Կառավարիչ:
15. Պէտք է լինի Քըրք Կէօզի (քառասուն ակ) գետը:
16. Զինուորական աշխատանքային գումարտակ:
17. Կաթոլիկ:
18. Աստուծոց բացի ուրիշ Աստուած չկայ:
19. Զուրու:
20. Թուրքերէն՝ Ceza Reisi (քրէական դատարանի նախագահ):
21. Ստուգել, վերահսկել:
22. Թուրքերէն՝ Şube muhendisi (մասնաճիւղի ինժեներ):

ՅԱԿՈՒ Ս. ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԵՂԵՆԱԿՅԻՆ ՅՈՒՇԵՐԸ

Մեծ Եղեռնի վերապրողների վկայութիւնների շարքում, խիստ կարեւոր նշանակութիւն ունի բնիկ մարաշցի Յակոբ Ս. Տէր Կարապետեանի յուշագրութիւնը, որի խորագիրն է Բանտէ-բանտ, շղթայակիր. Մարաշէն-Մուսուլ (1915-1919 թթ.) 151 էջ: Այն գրուած է 1933 թ. եւ հրատարակուած հայատառ թուրքերէնով 1957 թ. Պէյրութում, հեղինակի նախաձեռնութեամբ:

Յակոբ Տէր Կարապետեանը ծնուել է 1881 թ. Մարաշում եւ իր մահկանացուն կնքել Պէյրութում 1958 թ.: Նախնական կրթութիւնը ստացել է Մարաշի հոգեւոր թեմական դպրոցում: Այնուհետեւ եղել է ուսուցիչ եւ շրջագայող քարոզիչ:

Թուրքերէնով շարադրուած այս գիրքը կարդացի խորը յուզմունքով եւ դառնութեամբ:

«Իմ ականատեսի վկայութիւնները կարգացողները պէտք է լինեն շատ համբերատար,- գրել է հեղինակը: Մարդու սիրտը չի դիմանայ Մեզանից առաջ այս ճանապարհներից անցնողներին, այսինքն արտորի ենթարկուած մեր հայրենակիցների ոսկորները դեռեւս երևում էին ճանապարհներին եւ դաշտերում: Մեզ հետեւող քրտեք, բոլորիս վախցնելու համար տեւապէս մատնացոյց էին անում այդ բոլորը, առանց հասկանալու, որ սատկած ոչխարը երբեք չի վախնայ դանակից» (էջ 10):

Յակոբ Տէր Կարապետեանը Մեծ Եղեռնի օրերին, որպէս Օսմանեան բանակի զինուոր, ընդգրկուած է եղել աշխատանքային գումարտակում (Amele Taburu): Մօտ 7 ամիս ծառայելուց յետոյ, ծանր աշխատանքային պայմաններում հիւանդանում է:

«Մի թուրք կապիտան ինձ ծեծեց: Այնպէս ծեծեց, որ տեղիցս չէի կարողանում շարժուել: Արդէն հիւանդ էի: Հիւանդութիւնս առ աւելի վատթարացաւ եւ բերանիցս սկսեց արիւն գալ: Այս վիճակում, կէսօրից մինչեւ երեկոյ, 4 ժամ ձեռքերս, ոտքերս կապելով մի ծառի վրայ, խաչեցի ինչո՞ւ ինձ խաչեց, որովհետեւ ես հայ էի եւ քրիստոնէայ: Ոչ մէկը չկարողացաւ նրան կանխել: Կապիտանը ոչ մէկին չէր լսում: Այս կապիտանի տրամադրութեան տակ մի արաբ սերժանտ կար: Այս սերժանտը գիշերուայ միութեան մէջ կտրեց իմ ոտքերի ու ձեռքերի կապերը եւ ինձ ծառից վար իջեցնելով ասաց,- տղաս այս կապիտանը շատ դաժան մարդ է, այլեւս նրա աչքին չերեւաս: Շատ խղճալով իմ վիճակի վրայ մի զինուորի հետ թեւերիցս բռնելով ինձ հեռացրին եւ թաքցրին մօտակայքում գտնուող թփերի մէջ: Նրանց արածը ինձ համար մի մեծ լաւութիւն էր» (էջ 15-16):

Այնուհետեւ բախտի բերմամբ Յակոբը ընկնում է հիւանդանոց, Բաւականին բուժուելուց յետոյ, կրկին յայտնաբերում են նրա գտնուելու վայրը եւ ժանտարմաների հսկողութեան տակ շղթայակապ քշում աքսոր, այս քաղաքից այն քաղաքի բանտը, այս գիւղից այն գիւղի բանտը, ամէն օր ծեծ ու խոշտանգում, սոված-ծարաւ ենթարկուում դաժան տանջանքների:

Այս տառապալի ուղեւորութիւնը բանտախցերում անցկացրած օրերի հետ տեւում է մօտ 3 տարի:

Մարաշից մինչեւ Մուսուլ իր բախտակից ընկերների հետ լինում են հետեւեալ քաղաքների եւ գիւղերի բանտախցերում.- Այնթապ, Պիրեճիք, Ուրֆա, Տիարպէքիք, Մերտին, Նուսէյպին, Չախօ, Տիլոք, եւ այլն: Ի վերջոյ հրաշքով ազատուելով մահուան ճիրաններից բանտարկուում է Մուսուլի բանտում: Մի առ ժամանակ անց նրան աշխատացնում են Մուսուլի հիւանդանոցում:

Յայտնի է, որ 1918 թ. պատերազմը հասաւ իր աւարտին եւ թուրքերը պարտուեցին: Մեծ Եղեռնից վերապրողների շատերը, աչքի առաջ ունենալով բոլոր վտանգներն ու դժուարութիւնները, ձգտեցին վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը:

Այսպիսի բուռն ցանկութեամբ Մարաշ վերադառնալու ձգտումով ժամբայ ելաւ նաեւ Յակոբ Տէր Կարապետեանը: Իրենց պապեանական տները վերադարձող վերապրողները աշխատեցին կրկին վերականգնել ու շէնցնել իրենց բնակավայրերը, մարդավայել ապրելու համար: Իմաստաբար այն երկար շտեմեց, հայութիւնը զոհ գնաց դաշնակիցների գործադրած նեղ քաղաքականութեանը: Յայտնի է, որ այս անգամ էլ յատերը զոհ գնացին քեմալականների կազմակերպած սպանդին:

Այդ ղէպքերի կապակցութեամբ ահա թէ ինչ է վկայում Յակոբ Տէր Կարապետեանը:

«1920 թ. Յունուարի 21-ին, Չորեքշաբթի կէսօրից յետոյ, ժամը 3-ին մի հրացանագարկի նշանով Մարաշի թուրք հրոսակները անցան գործի: Մի տեղ այն տեւեց 2 ժամ, մի այլ տեղ մինչեւ իրիկուն: Չէնքի կրակոցներով անցան յարձակման: Իրենց ուժը ցուցադրեցին Փրանսիական կառավարութեանը: Ֆրանսիացիները մի առ ժամանակ լուռ մնալով ցանկացան իմանալ սրանց հետապնդած նպատակը: Ի վերջոյ, նկատելով, որ թուրքերը խելօք չեն մնալու, իրենք եւս անցան գործի: Թուրքերը կոտորածի ենթարկուած հայերի տները թալանելով կրակի տուին, որպէսզի ոչ մի հետք չմնայ: Եւ այդպէս մօտակայքում գտնուող հայերի տները վառելով, աշխատում էին հետքերը կորցնել...»

...Համաշխարհային պատերազմի դժուարին օրերը, վտանգաւոր անտպարհները, բանտային տանջանքներն ու չարչարանքները եւ գեռեւս վէրքերից լրիւ չկազդուրուած, մեզ համար սկսուեց ահա մի նոր արհաւիրք: 21 օր տեւած թէժ պատերազմից յետոյ քաշուեցին: Ովքեր ի վիճակի էին եւ կարող, միանալով Ֆրանսիական բանակին ճամբայ ընկանք: Մարաշից դուրս եկան ծեր, երիտասարդ կին, աղջիկ, երեխաներ: Այս էլ մեզ համար դարձաւ մի նոր աքսոր, կամաւոր գաղթականութիւն» (էջ 140-144): Հասկանալի է, որ Ֆրանսիական բանակին չհետեւողները զոհ գնացին թուրքական եաթաղանին»:

Յետագայ էջերում Յակոբ Տէր Կարապետեանը պատմում է իր գաղթականական կեանքի դժուարին օրերի մասին հետեւեալ քաղաքներում. Ատանա, Թարսուս, Մերսին, Իզմիր, Աթէնք, Դամասկոս, Պէյրութ...:

*

**

Յակոբ Տէր Կարապետեանի այս յուշագրութիւնը, պատշաճ մակարդակով անգլերէնի է թարգմանել եւ հրատարակել իր թոռը՝

Դոկտ. Յակոբ Տէր Կարապետեանը, 2004 թուականին: Նշենք, որ Դոկտ. Յ. Տէր Կարապետեանը Գալիֆորնիոյ La Verne համալսարանի դասախօս է: Անգլերէն հրատարակութիւնը ունի հետեւեալ խորագիրը: Jail to jail, Autobiography of a survivor of the 1915 Armenian Genocide, by Hagop S. Der Garabedian. Translated by Agop H. Der Garabedian. Printed in the U.S.A. (123 p.):

Գրքի սկզբում բերուած ներածականում Դոկտ. Յակոբ Տէր Կարապետեանը, պատմագիտական տեղեկութիւններ տալով Մեծ Եղեռնի մասին, բարձր է գնահատում եւ արժէքաւորում, ոչ միայն իր պապի թողած յուշագրութիւնը, այլեւ բոլոր վերապրող ականատեսների վկայութիւնները, նկատի ունենալով, որ դրանք փաստագրական կարեւոր նիւթեր են պարունակում 1915-1923 թթ. Հայոց Յեղասանութեան մասին:

Դոկտ. Յակոբ Տէր Կարապետեանը այս հրատարակութեան մէջ ընդգրկել է նաեւ իր հօր՝ Յովսէփ Տէր Կարապետեանի լրացուցիչ տեղեկութիւնները, որոնք իր ժամանակին ինքը լսել է իր հօրից:

Գրքի վերջում բերուած է նաեւ մի քարտեզ, ուր սլաքներով տրուած է Յակոբ Ս. Տէր Կարապետեանի աքսորական կեանքի ճանապարհները: Ուշագրաւ են նաեւ առաջին անգամ հրատարակուող ընտանեկան նկարները³:

«ՍԻՌՏՍ ՅՈՃԻՈՒՄ Է ՔԵԶԱՆՈՎ»

Քեմալ Եալչըն
Բոհում 2000

Ականատես վերապրողների յուշերը հաւաքելու ու հրատարակելու խիստ շահեկան գործով զբաղուել է նաեւ մի ազնիւ եւ արդարամիտ թուրք ուսուցիչ, արձակագիր եւ հրապարակախօս Քեմալ Եալչընը: Այս նպատակով նա եղել է Թուրքիայի մի շարք քաղաքներում եւ գիւղերում, հանդիպել մահմետականացած, թուրքացած ու քրտացած հայերի հետ, գրուցել նրանց հետ, ձայնագրել, նկարել եւ գրի է առել նրանց յուշերը:

Քեմալ Եալչընի թուրքերէն (Seninle güler yüreğim) հրատարակած այս գիրքը, որը հիմնականում վերաբերում է մահմետականացուած հայ վերապրողների եւ նրանց ժառանգների յուշերի հաւաքման եւ հրատարակման խիստ կարեւոր գործին առաջինն է թուրքական պատմագրութեան մէջ:

Ստորեւ, մեր թարգմանութեամբ Քեմալ Եալչընի գրքից բերում ենք մահմետականացուած հայ վերապրողների յուշերից քաղուած հատուածներ:

*
* *

ՍԱՖԻԷ ԳԻՆԵՐ

Մանկական անունը՝ Չարուհի
Ամասիայի շրջանի Եասսըջալ գիւղից

Մօրս անունը եղել է Չէյթիմիա, իսկ հօրս՝ Նշան:

Նախքան 1915 թուականի տեղահանութիւնը, պապս (մօրս հայրը), վարպետ արեհաստաւոր է եղել: Սկսել է կառուցել, ինչ-որ մի գործարան: Գերմանիայից եկել է Քոփտոկ անունով մի ճարտարապետ: Այս գերմանացի ճարտարապետի հետ շատ մտերիմ յարաբերութիւնների մէջ լինելով, սկսել են միատեղ կառուցել գործարանը:

Գերմանացի ճարտարապետը միայն մէկ զաւակ է ունեցել, իսկ մերոնք՝ 6 աղջիկներ: Մի օր, Քոփտոկը ասել է. «Ա՛յ ընկեր, տե՛ս, ես մէկ որդի ունեմ, իսկ դու՝ 6 աղջիկ: Արե՛ այդ աղջիկներից մէկին (Չէյթիմիային) ինձ տուր, որպէսզի գրանցեմ իմ վրայ: Թող նա կրկին քո հովաւաւորութեան եւ հրամանի տակ գտնուի, բայց այդ գրանցման մասին թող իմանան բոլորը:

Մօրս (Չէյթիմիայի) հայրը, որպէս զաւակացու, իր աղջկան տալիս է գերմանացի ճարտարապետին: Այս գերմանացին շատ հարուստ մարդ է եղել: Մօրս ապրած տունը Քոփտոկի տան մօտերն է եղել: Դրանից յետոյ, մայրս մեծ մասամբ ապրել է գերմանացու տանը:

Նախքան տեղահանութիւնը, Ամասիայում շատ հայեր են ապրել: Տեղահանութեան ընթացքում, բոլոր հայերին հաւաքել տարել են...: Մօրս հայրիկին, մայրիկին, եղբայրներին, տեղահանելով, բոլորին աքսորել են: Մայրս գերմանացու վրայ գրանցուած լինելու պատճառով, ոչ հարցրել են, ոչ էլ փնտռել: Գնացողները այլեւս ետ չեն վերադարձել: Մայրս չի իմացել եւ նոյնիսկ չի կարողացել հարցնել թէ՛ ուր են տարել: Իր հօր եւ մօր մասին այլեւս ոչ մի լուր չի ստացել» (էջ 71):

ՄԵՐԶԻՖՈՆՏԻ ՎԱՅՐԱՍ ՎԱՐԱՊԵՆՈՎ

Ես, Վահրամ Կարապետեան, 93 տարեկան եմ, բայց ծննդեան թուականս ստոյգ չեմ յիշում: Մնուել եմ 1905 թ. Մերգիֆոնում: Մնուել եւ հասակ եմ առել Մերգիֆոնում: Հայրս եւ մայրս Մերգիֆոնցի են եղել:

³ Վերոյիշեալ երկու գրքերը, իր անձնական գրադարանից մեզ է տրամադրել Լոս Անճելըսարնակ յարգարժան Տիկին Վեհանուշ Զումեանը, որի համար յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

Տեղահանութեան ընթացքում 10 տարեկան էի: Շատ լաւ եմ յիշում տեղահանութիւնը: Այդ արհաւիրքի օրերը այսօր էլ աչքիս առաջ են: Այսօր էլ դեռ ականջիս հնչում է մարդկանց աղմուկը, լացը եւ կոծը:

Նախապէս տնից-տուն գնալով սկսեցին հաւաքել հայ երեւելի մարդկանց, բոլոր երիտասարդներին: Առաջին հերթին մէջտեղից վերացան փաստաբանները, առեւտրականները...: Խելքը գլխին՝ բոլոր մարդիկ Յայտարարեցին, որ «մահմետականութիւն ընդունողը պիտի մնայ»: Որոշ մարդիկ մահմետական դառնալով մնացին: Մնացին նաեւ անհրաժեշտ արհեստաւորներն ու վարպետները: Հօրս կողմը 5 եղբայրներ էին: 6 տղամարդկանց տարան մէկ տնից: Այդ թուում՝ պապիկիս, հօրս եւ եղբայրներին: Գոռում-գոշիւնով խլեցին եւ քշեցին տարան: Դէպի ո՞ւր, ինչո՞ւ համար, չգիտեմք: Գնացողներէջ ոչ մէկը ետ չվերադարձաւ:

Հօրս տանելու ժամանակ, մայրս 25 տարեկան էր: Մնաց որբեւայրի Այնուհետեւ քշեցին տարան նաեւ կանանց, աղջիկներին, հարսերին, որբեւայրիներին: Ճանապարհին իրենց հաւանած կանանց, աղջիկներին, հարսերին, խլել տարել են: Տղամարդկանց սպանել են: Երեխաները մնացել են անտէր-անտիրական: Այս անտէր մնացած երեխաների մէջից, հարուստներն ու երեխայ չունեցող ընտանիքները ընտրել վերցրիկ են իրենց հաւանածներին եւ մեծացրել:

Շնորհիւ տատիկիս, ես չտարագրուեցի, հաւատքնիս փոխելով մնացինք: Հայրս, պապս, եղբայրները, հօրեղբայրները չուզեցին կրօնափոխուել: Ասացին. «Կը մեռնենք, բայց մեր հաւատքը չենք փոխի»:

Տեղահանութիւնից առաջ, ՄերգիՖոնում 300 հայ ընտանիք էր բնակուում: Եթէ իւրաքանչիւր ընտանիքը 5 հոգուց հաշուենք, կր ստացուի 1,500...: Օրը ցերեկով հայերին տարան սպանելու, բայց ոչ մէկը չկարողացաւ օգնել նրանց (էջ 129-132):

ԳՐԻԳՈՐ ԾԷՅՅԱՆ

Ձարա քա քից

Օրիորդ Կրաֆթը, ամերիկացի միսիոներուհի է եղել: 1915-1916 թթ. հայերի կոտորածների ընթացքում, նա աշխատել է Սեբաստիայի ամերիկեան Գոլէճում: Հայերի այս ողբերգութեան ժամանակ, դէպի Տէր-Չօր, Սիրիայի անապատները, հայերին աքսորելու ընթացքում, հարիւրաւոր երեխաներ մնացել են ճանապարհներին, լեռներում, անտէր-անտիրական, անօթի-ծարաւ, կատարեալ թշուառութեան մէջ:

Աքսորի սարսափը մի քիչ փարատուելուց յետոյ, Ամերիկայի «Կարմիր խաչ» կազմակերպութիւնը օգնութեան յանձնախմբեր է ուղարկել Անատոլիա: Այս օգնութեան յանձնախմբերը ճանապարհներին,

կիրճերում, գիւղերում, քուրտ եւ թուրք ընտանիքների մօտ խցկուած երեխաների մի մասին ճրի, մի մասին էլ ոսկեղրամով գնելով, հաւաքել լիբիկ են Սեբաստիայի Ամերիկեան Գոլէճ:

Հաւաքուած երեխաները, աղջիկները, որբեւայրի կանայք, ինչպէս նաեւ կենդանի մնացած տղամարդիկ, որոշ ժամանակ այստեղ պատուարուելուց յետոյ, մեկնել են Կ. Պոլիս եւ Սալոնիկ, այնտեղից էլ ցրուել Արարի չորս կողմերը: Սալոնիկից մեկնած հայերի թիւը աւելի շատ է եղել:

Ամերիկեան Գոլէճի միջոցով կատարուող այս մարդասիրական օգնութիւնը ղեկավարել է Միս Կրաֆթը:

...Օրը ցերեկով անիրաւութիւններ են կատարուում: 1934 թ. հայերի համար արգելուեց հայկական մականունների օգտագործումը: Չգիտեմ՝ Ստամբուլում ինչպէս եղաւ, բայց մեզ մօտ հայերի մականունները թուրքացուեցին: Մեր մականունը ձիհանեան էր, դարձաւ Ճէյհան: Ես այդ ժամանակ 8 տարեկան էի:

Ձարայում գտնուող հանրայայտ հայկական եկեղեցին, օրը լիբիկով փլեցին:

Այն կամարները, սիւները եւ պատերը, որոնք չկարողացան ծանր մուրճով եւ կացիններով փլել, պայթեցրին:

Սեբաստիայում գտնուող հանրայայտ եկեղեցին օգտագործուում էր, որպէս գինուորական ռազմապաշարի պահեստ: 1940-ական թուականներին, Ռահմի Գիւնայ անունով քաղաքագլխի օրօք, մի գիշերուայ լիթացքում ջարդ ու փուշուր արեցին:

Անատոլիայի մի շարք քաղաքներում մնացած եկեղեցիները թողնելին բնութեան արհաւիրքներին: Վերանորոգումը արգելուեց առ այսօր, բանի՞ եկեղեցի է մնացել Անատոլիայում, չգիտեմ:

Հային սպաննեցիր, հայերին քշեցիր, եկեղեցին ինչո՞ւ համար ես փրում: Ո՞րն է համայնք չունեցող եկեղեցու յանցանքը: Մի՞թէ այդ եկեղեցիները Անատոլիայի հարստութիւնը չէին:

Արդե՞օք պետութիւնը մտահոգութեան մէջ է: «Անատոլիայում, հայ չկայ», «Անատոլիայում հայ չի եղել», արդե՞օք այս է ուզում ասել:

Մի՞թէ հնարաւոր է արեւը ծածկել ցեխով: «Հայ չկայ» ասելով, մի՞թէ կարող ես հային հայոց պատմութիւնը եւ կատարուած յանցագործութիւնը կոծկել:

ԶԱԲԱՐԻԱ

Չօրս պատմածները

Հօրս անունը Յովսէփ էր, Եողաթի Քարահալը գիւղից: Հայրս, կրա եղբայրները՝ Յակուբը, Յակոբը, Պօղոսը, Չաքարիան եւ Կիւրպոն, Չաքարիա անունով պապիս որդիքն են եղել: Ինձ կնքել են պապիս

- Այ՛ն հայրիկ, գիշեր-ցերեկ «նամագ» ես անում, ի՞նչ է քո տարտը: Իմ այս հարցին չէր ջղախնանար: Դէմքին մի տարօրինակ ժպիտով կը պատասխանէր. «Դուք չգիտէք» (էջ 341-344):

«ՄԵԾ ՍԱՅՐԻԿՍ»

Ֆեթհիէ Չէթին

2004 թ. Կ. Պոլսում թուրքերէն լեզուով լոյս տեսաւ «Anneannem» (Մեծ Մայրիկս) վերնագրով գիրքը: Հեղինակն է թուրք իրաւաբան, մարդկային իրաւունքների պաշտպանութեան արդար գործով զբաղւող Ֆեթհիէ Չէթինը:

Գրքում ընդգրկուած է Հայոց Յեղասպանութիւնից վերապրող իր աստիկի եղեռնային յուշերը: Հասկնալի է, որ Հայոց Յեղասպանութեան ճշմարտութիւնը հաստատող այս գիրքը 2006 թ. անմիջապէս թարգմանուեց հայերէնի, հալէպահայ հրապարակագիր Սալբի Գասթարեանի կողմից եւ հրատարակուեց Հալէպի «Արեւելք» տպարանում: Այն հովանաւորուեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի կողմից:

Ֆեթհիէ Չէթինի մեծ մայրը՝ Հրանուշ Կատարեանը ծնուած է 1905 թ. Խարբերդից ոչ շատ հեռու գտնուող Հաւաւ գիւղում: 1915 թ. հայերի տեղահանութեան եւ կոտորածի դաժան օրերին Հրանուշը 4-րդ դասարանի գերագանցիկ աշակերտուհի էր: Դժբախտաբար բռնագաղթի ընթացքում թուրք ժանտարմը խլում է Հրանուշին իր մօր ձեռքից եւ այլ երեխաների հետ տանում պահում իր տանը, նրան տալով Սեհէր անունը:

Հրանուշը աւանատես է լինում 1915 թ. իրենց գիւղի հայութեան եւ իր գերդաստանի մեծ ու փոքր հարագատների անողոք բնաջնջման:

Մինչեւ խոր ծերութիւն, (մահացել է 2000 թ. 95 տարեկան հասակում), Հրանուշը տանջուում է իր տեսած այդ ահաւոր տեսարաններից եւ որոշում է մաս առ մաս պատմել այդ բոլորը իր թոռնուհուն Ֆեթհիէ Չէթինին: Իսկ արդարամիտ եւ մարդկային վեհ գաղափարներով օժտուած Ֆեթհիէն իր տառապած մեծ մայրիկի յիշատակը վառ պահելու համար գրում եւ հրատարակում է նրա եղեռնային վիպակութիւնները, որոնք հաւաստի ապացոյցներ են Հայոց Յեղասպանութեան մասին: Ստորեւ տրւում է մի երկու հատուած գրքից:

*
* *

Անքարա մեր մօտ մնացած շրջանին, օր մը, «Թե՛ գործ չունիս, մէ՛յ մը քովս եկուր, քեզի բան մը պիտի ըսեմ...» ըսաւ: Քովը գացի, նորէն ձեռքերս երկու ձեռքերուն մէջ առաւ եւ «Գիտե՞ս, իմ մայրս, հայրս եւ եղբայրս Ամերիկա են, քեռիդ անոնց հասցէները կորսնցուց, գանոնք միայն դուն կրնաս գտնել, գտիր գանոնք...» ըսաւ:

Այս խօսքերուն բերանէն դուրս թափելու ձեւէն եւ ձայնին միապաղաղ կշռոյթէն կը հասկցուէր՝ թէ ան այս բաները ինծի կարենալ ըսելու համար, մեծ դժուարութեամբ որոշում առած էր: Սկիզբը այնքան ալ չըմբռնեցի, «Ի՞նչ կ'ըսես, մեծ մայրիկ, այսինքն հիմա մենք Ամերիկա ազգականնե՞ր ունինք» ըսելով, ըսածները քիչ մըն ալ կատակի տուի: Բայց մեծ մայրիկս շատ լուրջ էր: «Հասցէները չեմ գիտեր... բայց անոնց Ամերիկա, Նիւ Եորք բնակիլը գիտեմ...» ըսաւ:

- Շատ լաւ, մեծ մայրիկ, ինչո՞ւ Ամերիկա գացին...:

- Իշթէ գացին...:

- Ե՞րբ գացին:

- Ես շատ պզտիկ էի այն ատեն:

- Լաւ, քեզ ինչո՞ւ չտարին...:

- Յետոյ պիտի երթայի, բայց Մահմուտ քեռիդ մեր յարաբերութիւնը խանգարեց, հասցէները կորսնցուց...:

Գլուխս տակնուվրայ եղած էր: Միտքս ինկող հարցումներու շարք մը կ'ուղղէի անոր, բայց իբր պատասխան՝ այս ըսածներէն աւելին չէի ստանար: Օրերով աշխատեցայ բերանէն ուրիշ խօսք մը առնել, սակայն հարագատ մօրն ու հօրը Ամերիկա ըլլալէն բացի, աւելի բան մը չհասկցայ: Մինչ մենք գիտէինք թէ մեծ հայրիկս եւ մեծ մայրիկս մօրաքրոջ զաւակներ են, բայց ասիկա ճիշդ չէ եղեր: Մեծ մայրիկս ալ չէրմիքցի ըլլալը գիտէինք, այս ալ ճիշդ չէ եղեր: Այսքան ատեն ճիշդ կարծածներուս մեծամասնութիւնը սխալ է եղեր...:

Մեծ մայրիկիս ընտանիքը փնտռելէ աւելի, այլեւս հետամուտ էի իրականութիւնը գիտնալու: Շարունակ մեծ մայրիկս նեղը կը դնէի եւ ասիկա ընելու ատեն, մեր առանձին ըլլալուն շատ ուշադիր կ'ըլլայի: Իմացածներս այդ օրերուն ոչ ոքի պատմեցի: Ապրած ցնցումս ոչ ոքի հետ բաժնեցի, արդե՞ք որովհետեւ մեծ մայրիկս այդպէս կ'ուզէր, թէ՞ ամօթէս, չեմ գիտեր: Բայց լսածներս ես ալ միւսներէն կը պահէի: Միս միմակ կը ջանայի գլուխ ելլել այս տաժանելի ապրումներուս խառնակութեան եւ տակնուվրայութեան հետ:

Մեր միջեւ շատ իւրայատուկ եւ շատ խորհրդաւոր յարաբերութիւն մը գոյացած էր, յետոյ հասկցայ, թէ ան օր մը այդ մասին ալ կ'ուզէր պատմել եւ այս գաղտնիքին վարագոյրը ճեղքել, կարենալ ազատելու իր գիտցածներուն, բայց գանոնք ոչ ոքի պատմած ըլլալու

բուհն: Սակայն հետեցուցի նաե՛լ, որ ան համոզուած էր՝ մինչ այդ օրը աւելին դիտնարուս անթոյլատրելի ըլլալուն: Եւ այսպէս՝ ան զիս կը պաշտպանէր...:



ՅԵթիի ԶԵթին իր Մեծ Մայրիկի հետ
Չեռքերը ձեռքերու մէջ առնելով, «մեծ մայրիկս» կ'ըսէի,
ան ալ ինծի «մեծ մայրիկս» ըսելով, պատասխան կու տար,
յետոյ խօսակցելու կը սկսէինք:

Ետեւէն շատ ինկայ: Վերջ ի վերջոյ սկսաւ պատմել: Պատմած ատեն յաճախ կանգ կ'առնէր ու հարցապնդումներու վրայ կը շարունակէր պատմել: Պատահածները կը պատմէր, սակայն այդ ընթացքին առանց մեկնաբանութիւններ ընելու, մասնաւորաբար կը խուսափէր դէպքերուն մասին իր զգացումներն ու մտածումները յայտնելէ...:

«Իմ անունս Հրանտյշ էր, մայրս՝ Իսկուհի, հայրս՝ Յովհաննէս: Այդ միջոցին, հայրս երկու հօրեղբայրներու հետ Ամերիկա էր: Երկու եղբայրներ ունէի: Մեծ հօրս Հայրապետ էֆէնտի կ'ըսէին: Ոչ միայն մեր գիւղին, այլ շրջակայ բոլոր գիւղերուն մէջ խօսքը լսուող, բոլորին կողմէ իրմէ խորհուրդ հարցուող մարդ մըն էր: Մեր գիւղը մեծ էր, երեք գիւղապետ ունէր...» ըսելով, սկսաւ իր խօսքը:

Պատմեց թէ ինչպէս օր մը ժանտարմաները իրենց գիւղը գալով, տարած էին իր մեծ հայրը, հօրեղբայրերը, մօրեղբայրը, մէջն ըլլալով գիւղին բոլոր այրերը, որոնցմէ ոչ մէկ լուր առած էին այդ օրէն ի վեր: Յետոյ մօրը եւ եղբայրներուն հետ ապաստանած էին հարսքոյրիկին գիւղը, սակայն ժանտարմաները հոն ալ գալով կիներն ու այրերը ամբողջութեամբ հաւաքելով Բալու քչած էին: Հոն այրերը մորթելով գետը նետած էին: Գետը օրերով արիւն հոսած էր: Յետոյ պատմեց տարագրութեան ճանապարհին մասին.

«Մայրս աքսորի ճամբուն վրայ ետեւի շարքերուն մէջ շմալնուս համար արագ-արագ կը քալէր, եւ որպէսզի կարենայինք անոր հետ քայլ պահել, մեր ձեռքերէն կը քաշքշէր...ետեւի շարքերէն ստէպ-ստէպ կը լսուէին աղեխարշ աղաղակներ, պաղատանքի ու լացուկոծի ձայներ: Ետեւներէն եկող իւրաքանչիւր ձայն պատճառ կը հանդիսանար մօրս աւելի արագ քալելուն, որ այսպիսով կը ջանար արգելք հանդիսանալ մեր ետեւ նայելուն: Մեր ճամբայ ելլելու առաջին օրուան գիշերը, երկու մօրաքոյրներս ետեւներէն վազելով մեր մօտ եկան: Հոնգուր-հոնգուր կու լային»:

Մեծ մայրիկս հոն կանգ առաւ, հոգոց հանեց...ես անոր ձեռքը համբուրեցի, ան շարունակեց.

«Ժանտարմաները սուիներով սպաննած էին հարսքոյրիկս, որ հիւանդ ըլլալուն համար չէր կրնար քալել, դիակն ալ նետած էին ճամբուն եզերքը»:

- Մեծ մայրիկ, հարսքոյրիկդ հօրեղբօ՞րդ կիներ էր:

- Ոչ, քեռիս կիներ էր, յղի էր...:

«Ամբողջ ճամբու ընթացքին, ծերերը, հիւանդներն ու քայլու կարողութիւն չունեցողները սուիհաւարելով, հոն՝ մէջտեղերը ձգեցին, լիւներու բարձունքներուն վրայ գայլերուն եւ գիշատիչ թռչուններուն կեր դարձուցին»:

Նկատեցի որ մեծ մայրիկս այս ցաւոտ եւ անհաւատալի դէպքերը պատմած ատեն ինծի չէր նայեր: Նայուածքները գորգին վրայ կէտի մը սեւեռելով, ճախ ձեռքով ձեռքս ամուր-ամուր կը բռնէր եւ աջ ձեռքով միշտ նոյն շարժումը կ'ընէր: Սրունքի վերի մասէն մինչեւ ծունկը երկարող հագուստը արդուկելու, կամ ալ ձեռքովը շտկելու պէս շարժում մը, որ առանց անդրադառնալու անընդհատ կը կրկնէր: Մտածելով որ պատմածները շատ կը յոգնեցնեն զինք, ուզեցի դադար մը տալ: Փրփուրով սուրճը շատ կը սիրէր, «Մեծ մայրիկս, սուրճ կը խմե՞ս...» հարցուցի, զիս չյսեց, ձեռքովը նոյն շարժումը կ'ընէր, դանդաղութեամբ ետ ու առաջ կը շարժէր, աջ ձեռքը ձեռքիս մէջ առնելով համբուրեցի, դարձեալ հարցուցի, այս անգամ լսեց, «Քու սուրճդ փրփուրով կ'ըլլայ, հայտէ րրէ...» ըսաւ:

Սուրճը պատրաստելով երբ վերադարձայ, զինք գտայ բաներ մը յիշել ուզողի պէս, գլուխը վեր բարձրացուցած: Երբ զիս տեսաւ, ձեռքով նշան ըրաւ, որ վայրկեան մը առաջ քովը նստիմ: Տարիներէ ի վեր լռութիւն պահած, ապրած անհաւատալի դէպքերը իր մէջ թաղած այս կինը, հիմա ճիգ կը թափէր յիշելու իր խօսելիքն ու պատմելիքը: Սուրճը ձեռքը տուի եւ ան շարունակեց պատմել:

«Մատէնի կամուրջը անցնելէ ետք, Հաւլէրի մէջ մեծ մայրս երկու թոռները ջուրը նետեց: Այս պատկերները հօրեղբայրներուս աղջիկներն էին: Անոնց մայրերն ալ, հայրերն ալ սպաննուած էին: Քախուլու անկարող էին: Պատիկներէն մէկը անմիջապէս ջուրերուն տակ թաղուեցաւ, բայց միւսը՝ գլուխը ջուրէն դուրս հանեց: Մեծ մայրս պատիկին գլուխը ջուրին մէջ մխրճեց: Պատիկը անգամ մը եւս գլուխը ջուրէն դուրս հանեց եւ այս եղաւ անոր աշխարհը տեսնելու վերջին անգամը: Մեծ մայրս զինք դարձեալ ջուրերուն մէջ մխրճեց, ապա ինք ալ խօլաբար վագող ջուրերուն մէջ նետուեցաւ եւ տեսողութենէ անհետացաւ...»:

Հոս, մեծ մայրիկս լսեց...յայտնի էր այս դէպքին իր վրայ մեծ ազդեցութիւն ձգած ըլլալը...: Այդ օրը կրկնելով-կրկնելով այս դէպքը քանի մը անգամ պատմեց: Դեռ յաջորդ տարիներուն ալ այս դէպքը շատ պիտի պատմէր եւ ամէն անգամ ալ, պատումը մտածկոտ լռութեամբ մը պիտի աւարտէր:

Այս բոլորէն ետք, մեծ մայրիկս պատմեց Չէրմիք Համամպաշիի մէջ իրենց տրուած հանգիստի ընթացքին պատահածները եւ մեծ մօրն ու հօրաքրոջը հակառակ, մօրը զինք չտալուն, բայց եւ այնպէս բռնութեամբ առնուելով տարուելուն մասին:

«Ձիս պարտէզ մը տարին, որ ճիշդ մեր գիւղին պարտէզներուն նման կափ-կանաչ էր: Ծառերը լեցուն էին պտուղներով: Պարտէզին

մէջտեղէն վճիտ առու մը կը հոսէր: Այս պարտէզին մէջ մեր գիւղէն ինծի նման առնուած ութ աղջիկներ եւս կային»:

«Մեր փորը տաք կերակուրով կշտացուցին: Ծառերէն պտուղը քաղելու արտօնութիւն տուին: Ատեն մը ետք, ես՝ մայրս կ'ուզեմ ըսելով յամառեցայ: Ձիս մօրս տանելու խօսք տուին: Միւս աղջնակներուն ալ իրենց ծնողներուն յանձնելու խօսք տուին, ասոր վրայ մենք պարտէզին մէջ խաղեր խաղցանք, իրենց ճիւղերէն փրցնելով տանձեր եւ խնձորներ կերանք ու սառնորակ ջուրերէն խմեցինք»:

Այդ օրուան իրիկունը, պարտէզին մէջ գտնուող աղջնակները մէկիկ-մէկիկ առնուելով, տարբեր տուններ տարուած էին: Ժանտարմաներու տասնապետն ալ Հրանոյշը առնելու համար պարտէզ եկած էր: Հրանոյշ չէր ուզած անոր հետ երթալ, «Մայրիկս կ'ուզեմ...» ըսելով, լալու սկսած էր եւ այդ գիշեր մինչեւ առաւօտ լալով անցուցած էր:

«Մինչեւ առտու լացի: Երբ տեսան որ ճար չկայ, առաւօտուն զիս առնելով Համամպաշի տարին: Երբ հոն հասանք, Համամպաշին բոլորովին դատարկուած էր, ոչ ոք կար: Մայրս տարեր էին: Հասկցայ, որ յոյսս չկտրելու համար, զիս մինչեւ առաւօտ հոն պահելէ ետք, հիմա հոս բերին: Իմացայ մօրս դէպի Սեւերէկ¹ ճամբայ հանուած ըլլալը: Այդ օրէն ետք, ալ ամէն օր Սեւերէկի լեռներուն նայելով կու լայի...»: (էջ 69-74):

«ԱԿՕՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԽԻԶԱԽ ԵՒ ԱՆԽՈՆՋ ԽՄԲԱԳԻՐԸ

2007 թ. Յունուարի 19-ին թուրք ազգայնամոլները անողորհ հաշուեյարդար տեսան Կ. Պոլսում լոյս տեսնող «Ակօս» շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչ Հրանդ Տինքի նկատմամբ: Նրա եղեռնային կորուստը բուռն զայրոյթ առաջացրեց ոչ միայն թուրքիայում եւ Հայաստանում, այլ ամբողջ աշխարհում:

Կեանքից հեռացաւ վաստակաշատ լրագրողը, խիզախ եւ արդարամիտ, մարդկային իրաւունքների պաշտպանութեան անխոնջ մարտիկը: Նա առաջին հայն էր, որ թուրքիայում ճշմարտութեան պատնէշի վրայ կանգնած դատապարտեց Հայոց Յեղասպանութիւնը:

Հրանդ Տինքը սիրուած եւ յարգուած անձնաւորութիւն էր նաեւ թուրք առաջադէմ մտաւորականների շրջանակում: «Ակօս» շաբաթաթերթի թուրքական բաժնում զանազան նիւթերի հետ յաճախ լոյս էր տեսնում նաեւ Կ. Պոլսի հայ համայնքի, ինչպէս նաեւ հայ-թուրքական յարաբերութիւնների հետ առնչուող նիւթեր: Երբեմն շաբաթաթերթի թուրքական բաժնում տեղ էր գտնում նաեւ Հայոց Յեղասպանութիւնը դատապարտող հայ եւ թուրք հեղինակների յօդուածները:

¹ Սեւերէկ - Գաւառակ Տիգրանակերտի նահանգին մէջ:

Այն էլ նշեմ, որ 1997-2003 թթ. ինձ բախտ էր վիճակուել կարգա-
յու «Ակօս» շարաթաթերթը: «Ակօս»-ի համարները պարբերաբար ինձ էր
տրամադրում հանգուցեալ Յակոբ (Ժագ) Տէր Պօղոսեանը:

Որպէս թուրքագէտ ես ոչ միայն կարդում էի, այլեւ երբեմն
թուրքերէնից թարգմանելով հայ մամուլում հրատարակում էի հայկա-
կան հարցի եւ Մեծ Եղեռնի հետ առնչուող կարեւոր գրութիւններ:
Նոյնիսկ դրանցից մի քանիսը ընդգրկել եմ 2001 թ. Երեւանում լոյս
տեսած «Հայերի Յեղասպանութիւնը Թուրք Քաղաքական Գործիչների
Յուշագրութիւններում» խորագիրը կրող աշխատութեան յաւելուածում:

Հասկանալի է, որ այդ յօդուածների մի մասը պատկանում էին
թուրք առաջաւոր եւ արդարամիտ հեղինակների գրչին:

Հրանդ Տինքի անմար յիշատակին նուիրուած այս գրութեան
վերջում, ընթերցողին եմ ներկայացնում տարբեր տարիներին «Ակօս»
շարաթաթերթում լոյս տեսած այդ յօդուածներից մի քանիսը անհրա-
ժեշտ ծանօթագրութիւններով:

1.- ԱՆՏԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԱԻՐԻՈՒՍ ԵՄ¹

Հնում, հայերը իրենց տները չվաճառելու համար, հիմքում ոսկի
էին թաղում:

Տան հիմքում ոսկի թաղելու սովորութիւնը բացատրուում էր
հետեւեալ կերպ. «Երբ էլ լինի մահանալու ենք: Որպէսզի մեր զաւակնե-
րը չվաճառեն հօրից ժառանգութիւն մնացած պապենական այս տները,
եկէ՛ք հիմքում ոսկի թաղենք: Հենց որ այն սկսի քանդուել, թող այդ
ոսկին գտնեն, տունը վերանորոգեն եւ չվաճառեն այն: Պապենական
տունը չպէտք է վաճառուի»:

Այսպէս էին ասում հայերը: Բայց այս տարածաշրջանում 15
տարի տեւող կեղտոտ պատերազմը այդպէս չի ասում:²

Պատերազմը օրէնք չի ճանաչում: Այնպէս, որ այս պատերազմը
պոկելով ամէն մէկին իր ոսկեմման հողից, դարձնում է անհայրենիք:

Գիւղերի հրկիզումը, առանց աչք թարթելու մարդ սպանելու
իւրայատուկ դաժանութիւնները տարածուում են նաեւ մարդկութեան
յիշողութիւնը հանդիսացող պատմական շինութիւնների վրայ:

Շարունակուող պատերազմի հետեւանքով հայերը, ստիպուած,
մի կողմից լքում են տուեալ շրջանը, իսկ միւս կողմից, իրենց պատմու-
թեան արգասիքը հանդիսացող եկեղեցիներն էլ ավերուում են մէկ առ մէկ:

Մարդկանց յուսալքութեան հասցնող այս կեղտոտ պատերազմը
պատճառ է դառնում նաեւ մշակութային անհաւոր ցեղասպանութեան:

Պաթմանի,³ Բեշիրի գաւառի գիւղերում գտնուող անտէր
եկեղեցիները գիւղացիների կողմից օգտագործուում են որպէս

սպաստարան եւ հարդ ու խոտի պահեստանոցներ: Եկեղեցիներում
գտնուող պատմական արժէքները գիւղացիների կողմից վաճառուում են
չնչին գներով:

Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում, տեղահա-
նութեան օրէնքով իրենց հայրենիքից բռնազաղթած եւ մեծ մասը
ճանապարհներին կտորածի ենթարկուած հայերի վերջին մնացորդ-
ները, 15 տարուայ այս կեղտոտ պատերազմի պատճառով պարտադրա-
բար լքեցին իրենց բնակավայրերը:

Հայերը իրենց հողերը լքելուց յետոյ, եկեղեցիները ավերուեցին:
Այդ թուում կարելի է յիշել Բեշիրի գաւառում գտնուող Այրանճի,
Քեվերգոժեր (Ներքին Նորաղբւր) եւ Հեմզօ գիւղերի եկեղեցիները:

Այս շրջանում 200 տարուայ հնութիւն ունեցող եւ որպէս հայերի
ազօթավայր եւ հաւաքատեղի հանդիսացող՝ Դերաքեվերգօ եկեղեցին
րոյրորովին անտէր վիճակում է եւ կարծես խռովայոյզ տեսքով բարե-
ւում է եկող-գնացողներին: Ճիշդ իր ժողովրդի ճակատագրի նման, նա
էլ է աքսորուած եւ լքուած:

Դերաքեվերգօ եկեղեցին կառուցուել է 1800 թուականին: 1915 թ.
հայերի բռնազաղթից յետոյ, կարծես նա էլ պայքարի մէջ է յարատե-
ման համար: Հայերի տեղահանութիւնից յետոյ, այդ շրջանին տիրեց
Ռամանի աշիրեթի աղան՝ Էմինէ Փերիխանը (Էմին աղան):

Էմին աղան եկեղեցու մի մասը օգտագործում էր որպէս յարդա-
նոց: 1970 թ., իր մահից յետոյ, աշիրեթի գլուխն անցաւ նրա մեծ որդին՝
Փահրեղդին աղան: Փահրեղդին աղան, երբ հեռացաւ գիւղից, եկեղեցին
ազատուեց աղաներից, սակայն միւս կողմից գիւղացիները հերթի էին
կանգնած եկեղեցին ոչնչացնելու համար:

Նախ եւ առաջ, գիւղացիները սկսեցին ոսկի փնտուել եկեղեցու
ներքնամասում: Նրանք կարծում էին, որ եկեղեցու ներքնայարկում
ոսկի է թաղուած:

Ոսկի չգտան, բայց եկեղեցու հիմքը թուլացաւ, պատերը սկսեցին
ճաթրտել եւ ի վերջոյ առաստաղը փուլ եկաւ: Այնուհետեւ սկսեցին
տեղահանել եկեղեցու դռներն ու պատուհանները, որպէսզի օգտագոր-
ծեն իրենց կառուցած նոր տներում: Ի միջի այլոց, երբ գիւղում մի նոր
տուն էր կառուցուում, եկեղեցուց անպայման մի բան պակասում էր՝
վերջում մնացին եկեղեցու միայն պատերը: Իսկ յետագայում, գիւղա-
ցիները իրենց նոր տների համար սկսեցին օգտագործել նաեւ եկեղեցու
սրբատաշ քարերը: Այնուհանդերձ, եկեղեցու կանգուն մնացած մասերը
շարունակուեցին օգտագործուել որպէս յարդանոց:

1980 թուականի սկզբին, եկեղեցին այլևս չդիմանալով այս աւերումին, վերջնականապէս փլուեց: Քարակոյտի վերածուած եկեղեցու քարերը դեռևս շարունակում էին օգտագործուել գիւղացիների կողմից:

Ժողովրդի հետ նոյն ճակատագրին արժանացած եկեղեցիները այսօր վկաներն են իրենց ժողովրդի անհետացման:

Մի ժամանակ գիւղացիները «մեղք է» ասելով ձեռք չէին տալիս եկեղեցիներին, իսկ հիմա, առաջուայ պէս չեն վախենում այլևս:



Հրանդ Տից

2.- ԳՐԱՏԱԽՏԱԿ ԴԱՐՁԱԾ ԱՐԲԻՐ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ⁴

(Պոյաճը քյոյի⁵ եկեղեցու մօտ անհետացող մի պատմութիւն)

Մեր պատմութեան էջերում ճեղքուածներ են առաջ գալիս: Պոյաճը քյոյից անցնելիս, Ս. Երից Մանկանց եկեղեցուն կից ուշադրութիւնս գրաւեց մի աղբիւր-յուշարձան: Եկեղեցի այցելողներից ծարաւողները գալիս էին այս աղբիւրից ջուր խմելու, սակայն ի գուր...: Տեղեկացանք, որ տարիներից ի վեր այս եկեղեցու վրայ փողոցից քար շարտողների պատճառով, ջարդուել է նաեւ աղբիւրի ծորակը:

Այս բոլորից յետոյ եկեղեցու ետեւի դրան վրայ գետեղուած մի ցուցատախտակի վրայ գրուած է «Երկրում խաղաղութիւն, աշխարհում խաղաղութիւն»:⁶

Առաջին հայեացքից մոլախտով պարուրուած աղբիւր-յուշարձանի վրայ նկատուած է կոտորուած եւ ցամաքած ծորակը: Վայրի մոլախտաները մաքրելուց յետոյ մի անգամ եւս մատնում ենք շփոթութեան:

Աղբիւր-յուշարձանի ճակատում կայ հայերէն մի գրութիւն: Ներքեւում փչովի ներկով գրուած են սպորտային լողուններ, սիրեցեակայի նուիրուած տողեր, ընտրութեան ցուցանակներ...:

Պարզում է, որ այս աղբիւր-յուշարձանը սովորաբար օգտագործում է որպէս գրատախտակ: Մինչդեռ, եկեղեցին կառուցող Միսաք Ամիրան⁷ մարմարեայ այս աղբիւր-յուշարձանը նուիրել է հօր յիշատակին: Այնինչ, այսօր նրա ոսկորները մղկտանքի մէջ են:

Նկատի ունենալով, որ մեր յաջորդ այցելութեան ընթացքում այս աղբիւր-յուշարձանն էլ կարող է այլևս իր տեղում չլինել...սեղմում եմ դրան զանգը եւ եկեղեցու ծառայողների ուշադրութիւնը հրաւիրում աղբիւր-յուշարձանի այդ վիճակի վրայ:

3.- ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ⁸

«Ճումհիւրիէթ» (Դեկտեմբեր 12, 2000 թ.) թերթում գրի առած իր յօդուածում, Օքթայ էքինճին յայտնում է, թէ ինքը ինչպիսի յոյսեր է ունեցել, երբ տեղեկացել է, որ Իզգիլիի ցեղասպանութեան յուշարձանը կանգնեցուել է բարեկամութեան նպատակով: Սակայն այցելութեան ընթացքում, տեսնելով յուշարձանի վրայ վրայի սրերը, բորբոլվին յուսախարուել է:

«Կարսից դէպի Իզգիլի, Դեկտրի եւ Թուզլուճայի վրայով 5-6 տարի առաջ գործածութեան մէջ մտած նոր ճանապարհը, որոշ հատուածում ցուգահեռաբար անցնում է Արփաշայի կողքով: Իսկ Արփաշայի հակառակ ափին, մի քար չլորտելու հեռաւորութեան վրայ, գտնուում են հայկական գիւղեր:

Նախապէս լսած լինելով, որ Իզգիլիի ցեղասպանութեան յուշարձանը կանգնեցուած է «բարեկամութիւն նպատակով», ուստի մօտենում ենք նրան այդպիսի յոյսով եւ յուզումնալից աչքերով: Այնուհանդերձ, նկատելով 43.5 մեթէր բարձրութեան վրայ հինգ հսկայ «սրերի» մամանակաւորապէս խաչաձեւուած ծայրերի դէպի երկինք սարսափազդու եւ տպաւորիչ խոյանքը, իր «ամէն ըոպէ պատերազմելու պատրաստ» վիճակով, մենք կատարելապէս յուսախարուեցինք եւ, նոյնիսկ, յուզմունքով տխրեցինք: Որովհետեւ ցեղասպանութեան յուշարձանի ներքեւի «թանգարանի» բաժնից մինչեւ վերեւի մասում գտնուող

մակերևութապատկերները, այդ թվում, բոլոր գրութիւններն ու տեսարանները ցոյց են տալիս, թէ հայերը ի՞նչ աստիճանի «թշնամի են եղել թուրքերի եւ մահամետականների հանդէպ»:

Հայաստանի մայրաքաղաք Երեւանից էլ իր ամբողջ անհեթեթութեամբ երեւացող այս աստիճան «բարձր» կառուցուած յուշարձանի համար նախորդ տարի ծախսուել է «4 տրիլիոն լիրա»:

Տարօրինակ է, որ երբեւէ ծանր թեթեւ չի արուել, թէ նման ծախսերը «ի՞նչ նպատակի կարող էին ծառայել», այն ժամանակ, երբ Իգդիրի վերականգնման եւ զարգացման աշխատանքներին, նրա տնտեսական եւ մշակութային ծրագրերի իրականացման համար առկայ էին «նիւթական դժուարութիւններ»:

«Յանուն Թուրքիայի» կանգնեցուած յուշարձանի շրջանում ոչ մի ժողովրդական քննարկում չի եղել: Այնպէս, որ 43.5 մեթր բարձրութիւն ունեցող շինութիւնը ո՛չ ճարտարապետական տեսք ունի, ո՛չ էլ շինութեան թոյլտուութիւն:

Այսինքն, ցեղասպանութեան այս յուշարձանը, որի համար ծախսուել է 4 տրիլիոն լիրա ժողովրդական դրամ, հակադիր լինելով Թուրքիայի Հանրապետութեան օրէքներին, կառուցուել է մազսանենգաբար: Տուեալ վայրն էլ քանի հասարակութեանը չի պատկանել, «պաշտօնական տէրը» անյայտ է եւ չկայ ոչ մի «կալուածագիր»:

Ցեղասպանութեան յուշարձանը իր կնիքն է դրել նաեւ Ատրպէյժանի եւ Հայաստանի միջեւ առկայ «պաշտօնական եւ միջպետական հակամարտութիւնների» «գաղափարական եւ քաղաքական տեսակէտների վրայ» այն աստիճան, որ գուցէ նման դէպքում Ատրպէյժանն էլ կարող էր «սահմանափակ վերապահութիւն ցուցաբերել»:

Յուշարձանի վրայ տեղ են գտել Հայաստանի կառավարութեան ղեկավարների վառած քաղաքականութիւնից առ աւելի շատ «հայ ժողովրդին ստորացնող», ինչպէս նաեւ, ցեղապաշտ եւ ազգայնամոլական «թրքութիւնը» խորհրդանշող արտայայտութիւններ, հաղորդումներ եւ լուսնագներ: Մի խօսքով, կարծում եմ, որ Ատրպէյժանն էլ թոյլ չէր տայ նման «սաղրիչ» յուշարձանի կանգնեցումը:

Օսլոթագրութիւններ

1. «Ակօս» շաբաթաթերթ, Օգոստոս 10, 1998, հեղինակն է Սալիհ Հրօյլ:
2. Նկատի ունի Թուրք-քրտական բախումները:
3. Պաթմանը գտնուում է Տիարպէքիրից ոչ շատ հեռու՝ արեւելեան մասում:
4. «Ակօս» շաբաթաթերթ, Սեպտեմբեր 24, 1999, հեղինակն է Արիս Նալճըն:

5. Գտնուում է Կ. Պոլսում: Ներկայումս Վոսիորի թաղամասերից մէկն է:

6. Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի խօսքերն են:

7. Արաբերէն Ամիր՝ իշխան բառից: Պատուանուն, որը տրուում էր Օսմանեան կայսրութեան մէջ հայազգի մեծահարուստ եւ պաշտօնատար անձնաւորութիւններին:

8. «Ակօս» շաբաթաթերթ, Դեկտեմբեր 15, 2000: Հեղինակն է Օքթայ Էքինճին:

Թուրքիայում Իգդիրի յուշարձանի կառուցման նախաձեռնութիւնը սկսուեց 1997 թ. Սեպտեմբերին: Այն, իբրեւ թէ, խորհրդանշելու էր «Հայերի կողմից Թուրքերի նկատմամբ գործադրուած վայրագութիւնները»:

Ճշմարտութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող այս յուշարձանի բացումը կատարուեց 1999 թ. վերջին, Թուրք բարձրաստիճան պետական գործիչների ներկայութեամբ: Իր խորքում, այս եւ այլ քաղաքներում նոյն նպատակով կառուցուած յուշարձանները, նոյնպէս մաս են կազմում Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանութեան ուրացման քաղաքականութեան: Բացի այդ, ուղղակի ձգտում են անմեղանալու միտումով զոհին հազցնել յանցագործի պատմուճանը:



ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՕՏԱՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՎԿԱՅՈՒՄ Է ԳԵՐՍԱՆԱՑԻ ՍՊԱՅ ԱՐՄԻՆ ՎԵԳՆԵՐԸ

Գերմանացի գրող եւ հրապարակախօս Արմին Թէոֆիլ Վեզները (1886-1978) 1915-1916 թթ. եղել է Միջագետքում՝ որպէս գերմանական բանակի սանիտարական ծառայութեան սպայ: Միաժամանակ նա գերմանական մի քանի թերթերի ռազմական թղթակիցն էր: Արմին Վեզները ականատես է եղել հայութեան սպանդին: Այդ մասին նամակներ է գրել եւ գաղտնի լուսանկարել թուրքական բարբարոսութիւնները: Գոթախտաբար այդ բազում լուսանկարներից շատերը կորան այն տարիներին, երբ ինքը հալածանքների ենթարկուեց Գերմանիայում հակահիթլերեան ելոյթների համար: Այնուհանդերձ նա տեւապէս պայքարեց յանուն արդարութեան, ապաստան գտնելով Անգլիայում:

Արմին Վեզները առաջին անգամ այցելեց Հայաստան 1927 թ.: Այնուհետեւ խոր ծերութեան ընթացքում 1968 թ. եղաւ Հայաստանում, Միծեռնակաբերդի Մեծ Եղեւնի գոհերին նուիրուած յուշակոթողի առջեւ ծնկաչոք յարգեց միլիոնաւոր գոհերի յիշատակը:

Ստորեւ բերուած նամակները գերմաներէնից թարգմանել է Ալբերդ Մուշեղեանը, Արմին Վեզների «Ճանապարհ առանց տունդարձի» գրքից, որը լոյս է տեսել 1919 թ. Պերլինում:

ԱՊՈՒ ՅԵՐԵՐԱ

11 Յոկտեմբեր 1916 թ.

Մի՞ թէ վերջին դիակը...: Երբ մտանք ամայի իջեւանատունը, որը լի էր աղտեղութեամբ եւ քստմնելի ժահահոտով, նա ընկած էր բաց դրան առջեւ՝ տասներկու տարեկան մի հայ տղայի սովալլուկ կերպարանք՝ ծղոտագոյն մագերով, մարմինը մինչեւ ոսկրերը ծուարուած, մեռքերն ու ոտքերը՝ ասես ձողեր: Միայն ձախ ձեռքը դեռ պատած էր ցնցոտիով: Մօտենալով գետափին, նկատում եմ բազմաթիւ դիափոսեր, հին խարոյկների անհամար հետքեր: Մի՞ թէ այս է այն անաւոր ու սոսկալի բռնագաղթի վերջը:

Աչքիս առաջ վերստին պատկերանում է տեղահանուած ժողովրդի այն թափորը, որը տառապանքով լի ճամբարներում անցեալ տարի թափառում էի զարհուրած հոգով: Շուտով հանդիպում ենք առաջին գաղթականներին: Բոլոր ճանապարհների եզրերը ծածկուած են նրանց ոսկրոտիքով, որ սպիտակին են տալիս բարկ արեւի տակ: Առաջին ճամբարը մեզ պատահեց Մաղենում: Մանուկներն ու կանայք շրջապատում են մեր կառքը, զլուխ կոտրում մի պատառ հացի կամ սեխի կրծած կեղեւի համար: Տիբինէում նրանք մի փոքրիկ շուկայ են բացել հացթուխներ, մսագործներ, մաշակարներ նստոտել են բարկ արեւից

պաշտպանող զգգզուած փալասի ստուերում՝ լերկ, քարքարոտ գետնին եւ առաջարկում են իրենց ապրանքները: Մասվաճառի մօտ աչքովս ընկաւ մի թուրք սպայ, որ խորոված միս էր դնում եւ ոչ առանց գարմանքի մտածեցի՝ նրանք քեզ մահուան դուռը հասցրին, խսկ դու մի մետաղադրամի համար քո մարդասպանին անապատում դեռ միս ես հրամցնում:

Ռաքքայի մօտերքում բոլորովին բարձիթողի, աղտեղութեան մէջ կորած մի ճամբարում հանդիպեցի տասներեքամեայ մի տղայի: Նա կորցրել էր մօրն ու եղբօրը, միայն հայրն էր կենդանի մնացել: Մանուէլ էր անունը: Արեւից պաշտպանուելու համար գլխին մի սպիտակ լաթ փաթաթած, նա կովի պէս փչելով, ուրախ-ուրախ վազվզում էր սովատանջ, հիւանդ ու մահամերձ մարդկանց կոյտերի արանքում, որոնք անշարժ պառկած էին կամ խելագարութեան հասած քջջում էին...: Նրա բարեձեւ, դեռեւս ամուր կազմուածքը, նրա անմեղ, վճիտ հայեացքը գրաւեց ինձ: Ուզեցի նրան մեր կառքը վերցնել, որ հետս տանեմ Գերմանիա: Փայլիլուն սեւ աչքերն ուղիղ յառել էր վրաս: (Մայր իմ,- մի պահ անցաւ մտքովս,- ուզում եմ քեզ մի նոր գաւակ պարգեւել): Խնդրեցի, որ ինձ հօր մօտ տանի, որն ալեքսանդրեացի մի առեւտրական էր եւ կարգուած էր ճամբարի պահակ, որովհետեւ գրեկարդալ գիտէր: Թէեւ նրա դէմքը փայլեց ուրախութիւնից, բայց նա այնքան ուժասպառ ու անզգայացած էր եւ այնքան մեծ էր նրա երկիւղը զափթիաների հանդէպ եւ վախը սեփական անձի համար, որ չկարողացաւ մի հնար գտնել:

Այն ժամանակ ինքս գնացի արաբ վերակացուի մօտ: Երկու ժամ նստել էի նրա խսիրին եւ առաջարկում էի մօտս եղած ամբողջ դրամը, բայց չցանկացաւ տղային ազատ արձակել: Ես խոստացայ Հալէպում,



Արմին Վեգներ (1886-1978)

վերաբնակեցումների կառավարիչ Հակկի պէյի առաջ միջնորդել նրա համար: Նորից-նոր սեղմեցի նրանց ձեռքերը, ասելով՝ «Ես Գերմանիայում կը հոգամ ձեր մասին»: Մանուէլն ինձ ուղեկցեց մինչեւ ճամբարի ելքը: Ասաց, թէ կը փորձի եկող գիշեր փախչել ու հասնել մեր գումակին: Բայց ես վստահ չէի, թէ նրան կը յաջողուի հրազենների կրակի տակ խոյս տալ զափթիաներից:

Երբ իրիկնանում է, նստում եմ քահանայ տէր Արսյան Տաճատի վրանի բաց դրանը եւ նրանք ինձ պատմում են իրենց կրած տառապանքներից, քաղաքի 800 ընտանիքների մասին, որոնց հետ ճանապարհ ընկան, այն բազմահազար մարդկանց մասին, որ նա թողել էր անապատում, դրանց թւում՝ 23 քահանայ եւ մի եպիսկոպոս: Նրանց հայեացքները ճշում էին. «Դու ինքզ դերմանացի ես,- ասում էին,- եւ թուրքերին գաշնակից... ուրեմն ճիշդ է, որ դուք էլ այդ էիք ուզում»: Ես խոնարհում եմ աչքերս: Ի՞նչ կարող եմ պատասխանել նրանց առարկելու համար: Քահանան փարաջայի գրպանից հանում է հնամաշ լաթի մէջ փաթաթած Քրիստոսի խաչը եւ երբ երկիւղածութեամբ ծածկում է այն համբոյրներով, ես յուզմունքով համակուած նոյնպէս չեմ կարողանում ինձ գոպել եւ չհպել շուրթերիս այդ խաչը, որը վկայ է եղել մարդկային այսչափ վշտի ու տառապանքի:

Նայում եմ իրիկնային ծխացող վրաններին եւ պայծառ լուսնին, որ բարձրանում է մթնշաղի մէջ կորած հարթավայրի վրայ: Այն ամէնն այնքան տրամադրող է, որ մի պահ փորձում եմ աչքիս առջեւ խաղաղ կիանքի պատրանք ստեղծել՝ կանայք գիշերազգեստով եւ կուրծքը բաց կապայով երեկոյեան կարճատեւ զրոսանք են անում, ականջիս հասնում է խաղացող մանկանց ճիչն ու աղմուկը: Բայց յանկարծ լսում եմ նրանց հարցական, ահաբեկուած ձայնը, թէ Մփրատի առափնեայ քաղաքներում հանդիպե՞լ եմ արդեօք հայերի: «...Մենք մեռնելու ենք, մենք այդ գիտենք»: Քահանան ձեռքը տանում է դէպի իր պատառոտուած փարաջան ու ասում.

«Une fois j'étais un prêtre, maintenant je suis un mouton qui va mourir». (Կար ժամանակ, որ ես հովիւ էի, այժմ մի ոչխար եմ, որին մահ է սպասում):

Մթութեան մէջ իջնում էի դէպի գետը, ձորում յայտնաբերում եմ իրար վրայ դարսած մարդկային դիակների մի բլուր՝ սպիտակ գանկեր, որ դեռ ծածկուած են մազով, մէկի կոնքը, մի մանկան կրծոսկրը՝ նրբօրէն ճկուած, ինչպէս աղեղ: Մի ակնթարթ ինձ տիրում է բուրբ յուսահատութիւն, որ աչքերիցս արտասուք է քամում, թւում է, թէ ցնդում են բոլոր յոյսերը, սիրոյ բոլոր սաղմերը, որ երբեւէ ինձ կապել են կեանքին: Բայց անչափ հեքիաթային հոսում է գետը դէպի հեռաւոր մենութիւն, որի մէջ մերթ ընդ մերթ դղրդալով փուլ են տալիս ողորուած ապարները եւ որի ափով լքուած քայլում եմ ես՝ կարծես վերջին մարդը լինեմ:



Կրօնականները Հաւաքում են հայերի ոսկորները Տէր Զօրում
Լուսանկարը՝ Արմին Վեգների



Հայ Որբերը անապատի ճանապարհին
Լուսանկարը՝ Արմին Վեգների

Երբ միջնաբերդի սեւ գլուխը ցցւում է գառիթափ բլուրների հետեւից, ձիերն սկսում են աւելի արագ շարժուել: Հիւանդները մպլտով խոնարհւում են կառքերից, որոնց փայտէ տապանները ճոնչալով գլորւում են քարքարոտ ճամբաներով, ինչպէս հողակոծ նաւեր, որ դիմացել են վերջին փոթորիկին: Մենք հասել ենք երկաթգծին, որ մեզ վերստին կապում է Ստամպուլի հետ:

Առաջին հերթին գնում եմ զթուլթեան քոյրերի մօտ: Նրանք հայ գաղթականների համար հիմնել են երկու ապաստարան՝ լեփ-լիցուն որր մանուկներով, որ թափուած էին փողոցներում անօթեան: Մեծ մասը Վանից ու էրզրումից էին եւ աւելի քան 6 ամիս ճանապարհ էին կտրել: Առաջին շաբաթներին նրանց խմբերը խուռներամ, խիտ բուսած մերկ մացառների նման այնպէս էին բռնել գաւիթը, որ քիչ էր մնում իրար խեղդեն: Ապաստարանը մաքրելու ժամանակ ջրհորում գտել էին զիակը մի փոքրիկ մանկան, որ մարդկանց հրմշտոցի միջոցին անաղմուկ յայտնուել էր այնտեղ: Նրանց մէջ գաղտնի ապաստան են գտել նաեւ կանայք ու տղամարդիկ: Ես սկսեցի հարցուփորձ անել նրանց ճակատագրի մասին, թարգմանում էր քոյր Պեատրիքսը: Տկարութիւնից ու վախից նրանք սկզբում միայն դժկամօրէն են խօսում նոր տառապանքների մասին, մինչեւ որ թշուառութիւնը ստիպում է նրանց փղձկալ, ու արցունքները դուրս են յորդում: Վերջին օրերս բազմաթիւ լուսանկարներ եմ արել: Ինձ պատմում են, թէ ձեմալ փաշան՝ Սիրիայի դահիճը, մահուան սպառնալիքով արգիլել է գաղթականների ճամբարներում լուսանկարելը: Սոսկումի եւ մեղադրանքի այդ պատկերները ես փաթեթած թաքցրել եմ վարտիքիս մէջ: Մեքենէի եւ Հալէպի ճամբարներում հաւաքեցի բազմաթիւ աղերսագրեր, որ պահել եմ ուսապարկիս մէջ, որպէսզի հասցնեմ Կոստանդնուպոլսի հայերին, քանի որ փոստով անհնար էր դրանք առաքել: Ես վայրկեան անգամ չեմ կասկածում, որ սրանով խիստ դաւաճանական քայլ եմ կատարում, բայց եւ այնպէս այդ թշուառներին գէթ փոքր-ինչ օգնած լինելուս գիտակցութիւնը համակում է ինձ աւելի մեծ երջանկութեան զգացումով, քան որեւէ այլ գործ:

ԳՈՆԻԱ, 28 Յոկտեմբեր, Բաղնիքում

...Ձերմակ սաւաններով փաթաթուած պառկել եմ բաղնիքի օթոցին, միայն խուլ կերպով ականջիս է հասնում քաղաքի աղմուկը, առաստաղից ընկնում է երկնագոյն շողքը: Մաշկս դեռ այրում է եռման օճառաջրից եւ հայելու մէջ զարմացած դիտում եմ արեւահար դէմքս, երկայն մօրուքս, որ բուսել էր անապատում: Բայց ստեղծ-ստեղծ

խորատուգուժում եմ երազների մէջ. այնժամ, վեթիարու ահաւոր, աչքիս առաջ պատկերանում է մի գիրք, որ հաւատացած եմ ամենասոսկալին է լինելու, որպիսին երբեւիցէ գրուել է մարդկային թշուառութեան մասին:

Նախքան Հալէպից մեկնելս գնացի ոստիկանատուն, որ վերաբնակեցումների մեծաւորին խնդիր մատուցեմ Մանուէլի համար: Չնայած նա նստած էր վերելում՝ իր պաշտօնասենեակում (ես նրա գլուխը նկատեցի ապակիների միջից), նա սպասաւորի միջոցով կարգադրեց ինձ յայտնել, թէ ինքը բացակայում է: Բոլորի դէմքերը, ովքեր ելնում էին այդ դռներից, համակուած էին, վախի զգացումով: Ես ներկայացայ նրա տեղակալին: Բոլորը շատ քաղաքավարի էին եւ, ինչպէս ընդունւած էր, մի գաւաթ սուրճ հրամցրին ինձ: Եւ հակառակ, որ նրա աչքերի անկիւններում պարզորոշ դժագրուած էր վախ եւ կեղծիք, նա համարձակութիւն ունեցաւ պնդել, թէ իրենք ոչ մի առնչութիւն չունեն վերաբնակեցման հետ: Այդպէս էլ առանց խնդրիս մասին մի բառ խսկ յայտնելու, նորից իջայ սանդուխքով եւ դուրս ելայ յարտեղից ոստիկանների մօտով, որոնք քծնող դէմքերով կանգնած էին անկիւններում:

Կրկին բաղնիսպանը թարմ սաւան է փռում վրաս: Մի ախորժելի թմրութիւն պարուրում է բոլոր անդամներս: Բայց արդէն կիսաքուն՝ նորից աչքիս առաջ են գալիս հայ տղայի մերկ, սեւակեզ ոտքերը, որ բազում մղոններ ճանապարհ են կտրել: Նրա սեւորակ աչքերը հարցական սեւեռում են վրաս...: Մանուէլը պիտի մեռնի անապատում: Ես նրան էլ երբեք չտեսայ:

«ՆԱՄԱԿ ԻՄ ՎԱՂԵՍԻ ԹՈՒՐԵ ԾԱՆՕԹԻՍ» ԳՐՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

Բոհտան Կեմպարսկի

Ստորեւ բերուած այս նամակը գրել է լեհ գրագէտ Բոհտան Կեմպարսկին:

Այն լոյս է տեսել լեհական «Kierunki» շաբաթաթերթում Նոյեմբեր 26, 1961 թ. 47-րդ համարում:

Հայերէն թարգմանութիւնը առաջին անգամ հրատարակուեց հայոց Մեծ Եղեռնի 50-ամեակի օրերին, Պէյրութում հրատարակուող «Նայիրի» շաբաթաթերթի մէջ, նրա անխոնջ խմբագիր, տաղանդաշատ գրող եւ ներհուն մտաւորական Անդրանիկ Ծառուկեանի նախաձեռնութեամբ եւ իւրաքանչեւ ներածականով: Կեմպարսկու նամակը վերստին հրատարակուել է «Նայիրի»-ում, 10 տարի անց, Մայիս 1975 թուականին (թիւ 46-50):

Այս երկրորդ հրատարակութեան կապակցութեամբ Անդրանիկ Ծառուկեանի հաղորդումը սկսւում է այսպէս.

«Մեծ Եղեռնի 50-ամեակը երեք տարիով կանխող այս ցնցիչ «նամակը», հայերէն թարգմանութեամբ առաջին անգամ հրատարակուած «Նայիրի»-ի մէջ, իր այժմէութիւնը կը պահէ նաեւ 60-ամեակին եւ ի գորու է յառաջիկայ բոլոր ամեակներուն: Որքան այ տարօրինակ թուի, պատմականօրէն անհերքելի փաստ է այլեւս, թէ յիշամեակին ահագանողը առաջին անգամ լսուեցաւ օտար երկրէ մը եւ օտարի մը գրչով» (էջ 34):

Այսօր գտնուում ենք Մեծ Եղեռնի 90-ամեակի նախաշեմին: Կեմպարսկու նամակի հրատարակութիւնից անցել է 40 տարի եւ ինչպէս նկատեցինք Անդրանիկ Ծառուկեանի խօսքերով այն «ի գորու է յառաջիկայ բոլոր ամեակներին»:

Այնպէս որ մենք սիրալոյսով կատարում ենք հանգուցեալ Անդրանիկ Ծառուկեանի խորիմաստ այս պատգամը:

Իրօք որ, Կեմպարսկու նամակի բովանդակութիւնը այսօր էլ խորհրդանշական է, ունի մեծ իմաստ եւ խորը հնչեղութիւն:

Այնուամենայնիւ հարկ է նշել, որ անցած տարիների ընթացքում Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման ասպարէզում սեղի են ունեցել կարեւոր իրադարձութիւններ եւ արձանագրուել նոր յաջողութիւններ: Աշխարհի մի շարք երկրների խորհրդարաններ ճանաչել են Հայոց Ցեղասպանութիւնը եւ նոյնիսկ օրէնքի ուժ տուել դատապարտող բանաձեւերին:

Մասամբ փոխուել է նաեւ թուրք հասարակութեան կեցուածքը այս խնդրում: Յատկապէս վերջին 10 տարիների ընթացքում առանձին թուրք մտաւորականներ համարձակօրէն հանդէս են գալիս ճշմարտութիւնը բացայայտելու եւ հայերի ցեղասպանութիւնը դատապարտելու գրութիւններով եւ ելոյթներով: Այդ թւում Թաներ Աքչամը, Ալի Հրթիմը, Բաքըլ Չարաքօլուն, Հայիլ Բերքթայը, Ահմետ Օնալը, Սելճուկ Թեզդիւլը, Ֆինքերթ Ատամիրը, Քեմալ Շալընը եւ ուրիշներ:

Այս տեսակէտից շատ ցցուն է Գերմանիայի Ֆրանքֆուրտ քաղաքում գործող «Ընդդէմ ցեղասպանութեան կազմակերպութեան» նախագահ՝ Ալի Հրթիմի հետեւեալ յայտարարութիւնը. «Ափսոս, որ թուրք լինելով հանդերձ շատ ուշ հասկացայ իրականութիւնը: «Իթիհատ վէ թիրաքքի»-ից մինչեւ այսօր, թուրքական բոլոր կառավարութիւնները խեղաթիւրեցին պատմական ճշմարտութիւնը, սուտ խօսեցին: Թուրքիայի հանրապետութեան ղեկավարները երբեք չցանկացան եւ հիմա էլ չեն ցանկանում, որպէսզի իրենց հայրենակիցները իմանան ճշմարտութիւնը»:

Մի խօսքով աստիճանաբար իրականանում են Բոհտան Կեմպարսկու նախատեսումները Մեծ Եղեռնի ճանաչման եւ դատապարտման խնդրում:

Ստորեւ տրւում է Բ. Կեմպարսկու նամակը ամբողջութեամբ:

*
* *

Նամակը հաճելի անակնկալ մը եղաւ ինծի համար: Մենք արդէն հրաժարած էինք ձեր երկրին հետ ունեցած մեր թղթակցութիւններէն, քանի որ հայրենակիցները մինչեւ հիմա չէին պատասխաներ Լեհաստանէն ստացուած նամակներուն: Թէեւ կրնայ պատահիլ, որ մեր նամակները երբեմն հասած չըլլան ձեզի: Ներկայիս, թերեւս աստիճանական բարելաւում մը նկատուի եւ հայրենիքդ դադրի ըլլալէ ասիական այն երկու-երեք երկիրներէն մէկը, որոնք առհասարակ գէշ աչքով կը նային Լեհաստանին:

Վերջին նամակովդ գոհնակութիւն կը յայտնես, որ 1960 թուականը այնքան զաղթավայրերու ազատագրման տարի եղաւ մէկ անգամէն, թէեւ քու երկիրդ երբեք զաղթավայր չէ եղած, բառին ճշգրիտ իմաստով: Իսկ սեւամորթները քեզ այնքան ալ չեն հետաքրքրեր: Նամակիդ վերջաւորութեան, մասնաւոր ուրախութիւն կը յայտնես, որ Լեհաստանը վերստին տիրացաւ Արեւմուտքի իր հին հողերուն, բայց կը մոռնաս լսել, որ լեհերն ալ քեզ քիչ կը հետաքրքրեն:

Անգամ մը, շատ տարիներ առաջ, դուն այցելեցիր մեր երկիրը: Այն ատեն երկուքս ալ շատ երիտասարդ էինք եւ խիստ հետաքրքրուող: Քեզ կը հետաքրքրէր Լեհաստանը, զիս՝ դեռ մեզի համար տարաշխարհիկ քու ժողովուրդդ, որուն բախտը, նախախնամութեան կամքով, շատ տարիներ առաջ այնպէս խաչաձեւուեցաւ մեր բախտին հետ եւ ատիկա՝ ի վնաս երկուքիս ալ: Սովորաբար, ճիշդ այդպէս կ'ըլլայ, երբ երկու պետութիւններ միաժամանակ որպէս պատուար կը համարուին երկու իրարամերժ կրօններու միջեւ եւ 240 տարուան փոխադարձ ջարդերէ յետոյ, կը հաւասարակշռուին գերոյի դէմ գերօ կէտերով, ի մեծ ուրախութիւն մեր դրացիներուն, որոնց համար մեր ըրածը ուրիշ բան չէր, եթէ ոչ կրակէն շագանակ հանել մերկ ձեռքերով:

Յամենայնդէպս, երկուքս ալ բաւականին պատմական տուեալներ ունէինք, մէկս միւսիս երկրով հետաքրքրուելու, փոխադարձաբար: Իմ մասին՝ յաւելեալ տեսանկիւնէ մըն ալ ես կը հետաքրքրուէի քու հայրենիքովդ: Պարզապէս անյաղթահարելի անհրաժեշտութիւն մը կը զգայի նայելու աչքերուն մարդու մը՝ պատասխանատուութիւն պէտք է զգար մարդկային պատմութեան մէջ կատարուած ամենասարսափելի ոճրագործութեան համար: Այն ատենի աղքատիկ լեզուով (եւ այդ բանը տեղի ունեցաւ Համաշխարհային Առաջին Պատերազմի օրերուն), բառը՝ ոճրագործութիւն էր. այսօր, աւա՛ղ, արդէն գիտենք, թէ ինչ էր պատահածին անունը - ցեղասպանութիւն:

Մենք իրարու ծանօթացանք 1936 թուականին: Անմիջապէս սկսաւ մեզ ամէնէն աւելի հետաքրքրող խօսակցութիւնը: Ես երկար կ'ուսումնասիրէի քեզ եւ պէտք է խոստովանիմ, քեզի հետ առաջին շփումը լաւագոյն տպաւորութիւնը գործեց վրաս: Շատ գեղեցիկ երիտասարդ մըն էիր դուն, արժանաւոր ներկայացուցիչը ժողովուրդիդ, որ կը հանդիսանայ Մերձաւոր Արեւելքի ամենաազդեցիկ աստղը - խլամական ձևովի ժողովուրդ: Պէտք է աւելցնել նաեւ այն, որ դուն սրամիտ էիր բոլոր այն արժանիքներով, որոնց շնորհիւ կը նուաճուին կանացի սիրտերը ու ձեռք կը բերուի այրերու մնայուն բարեկամութիւնը:

Մինչեւ այսօր ալ կը յիշեմ, թէ ինչպէս գունատեցար, երբ առաջին անգամ հարցուցի քեզի այն «բանին» մասին: Մատիտը ձեռքիդ՝ սկսաւ ճշդիւ հարցումս, ջղաձգօրէն գծագրելով թուղթին վրայ: Անվերջ քառակուսիներ կը գծէիր ու չէիր համարձակիր աչքերուս մէջ նայիլ: Յետոյ սկսար ծամծմել, թէ այդ ամէնը կատարուած ատեն, դուն դեռ շատ փոքր էիր: Պարզ էր, որ կցկտուր բաներ մը հասած էին ականջիդ, բայց երբեք չէիր երեւակայեր, թէ այդ ամէնը պատահած են ճիշդ այնպէս, թէ այդ ըոպէին ի վիճակի չէիր պատասխանելու ինծի, որովհետեւ պէտք էր որ այդ ամէնուն մասին խորհէիր եւ հասկնայիր:

Անկէ վերջ այլեւս չհանդիպեցայ քեզի: Ամէնէն հաւանականը այն է, որ միշտ խուսափեցար ինձմէ, մինչեւ Լեհաստանէն մեկնած օրդ:

Այդ խօսակցութեանէն ի վեր անցած են ամբողջ քսանհինգ տարիներ: Կ'ընդունիս անշուշտ, որ ատիկա այնպիսի ժամանակամիջոց մըն է, որ լիուլի բաւարար է ամբողջ ինդրին մասին մտածելու եւ անկէ՝ սոցամարդու պէս եզրակացութեան մը յանգելու: Մանաւանդ որ, քու ժողովուրդդ չմասնակցեցաւ վերջին պատերազմին ու չենթարկուեցաւ ընկերային այնպիսի յեղաշրջումներու՝ ինչպէս Լեհաստանը: Պարագայ մը, որ չափով մը կ'արդարացնէ իմ սեփական ծուլութիւնս:

Յամենայնդէպս, նամակիդ մէջ դոյզն յիշատակութիւն իսկ չկայ մեր այն նշանաւոր խօսակցութեան մասին, կարծես թէ բնաւ խօսած չըլլանք այն ինդրին շուրջ: Տողերուդ ընդմէջէն հասկցայ՝ թէ հիանալիօրէն կը յիշես մեր խօսակցութեան նիւթը, երբ գիտակցաբար իմ առջեւ ոճրագործութիւն կը կոչես ՌուսոյՖ Այլմանի անօրինակ արարքները: Զէ՞ որ դուն լաւ գիտես, որ Այլմանը եղաւ ձեր ուշիմ աշակերտը միայն եւ այն ամէնը որ ան կ'ընէր 1942-1944 թուականներուն հրեաներուն դէմ, կրկնութիւնն էր, աւելի մեծ չափերով, ճիշդ այն բանին՝ որ քու հայրենակիցներդ գործադրեցին հայերուն դէմ, դեռ 1915 թուականին: Իսկ ատիկա եղաւ - ինդրեմ չմոռնաս - մարդկային պատմութեան մէջ առաջին անգամ ծրագրուած, աշխատանքի դիտական

հիմերով գործադրուած՝ կազմակերպեալ ոչնչացումը ամբողջ ժողովուրդի մը:

Մինչեւ յետին մանրամասնութիւնները մտածուած այդ ջարդը ոչ մէկ նմանութիւն ունէր 1895-1896 թուականներուն ոմն Ապտիւլ Համիտի պատահական գործողութիւններուն հետ, երբ հայերուն դէմ կը դրդուէին քրտական վայրագ հորդանքերը եւ թուրք ժողովուրդի տականքը՝ հասնելով «ինքնին համեստ» արդիւնքներու - հագիւ կէս միլիոն մը ջարդուածներ:

1915-ի կոտորածին, որ շարունակուեցաւ յաջորդ հինգ տարիներու ընթացքին, մինչեւ հայերու դիմադրական բոլոր կէտերուն ամբողջական բնաջնջումը, կէտեր՝ որոնք կը գտնուէին Կիլիկիա, Վանայ լիճի շրջակայքը, ռուսական Ատրպէյճան ու Կարսի շրջան, - զոհ գացին շուրջ երեք միլիոն հայեր, թիւ մը՝ որ կը կազմէր այդ ժողովուրդին հարիւրին 60 տոկոսը: Համայնական այդ ջարդէն խուսափեցան միայն անոնք, որ կը գտնուէին ձեր իշխանութեան սահմաններէն դուրս: Հիւսիս, պահ մը ետ երթալով եւ հաշուի առնելով հայերու քանակական վիճակը 1911-ին, ինչպէս եւ նկատի առնելով անոնց բնական աճումի տոկոսը վերջին 50 տարիներու ընթացքին՝ կրնանք ըսել, թէ ներկայ 1961 թուականին անոնք պէտք է հասած ըլլային տասը միլիոնի, իսկ իրականութեան մէջ հազիւ չորս միլիոն են:

Ուրեմն, սպաննելով մէկ մարդ, սպաննած կ'ըլլան անոր դու չծնած սերունդները հազարաւոր տարիներու հեռանկարով: Եւ, ամէն բանէ առաջ, ճիշդ այդ նպատակը կը հետապնդէին կոտորածին կազմակերպիչները: 1915-1920 թուականներու երեք միլիոն սպաննուածները՝ քառասուն տարուան մէջ կը դառնային վեց միլիոն չծնածներ: Մօտ երկու միլիոն հայ զոհուեցաւ այդ արշաւանքի առաջին իսկ տարին, 1915, երբ այն օրերու ձեր ներքին նախարար Թալեաթ պէյը պաշտօնապէս յայտարարեց թէ - «Չկայ այլեւս հայկական հարց, քանի որ չկայ նաեւ հայ»: Թալեաթը Հիւսիսի հանճարեղ նախորդն էր: Այլմասնի նախորդը կամ հայերու անմիջական ջարդարարը եղող էնվեր փաշան՝ իր կարգին սպարապետ էր, որ, ի միջի այլոց, իր կեանքը պարտական է հայերուն, (ռուսական պաշարումէն զինք ազատեցին ձեր բանակի հայկական գունդերը, ի սեփական դժբախտութիւն): Թալեաթ պէյը եւ էնվեր փաշան, երկուքն ալ իրենց արժանի պատիժը ստացան, թէեւ չափազանց մեղմ առաջինը սպաննուեցաւ Պերլինի մէջ հայ ուսանողի մը գնդակով (1921), միւսը՝ ռուսական զինուորի փամփուշտով (1922):

Խայտառակուելու արժանի երրորդ ջարդարարը, աւա՛ղ, ձեր մտաւորականութիւնն է, որ ինքնակամ օժանդակեց ոճրագործներու կազմակերպութեան ազգայնամոլ հալածանքին, այնպիսի ատեն մը, երբ

պարզ ժողովուրդը, իսլամ հոգեւորականութիւնը եւ ազնուական խաւը կամ բնաւ չէին մասնակցեր ջարդին, կամ նոյնիսկ փորձեր կ'ընէին հայերը փրկելու:

Չեմ գիտեր, համաշխարհային գրականութեան մէջ կը գտնուի՞ արդեօք աւելի ցնցող տեսարան, քան Ֆրանց Վերֆելի պատմածը քանի մը թուրք ծերունիներու մասին, որոնք գաղտագողի կը բարձրանային վեր, Մուսա Լեբան վրայ պաշարուած հայերու մօտ, քիչ մը ուտելիք հասցնելու համար անոնց: Այդ միակ փաստին համար կարելի է սիրել ձեր ժողովուրդը, որուն անպատուութիւն բերաւ ձեր իսկ մտաւորականութիւնը, հայկական կոտորածի ողբերգական տարիներուն:

Կը ցաւիմ, որ ձեռքի տակ չունիմ ստոյգ թիւեր, որոնք կը հաւաքէի ատեն մը քեզի համար: Այդ հարցին վերաբերեալ բոլոր նօթերս այրեցան Վարչաւայի ապստամբութեան կրակներուն մէջ, ապստամբութիւն, որ հերթական մէկ օղակն էր այն խելացնոր կոտորածներուն որոնց զոհ դարձան հայերը, լեհերը, հրեաները, ռուսերը եւ հնդկները՝ իսլամական Հնդկաստանի մասերուն: Ստիպուած եմ միայն չոր ու ցամաք թուարկումը կատարել այն փաստերուն, որոնք մոռցուած են շատերու կողմէ:

1915-ի հայերու կոտորածը, ինչպէս նաեւ հրեաներու մեծամասնութեան կոտորածը Այլմասնի կողմէ, խորքին մէջ կոտորածի բնոյթ չունէին. «ոստիկանական կարգադրութիւններու» հրահանգներ էին ատոնք, որոնց արդիւնքը եղաւ միլիոնաւոր մարդոց անխուսափելի օրէն սոսկալի մահը: Մեզի շատ լաւ ծանօթ վիճակագրութեանց համաձայն, նախ եւ առաջ իշխանութեան կողմէ հրաման կ'արձակուէր, ըստ որում բոլոր հայերը պարտաւոր էին թողուլ իրենց բնակավայրը, ընդհանրապէս երկու ժամուան պայմանաժամի մը ընթացքին, «նոր բնակավայր մը հասնելու համար»: Անոնք արտօնուած էին ձեռքով կրուելիք թեթեւ իրեր միայն վերցնելու հետեւին, իրենց ամբողջ ստացուածքը լքելով թուրք բնակչութեան: Խստիւ արգելուած էր օգտագործել փոխադրական որեւէ միջոց: Ոչ մէկ բացառութիւն կը կազմէին ծերերը, հիւանդները, մանուկները եւ նոյնիսկ յղի կիները: Հետիոտն կարաւաններուն՝ փոքր ասիական ամառնային կիզիչ արեւին տակ՝ կ'ընկերանային հրացաններով եւ մտրակով զինուած ոստիկաններ: Եթէ իսլամ գիւղացիներէն սրտցաւ մէկը փորձուէր ջուր տալ հայերուն, իսկոյն մտրակի հարուածներ կը ստանար, կամ նոյնիսկ կը սպաննուէր տեղն ու տեղը:

Եթէ կալանաւորներէն մէկը իյնար ուժասպառ, (ինչ որ կը պատահէր ամէն ըսպէ, մահուան այդ թափօրին սկիզբէն իսկ), ոստիկանները կը սպաննէին ինկողը կամ կը հարուածէին կօշիկներով: Կարա-

ւաններու հետեւէն քարչ կու գային չեչեններու եւ թափառաչըջիկներու հրոսակախումբեր, որոնք լիտի ծաղրանքներով կը մերկացնէին դիակները, ոստիկաններու լուռ համաձայնութեամբ եւ թոյլտուութեամբ: Կը խլէին, կը փախցնէին երիտասարդ կիներն ու աղջիկները՝ անմիջապէս որ անոնցմէ մէկը իյնար կամ քայլ մը ետ մնար կարաւանէն: Բազմաթիւ բռնաբարումներէ ետք, կը նահատակէին զանոնք մահուան ամէնէն նրբին ձեւերով: Եւ ատիկա, ի միջի այլոց, կը կատարուէր ոստիկաններուն տրուած գաղտնի հրահանգի մը համաձայն, որուն իմաստն էր աքսորեալները մեռցնել ճամբու ընթացքին:

Այդ ահաւոր աքսորի ճանապարհին, երբ քանի մը օրէն կարաւանը նօսրանար, անոնցմէ այրերը կ'անջատէին եւ կը քչէին պատերազմական ճամբաներու շինութեան: Կը կազմէին «աշխատանքի ջոկատներ», որոնցմէ իւրաքանչիւրին բաժինն էր երկու քիլոմեթրնոց հատուածի մը շինութիւնը: Երբ խումբը վերջացնէր իր գործը, «աշխատողները» կը սպաննուէին: Կիները, երեխաները եւ ծերերը կը քչէին աւելի հեռուն, մինչեւ բնաջնջման կայանները, որոնք ճշդուած էին Տէր Զօրի եւ Մեսքէնէի միջեւ, Միջագետքի անապատին մէջ: Վերջել կը մէջբերէ աքսորեալներուն այցելող թուրք սպայի մը խօսքերը. - «Մարդեր չէին ասոնք, այլ ուրուականներ... մարդակերպ կապիկներու ուրուականներ, որոնք կը մեռնին աստիճանաբար, խոտ ուտելով...: Կ'ոռնան անօթութեանէն: Կիները իմ ձիուս աղբին մէջէն չմարսուած գարիի հատիկներ կը փնտռէին...»:

Մահացուներու թիւը օրական տասը հազարը կ'անցնէր: Պատկերը մագաչափ իսկ տարբերութիւն ունի՝ հիթլերեան կեդրոնացումի քեմիքերէն: Թերեւս այն միակ տարբերութեամբ, որ Հիթլերի քեմիքերուն հսկող ոստիկանները իրաւունք ունէին բռնաբարելու ձերբակալուած կիներն ու աղջիկները, քանի դեռ անոնք մարդկային կերպարանք ունէին: Հաւանաբար, այդ կէտին մէջ զերծ եղած ըլլան ցեղապաշտական որեւէ նախապաշարումէ:

Տեղահանութիւնը ընդգրկեց այդ տարաբախտ ժողովուրդին պատկանող բոլոր անհատները, պուլկարական սահմանէն մինչեւ պարսկական սահման: Այն հայը, որուն հանդիպէին աքսորավայրէն, «աշխատանքի ջոկատներէն» կամ կարաւաններէն դուրս՝ կը սպաննէին տեղն ու տեղը: Անոնց ապաստան տուողին զնդակահարում կը սպառնար: Երբ կասկած ստեղծուէր - ձերբակալեալը հա՞յ թէ ոչ - ստուգում կը կատարուէր՝ թէ խնդրոյ առարկան թլփատուած է թէ ոչ: Ճիշդ այնպէս, ինչպէս Հիթլերի գրաւման ժամանակ, այն տարբերութեամբ, որ ձեր երկրին մէջ, Թուրքիա, ներհակաբար Հիթլերին, թլփատուած չեղողներն էին որ կը սպաննուէին:

Հայկական գունդերու զինուորները, որոնք այնքան դիպացունքէն կը կուռէին էնվեր փաշայի կեանքը փրկելու համար, յատկապէս անոր հրամանով ալ բաժնուեցան «բանուորական ջոկատ»ներու, որոնցմէ իւրաքանչիւրը, ինչպէս դիտենք, ճշդուած յանձնարարութիւն մը միայն ունէր կատարելիք, բայց ուժասպառ ըլլալու գնով, որմէ ետք ամբողջ ջոկատը կը մահացուէր հսկիչ վաշտին կողմէ:

Ստանպուլը, այն օրերուն, դեռ եւս հայկական եւ յունական մշակոյթի համաշխարհային կեդրոն մըն էր, ոչ պակաս քան թրքական մշակոյթի որպէս կեդրոն: Ըստ հուլիանի, երեք ժողովուրդներու քաղաք էր Ստանպուլը, բայց հայկական մշակոյթի շէնքը երկու յարկով աւելի բարձր էր միւսներէն: Այնտեղ, ժամանակին, կը ստեղծագործէին Դուրեանը եւ Պէշիկթաշեանը, արեւմտահայ ամենամեծ բանաստեղծները, քրիստոնէական արեւելքի Պայրընն ու Շեյխն: Եւ անոնց ճամբան կը շարունակէր բանաստեղծներու, վիպագիրներու, թատերագիրներու, հոշակաւոր հեղինակներու ամբողջ աստղահոյլ մը: Այդ կաճառէն ով որ ապրեցաւ մինչեւ 1915, իր մահահանցուն կնքեց այդ թուականին:

Այդ տարին, նահատակութեան ճամբուն, բանտերու կամ աքսորավայրերու մէջ զոհուեցան Գրիգոր Զոհրապը, Երուանդ Սրմաքեշ-խանյեանը, Ռուբէն Զարդարեանը, Դանիէլ Վարուժանը ու Սիւսան-թօն եւ տասնեակներով ուրիշ հանրածանօթ գրողներ, արուեստագէտներ, երաժիշտներ, Հանճարեղ երաժշտագէտ եւ ժողովրդական երգերու հաւաքիչ Կոմիտասը՝ հրաշքով ողջ մնաց, բայց առյաւէտ կորսնցուց իր բանականութիւնը: Մեռաւ Փարիզի հոգեբուժական հիւանդանոցին մէջ, քսան տարուան խելագարութենէ վերջ:

Բոլորովին այլ բնոյթ կը կրէր արչաւանքին շարունակութիւնը: Սկսաւ անողորմ կոտորածը բոլոր այն հայերուն, որոնք կերպով մը կրցած էին խուսափիլ աքսորէն: Ամէնէն առաջ՝ հարուածը ուղղուեցաւ անոնց, որոնք ինքնապաշտպանութեամբ կրցած էին տոկալ, դիմադրական հազուադէպ կէտերու մէջ, ուր պաշարուած հայերուն երբեմն սպանութիւն կը հասնէր Փրանսիացիներէն, անգլիացիներէն կամ ուուսթիւն: Այդպէս եղաւ, օրինակ, Կիլիկիա եւ Վանայ լճին մօտերը:

Քերենաքիի յեղափոխութենէն ետք, երբ ուուսական ճակատը քայքայուեցաւ Կովկասի մէջ, կոտորածը հրդեհի պէս տարածուեցաւ նոր երկրամասի վրայ, որ մինչեւ այն ատեն կը գտնուէր նման աքսորներու սահմանէն դուրս, նախ եւ առաջ՝ Ատրպէյճան եւ Ռուսահայաստան: Ձեր գօրքերը առաջ կը շարժէին ի սպառ բնաջնջելու հայկական գիւղերու բնակչութիւնը, իսկ լեռնային գետակներէն անցնելու համար՝ գիւղներով կամուրջներ կը շինէին թնդանօթներու անիւներուն տակ: ԱՏՈՐ ՅԱԶՈՐԴԵՅ ՊԱՔՈՒԻ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԿՈՏՈՐԱՄԸ ԵՒ ԱՆՀԱ-

ԻԱՍՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ՈՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԷՐ 1915-Ի ԱՐՇԱԻՒՆ: ԳԻՏԵՄ ՈՐ ԱՅԴ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԷՋ ՀԱՅՅԵՐՆ ԱԼ ԻՐԵՆՔ ԻՐԵՆՑ ԹՈՅԼ ՏՈՒՒՆ ԴԱԺԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՅԴ ԲԱՆԻՆ ՀԱՄԱՐ ՉԵՄ ԳՈՎԵՐ ՁԻՐԵՆՔ, ԲԱՅՑ ՉԵՄ ԱԼ ԴԱՏԱՊԱՐՏԵՐ,- (ամբողջ յօդուածին մէջ՝ մեր կողմէ ընդգծուած միակ պարբերութիւնն են գլխազիր այս տողերը - Նայիրի):

Երեւանի վերջին գրաւումը ռուսական զօրքին կողմէ (1920-ի աշնան) իրապէս ձեռքէ փրկեց հայկական հողին վերջին մնացորդը, բայց նոյն ատեն, առանց որ գնդակ մը արձակուի, ձեզի տրուեցաւ Ռուսահայաստանի կէսը (Կարսի շրջանը) Արարատեան դաշտին հետ, որ փաստօրէն երբեք ձեզի չէ պատկանած:

Ուրեմն բարի եղէք կլորցնելու տանջամահ եղած հայերուն սարսափելի թիւը - 3,000,000 - որուն մասին գրած եմ վերը: Փակագիծի մէջ ըսեմ, որ այդ վերջին հողային գրաւումները օգուտ մը չբերին ձեզի: Մօտաւորապէս երկու տարի առաջ կ'անցնէի հայ-թրքական սահմանին երկայնքէն եւ այդ ճամբորդութեանս ամբողջ երկու ժամերուն ընթացքին, ոչ մէկ կենդանի էակ տեսայ ձեր կողմը: Խիտ բնակչութեամբ երկիրը դուք վերածեր էք կատարեալ անապատի՝ մեռեալ ու քստմնելի, մոռցուած ու անարգուած գերզմանատան մը պէս: Այդ երկրին իրաւատէր բնակիչները ջարդեցիք արդեօք անո՞ր համար, որ հակառակ աստուածային ու մարդկային օրէնքներուն, այդ վայրերը «Թուրքիա» կոչէք եւ հրկիզէ՞ք:

Ներէ՛, որ ճանճարացուցի քեզ տասնեակ տարիներ առաջ տեղի ունեցած դէպքերու նկարագրութեամբ, մանաւանդ որ այստեղ բերուած փաստերը քեզի ծանօթ պէտք է ըլլան, գոնէ, Ֆրանց Վերֆելի «Մուսա Լերան Քառասուն Օրերը» գիրքէն, կամ 25 տարի առաջ իմ պատմածներէս: Բայց յուսամ կ'ընդունիս, որ 3,000,000 սպաննուածներու եւ 6,000,000 չծնածներու պատկառելի թիւը լիովի բաւարար է, անգամ մը եւս խելու մաս մը քու թանկագին ժամանակէդ:

Բայց ինչո՞ւ կ'ըսեմ այն ամէնը, երբ ըրածս արդարացնելու համար տարեդարձի առիթ մը անգամ չունիմ: Չէ՞ որ սոսկալի ամօթին սարսափելի յիսնամեակը (յոբելեանը) միայն չորս տարի ետքն է որ պիտի գայ, այսինքն 1965 թուականին: Կ'աշխատիմ ուրեմն կարգով պատասխանել այդ հարցումիդ ալ եւ յատկապէս տալիք պատասխանս է որ կը կազմէ այս նամակիս ամէնէն կարեւոր մասը:

Շատ հաւանօրէն գիտես, որ 20-րդ դարը չէ սկսած 1901-ի յունուարեան առաջին գիշերը, այլ քանի մը տարի յետոյ միայն, այսինքն՝ 1914 թուականի ամրան, ինչպէս որ 19-րդ դարը սկսաւ Վաթերլոյի ճակատամարտէն յետոյ միայն, 1815 թուականին: Թուականներու

այսօրինակ տեղափոխութիւնը կը բխի այն պարզ իրողութենէն, որ պատմութեան ընթացքը չի կրնար ճշգրտօրէն գետեղուիլ օրացուցային շրջանակներու մէջ:

Ամէն դար ունի իր հարագատ դիմագիծը: 20-րդ դարը իր նախորդներէն կը տարբերի անով, որ կը հանդիսանայ մեծագոյն ոճիրներու եւ մեծագոյն հատուցումներու դարը: 20-րդ դարու ամէնէն մեծ ոճրագործութիւնները ջարդերն են, այսինքն տուեալ ժողովուրդ մը ամբողջութեամբ տանջամահ անէացնելու փորձերը, որոնք, բարեբախտաբար, մինչեւ հիմա երբեք չյաջողեցան հարիւր առ հարիւր տոկոսով:

Նման ոճրագործութեան մը առաջին փորձը, որ իրագործուեցաւ հարիւրին 60 տոկոսով, գործադրուեցաւ մեր դարուն առաջին կամ տարին բոլորուելէ առաջ, այսինքն 1915-ի ամրան սկիզբը: Ատիկա կը կոչուէր «Հայկական հարցի վերջնական լուծում»: Ըիշդ այդպէս, «Հրէական հարցի վերջնական լուծում» մըն ալ փորձեցին հիթլերական գերմանները եւ աւաղ, յաջողեցան իրագործել մեծ չափով: Լեհական եւ ռուսական (գուցէ նաեւ առհասարակ սլաւական) հարցի «վերջնական լուծումը», անկասկած կը մտնէր հիթլերական ծրագրին մէջ եւ մաս առ մաս կ'իրականացուէր կեղրոնացման կայաններուն եւ բանտերուն խորը, ինչպէս նաեւ հրապարակային գնդակահարութիւններով:

Գիտեմ, որ լեհերէն, Ֆրանսիացիներէն, նոյնիսկ անգլիացիներէն եւ ամերիկացիներէն ոմանք, իրենց կարգին, այդ նոյն օրերուն կը մտածէին, ամենայն լրջութեամբ, «Գերմանական հարցի լուծման» մասին, որ նոյնպէս յանցապարտ մտածում էր, թէ եւ այն շրջանին համար՝ հոգեբանօրէն գոնէ հասկնալի: Նոյն ատեն, Ուքրանիոյ ազգայինները «կը լծուէին լեհական հարցը» Վոլինի եւ ըմբոստացած Վարչաւիոյ մէջ, իսկ խրուաթները՝ Խրուաթիոյ մէջ «սերպիական հարցը»:

Եւ արդեօք, հնդկներու եւ իսլամներու սարսափելի կոտորածները, որոնք բռնկեցան Հնդկաստանի եւ Փաքստանի անկախութեան առաջին իսկ օրերուն, «վերջնական լուծումներու» եւ ցեղասպանութեան միամիտ փորձեր չէին: Չէ՞ որ ամէնէն դժուարը, մարդկային ընկերութեան մէջ, պարտադիր համարուած բարոյական օրէնքներու խախտումն է, որմէ ետք արդէն գործը կը դիւրանայ, մինչեւ որ, վերջապէս, ամէնէն անբարոյական արարքն իսկ թուի բոլորովին բնական:

Առաջինը, որ բռնեց այդ սայթաքուն ճամբան, աւաղ, քու ժողովուրդդ էր՝ պարագայ մը, որ նուազագոյն չափով իսկ չի մեղմեր ո՛չ հիթլերական սոսկալի ոճիրները եւ ոչ ալ այդ ոճիրները գործադրողներուն պատասխանատուութիւնը: Մանաւանդ որ անոնք, հաւանաբար, այնքան ալ բան չէին գիտեր ձեր «հայկական արշաւանքին» շուրջ որովհետեւ հարկադրաբար ձերինին՝ գերմանական էնվերները նախ եւ առաջ

կէս մտաւորականներ էին: Ուղղակի, օղբ արդէն բաւականին թունաւորուած էր փոխադարձ ատելութեամբ, որ կը տարածուէր որպէս ժանտախտ, գարշահոտութիւն - չես գիտեր ուրկէ՛ - գուցէ եւ նոյնինքն անթաղ մնացած հայերու դիակներէն:

Յամենայնդէպս, այն պահուն, երբ առաջին անգամ խօսեցայ հետդ այս մասին, երբեք չէիր կրնար երեւակայել, թէ իմ սեփական հայրենիքս ալ օր մը կը դառնայ ոչ նուազ ահաւոր իրադարձութիւններու ասպարէզ, քան այն ամէնը որոնց մասին կը խօսէինք այն ատեն, ու չէի պատկերացներ, թէ ոճիրներու շղթան տակաւին շուտ չի կտրուիր:

Բայց 20-րդ դարը, պատմութեան մէջ ամէնէն մեծ փոխ հատուցումներու դարն է նոյն ատեն: Դուն ինքը նամակիդ մէջ կ'անդրադառնաս այդ բանին, թէ եւ բառը - փոխ հատուցում - չես գործածած: Մի՞թէ այդ նոյն գաղթավայրերու մեծամասնութեան ազատագրուելուն փաստը, այն ալ առանց փամփուռի մը, քեզի չի ներկայանար որպէս պատմական հրաշք, որուն նմանը անցեալի պատմութեան մէջ բացարձակապէս գոյութիւն չունի:

Հապա մեր արեւմտեան հողերուն մեզի վերադարձուի՞լը, հողեր՝ որոնց վրայ լեհական տարրը հարիւրաւոր տարիներու ընթացքին կ'ոչնչացուէր, թէ եւ առանց ջարդի ենթարկուելու, բայց նոյն արդիւնքով: Մի՞թէ՞ ատիկա ահեղ ազդարարութիւն մը չէ բոլոր անոնց, որոնք կը կարծեն թէ կը բաւէ մարդիկը ոչնչացնել, որպէսզի կարելի ըլլայ առ յաւէտ բռնազրաւել անոնց հողը: Նիւրեմպերկի եւ հարիւրաւոր այլ դատավարութեանց ընթացքին դատապարտուեցաւ ոճրագործներու թէն մէկ փոքրաթիւ մասը, բայց ատոնք փոխհատուցումի նշանաւոր գործողութիւններ եղան:

Ձուգահեռաբար, հետզհետէ աւելի սովորական կը դառնայ հաւաքական մեղքի հասկացողութիւնը, որ երբեք նոյն բանը չէ, ինչ որ է հաւաքական պատասխանատուութիւնը: Մեծ փոխ հատուցումի երեւոյթը ճիշդ այդպէս կ'ընթանայ այն երկիրներուն մէջ, որոնք յետ պատերազմեան աշխարհին ամենակարեւոր դերակատարներն են: Ռուսերը արքային ետ վերադարձուցին քու հայրենակիցներդ եւ անոնց հետեւորդները՝ պալքանները, գարաչայցիները, չեչենները, ինգուչները, Բրիտանական համադաշնակցութիւնը՝ իր ծոցէն դուրս նետեց հարաւափրիկեան միութիւնը, որպէս պատիժ սեւամորթներու դէմ գործադրած հալածանքներուն: Միայն փոքր թիւով երկիրներն են որ մինչեւ հիմա չեն գիտակցած, թէ քսաներորդ դարը բեկում մը կ'ապրի եւ թէ մեծ ոճիրներու շրջանին՝ կը սկսի փոխարինել մեծ փոխ հատուցումներու ժամանակաշրջանը, հատուցումներ, որոնք անկախ քաղաքատնտեսական եւ քաղաքական բնոյթ կրող պատճառներէ, կամովին ըլլալու

որոշ նշաններ ունին: Անկախ ամէն ինչէ, այս փաստերուն մէջ քան մը կայ այն անկեղծ փափաքէն, այն տենչէն, որպէսզի պաշտօնապէս կատարուած անիրաւութիւնները որեւէ կերպով փոխհատուցուին:

Անհաւանական չէ, ի միջի այլոց, նաեւ այն՝ որ քաղաքական պատասխանատու ղեկավարները, որոնք կը գործեն հանրային կարծիքի մղումով, չգիտակցին նոյնիսկ, թէ որքան զօրեղ կը շարժի այդ հանրային կարծիքը, զուտ բարոյական ազդակներու ճնշումին տակ:

Սակայն որոշ ընկերութիւններ դեռ կը շարունակեն խուսափել իրականութենէն, այն համոզումով, որ հանրային կարծիքը չի կրնար վնասել իրենց: Հարաւ փրիկեանները համոզուած են, թէ սեւը յառաջիկային ալ պիտի շարունակէ ծառայել ճերմակին: Փորթուկացիները միամտօրէն կը հաւատան, թէ իրենց գաղութային կայսրութիւնը կանգուն կը մնայ, հակառակ որ ամբողջ հին աշխարհը կը փլի: Եւ դուք ալ մեր կարգին կ'ենթադրէք, թէ քանի որ նահատակուած է երկրի մը բնակիչներուն 60 տոկոսը եւ մնացեալները ցրուած են ի սփիւռս աշխարհի, ուրեմն այդ երկիրը դադրած է ձեզի համար նոյնիսկ գաղթավայր ըլլալէ, եւ կրնաք զայն համարել ձեր սեփական երկրին բաղկացուցիչ մէկ մասը, որպէս ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ՊԱՐԳԵՒ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ: (Այս երեք բառերը ընդգծուած են հեղինակին կողմէ - Նայիրի):

Թոյլ տուէք սակայն հարցնել ինչո՞ւ հայերը նահատակելը պարզ եւ պիտի արժանանայ, երբ լեհերն ու հրեաները նոյն ձեւով նահատակելը պաշտօնապէս ճանչցուեցաւ որպէս մարդկութեան դէմ գործուած ոճիր: Արդեօք այդ դժբախտ հայերը բանով մը վա՞տ են մեզմէ եւ հրեաներէն:

Գիտեմ, որ այս նամակս քեզի չի հասնիր, նոյնիսկ այն պարզ պատճառով, որ դուն չես կարդար լեհական մամուլը: Լաւագոյն պարագային, ձեր տեղեկատուներէն մէկը մկրատով կը կտրէ յօդուածս թերթէն ու տակը կը գրէ - «Թշնամական փրփականտ», թէ եւ ատիկա անմտութիւն է, քանի որ ես եղած եմ եւ կը մնամ ձեր ժողովուրդին անկեղծ բարեկամը եւ ինչ որ ամէնէն կարեւորն է՝ մինչեւ այսօր ալ չեմ կորսնցուցած հաւատքս ձեր մասին եւ ճիշդ ատոր համար է միայն, որ կը գրեմ այս գայրագին ու տխուր նամակս:

Միայն թէ, այս պահուն նամակս հասցէագրուած չէ քեզի, քանի որ դուն չարդարացուցիր քու վրադ դրած յոյսերս՝ մէջը բաւարար ուժ եւ խիզախութիւն գտնելու, որպէսզի հայրենիքիդ մէջ ձայն բարձրացնէիր յանուն նահատակուած ժողովուրդի մը:

Ահա թէ ինչու այս նամակը կ'ուղղեմ բոլոր անոնց, որոնք կը հանդիսանան ձեր ժողովուրդին ճշմարիտ խիղճը, ձեր գրագէտներուն, արուեստագէտներուն եւ ուսուցիչներուն, համաշխարհային համրաւ

վայելող թուրք գիտնականներուն, նոր սերունդի դաստիարակներուն եւ բարեկամներուն:

Գիտեմ, որ լաւագոյն պարագային, քեզի կը հասնին յօդուածիս արձագանգները, որոնք պիտի կրկնուին հոս-հոն, համաշխարհային մամուլին մէջ, կամ գուցէ ականջիդ հասնի յօդուածիս բովանդակութիւնը, տեղեկադրուած՝ եւրոպացի ձեր բարեկամներուն նամակներուն մէջ:

Ատիկա շատ քիչ է անշուշտ, բայց հետեւանքը կրնայ արդիւնաւոր ըլլալ: Կրնայ պատահիլ, որ լոյսի չնչին փայլատակում մը, որպէս ազդանշան (լո՛յսը՝ թէ աշխարհը, հակառակ կարծեցեալ մոռացումին, դեռ կը յիշէ հայկական հարցը) յաջողի վառել շատ ուրիշ լոյսեր ալ, որոնք այնքան զօրեղ ըլլան, որ դուք եւս չկարենաք չտեսնել:

Ես շահագրգռուած եմ, յատկապէս, ճիշդ այդ բանով ալ: Ասկէ ետք դուք էք որ պաշտպան պիտի դառնաք դեռ մինչեւ այսօր չորս հովերուն ցրուած (այսինքն միքրօսկոպիկ Սովետական Հայաստանի սահմաններէն դուրս մնացող) հայերուն համար, յատկապէս այն պատճառով, որ ձեր հայրերը խլեցին անոնց ոտքին տակէն հայրենի հողը, 3,000,000 կեանքերով միասին:

Ես ոչ թուրք եմ եւ ոչ ալ հայ, հետեւաբար ինծի պարտականութիւն չեմ սեպեր ճշդել շօշափելի ձեւերը փոխ հատուցումին, որով պահանջատէր են հայերը ձեզմէ: Բայց գիտեմ, որ պատմական մեր այս ժամանակաշրջանին, բազմաշարժար ժողովուրդներու եւ բռնագրաւուած երկիրներու ինքնաբեր ազատագրման դարուն մէջ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԱՆՊԱՅՄԱՆ ՊԻՏԻ ԾԱՌԱՆԱՅ:

Բայց ձեզի համար աւելի պատուաբեր կ'ըլլայ, եթէ դուք իսկ դառնաք ձեր դատաւորը, փոխանակ մնալու միայն... դատապարտեալ:

Չեմ կրնար հասկնալ մինչեւ հիմա ցուցադրած ձեր անտարբերութիւնը ոճրագործութեան մը հանդէպ, որ ահա 42 տարիներէ ի վեր ծանրացած է ձեր վրայ: Չեմ հասնկար թէ ինչպէ՞ս, այս պայմաններուն տակ կրնայ ապրիլ ժողովուրդ մը, սիրել իր հայրենիքը, ինդալ ու ուրախանալ, կարողալ մարդասիրական գիրքեր, արտասահման այցելել եւ օտարներ հիւրընկալել իր երկրին մէջ: Կը կարծեմ թէ ճիշդ նման երեւոյթ կը պարզէր գերման ժողովուրդը, եթէ Հիթլերը յաղթանակէր Երկրորդ Համաշխարհային Պատերազմին: Բայց այդ պարագային ամբողջ աշխարհը խեղագրուած պիտի ըլլար: Իսկ դուք, հակառակ ամէն բանի, բնականոն աշխարհի մը մէջ է որ կ'ապրիք:

Անգամ մը, պատերազմէն առաջ, կարգացած եմ պուլկար գրողի մը մէկ պատմուածքը, թէ ինչպէս պուլկար ֆետայիներ թուրք մանուկ մը կը սպանեն, մօրը աչքերուն առջեւ: Ինչո՞ւ այդ պուլկար գրագէտը քաջութիւնը ունեցաւ, աշխարհին անծանօթ, անյայտ դէպքի մը մասին

գրելով՝ արատաւորելու իր հարազատ ժողովուրդին անունը, մինչդեռ ձեր գրագէտներուն համար 3,000,000 հայերու սպանութեան հարցը դեռ քողարկուած կը մնայ ամօթալի կերպով: Ինչո՞ւ:

Ուղղակի չեմ յաջողիր պատկերացնել, որ ձեր լեզուով լոյս տեսնէ ոեւէ Աննա Ֆրանքի Օրագիրը, հակառակ որ այն սոսկալի տարիներուն, սպաննեցիք առնուազն մէկ միլիոն չափահաս աղջիկներ եւ դեռատի կիներ, որոնք, այն ատենուան արեւելքին համար, բաւականին պարագագած էին: Նոյնիսկ Ֆրանց Վերֆելի դասական գիրքը, որքան գիտեմ, ձեր մօտ արգիլեալ գիրքերու ցանկին մէջ կը գտնուի:

Չէ՞ որ, բարոյական այն խթանները, որոնք եւրոպական ժողովուրդները կը մղեն քաջալերել գաղթավայրերու ազատագրումը եւ հին անիրաւութեանց փոխ հատուցումը, նոյն այդ խթանները չեն կրնար խորթ թուիլ նաեւ ձեզի:

Եւ ճիշդ այդ պատճառով, այն ցաւալի հարցը որ նամակիս նիւթ կազմեց, ինծի համար իր մէջ կը պարունակէ հոգեբանական անյուշտի խնդիր մը, որուն վրայ ի գուր կը տանջուիմ, տարիներէ ի վեր:

Ու կը վստահեցնեմ ձեզ, որ ես մինակ ու մեկուսի չեմ: Իմ տագնապիս մասնակից են բոլոր անոնք, որ անտարբեր չեն ձեր ազնիւ ժողովուրդին պատուին եւ բարի անունին հանդէպ:

ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՕՍՍԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ

(Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու)

Կազմողներ՝ Սկրտիչ Ներսիսեան, Ռուբէն Սահակեան
Երեւան, 1991

1965 թ. Ապրիլի 24-ին, Մեծ Եղեռնի 50-ամեայ տարելիցի առթիւ, Հայաստանում եւ սփռուած հայ զաղութներում հայ ժողովուրդը միասնաբար բարձրացրեց իր բուռն բողոքը 1915 թ. անմեղ զոհերի յիշատակին: Ի միջի այլոց Խորհրդային վարչակարգի տարիներին Մեծ Եղեռնի յիշատակումը հարկադրաբար մատնուել էր մոռացութեան: Ահա այդ օրերին առաջին անգամ ռուսերէն լեզուով լոյս տեսաւ «Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում» խորագրով հատորը, ուր ամփոփուած էին փաստագրական նիւթեր 19-րդ դարի վերջին Ապտուլ Համիտեան բռնատիրութեան եւ 20-րդ դարի սկզբին կրիտիկութեան արժանատի իշխանութեան օրօք տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեան մասին: Յետագայում, 1991 թ. այն լոյս տեսաւ նաեւ հայերէն: Ստորեւ տրուում է մի հատուած Ակադեմիկոս Մկրտիչ Ներ-

սխեանի առաջաբանից եւ փաստագրական երկու վկայութիւններ ժողովածուի բովանդակութիւնից:

*
**

Սոյն ժողովածուում, որ նւերուած է Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեանը, ամփոփուած են փաստաթղթեր ու նիւթեր հայկական, ռուսական, արաբական, գերմանական, ֆրանսիական, ամերիկեան եւ այլ աղբիւրներէից: Փաստաթղթերի գերակշիռ մասը տարբեր արխիւներում յայտնաբերուած պաշտօնական գեկուցագրեր, հաղորդումներ, դիմումներ ու նամակներ են՝ գրուած հիւպատոսների, դեսպանների, նախարարների, բարձրաստիճան պաշտօնեաների, տարբեր պետութիւնների, կառավարութիւնների, ղեկավարների եւ անդամների կողմից, ինչպէս եւ հոգեւոր անձանց ու միսիոնարների տուած ցուցմունքներ թուրքիայում հայերի զանգուածային կոտորածի մասին: Շատ կողմերով արժէքաւոր հաւաստի այդ փաստաթղթերը ճշգրիտ պատկերացում են տալիս հայ ժողովրդի մեծագոյն ողբերգութեան մասին: Սակայն մի շարք նիւթերում կան մտքեր, որոնց հետ չի կարելի համաձայնել: Այստեղ, հասկանալի է, հնարաւորութիւն չկայ թուարկել բոլոր այդ անճշտութիւնները եւ սխալները, բայց դրանցից մի քանիսի մասին, որոնք առաւել կարեւոր են, հարկ ենք համարում ասել մի քանի խօսք:

Որոշ փաստաթղթերում, երբ խօսուում է հայկական կոտորածների պատճառների մասին, գերազանհատուում են «մահմետական խաժամուժի» ու քրտական ցեղերի դերն ու նշանակութիւնը: Մինչդեռ լաւ յայտնի է, որ հայերի բոլոր զանգուածային կոտորածների կազմակերպիչները եղել են թուրքական կառավարութիւնը եւ դրա տեղական մարմինները, որոնք իրենց առջեւ նպատակ էին դրել բոլոր միջոցներով կենսագործել հայերի բնաջնջման քաղաքականութիւնը: Ընդդէմ է, թուրքիայի կառավարող շրջաններին շատ անգամ է յաջողուել հայ բնակչութեան դէմ հրահրել խաւարամիտ զանգուածներին, քուրտ ցեղապետերից շատերին եւ քրէական տարրերին, բայց այդ փրոպոկացիան կատարուում էր պաշտօնական իշխանութիւնների կողմից: Հանրայայտ է, որ հայերի զանգուածային կոտորածների ողջ պատասխանատուութիւնը ընկնում է Սուլթան Ապտուլ Համիտի եւ աւելի ուշ՝ երիտթուրքերի կառավարութեան վրայ:

Մի քանի նիւթեր կարող են ստեղծել այն տպաւորութիւնը, թէ իրր մեծ տէրութիւնները լրջօրէն մտահոգուած են եղել Արեւմտեան Հայաստանում տեղի ունեցած արիւնալի իրադարձութիւններով, որ իրր նրանք որոշակի քայիեր են ձեռնարկել հայկական հարցի լուծման

ուղղութեամբ: Դա, ի հարկէ, հեռու է ճշմարտութիւնից: Անդրիական կառավարութիւնն, օրինակ, անտարբեր մնաց Օսմանեան լծի տակ տառապող հայ ժողովրդի նկատմամբ: Աւելին, նենգամիտ Արիւնի երկերեսանի քաղաքականութիւնը քիչ վնաս չի պատճառել արեւմտահայերին: Նոյնիսկ անգլիացի ոչ անյայտ պետական գործիչ Լըյոյզ ձորձր ստիպուած է եղել խոստովանել, որ «բրիտանական կառավարութեան քաղաքականութիւնը ճակատագրական անխուսափելիութեամբ յանդեցրեց 1895-1897 եւ 1909 թթ. սարսափելի ջարդերին եւ 1915 թ. ահաւոր կոտորածին»:

Երբեմն ընթերցողը կարող է կարծել, թէ թուրքական կառավարութեան բարբարոսական ոճրագործութիւնը հայերի կողմից չի հանդիպել արժանի հակահարուածի: Այդ, ի հարկէ, սխալ է: Չնայած ծանրագոյն պայմաններին եւ ուժերի անհաւասարութեանը, հայերը, ինչպէս ասուեց վերեւում, շատ անգամ են զէնքը ձեռքերնին հանդէս եկել ընդդէմ երիտթուրքական դահլիճների, մէկ անգամ չէ, որ մարտնչել են իրենց պատուի, ազգային արժանապատուութեան, Ֆրիզիքական գոյութեան համար: Բայց անօգնական ժողովրդի հերոսական այդ կռիւները շատ դէպքերում յաջողութիւն չունեցան: Ուժերը անհաւասար էին, չկար զէնք, հայոց զաւառները կտրուած էին միմեանցից, արեւմտահայութեան մարտունակ բնակչութեան զգալի մասը նախապէս՝ 1914 թ. զօրակոչուել էր բանակ եւ նենգօրէն ոչնչացուել:

Անհրաժեշտ ենք համարում նշել մի հանգամանք եւս: Օսմանեան կայսրութեան մէջ Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ գոյութիւն ունի հարուստ գրականութիւն՝ գիտական աշխատութիւններ, ակնարկներ, յուշեր, յօդուածներ, նիւթերի ժողովածուներ եւ այլն: Այդ մասին գրել են Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Շուէյցարիայի եւ այլ երկրների յայտնի շատ պատմաբաններ, հրապարակախօսներ, գրողներ, գիտութեան ու մշակոյթի գործիչներ, գրել են արիւնալի իրադարձութիւնների ականատեսներ, որոնց թւում՝ հայեր, յոյներ, արաբներ, քրտեր ու թուրքեր: Բաւականին շատ գրուեց մասնաւորապէս 1965 եւ 1975 թթ. հայերին, երբ նշուում էին Մեծ Եղեռնի յիսնամեակը եւ վաթսուներեակը: Հրապարակումների հեղինակները վճռականօրէն դատապարտել են Սուլթան Համիտի, երիտթուրքերի եւ նրանց գործակիցների արիւնոտ ոճրագործութիւնները: Յատկանշական է, որ եւրոպական շատ պետութիւններ ճանաչել են արեւմտահայութեան ցեղասպանութեան փաստը: Այժմ դժուար է գտնել գրադէպ մի մարդ, որը չիմանայ հայ ժողովրդի մեծ ողբերգութեան մասին:

Սակայն, մեղմ ասած, զարմանք է պատճառում մի հանգամանք: Ժամանակակից թուրքիայի պաշտօնատար շատ անձինք եւ «մտաւոր

աշխատանքի» շատ ներկայացուցիչներ, անպատկառօրէն ոտնակոխ անելով պատմական ճշմարտութիւնը, ձգտում են ժխտել Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեան փաստը: Զուր ջանքեր: Խայտառակ այդ փոճերը, սակայն, չինծու են եւ անհեթեթ:

ՎԱՆԻ ՌՈՒՄԱԿԱՆ ՓՈՒՆ ԶԻՊԱՏՈՍՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՅՅԻՑ՝ ՌԻՂՈՒԿՍ Կ. ՊՈԼՍԻ ՂԵՍՊԱՆՈՒԹԵԱՆԸ

27 Սոյնմբեր, 1901 թ.

Յայտերի կոտորածները Սուլթան Յամիտի (1876-1908 թթ.) օրօք

Վանում Ռուսաստանի փոխ հիւպատոսը, որը կոստանդնուպոլսում կայսերական դեսպանի կարգադրութեամբ անցեալ Օգոստոս ամսին գործուղուած է Մուշ ու Սասուն՝ տեղի հայ բնակչութեան նկատմամբ նոր բռնութիւնների վերաբերեալ լուրերն ստուգելու համար, իր աչքով տեսնելով՝ համոզուեց, որ յիշեալ վայրերում քրիստոնեայ բնակչութեան վիճակը ծայր աստիճանի ծանր է:

Սպանութիւնները, կողոպուտները եւ բռնութիւնները, որոնց ենթարկուել են հայերը, սկսուել են ընթացիկ տարուայ Յունուարից եւ, կրկնուելով համարեայ իւրաքանչիւր ամիս, վերջացել են Յուլիան՝ Մշոյ դաշտի Մոկունք գիւղի յիսկատար ջարդով, որտեղ մի մահմետականի սպանելու կասկածանքով համարեայ բոլոր արական բնակչութիւնը բանտարկուել է եւ թուրքերը օգտուելով դրանից՝ այրել են կալեւրու համար դիզուած հացահատիկը եւ հայերի տները մեծ մասը: Տագնապը, որ բռնել է Մշոյ դաշտի քրիստոնեայ բնակչութեանը նշուած դէպքերի հետեւանքով, այնքան մեծ է եղել, որ կոլեգիական խորհրդական Տումանսկին անհրաժեշտ է գտել Մուշ հասնելուն պէս բարձրացնել Ռուսաստանի դրօշը: Այս միջոցառումը, ինչպէս եւ Ռուսաստանի փոխ հիւպատոսի դրսեւորած վճռականութիւնը՝ առաջիկայում Մուշը չլքել, մինչեւ կարգուկանոնի վերջնական վերականգնումը, որոշ չափով հանգստացրել են հայերին:

Որպէս արգարացում իրենց չարագործութիւնների, թուրքերը սովորաբար մատնանշում են հայ յեղափոխականների դէմ պայքարելու անհրաժեշտութիւնը: Նման պնդումն անհիմն է: Յեղափոխական շարժումը, բառիս բուն իմաստով, 1894-1895 թթ. դաժան դասի ազդեցութեան տակ, ըստ երեւոյթին, մարել է Հայաստանում: Մինչդեռ յեղափոխականների մեքենայութիւնների վկայակոչումը մինչեւ օրս հիմք է հանդիսանում հայերի դէմ ծաւալուող հալածանքների համար եւ թուրքական իշխանութեան աչքում դա միանգամայն բաւարար է քրիստոնեաների դէմ մահմետականների ակնյայտ բռնութիւնների արդարացման

համար: Եթէ քրիստոնեաների միջավայրից իրօք դուրս են գալիս մարդիկ, որոնք պատրաստ են կռուելու թուրքերի դէմ, ապա դա լիովին բացատրուում է անձնական ատելութեան ու վրէժի զգացմունքներով, որոնք հայերի մէջ ծագում են իրենց հանդէպ կատարուած ոճրագործութիւններից:

Հայ բնակչութիւնը երկրամասում միանգամայն իրաւագուրկ վիճակում է: Թրքական իշխանութիւնները ոչ միայն ոչինչ չեն անում, որպէսզի ապահովեն նրանց անձնական ու գոյքային անձեռնմխելիութիւնը, այլեւ բացայայտօրէն խրախուսում են նման խախտումները...

Տեղի թրքական զինուորական վարչութեան կազմը ծայրայեղօրէն վատ է: Վիլայէթի գործերի վրայ առանձնապէս վատ ազդեցութիւն է գործում Մուշի մերձակայքում տեղակայուած 4-րդ կորպուսի հրամանատար Զէքի փաշան, որը բացայայտօրէն խրախուսում է բռնութիւնները հայերի նկատմամբ եւ ընդդիմանում իշխանութեան այլ մարմինների կողմից տեղական կառավարումը գէթ փոքր ինչ կարգաւորելու ամէն մի փորձի: (էջ 204-206):

ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՈՒԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՐԻՏԹՈՒՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ (1909-1918 ԹԹ.)

Հատուածներ Անտրէյ Մանտելշտամի
«Օսմանեան կայսրութեան ճակատագիրը» գրքից

Աքսորեալների նկատմամբ տմարդի վերաբերմունքը տեղահանութեան ժամանակ:

Աքսորեալների քարաւանները, որոնք բաղկացած էին գլխաւորապէս ծերերից, կանանցից ու երեխաներից, ճամբայ ընկնելու պահից դառնում էին ամենաամօթ շահագործման թիրախ իշխանութիւնների կողմից, որոնք պէտք է հոգ տանէին նրանց մասին: Քաղաքից մեծ հեռաւորութեան վրայ սայլապանները ժանտարմաների մասնակցութեամբ նրանց իջեցնում էին եւ յետ դառնում իրենց սայլերով, որոնց համար ոսկու գին էին վճարած լինում, դժբախտներին թողնելով ճանապարհը շարունակելու ոտքով... գիշերները աւազակները յարձակում էին քարաւանների վրայ ու թալանում դրանք, սպանում տղամարդկանց, բռնաբարում կամ առեւանգում ջահել կանանց, գողանում երեխաներին: Այդ բանում ժանտարմաներն օգնում էին հրոսակներին, իրենց գոհերից փող շորթելով նրանց «պահպանութեան» համար: Կայմակամները (գաւառապետները) հայերի անվտանգութիւնը երախտաւորելու համար նրանց ստիպում էին իրենց փող վճարել, իսկ յետոյ թոյլ էին տալիս յարձակուել նրանց վրայ: Իշխանութիւնները գրեթէ պարէն

չէին բաշխում. յաճախ նոյնիսկ խոչընդոտներ էին յարուցում, որ աքսորեալները իրենց պարէնով չապահովէին տեղահանութեան ժամանակ: Այդ պատճառով էլ աքսորեալները հազարներով գոհուում էին քաղցից ու ծարաւից:

Ժամատարմաների ու երուզակների դատաւութիւնը չափ ու սահման չունէր: Որոշ դէպքերում նրանք գաղթողների վրայից հանում էին ամբողջ հագուստը եւ ստիպում քայլել օրեր շարունակ, միանգամայն մերկ քայլել անապատի կիզիչ արեւի տակ, իսկ երբ հասնում էին ջրհորների, ժամատարմաները վաճառում էին խմելու իրաւունքը: Ծննդաբերելուց անմիջապէս յետոյ կանայք պէտք է շարունակէին ճանապարհը, հազարաւոր մարդիկ ընկնում էին ճանապարհներին, մահանալով սովից, ծարաւից ու յոգնածութիւնից: Դիակները, յատկապէս երեխաների, յաճախ՝ հատուած թաթիկներով մնում էին փռուած ճանապարհներին: Ժամանակ առ ժամանակ դահիճները, ասես կատաղելով կենդանի մնացածների դիմացկունութիւնից, կանանց ու երեխաներին ջրահեղձ էին անում գետերում, ողջակիզում կամ սպանում զաժան կտտանքներով: Եփրատը հազարաւոր դիակներ էր տանում: Բազմաթիւ ուրիշներ, յուրախութիւն ճուռակների ու շների թողնուելով անթաղ, ժանտահոտութեամբ թռնաւորում էին մեծ ճանապարհները:

Նման պայմաններում, ինչպէս վկայում են գերմանացիները, տարագիրների քարաւանները, որոնք Մեծ Հայքից ճանապարհ ընկնելիս հասնում էին հազարաւորների, հարաւ ժամանելու պահին կրճատուում էին մինչեւ հարիւրաւոր ու աւելի պակաս թուով մարդիկ: Խարբերդից, Ակնից, Թոքթից եւ Սեբաստիայից 18,000 տարագրուածներից Հալէպ էին հասել ընդամէնը 350 մարդ, իսկ էրզրումից տեղահանուած 19,000-ից մնացել էր 11 մարդ: Ակներեւ է, որ տեղահանութիւնը երբեք այդպիսի «արդիւնքներ» չէր յանգեցնի առանց թուրքական իշխանութիւնների մասնակցութեան եւ նոյնիսկ հրահրման, որոնք ոչ միայն անհրաժեշտ միջոցներ չձեռնարկեցին պարէն մատակարարելու եւ քարաւանների անվտանգութիւնն ապահովելու համար, այլեւ խրախուսում ու կազմակերպում էին հրոսակների յարձակումներ աքսորեալների վրայ, ժամատարմաներին եւ կանոնաւոր զօրքերն օգտագործելով օրինականացուած կոտորածի համար: Եւ եթէ, չնայած այդ համագործակցութեանը, աքսորեալների մի մասը այնուամենայնիւ հասնում էր նշանակման վայր, ապա դա միայն այն պատճառով, որ հարկաւոր էր եւրոպական (հասարակական) կարծիքին ապացուցել, թէ նշանակման վայր էր ժամանել հայերի առնուազն գոնէ մի որոշ մասը, ինչպէս եւ այն պատճառով, որ նոր տեղում ողջ մնացածների կործանումը կասկած չէր յարուցում:

Աքսորեալների նկատմամբ վերաբերմունքը ժամանակաւոր համակենտրոնացման ճամբարներում եւ նշանակման վայրերում:

Այն հայերը, որոնց փոխադրում էին Անատոլիական երկաթուղիով, ճիշդ է, խուսափեցին երուզակների հալածանքներից, քանի որ դնացքներում էին, բայց նրանց վիճակն աւելի նախանձելի չէր: Լցուած լինելով անասնավախոններ, գտնուելով աւելի մեծ նեղուածքի մէջ, քան անասունները, նրանք շնչահեղձ էին լինում այնտեղ, մեռնում սովից ու ծարաւից. յաճախ մայրերը իրենց երեխաներին պատուհաններից նետում էին գետը, որ վերջ դնեն այդ սովահար փոքրիկ արարածների տառապանքին: Զօրքերի տեղաշարժը եւ աքսորեալների քանակը շատ էին դանդաղեցնում այդ ճանապարհորդութիւնը եւ շատ կէտերում մարդկանց քշում էին համակենտրոնացման ճամբարներ, որտեղ նրանք մնում էին բազում շաբաթներ կամ ամիսներ, սպասելով նոր փոխադրման: Այդ բացօթեայ ճամբարներում, որտեղ աքսորեալներն ապրում էին իրենց քրջերից իրենց իսկ սարքած վրաններում, առողջապահական պայմանները բնաւ հնարաւոր չէ նկարագրել: Իշխանութիւնները պարէն չէին բաշխում, իսկ եթէ ինչ-որ բան էլ տալիս էին, ապա միանգամայն անբաւարար քանակութեամբ: Ճամբարներն ամայացնում էին նաեւ տրիֆատեղի, դողէրոցքի եւ արիւնալուծի ահաւոր համաճարակները: Ինչ վերաբերում է իշխանութիւններին, ապա նրանք ամենամաթալի կերպով շահագործում էին աքսորեալներին, նրանց ստիպում վճարել ամէն ինչի համար, ընդհուպ մինչեւ մեռածներին թաղելը:

Պակաս ահաւոր չէր հայերի վիճակը նշանակման վայր հասնելուց յետոյ, որտեղ նրանք յոյս ունէին, թէ գէթ որոշ չափով կը թեթեւանան իրենց տառապանքները: Լինէր դա Սուլթանիէում, Քոնիայի վրայէթի առողջութեան համար վնասակար անապատում, Հալէպի, Ղամի, Հոմսի եւ Դամասկոսի շրջաններում, թէ առաւել խոշոր հաւաքակայանում՝ Տէր էլ Զօրում, նրանք շարունակում էին ենթարկուել այնպիսի վերաբերմունքի, որը նուազագոյն իսկ կասկած չէր թողում, որ իշխանութիւնները մտադիր են կործանել նրանց: Իրենց ահաւոր ճամբորդութեան տանջանքներից ուժասպառ, նրանք մահանում էին անհամար քանակութեամբ, իսկ կառավարութիւնը, մտքով էլ չանցկացնելով պարենով նրանց ապահովելու մասին, որ բաւարար լինէր կեանքի պահանջման համար, խոչընդոտում էր ամէն մի օգնութիւն, որ կարող էր նրանց հասնել արտասահմանից:

Կրօնական հանգամանքը:

Հայերին հալածելու որոշումը կառավարութիւնը կայացրել էր քաղաքական, այլ ոչ թէ կրօնական շարժառիթներով եւ հենց այդ պատճառով էլ թուրքական իշխանութիւնները այդպէս անբարեհաս

էին վերաբերուում նրանց հաւատափոխ լինելուն, ինչը նորադարձներին կ'ազատէր աքսորի դեկրետի գործողութիւնից: Այսպիսով, միայն մէկ թէկ երկու քաղաքում կարողացան քիչ թէ շատ թուով ընտանքիներ փրկուել հաւատուրացութեան շնորհիւ: Իսկ շատ դէպքերում հաւատափոխները, ինչպէս որ միւսները, որոշ ժամանակ անց աքսորուեցին: Շատ կանայք խկապէս ընդունեցին իսլամը, բայց թուրքի հետ ամուսնայալուց յետոյ, միայն մահմետականութիւն ընդունելը բաւական չէր աքսորից խուսափելու համար: Թուրքերի վերցրած հայ երեխաները, բնականաբար, նոյնպէս մուսուլմանական հաւատով էին դաստիարակուում:

Որոշ վայրերում Կոստանդնուպոլսից տրուած հրամանները աքսորելիս բացառութիւն էին անում բողոքական կամ կաթոլիկ հայերի համար, քանի որ այդ երկու համայնքները չէին միջամտում լուսաւորչականների քաղաքական գործերին եւ Աւստրիայի ու Ամերիկայի դեսպանութիւնները հանդէս եկան նրանց պաշտպանութեամբ: Բայց այդ հրամանները հազուադէպ էին կատարուում եւ կաթոլիկների ու բողոքականների մեծ մասը դարձաւ լուսաւորչականների բաղձակիրը:

Չնայած հալածանքների, այսպէս ասած, աշխարհիկ բնոյթին, քանի որ դրանք ուղղուած էին ցեղի եւ ոչ թէ կրօնի դէմ, այդ իրադարձութիւնների ժամանակ թուրքերի մէջ մէկ անգամ չէ, որ արթնանում էր կրօնական մոլեռանդութեան բնագոյր: Դա դրսեւորուում էր հայ հոգեւորականների դաժան մահապատիժներով, եկեղեցիների թալանով եւ դրանք մզկիթների վերածելով:

Այսպիսով, կարելի է համարձակ պնդել, որ հայ քրիստոնեաների կրած ահաւոր տառապանքներում ոչ միայն նրանց ցեղը, այլեւ նրանց կրօնն էլ անարգուեց, անպատուուեց ու պղծուեց:

Ղաթանութիւններն ու խոշտանգումները:

Այն խոշտանգումներն ու դաժանութիւնները, որոնց զոհը դարձան հայերը 1915 թ., հնարամտութեան ու բազմազանութեան առումով բնաւ չէին գիշում նրանց, որոնց ենթարկուել էին նրանք 1895 եւ 1909 թթ.:

Անողորմ գանահարութիւն, հանուած աչքեր, պոկուած եղունդներ ու մագեր. սղոցուած կամ կտրուած քիթեր, ձեռքեր, ոտքեր եւ մարմնի այլ մասեր, շիկացած երկաթով դաղում, առաստաղից կախում՝ ոչինչ չէր բացակայում ցուցակից: Վիրաւորական կը լինէր այստեղ չիչիլը այն ահաւոր մեղադրանքի մասին, որ հայերը հրապարակաւ կայացրիկ էին ինվեր փաշայի փեսայի՝ Վանի նահանգապետ Ճեւտեթ պէյի, «մսագործների գումարտակների» պետի նկատմամբ: Հենց նորին պիրազանցութեանն է պատկանում խոշտանգումների երկու ձեւի գիւտի պատիւը. դրանցից մէկը հայերի ներբանները պայտելն է, ինչպէս գրաստներին, նորութիւն, որի համար նրա գիւտարարն արժանացել է

«րաչկալեցի պայտաւ» մականուան. միւսը կատուներով խոշտանգելն էր, որի դէպքում կատուներ էին խցկում խոշտանգուողների հագուստի տակ եւ ապա ծեծում կենդանիներին, որ նրանց ստիպեն իրենց ատամներն ու ճանկերը խրել զոհի փորոտիքը:

Կենդոնական կառավարութեան, Նրա մարմինների եւ թուրք ժողովրդի պատասխանատուութիւնը...

Ինչպէս ստոյգ հաստատուած է «Կապոյտ գրքում», այդպիսի հսկայական չափերով մարդկային կեանքեր ոչնչացնելը, որն ուղեկցուում էր նման տառապանքներով, կրօնական մոլեռանդութեան դրսեւորում չէր: Դա կոտորած էր հրամանով, որն իրականացուում էր անգիտակից զինուորների կամ այնպիսի անձանց կողմից, որոնց բիրտ բնագոյնները խթանելու կարիք չկար:

«Կապոյտ գիրքը» եւ նրա հետ մենք արձանագրում ենք, որ եթէ քաղաքային բնակչութիւնը աքսորն օգտագործում էր թալանի համար, անուանի մուսուլման քաղաքացիները յաճախ բողոքում էին կատարուող չարագործութիւնների դէմ, իսկ երբեմն էլ նոյնիսկ փորձում էին խոչընդոտել դրանք, ի դէպ, առանց որեւէ հակա յաջողութեան: Որոշ թուրքեր նոյնիսկ պատժուել էին այդ մարդասիրական միջամտութեան համար: Նա, ում ծանօթ է արեւելեան խառնուածքը, «Կապոյտ գրքի» հետ միասին ընդունում է, որ մուսուլման գիւղացիները երբեք չէին համարձակուի գործել այդպէս առանց պաշտօնական իշխանութիւնների հրահրման:

Թուրք ժանտարմանների վարքագիծը, որոնք արբած էին հագարաւոր մարդկային կեանքերի նկատմամբ իրենց տրուած իշխանութեամբ, էլ աւելի շատ է նողկանք, սարսափ ու արհամարհանք յարուցում, քան քրդերի կամ գիւղացիների վարքագիծը...:

Յանուն արդարութեան պէտք է խոստովանել, որ գտնուում էին թուրք պաշտօնեաներ, որոնք հրաժարուում էին կատարել Կոստանդնուպոլսի արիւնոտ հրամանները եւ նոյնիսկ ջանում էին հակազդել դրանց: Այսպէս, Չմիւռնիայի վալիին՝ Ռահմի պէյին, Պաղատաի վալի Սուլէյման Նազիֆ պէյին, Քեթիւսիայի նահանգապետ Ֆայիկ Ալիին յաջողուել էր խոչընդոտել ամէն մի կոտորած: Բայց նմանօրինակ ընդդիմութիւնը, որքան մենք գիտենք, յաջողութեամբ էր պսակուել միայն այդ երեք դէպքում:

Էրզրումի վալի Թահսին պէյը, Տրապիզոնի, Անգորայի, Հայկապի եւ Ատանայի վալիները նոյնպէս փորձել էին հակազդել Կոստանդնուպոլսից ստացուած անմարդկային հրամաններին: Բայց նրանց դիմադրութիւնն արագ ընկճուել էր, եւ Կոստանդնուպոլսի հրամանները կատարուել էին այնպիսի պաշտօնեաների կողմից, որոնք աւելի հնա-

զանց էին երիտթուրքական կառավարութեան կամքին, որը որոշել էր րնաջնջել ամբողջ հայ ցեղը կայսրութիւնում: Ահաւոր ճշմարտութիւն է արտայայտել մի օտարերկրացի ականատես, յայտարարելով, որ «տարազրումը կոտորածի սոսկ քաղաքավարի ձեւ էր»: Գաւառական պաշտօնեաները, որոնք նուիրուած էին կառավարութեանը եւ իրազեկ էին նրա մտադրութիւններին, դա բնաւ չէին թաքցնում: Այդ մասին նրանք բացէիբաց բղաւում էին ամերիկացիների ու գերմանացիների երեսին: Մուշի մութասարըՔը բացէիբաց յայտարարել էր, որ առաջին իսկ հնարաւորութեան դէպքում թուրքերը կը կոտորեն ամբողջ ազգը՝ «Բնաջնջումը միակ միջոցն է», յայտարարել է նրա պաշտօնակից Գ. ն... «Դուք չէք հասկանում, թէ մենք ինչ նպատակ ենք դնում մեր առջեւ, - ասել էր աքսորի յանձնաժողովներից մէկի նախագահը մի գերմանացու, - մենք ուզում ենք ոչնչացնել բուն «հայ» անունը: Ինչպէս որ գերմանացիները չեն ուզում, որ գոյութիւն ունենայ ոեւէ մէկը գերմանացիներից բացի, այդպէս էլ մենք՝ թուրքերս, ուզում ենք, որ լինեն միայն թուրքեր»:

Այսպիսին է ահաւոր ճշմարտութիւնը: Հենց երիտթուրքական կառավարութիւնն էր կանխամտածուած ու սառնասրտօրէն հրամանագրել հայ ժողովրդի բնաջնջումը: Մենք չգիտենք, թէ գերագոյն կառավարիչների ծրագրի մէջ մտնո՞ւմ էր նաեւ այն, որ կտրէին փոքր երեխաների ձեռքերը, որ մերկացուած կանայք դեգերէին անապատում, բռնաբարուէին այլանդակուած ամուսինների կամ ծնողների ներկայութեամբ, թէ՞ այդ ամէնը լրացրել էր հենց իրենց՝ կատարողների կողմից յանուն սեփական զուարճութեան: Ամերիկացիների մէջ այն տպաւորութիւնն է ստեղծուել, որ նոյնիսկ դաժանութիւններն էին լաւ կազմակերպուած: Բայց մենք հաւաստիօրէն գիտենք, որ տեղերում եւ ճանապարհին կոտորածն իրականացուել էր հրամանով: Ծակատագրի քմայքին մատնուած, պարէնի մատակարարումից զուրկ համակենդրոնացման ճամբարներում համաճարակները ցանկալի էին: Ծանապարհին սովով, ծարաւով ու հիւանդութիւններով քարաւանների ոչնչացումը նախատեսուած էր: Նախատեսուած էր նաեւ առողջութեան համար վնասակար աքսորավայրեր հասած հայերի դանդաղ մահը, քանի որ թուրքական կառավարութիւնը եւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կոմիտէի անդամները աչալըջօրէն հետեւում էին, որ իրենց «կարգերի» խստութիւնները ոչ մի չափով չմեղմացուէին: Թուրքական կառավարութիւնը անողոք համառամտութեամբ արգելում էր եւ մերժում ինչպէս երկրում գտնուող եւրոպացիների, այնպէս էլ ամերիկեան կառավարութեան ամէն տեսակի գլխախրտ միջամտութիւն, որին նա թոյլ չէր տալիս նոյնիսկ հայերին տանել Ամերիկա: Նա շատ աւելի դաժանօրէն

էր մահուամբ պատժում այն թուրքերին, որոնք յանդգնում էին օգնել հայերին, քան Ապտուլ Համիտի օրօք: Եւ «Միութիւն եւ Առաջադիմութեան» տեղական կոմիտէների անդամները տեղերում էին դանուում, որպէսզի խթանեն իշխանութիւնների եռանդը, մերկացնեն եւ պաշտօնանկ անեն խղճահարութեամբ համակուող պաշտօնեաներին: Ոմանք, ինչպէս, օրինակ, յայտնի Ճեմալ էֆէնտին, անձամբ էին միջամտում, որպէսզի զոնէ ոչ մեծ կոտորած կազմակերպեն տեղում կամ օգտակար օգնութիւն ցոյց տան մարդասպաններին, չմոռնալով բարեպաշտ «հանդիստը» սրի քաշուածների «ճշմարիտ» հաւատի բերուած դուստրերի գրկում: Եւ այդ բոլոր զագրելիութիւնների հետեւում, որոնք ամենախայտառակ անարգանքով նշաւակեցին արնաշախաղ դարը, հնչում էին Ապտուլ Համիտին փոխարինած «մեծ մարդասպանների»՝ «ազատութեան հերոս» էնվէր փաշայի, «Միութիւն եւ Առաջադիմութեան» «մարմնաւորում» Թալեաթ պէյի լպիրշ ու ցնծագին ձայները...:

Այո, էնվէրը եւ Թալեաթը կայսրութեան երկու բռնապետներն են, հայերի նախճիրի գլխաւոր մեղաւորները: Շատ հաւանական է, որ նրանք եղեռնագործութեան էին հրահրուել չարագուշակ դոկտորներ Պեհէտտին Շաքրիի եւ Նազըմ պէյի կողմից: Բայց երկու հրէշների հնարաւոր յանցակցութիւնը չի վերացնում մեղադրանքները թուրքիայի այդ երկու տէրերի վրայից: Սա ասելով, մենք, ի հարկէ՞, չենք ուզում հանել պատասխանատուութիւնը Սայիդ Հայիմ փաշայի կառավարութեան միւս անդամների վրայից: Նրանք բոլորն էլ միասին պատասխանատու են դժբախտ հայ ազգի ահաւոր սպանութեան համար: Ոչ մեծ վեպի Սայիդ Հայիմ փաշային՝ դատարկամիտ ու փբուն, ոչ «մեծ իրաւարան» Խալիլ պէյին, ոչ նենգ Ճեմալ փաշային չի յաջողուի իրենց անունների վրայից մաքրել ահաւոր կեղտը: Նրանք չբողոքեցին Եղիոնի դէմ, նրանք այն թոյլ տուեցին, քանի որ նրանք բոլորն էլ մնացին արնաներկ կառավարութեան մէջ (էջ 594-601):

ՇԱԼՕԹԱԳՈՒԹԻՒՆ

Անտրէյ Նիկոլաեւիչ Մանտելշտամը (1869-1939) եղել է ուսուցիւանագէտ, իրաւաբան ու պատմաբան, Սան Փեթերպուրկի համալսարանի միջազգային իրաւագիտութեան բաժնի դասախօս:

1898-ից մինչեւ 1914 թուականը նա գտնուել է Թուրքիայում՝ որպէս Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանութեան առաջին թարգման:

«Օսմանեան Կայսրութեան Ճակատագիրը» հիմնարար աշխատութիւնը առաջին անգամ լոյս է տեսել Փարիզում 1917 թ. Ֆրանսերէն լեզուով «Le Sort de L'Empire Ottoman» խորագրով: Այն թարգմանուել է հայերէն է լոյս տեսել 1919 թ. Կ. Պոլսում:

Այս աշխատությունը գրուած է բազմաթիւ հաւաստի փաստերի, պաշտօնական փաստաթղթերի, թուրքական աղբիւրների անկողմնակալ ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ հեղինակի անձնական ղիտարկումների հիման վրայ:

Անտրէյ Մանտելշտամը հրատարակել է նաեւ այլ աշխատություններ եւ յօդուածներ հայկական հարցի եւ մեծ տէրութիւնների, ինչպէս նաեւ երիտթուրքերի վարած քաղաքականութեան մասին:

ՀՐՈՊՈՐՂ ԷՏՈՍՁ ԿԻՊՈՆՁՐ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ամերիկացի պատմաբան եւ հրապարակախօս Հըրպըրդ Էտրմոգ Կիպլընը 1908-1913 թթ. եղել է Թուրքիայում, որպէս New York Herald ամերիկեան թերթի թղթակից, ինչպէս նաեւ դասաւանդել է Տարսնի ամերիկեան գոյէճում: Թուրքիայում գտնուելու տարիներին Դոկտ. Կիպլընը բազմիցս ականատես է եղել սուլթանական եւ երիտթուրքական իշխանութիւնների կազմակերպած հայերի ջարդերին: Նրա գրչին են պատկանում բազմաթիւ հրապարակախօսական յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ:

1916 թ. սկզբին The Blackest page of Modern History («Ժամանակակից պատմութեան սեւագոյն էջը») խորագրով անգլերէն լոյս տեսած նրա գիրքը հայոց Մեծ Եղեռնի մասին, անմիջապէս նոյն թուականին էլ թարգմանուեց հայերէն եւ հրատարակուեց Նիւ Եորքում:

Այդ գրքի հայերէն հրատարակութեան առթիւ առաջաբան է գրել Դոկտ. Յ. Թիրեաքեանը (Օգոստոս 1, 1916), ուր ըստ արժանւոյն բարձր է գնահատել Կիպլընի գիրքը, ինչպէս նաեւ հայերէն թարգմանութիւնը կատարած երկու հայ երիտասարդ ուսանողներին՝ Ա. Սաղաթէլեանին եւ Ե. Մօրլեանին:

Ստորեւ տրուում է հատուած այս գրքից:

*
* *

«...1915 Ապրիլին, Պոլսէն հրամաններ ղրկուեցան Փոքր Ասիոյ տեղական իշխանութիւններուն, ի գործ դնել կարելի եւ յարմար ամէն միջոց, կանխաւ անդամալուծելու հայերու կողմէ փորձուելիք ապստամբական որեւէ ձեռնարկ:

Տեղական իշխանութեանց շեշտուած էր թէ՛ հայեր կայսրութեան ապահովութեան ծայրայեղ վտանգ կը սպառնային եւ ազգային պաշտպանութիւնը կը պահանջէր հրամայականօրէն կանխազգուշական խստութիւն, հայերը անվնաս դարձնելու:

Կարգ մը վայրերու տեղական իշխանութիւններ պատասխանեցին թէ՛ իրենք նշմարած չէին որեւէ կասկածելի գործունէութիւն հայերու կողմէ եւ յիշեցուցին կառավարութեան թէ, հայերը ո՛չ մէկ վնաս կրնային հասցնել, քանի որ գէնք չէին կրեր եւ արդէն ամէնէն կորոյի արական տարրը բանակին մէջ կը գտնուէր: Կան թուրքեր որոնք ամօթի եւ գիւտութեան տեսակ մը զգացում ունին: Բայց թուրք պաշտօնեաներու մեծագոյն մասը՝ պատրաստակամ եւ եռանդագին, Պոլսէն եկած թիպագրութիւնը կատարեց: Անաստողներ փոխուեցան:

Եւ հայկական ջարդերու նոր թուական մը սկսաւ...:

Նախ, այս ձեռնարկը կարելի ամենաքիչ ղժուարութիւնով գործադրելու համար, դեռ եւս քաղաքներու եւ գիւղերու մէջ մնացած հայ բնակչութեան ուժեղ տղամարդիկը ազդարարութիւն ստացան հաւաքուիլ յարմարագոյն վայր մը, ընդհանրապէս քաղաքէն դուրս: Ժամատարման եւ ոստիկաններ այս հրամանին գործադրութեան խստիւ հսկեցին: Ոչ ոք աչքէ վրիպեցաւ: Զանոնք ժողուելէ վերջ, բոլորն ալ սուրէ անցուցին: Գործադրութեան այս մեթոտը հնարաւոր էր փոքր տեղերու մէջ, առհասարակ: Մեծ քաղաքներու մէջ սակայն, Պոլսոյ հրամանները, այսքան ճիշդ ու պարզ կերպով կատարել կարելի չէր միշտ: Հայ երեւելիներ, փողոցներու վրայ կամ իրենց տուններուն մէջ, սպանուեցան: Ներքին քաղաքներու այրերու հսկողութեամբ «ուրիշ քաղաք» ղրկուեցան: Քանի մը ժամէն վերադարձան պահապանները՝ առանց իրենց բանտարկեալներուն...: Մովեզերեայ քաղաքներու հայեր նաւակներով «ուրիշ նաւահանգիստ» մը տարուեցան: Նաւակները գարմանալիօրէն շուտ վերադարձան՝ պարպուած իրենց ճամբորդերէն:

Յետոյ, որպէսզի երկաթուղիի եւ ճամբաներու շինութեան համար պործածուող հայ զինուորներ կարող չըլլան որեւէ հաւանական ղժուարութիւն յարուցել՝ կ'աշխատեցուէին իրարմէ մղոններով հեռու կէտերու վրայ, 300-էն 500 հոգի պարունակող խմբակներու բաժնուած: Թուրք կանոնաւոր բանակի զօրագունդեր ղրկուեցան շուտով «հայ յեղափոխութիւնը նուաճելու»: Յանկարծակի յարձակում կրեցին բանուորական այդ փոքրիկ խմբակները, որոնք չարաչար կ'աշխատէին թիւրով, լծակներով եւ փետատներով: Այս «ապստամբներ» ծակծկուեցան գնդակներով՝ զիտնալէ առաջ թէ ինչ կը պատահէր...: Մէկ քանին, որ յաջողեցան փախչիլ՝ հետապնդուեցան հեծեալներէ կամ թրատուեցան:

Մայիսին մինչեւ Օգոստոս՝ Օսմանեան կառավարութիւնը մեթոտիկ կերպով հետապնդեց ծրագիր մը՝ աւելի ղժոխային քան հնարաւոր յոռեգոյն ջարդը: Փոքր Ասիոյ իւրաքանչիւր նահանգ հեռագրուեցաւ՝ բովանդակ հայութիւնը Միջագետք տեղահան ընելու հրամանը որո՛չ էր եւ մանրամասն: Մոռացութեան մասնուելու չափ

աննշան գիւղակ մը չկար: Մուկնետիկներ ազգարարեցին թէ ամէն հայ, աշխիւն ուր ոչ ատենին, պէտք է պատրաստ ըլլայ մեկնելու անծանօթ վայր մը: Ծերեր, հիւանդներ եւ յղի կիներ բացառութիւն չէին կազմեր: Միայն հարուստ վաճառականներ, զրամատէրներ եւ զեղաղէմ կիներ ու աղջիկներ արտօնուած էին ազատ մնալ՝ մահմետական կրօնքը ընդունելու պայմանաւ: Սակայն՝ յաւիտենական յարգա՛նք իրենց՝ հատ հատ անձեր միայն օգտուեցան փախուստի այս միջոցէն: Երկու օրէն մինչեւ վեց ժամ տրուած էր պատրաստութեան համար: Տնական առարկաներ, անասուն կամ աւելորդ զգեստ արգիւրուած էր տանիլ: Անկողնի կազմած եւ կերակուրի պաշար՝ ուժը ներածին չափ կարելի էր վերցնել, ուսին վրայ դրած: Եւ պիտի քաշէին հետիոտն՝ կիզիչ արեւին տակ, անջրդի ձորերէն եւ ձիւնապատ լեռներու կիրճերէն: Ու հարկ էր տոկա՛լ ճամբորդութեան մը՝ երեքէն մինչեւ ութ շաբաթ...:

Տեղահանութեան հրամանը տակաւին չստացած քրիստոնեայ գիւղերէ անցնելու պարագային, կարաւանը արտօնուած չէր ընդունիլ կերակուր եւ կամ որեւէ հոգածութիւն: Ծերեր, հիւանդներ եւ փոքր մանուկներ ինկան ճամբաներուն եզերքը, անգամ մըն ալ չելլելու պայմանաւ: Երկունքի մէջ եղող կիներ սուկիներով եւ խարազաններով առաջ կը քշուէին, մինչեւ որ մահը ազատէր զիրենք: Սիրուն աղջիկներ կը խլուէին հարէմներուն համար կամ պահապաններու կողմէ կը բռնաբարուէին ամէն օր՝ սպասելով մահուան, իբր զթառատ ազատարի Անոնք որ կրնային, անձնասպան եղան: Մայրեր, խելագար՝ գետը նետեցին իրենց զաւակները, անոնց տառապանքին վերջ տալու Անօթութիւն, ծարաւ, լքում եւ ամօթ հարիւր հազարներով կիներ մահուան գիրկը տարին:

Նախ օրէ օր, յետոյ ժամ առ ժամ նօսրացաւ խղճայի կարաւանը՝ Ամէն ոք յուսահատ՝ միայն մահուան փափաքեցաւ, քանզի հնա՞ր է որ յոյսը ապրի ճամբորդութեան մը մէջ որ վախճան չունի: Նոյնիսկ ամէնէն զօրաւորին քով ուժ մնալ կարելի՞ է: Դժոխք առաջնորդող այդ ճամբէն աջ կամ ձախ խտտորոզներ հրացանագարկ կամ սուկիահար եղան: Անոնք որ փախչելով, յաջողեցան ազատուիլ պահապաններու ձեռքէն, քիւրտերէն եւ հեծեալ գիւղացիներէ հետապինդ՝ գետին փուռեցան:

Ու երիտասարդ թուրքեր զեռ կը շարունակեն որոճալ հայ յեղափոխութիւնը հո՛ն, Փոքր Ասիոյ մէջ:

Վերի պարբերութիւնը հագիւ աւարտած էի, երբ տունս եկաւ անգլիացի կին մը, զոր տարիներէ ի վեր կը ճանչնամ: Ան մէկ ամիս առաջ թողած է Ատանան: Իր պատմութիւնը յարեւնման է ուրիշներու պատմածին: Ես ունիմ նոյնօրինակ փաստեր՝ ամերիկեան, անգլիական,

գերմանական եւ զուլիցերիական ականատեսներէ, որոնց վկայութիւնները զիրար կը հաստատեն:

Անգլուհին ինծի այսպէս պատմեց, - «Տեղահանութիւնը տակաւին կը շարունակուի: Ներքին նահանգներէն սկսած մինչեւ Պաղտատի երկաթուղիի երկայնքին՝ անցնելով Ատանայի մէջէն՝ անոնք կը զրկուէին դէպի մահուան ուղեւորութիւն: Երկաթուղին, ամէնուր որ գոյութիւն ունի, բնաջնջումի գործը փութացնելու կը ծառայէ՝ աւելի արագ քան այն վայրերը, ուր կարաւանները կը յառաջանան ոտքով: Ա՛հ, երանի՛ թէ միայն ջարդէին լմնցնէին, ինչպէս համիտեան օրերուն: Ատանայի երկաթուղիի կայարանէն դիտելի հայ կիներ, որոնք, մանկիկները թեւերնուն վրայ բարձրացուցած, «ջո՛ւր» կը խնդրէին: Հացի ախորժակ չէր մնացած այլեւս անոնց մէջ: «Միայն ջո՛ւր, պո՛ւտ մը ջո՛ւր» կ'աղերսէին...: Ջրհան մը կար: Մուկնի եկած՝ խնդրեցի պահապանէն թոյլատրել ինծի կաթիլ մը ջուր տալ: Կառախումբը շարժեցա՛ւ խկոյն: Եւ վերջին լսածս կորուսեալներու աղիողորմ հառաչն էր...: Ասիկա մէկ անգամ չէ պատահած: Գրեթէ ամէն օր նոյն երեւոյթը կը կրկնուէր: Լորտ Պրայս 800,000 զոհե՞ր կ'ենթադրէ: Լա՛ւ, այժմ այդ թիւը մէկ միլիոնի հասած ըլլալու է: Կրնա՞ք երեւակայել մարդկային արարածներ, որ նոյնիսկ վայրենի անասունները այսպիսով մահով մը մահացնեն...»:

Բայց Ուաշինկթընի թուրք զեսպանը տակաւին կը յայտարարէ թէ, այս պատմութիւնները «չինծու» են եւ թէ «կիներ եւ պատիկներ չեն սպաննուած...»: (Տէ՛ս էջ 16-37):

«ՍՊԱՆԴԻ ՆԱՅԱՍՈՒՄ»

Լեւի Դեվիս

2001 թ. Երեւանում առաջին անգամ հայերէն թարգմանութեամբ լոյս տեսաւ 1914-1917 թթ. Թուրքիայում խարբերդի Ամերիկայի հիւպատոս Լեւի Դեվիսի «Սպանդի Նահանգ» խորագրուած գիրքը, ուր ամփոփուած են նրա հաշուետուութիւնը, ինչպէս նաեւ Կ. Պոլսի ամերիկեան դեսպան՝ Հենրի Մորկընթաուին հասցեագրուած զեկուցագրերը Գրքի թարգմանիչն է Գրիգոր Զանիկեանը:

Լեւի Դեվիսը 1915 թ. եղեռնային օրերին, անվախ, յանդուգն կերպով, գիշեր թէ ցերեկ, հեծեալ չրջագայել եւ ականատես է եղել հայոց մեծ ողբերգութեան մանրամասներին: Այդ բոլորի մասին ծածկագիր հեռագրերով եւ զեկուցագրերով յայտնել է Կ. Պոլսի, ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորկընթաուին:

Ամբողջ հաշուետուութեան եւ գեկուցազրերի միջով կարմիր թելի նման անցնում են հայուժեան նկատմամբ, գործադրուած բռնի տեղահանութիւնները, անմարդկային դատանութիւններն ու կոտորածները: Նա այնպիսի սրտաճմլիկ եւ սարսափազդու վկայութիւններ է տալիս հայ կանանց, երեխաների, ծերերի նկատմամբ կատարուող կոտորածներին ու կոտորածների մասին, որ մարդ ցնցուում է:

Ստորեւ տրուում է մի քանի հատուածներ Լեսլի Դեվիսի հաշուետուութիւնից:

*
* *

«1915-ի ամբողջ ամրան ընթացքում, մերթընդմերթ, խարբերդ էին հասնում տարագիրների նորանոր քարաւաններ, որոնք յաճախ կազմուած էին լինում մի քանի հազար հոգուց: Առաջիններից մէկը, որը տեղ հասաւ Յուլիսին, կանգ առաւ քաղաքի ծայրամասի ընդարձակ դաշտավայրում, բարկ արեւի տակ: Բոլորը ցնցոտիներով էին, ոմանք գրեթէ մերկ: Գաղթականները հիւժուած էին, տանջուած, հիւանդ, կեղտոտ, ամբողջովին ոչլոտ, աւելի շատ վայրի գազանի, քան մարդկային էակների էին նման: Շաբաթներ շարունակ նրանց հոտի պէս քշել էին, գրեթէ չէին սնել, մեծ մասը, բացի մերկութիւնը ծածկող քուրջերից, ոչինչ չուէէր: Երբ իշխանութիւնների յատկացրած խղճուկ ուտելիքը բաշխուեց, պահապաններն ստիպուած եղան թշուառ սովալուկներին մահակներով յետ վանել: Նրանց մէջ տղամարդ քիչ կար, մեծ մասին դեռեւս խարբերդ հասնելուց առաջ քրտերը կոտորել էին: Կին ու երեխայ էլ էր շատ սպանուել, ոմանք հիւանդութիւններից ու անտանելի տանջանքներից էին ճանապարհին մահացել: Չնչին մասն էր խարբերդ հասել, նրանք էլ չուտով մահացան: Հենց որեւէ այցելու էր մտնում ճամբար, մայրերը մեկնում էին զաւակներին, խնդրում տանել, տիրութիւն անել կամ փորձում էին վաճառել մի քանի պիստոլով (պիստոլը մօտաւորապէս 4 սենթի է հաւասար): Բազմաթիւ սպաներ, այլեւայլ թուրքեր իրենց բժիշկների ուղեկցութեամբ չըջում էին գաղթականում, որպէսզի ամենագեղեցիկ աղջիկներին նախքան ընտրելը քննել տան:

...խարբերդ հասած քարաւանները մի քանի օր մնում, յետոյ ստիպուած էին լինում անյայտ ուղղութեամբ շարունակել ճանապարհը: Ու ամէն անգամ, երբ հեռանում էին, բազմաթիւ բռնագաղթածներ մնում էին տեղում, որովհետեւ միւսների հետ ճամբայ ընկնելու համար չափազանց հիւանդ կամ թոյլ էին լինում: Ամենասահմուկեցուցիչը, որին ականատես եմ եղել երբեւէ, որը գերազանցում է նոյնիսկ Տանթէի նկարագրած դժոխքը, նրանց վիճակն էր, ովքեր քարաւանի

մեծ մասի շարժուելուց յետոյ մնացել էին առաջին մեծ ճամբարում: Ես այդ մարդկանց առաջին անգամ երեկոյեան, մթնշաղին տեսայ: Գաղթականը լցուած էր հարիւրաւոր մեռելայնորով ու մեռնողներով, մեծ մասը ծառերի տակ կամ հենց հողին էր պառկած: Հսկողութիւնն ապահովում էին մէկ թէ երկու զինուոր-ստիկան, որոնք ինձ չարգիլեցին ներս մտնել: Ծիշդ ճանապարհի մէջտեղում, մէջքի վրայ ընկած էր միջին տարիքի տղամարդու դիակ, որը նոր էր մեռել, թերեւս սպանուել: Այստեղ-այնտեղ կանանց, երեխաների բազմաթիւ դիակներ, ամէն քայլափոխի հիւանդներ ու մահամերձներ կային: Ծերունիները տեղներից չէին շարժուում, անհասկանալի ինչ-որ բան էին մըմընում: Գզգզուած մագերով, փոս ընկած աչքերով կանայք նստել-քարացել էին, ցաւագարների պէս, պաղ հայեացքներով, պարապութեանն էին նայում: Նրանցից մէկը, որի յուշն անգամ մինչև հիմա ինձ հանգիստ չի տալիս, այնքան էր նիհար, մաշկն այնպէս էր դէմքին ձգուած, որ գլուխը գանգ էր թուում: Միւսները համակուել էին մահամերձի ջղագարութեամբ: Ուռած փորով երեխաները ընկղմել էին աղտեղութեան մէջ, ոմանք ներքին ջղակծկումներից ցնցուում էին:

Այդ թշուառներին այլեւս անհնար էր որեւէ կերպ օգնել: Մի քանի քայլ հեռու մի երկար փոս էր փորուած, ուր զինուոր-ստիկաններն ամէն օր նետում էին մահացածներին կամ ում մահացած էին համարում: Իսկ նրանց, ովքեր դեռեւս ի վիճակի էին աշխատել, ստիպում էին շարունակել փոսը: 1915-ի ամրանն այդ դաշտում, հարիւրաւոր հայեր թաղուեցին: Այժմ ըստ երեւոյթին այդ ամէնի հետքն էլ չկայ, բայց ամէն անգամ, երբ ես յիշում եմ անցեալը, հայեացքիս առջեւ վերակենդանանում են դժոխային տեսարանները, որոնց ականատես եղայ հայերի «վերաբնակեցման» ժամանակ:



Որոշ քարաւաններ, որոնք այդ ամառ, աւելի ուշ խարբերդ հասան, կանգ առան Խուլագիւղի մերձակայքում, Մամուրեթ-ուլ-Ազիզից մօտ ժամուկէս հեռաւորութեան վրայ: Ես երկու թէ երեք անգամ գնացի, գրուեցեցի որոշ աքսորականների հետ:

Լեսլի Դեվիս
1914-1917 թթ. Խարբերդում ԱՄՆ-ի Յիպատոս

Շատերը տարագրուել էին էրզրումից, բայց իրենց նախորդներին նման ճանապարհին ոչ թալանուել էին, ոչ յարձակման ենթարկուել: Քարաւանում նոյնիսկ մեծ քանակութեամբ տղամարդիկ կային: Նրանք ինձ պատմեցին, որ զինուոր-ոստիկանները լաւ են վերաբերուել իրենց եւ չնայած ումանք ճանապարհին մահացել, ումանք էլ հիւանդացել, հիւժուել են, յոյս ունեն խոյս տալ միւս տարագիրներին ճակատագրից: Բայց չէ՞ որ նրանք արդէն Թուրքիայի «Սպանդի նահանգում» էին, մի քանի շաբաթ էլ անցաւ, ես քսան մղոն հեռու տեսայ նրանց՝ մէկը միւսի վրայ դարսուած դիակները: Խուլագիւղից դուրս գալուց մէկ թէ երկու օր անց բոլորին կոտորել էին: Նրանք, ովքեր չափազանց թոյլ էին եղել, չէին կարողացել քարաւանի հետ ճամբայ ընկնել, մահացել էին ճամբարում, ոսկորները երեւում էին փոսերը հազիւ ծածկող հողի բարակ շերտի տակից:

Ամրան վերջին հասած քարաւանները տարան հայկական մեծ գերեզմանոցը, որը գրեթէ Մամուրեթ-ու-Ազիզ քաղաքի տարածքում էր գտնուում: Աքսորականները խիստ հսկողութեան տակ էին, բայց ես առանց դժուարութեան այցելութեան գնացի:

Այդ դժբախտների համար շատ յարմար տեղ էին ընտրել՝ ինքս ինձ անընդհատ հարցնում էի, թէ ինչպէս իշխանութիւններն աւելի շուտ չեն մտածել նոյնն անել: Գերեզմանոցը շրջապատուած էր բարձր պարսպապատով, միջից առու էր անցնում, այնպէս որ ներսում գտնուողները ծարաւից չէին մեռնի: Ամէն օր սայլերով վատորակ հաց էին բերում, շպրտում նրանց: Գերեզմանոցի ծայրամասում մի խոր փոս էր փորուած, ուր մերթընդմերթ նետում էին մեռածներին: Տեսարանը ոչնչով չէր տարբերուում ամառուայ ընթացքում Խարբերդ հասած միւս տարագիրների մասին իմ պատմածներից: Իւրաքանչիւր քարաւան մնում էր մի քանի օր, ապա մահամերձներին լքելով, ճանապարհը շարունակում: Հեռացողները տասը տասներկու դիակ անպայման թողնում էին: Հանրային փոսը նրանց էր սպասում, ինչպէս սպասում էր նրանց, ովքեր դեռեւս ողջ էին: Չնայած ես բոլոր գաղթականները պարբերաբար այցելում էի, բայց ամբողջ ամառուայ ընթացքում աշխատում էի քաղաքից շատ չհեռանալ, ամիսներ շարունակ հիւպատոսարանից ելնելիս գրպանս ատրճանակ էի դնում: Ոստիկանութիւնից յաճախ խորհուրդ էին տալիս փողոց դուրս չգալ, մանաւանդ՝ սկզբնական շրջանում ոչ մի դաւազ չունէի, որ ինձ ուղեկցէր: Ամէնուր զինուոր-ոստիկաններ, չեթեներ, քրտեր էին վրատում: Քաղաքում շրջելիս ես յաճախ էի հանդիպում նրանց: Քրտերը գրեթէ միշտ տապարով էին, որը նրանց սովորական գէնքն էր: Ժամանակ առ ժամանակ քաղաքի շուրջը քրտերի ու չեթեների վրաններ էլ էի տեսնում, մի պահ մեզ

նոյնիսկ թուաց, թէ ուր որ է նրանց բաց կը թողնեն մնացած հայերի վրայ, որ բոլորին կոտորեն: Բարեբախտաբար նման բան տեղի չունեցաւ...

...Յաջորդ շաբաթների ընթացքում ես այնպիսի գիւղեր այցելեցի, որոնց բոլոր բնակիչները հայեր էին եղել, նաեւ այնպիսի գիւղեր, որոնք մասամբ էին հայերով բնակեցուել: Բոլոր գուտ հայկական գիւղերը, ինչպէս Բազմաշէնն ու Խուլագիւղը, անմարդաբնակ ու աւերակ էին, խառը գիւղերում միայն հայերի տներն էին դատարկ: Ամէնուր յուսահատեցնող ամայութիւն էր, տները փլուզուում եւ նոյնիսկ քրիստոնէական եկեղեցիները, որոնք կառուցուել էին խոշոր գումարներով, զգալի զոհողութիւններով, աւերակոյտի էին վերածուում: Եղեգիլի մօտակայ գիւղի եկեղեցու մեծ զանգակը, որը Միացեալ Նահանգներից Խարբերդի ամերիկեան հիւպատոսութեան ջանքերով էր ձեռք բերուել, թաղուել էր գաւիթի փլատակների տակ: Կրօնական մոլաբարութեամբ համակուած մահմետականները, թուում էր որոշել են բնաջնջել ոչ միայն քրիստոնէայ ազգաբնակչութեանը, այլեւս վերացնել հաւատի հետքերը, այն ամէնը, ինչ քաղաքակրթութեամբ էր ստեղծուել: Տխուր էր աւերների ու աւերակների այս ընդհանուր պատկերը: Նման տեսարանների ես անընդհատ ականատես եմ եղել յաջորդ տասնութ ամիսների ընթացքում, երբ այցելել եմ մարդաթափ եղած, դատարկուած տներով գիւղերը, որտեղից ժամանակին որքան շատ ամուսիններ ու որդիներ էին մեկնել Ամերիկա եւ այժմ այնտեղ տեղեակ էլ չէին, թէ ինչ ճակատագիր էր րաժին ընկել իրենց հարազատներին:

Իմ շրջագայած գիւղերից կարելի է յիշատակել Հիւսէյնիկը, Մորենիկը, Խարպուտ սերայը, Վերին Մեզիրէն, Քեսիրիկը, Եղեգիլն, Սուրսուրին, Սուրսուրիի վանքը, Թաղեմը, Խուլյուն, Շենթիլը, Կարմրին, Գեղվանքը, Գայուն, Վարդաթիլը, Փերչենճը, Երդմնեկը, Մորելը, Գումքը, Հողը, Հապուսին, Հնձուրը, Հին Ագարակը, Զորգեղը, Վիզլանը, Քերթէն, Յակոբ Մեզիրեն, Ծառուկը, Հարսեկը ու Բերդակը: Կրկնութիւն կը լինէր հանգամանօրէն նկարագրել իւրաքանչիւրը, իրավիճակը գրեթէ ամէնուր նոյնն էր: Գիւղերի մեծ մասում ես մի քանի անգամ եմ եղել՝ պետական ղեպարտամենտը եւ ղեսպանատունն ինձնից հազարաւոր բնակիչների վերաբերեալ տեղեկութիւններ էին պահանջում: Ի հարկէ, բոլորն էլ գիտէին ձիով տարածաշրջանում շրջագայելու իմ սովորութիւնը. աշխանային մի օր միւտիրն իր գրասենեակն էր կանչել յաճախ ինձ ուղեկցող մի երիտասարդի ու յանդիմանել հիւպատոսի հետ հայկական բնակավայրերը այցելելու համար, պահանջել էր նման բան այլեւս չանել, քանի որ ըստ իրեն, չէր կարելի անել: Ուղեկիցս ինձ խնայն եւեթ տեղեկացրեց այդ նախազգուշացման մասին, բայց ես հաշուի չառայի:



«Նրանց շաքաթներով հոտի պես քշում էին, շատերը, բացի ուսերի խուրջիկից, ոչինչ չունեին»:

Լուսանկարը՝ Լեսլի Դեվիսի



«Բոլորը ցնցոտիներով էին. ոմանք գրեթե մերկ: Գաղթականները հիծուած էին, տանջուած, հիւանդ, կեղտոտ, ամբողջովին ոջլոտ, անելի շատ վայրի գազանի, քան մարդկային էակների էին նման»:

Լուսանկարը՝ Լեսլի Դեվիսի

Իմ ուղեւորութիւններից ամենահետաքրքիրները նրանք էին, որոնք ինձ մինչեւ Գէօլջուկ գիւղը հասցրին, որը Մամուրեթ-ուլ-Ազիզ քաղաքից մօտ հինգ ժամ հեռու է: Ես ուզում էի պարզել տարազուտոյների յետագայ ճակատագիրը, քանի որ ոմանք ասում էին, որ մեծ մասին կոտորել են քաղաքից ոչ շատ հեռու, սակայն ինքս ձիով բազմաթիւ անգամներ շրջագայել, որեւէ հետք չէի գտել: Ի վերջոյ մի թուրք զաղանի յայտնեց, որ ինքը Գէօլջուկ լճի շուրջը հազարաւոր դիակներ է տեսել, առաջարկեց տանել այդ տեղերը, ցոյց տալ: Մեպտեմբերի վերջերին, մի առաւօտ ժամը 4-ին մենք ճամբայ ընկանք ու, ձգտելով աննկատ մնալ, շարժուեցինք Տիարպէքիրի ուղղութեամբ: Դիակներ կային նոյնիսկ քաղաքի շրջակայքում՝ ճանապարհի ամբողջ երկարութեամբ, ընդ որում ոչ թէ թաղուած, այլ ուղղակի ծածկուած էին հողի բարակ շերտով՝ գինուոր-ոստիկանները դա անելի հեշտ էին համարել, քան գերեզման փորելը: Ահա թէ ինչու յաճախ գետնի տակից ցցուած թեւեր, ոտքեր ու գլուխներ էին նշմարուում: Որոշ դիակներ շները մասամբ յօշոտել էին: Մոլլագէօյում մենք թողեցինք ճանապարհն ու մի դաշտի միջով դէպի լիճ թեքուեցինք: Դաշտը լցուած էր հարիւրաւոր՝ հիմնականում կանանց, երեխաների դիակներով: Ակնյայտ էր, որ նրանց սպանել էին՝ այդքան տարագիր հազիւ թէ հիւանդութիւնից կամ հիւժուածութիւնից մահացած լինէր: Մեռելները Քիւրդեմլիք անունով յայտնի քրտական գիւղի մօտ էին, անելի ուշ ես իմացայ, որ այդ հայերի մեծ մասին տեղի քրտերն են կոտորել: Խուլլուցի մի կին նկարագրեց սպանըր: Նրան համագիւղացիների հետ Քիւրդեմլիք էին քչել, որտեղ եւ աչքով տեսել էր ամէն ինչ, քանի որ քրտերն իրեն խփել ու մահացած կարծելով, թողել-զնացել էին: Կինը մի քանի ժամ մնացել էր մեռելների մէջ, գիշերը վեր էր կացել, փախել: Յետագայում ես նրան մի քիչ փող տուի, որ գաղտնի Ռուսաստան անցնի, այժմ նա այնտեղ է, անփտանդ ապրում է: Այդ նախճիրի մասին տրապիզոնցի մի դեռատի կին էլ ինձ պատմեց: Նրա մօրն ու եղբօրը քրտերը սպաննել էին, իրեն Մեհմետ աղա անունով մէկը վերցրել, ամիսներ շարունակ պահել էր Քիւրդեմլիքում: Ի վերջոյ հայ կիւնը կարողացել էր փախչել, հասել Մամուրեթ-ուլ-Ազիզ:

Մեր տեսած դիակների որոշ մասը ողջակիզուած էր: Սկզբում ես կարծում էի, որ առողջապահական նպատակներով է դա արուել, չնայած քրտերը նման բաների մասին հազուադէպ են մտածում, բայց յետոյ ինձ բացատրեցին, որ նրանք զոհին այրում են, որպէսզի եթէ ոսկի կուլ տուած լինի, գտնեն: Յետագայում նոյն պատճառով ողջակիզուած շատ դիակներ տեսայ եւ իմացայ, որ տարագիրները, իրօք, յաճախ են իրենց ոսկեղբամները կուլ տալիս, թաքցնում, յուսարով, որ յարձակման ենթարկուելու դէպքում կը փրկեն:

Քրտական գիւղը թողնելուց յետոյ մենք մի քարքարոտ լեռ մազլցեցինք, յետոյ, մինչեւ Գէօլջուկ ձգուող հովիտն իջանք: Ընթ ափին իմ նախորդներն ու ամերիկեան միսիոներները սովորութիւն են ունեցել ամէն ամառ վրան խփել: Աւելորդ է ասել, որ Խարբերդում անցկացրած երեք տարիների ընթացքում ես նման հանգստի հնարաւորութիւն չունեցայ: Ծիշդ լճափին՝ այնտեղ, որտեղ ամրանը վրաններ էին խփել, երկու դիակ էր ընկած:

Մենք թեքուեցինք դէպի հիւսիս եւ մօտ երկու ժամ քայլեցինք լճի ափով: Մեր անցած ճանապարհին Գէօլջուկը հիմնականում եզերուած էր ուղղաձիգ քարաժայռերով, որոնք յաճախ խորունկ հովիտներով էին ընդմիջուում: Շատ շատերի յատակին դիակներ նկատեցինք: Խարակների բարձունքից լճի մէջ նոյնիսկ հարիւրաւոր ածիւններ ու ոսկրակոյտեր էին երեւում: Լուրեր էին պտղաւում, որ բազմաթիւ աքսորեալների զինուոր-ոստիկանները հասցրել են այս նոյն տեղը, ժայռերի բարձունքից ցած նետել, ջախջախել: Մեր տեսածները հաստատում էին այդ խօսակցութիւնները: Որոշ հովիտներում հազիւ երկու երեք, միւսներում հազարից աւելի ածիւն էր երեւում: Առաջին իսկ գոհերից մէկը, ում մօտեցանք, սպիտակամօրու ծերունի էր, որի գանկը քարով փշրել, քարը թողել էին վէրքի մէջ: Քիչ այն կողմ վեց թէ ութ՝ ածխացած դիակներ տեսանք, որոնց որոշ հագուստի ծուէնները միայն չէին այրուել, ինչ-որ Փես կարմիր բծի նման ընկել էր մի կողմ: Երեւում էին նաեւ ջարդուած գլուխներ, կմախքի ոսկորներ, որոնք ամենաերկարն են դիմանում: Այն ծառից քսան քայլ հեռու որի տակ մոխրակոյտեր կային, հողը մզացել էր: Մենք աւելի ուշադիր նայեցինք եւ պարզեցինք, որ արիւն է, ըստ երեւոյթին երկու-երեք շաբաթ առաջ է հոսել: Մառի բնին փամփուշտի բազմաթիւ հետքեր էին մնացել, որը նշանակում է, որ մարդկանց, որոնց այրուած ածիւնները մենք տեսել էինք, ամենայն հաւանականութեամբ նախ կանգնեցրել էին ծառի տակ, գնդակահարել:

Քիչ անց մտանք մի ուրիշ հովիտ, որտեղ նոյնպէս հարիւրաւոր դիակներ կային: Նրանց առկայութիւնը դեռեւս տեսնելուց առաջ գզացինք ժայռոտ բարձունքից ցած իջնելիս առաջինը մեր աչքին՝ հենց լճափին, աւազի տակից ցցուած քսան, թէ երեսուն գլուխների շարքն ընկաւ: Այո, դիակների միայն գլուխներն էին երեւում՝ զարհուրելի տեսարան էր: Ամենայն հաւանականութեամբ նրանք պէտք է, որ թաղուած լինէին եւ աւելի ուշ ես իմացայ, որ դա իրօք այդպէս էր: Բայց զինուոր-ոստիկանները զուտ թուրքական անփութութեամբ գոհերին լճին շատ մօտ էին հողին յանձնել, որովհետեւ աւազը փորելն անհամեմատ հեշտ է: Յետագայում սակայն այլքները, քամին աւազը քշել, տարել էին,

մարդկային գլուխները ասպարէզ հանել: Ուրիշ շատ դիակներ էլ կուտակել էին խարակների տակ, ժայռերի շուրջը, որոնք յետագայում տարտղնուել էին լճի վրայ կամ ցամաքում: Հովիտով բարձրանալիս անգամ մեր երկու կողմերում բազմաթիւ մեռելներ նշմարեցինք: Հովիտի մէջտեղում գաճաճ ծառեր, մացառներ եւ վայրի խաղողի մի որթատունկ կար: Իմ թուրք ուղեկիցն ինձ կանչեց, խնդրեց ուշադիր նայել: Մառերի տակ տասը-տասնհինգ դիակներ էին, շատերը նստած էլ մահացել էին: Ուղեկիցս բացատրեց, որ բոլորն էլ վիրաւոր կամ հիւանդ են եղել, թողել են, որ այստեղ մեռնեն: Ինքը, երբ մի շաբաթ առաջ անցել է այստեղից, ոմանք դեռեւս ողջ են եղել, նա նոյնիսկ նրանց հաց է տուել:

Միւս հովիտների մեծ մասում, որոնք մենք անցանք, փամբերձ աւազից ցցուած գլուխներ, այստեղ-այնտեղ ածիւններ տեսանք, որոնք թաղուած չէին: Ուռած դիակ, ճիշդ է պատահում էր, բայց մեծ մասն արդէն սկսել էր չորանալ: Դիակներ կային համարեա բոլոր հովիտներում, որոշ տեղերում չափազանց շատ՝ մէկում առնուազն հազար, միւսում, իմ կարծիքով, աւելի քան հազար հինգ հարիւր: Այնպիսի մեռելահոտ էր տարածուած, որ չնայած որոշել էի հովիտը ծայրէծայր անցնել, այդ օրը չկարողացայ: Նոյն վայրերը ես աւելի հանգամանօրէն ուսումնասիրեցի մի ամիս անց: Ինչպէս միւսները, այս հովիտն էլ եռանկիւնաձեւ էր, երկու կողմից շրջափակուած էր այնպիսի ուղղաձիգ գառիթափերով, որ մարդիկ, որոնց վրայ յարձակուել էին, չէին կարողացել վեր մագլցել: Իւրաքանչիւր կողմում կանգնած երկու-երեք ոստիկան ի վիճակի էր փախուստի ամէն փորձ կանխել: Զառիթափի լանջերին, քարերի արանքում, դեռեւս նշմարուած էին նրանց մարմինները, ուղքեր ըստ երեւոյթին ձգտել էին վեր մագլցել, փախչել, բայց տեղնուտեղը գնդակահարուել էին: Կիրճի երրորդ կողմը փակում էր լիճը՝ այն էլ այնպէս, որ տասնհինգ-քսան ոստիկան եթէ կողք-կողքի կանգնէին, ոչ մէկին թոյլ չէին տայ ջուրը նետուելով կամ լճափի նեղ կածանով փախչել: Զոհերին, ուրեմն, բառացիօրէն ծուղակն էին նետել, սառնասրտօրէն կոտորել: Դիակներն ըստ երեւոյթին արդէն երկու երեք շաբաթ ընկած էին իրար վրայ: Նոյնը հաստատեց մի ծեր քուրտ, որն աշխատում էր հովիտում տարածուող քրտական գիւղի մօտ: Երբ հարցրինք, թէ ի՞նչ է տեղի ունեցել, պատմեց, որ զինուոր-ոստիկանները մօտ երեք շաբաթ առաջ երկու հազար հայ են բերել եւ հարեւան դիւղերի քրտերին կոտորել տուել: Մերոնու աւազը համընկնում էր իմ տեսածի հետ, Մամուրեթ-ու Ազիզից, իրօք, երեք շաբաթ առաջ մի մեծ քարաւան անցաւ: Մեր քուրտը գրուցակիցը շատ վրդովուած էր թուում, ասում էր, որ դիակների հոտը տհաճ է ոչ միայն իր, այլեւ միւս համապիւղացիների համար: Իրօք, այդ ամրանն ու աշնանը հակաառողջական

պայմանները պատճառով, մօտակայքում բնակչության բազմաթիվ քրտեր հիւանդացան ու մեռան: Նոյնիսկ զարմանալի է, որ ոմանք ողջ մնացին:

Յետագայում ինձ աւելի հանգամանորէն տեղեկացրին հայերի քարաւանները վերացնելու մշակուած համակարգի մանրամասները նախ նրանց թոյլ են տուել որեւէ հովտում կամ այլ յարմար վայրում երկու-երեք օրով վրան խփել: Այդ ընթացքում զինուոր-ոստիկանները քրտեր են բերել եւ, ինչպէս ծերունին մեզ պատմեց, հրամայել են կոտորել հայերին: Ասել են, որ այդ ձեւով կարող են փող աշխատել, բայց եթէ հրաժարուեն, գլխացաւանքի մէջ կ'ընկնեն: Դրանից յետոյ պայմանաւորուածութիւն են կայացրել, ըստ որի նայած իրավիճակին, քրտերը զինուոր-ոստիկաններին նախօրոք որոշակի գումար՝ մի քանի հարիւր Ֆուետ եւ նոյնիսկ աւելի պիտի վճարէին եւ դրանից յետոյ թալանէին այն ամէնը, ինչ կը գտնէին հայերի վրայ: Քանի որ բնաջնջման այս ձեւի մասին ես շատ անգամ եմ լսել, կարծում եմ լայն կիրառում է գտել մեր տարածաշրջանում, թերեւս նաեւ Թուրքիայի այլ մասերում:

Աչքի էր զարնում այն հանգամանքը, որ մեր տեսած գրեթէ բոլոր դիակները մերկ էին: Ես իմացայ, որ գոհերին սպաննելուց առաջ ստիպում են հանուել, որովհետեւ մահմետականները պղծուած են համարում դիակներից յափշտակուած հագուստները: Բացի դրանից շատ աճիւնների վրայ սուկիների սպիներ կային, հիմնականում խոցուած էր նրանց որովայնը, կուրծքը, երբեմն նաեւ՝ կոկորդը: Քչերին էին փամփոռուած սպաննել, քանի որ թանկ արժէր: Սուկիով կամ դաշոյնով մեռցնելն աւելի էժան էր թուացել: Ուշադրութիւն էր գրաւում նաեւ այն, որ գրեթէ բոլոր կանանց դիակները տարածուած էին մէջքի վրայ, պարզ երեւում էր, որ զինուոր-ոստիկանները սուկիներով անմարդկային կտտանքների էին ենթարկել, յաճախ անշնչանալուց յետոյ էին ծակծակել մարմինները: Միաժամանակ նկատեցինք, որ սպաննուած հայերը առնուազն մէկ-երկու ամսուայ ճանապարհ էին կտրել՝ այսինքն ոչ թէ խարբերողի էին, այլ հեռուոր գաւառների բնակիչներ:

Մենք թողեցինք լիճը, լեռներն անցանք ու մի նեղ կածանով հասանք Գեղվանք գիւղը: Ճանապարհը ծածկուած էր դիակներով, մեծ մասն ընկած էր բանուկ մասի վրայ, այնպէս որ անխուսափելիորէն ձիերի սմբակների տակ պիտի մնար: Մի ժամանակ տեղական փոստը այդ նոյն կածանով էր կանոնաւոր խարբերդ հասնում, բայց հիմա, հասկանալի է, թուրքերն էին միայն գալիս-գնում: Իմ թուրք ուղեկիցն անսպասելի կանգ առաւ, ցոյց տուեց ճանապարհի կողքից ձգուող, ցած գահավիժող հովիտը, ասաց, որ մեր գտնուած տեղից ընդամէնը երկու հարիւր քայլ այն կողմ բազմաթիւ հայերի են ոչնչացրել: Մենք նոյնիսկ դիակների հոտն էինք առնում, բայց քանի որ արդէն, ուշ էր, բացի այլ

չափազանց շատ աճիւն էինք տեսել, այդ կարճ տարածութիւնը յաղթահարելու, աւելին տեսնելու ուժ չունեցանք: Տարի ու կէս անց, սակայն, ես եղայ նոյն վայրում եւ հովտում հարիւրաւոր գոհերի ոսկորներ տեսայ: Լերան եւ Գեղվանք գիւղի միջեւ տարածուող դաշտում մենք մի տեղ հասանք, ուր հազարաւոր գաղթականների էին կոտորել: Շատերին թաղել էին ոչ խոր փոսերում, այնպէս որ որոշակի քանակութեամբ ոսկրակոյտեր երեւում էին: Մենք Մամուրեթ-ուլ-Ազիզից ընդամէնը տասը մղոն էինք հեռու, բայց թուում էր, թէ նահանգի ամենասոսկայի սպանող հենց այդտեղ է կատարուել: Ինձ ասացին, որ մեծ թուով տղամարդկանց, որոնց զանգուածային տարագրութիւնից առաջ ձերբակալել էին Մամուրեթ-ուլ-Ազիզից, խարբերողից, հարեւան գիւղերից ու բանտարկել՝ բերել, այստեղ էին ոչնչացրել: Գեղվանքի չրջակայքում դեռեւս մնում էին ընդարձակ գաղթականների հետքերը, որտեղ բռնագաղթածների քարաւանները հանգրուանել էին ամառուայ ընթացքում: Շատ-շատերին հենց այս դաշտում էլ սպաննել էին...: (էջ 158-173):

ՀԱՅՏՈՒԻՆ ՖԻՐԲԻԽԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ 1915

(Գերմանացի սպայի վկայութիւն)

Հայերի ֆիրբիխերը 1914 թ. Թուրքիայում գերմանական զինուորական առաքելութեան գերագոյն հրամանատար մարշալ Լիման Ֆոն Սանտերսի անձնական թարգմանն է եղել:

Նա ականատես է եղել հայերի նկատմամբ կատարուած ահաւոր կոտորածներին եւ Գերմանիա վերադառնալուց յետոյ հրատարակել է «Հայաստան 1915» գիրքը, ուր լիովին հաստատուած է երիտթուրքերի կողմից հայութեան նկատմամբ գործադրուած բարբարոսային բնաջնջման ծրագիրը:

Այս գիրքը առաջին անգամ հայերէն թարգմանուեց եւ հրատարակուեց Երեւանում 1995 թ.: Թարգմանիչն է Գրիգոր Զանիկեանը:

Ստորեւ տրուած է մի հատուած այս գրքից:

ՍՍՏԱՆԱՅԻ ԿԻՐՃԸ

Տրապիզոնի ու Էրզրումի կուսակալութիւններից բռնագաղթուածներին Եփրատի հովտով քշեցին մինչեւ Քեմախի կիրճը՝ զառիթափ լանջերով մի անդնդախոր լեռնանցքը, որի նեղ ոլորաններով խիւհեղ արագութեամբ գահավիժում էր գետը: Հարիւր հազարաւոր հայեր այնպիսի աննկարագրելի տանջանք ու տառապանք կրեցին այնտեղ, որ թուում էր այդ անիծեալ մի ափ հողակտորի վրայ գարձեալ

կենտրոնացել է մարդկային հազարամեայ դաժանութիւնը, որպէսզի յուճիսեան տոթին մոլեգնած հրէշի նման ոռնայ:

- Ամբողջ քաղաքակրթութիւնը մի անպաշտպան քող է, որ երկուտանի, վայրագ ու դժնի ճիւղն ամէն ակնթարթ կարող է բզիկ-բզիկ անել:

Քեմախի նախճիրը, որ «Սիրանոյշ» վէպում նկարագրել է վիպասան Ֆ.Ռ. Նորդը (Շտուտգարտ, գերմանական հրատարակչութիւն), աւելի շուտ հեղինակային հիւանդագին երեւակայութեան անբնական ծնունդ է թուում, քան իրական իրադարձութիւնների անկողմնակալ վերարտադրութիւն: Էդգար Պոլլի, էռնեստ Հոֆմանի ամենազարհուրելի նկարագրութիւններն անգամ խամրում են այն ամէնի կողքին, ինչ 1915-ին այստեղ արել են Վիլհելմ Զ-րդի թուրք դաշնակիցները:

Հայերի հոծ, անվերջանալի խմբերը Յունիսի 8-ին, 9-ին եւ 10-ին դուրս եկան Երզնկայից: Նրանց ուղեկցում էր զինուորական պահակախումբը, որ մինչեւ տեղ հասնելը պիտի ապահովէր հետիոտներից եւ մօտ հարիւր եզան սայլից կազմուած քարաւանի անվտանգութիւնը: Բռնագաղթուածներին քշեցին Քեմախ՝ յաջորդ գաւառի կենտրոնը, բայց Եփրատի հովիտով անցած հարիւր-հազարաւոր հայերից միայն մի փոքրաթիւ խումբ վերջնական հանգրուան հասաւ: Անդեղախոր կիրճում թուրք զինուորներն ու արիւնարբու քրտերը շրջակայ լեռներից խուժեցին, յարձակուեցին անպաշտպան գաղթականների վրայ, արեան անյաղ ծարաւով կողոպտեցին, կոտորեցին նրանց: Ջարդարարները խեղազար ոռնոցներով անդնդախոր կիրճն էին շարտում դիակներն ու մահամերձների մարմինները: Ջախջախուող ոսկորների ճարձատիւնն անընդհատ արձագանգում էր ձորի նեղ պատերի մէջ, խառնուում վերելից եկող հոգեվարքների յուսահատ ճիչերին: Ծնողների աչքի առաջ գաւակներին ու մերձաւորներին բզկտում, կտոր-կտոր էին անում, արիւնաշողախ մսագնդերը խփում սուրսայր ժայռերին: Դժոխային այդ տեսարանից իրենց կորցրած մայրերն ու կանայք երեխաների, ամուսինների հետեւից նետուում էին մահուան խորխորատները, ոմանք յուսահատ ծունկ էին չոքում արիւնոտ ձեռքերով դահիճների առաջ, խնդրում շուտ սպաննել իրենց: Կային նաեւ այնպիսիները, որոնք գուժ էին աղբստում կամ իրենց ձեռքով գաւակներին գետը նետում, որի ժայռոտ ափերին դիակները ամբարտակներ էին գոյացրել: Յած ընկնող անկենդան մարմիններից ալիքներն անընդհատ ձողփում էին: Եւ այդ դժոխային սպանողը, մոլագար նախճիրը ոչ թէ մի երկու ժամ, անընդմէջ երեք օր շարունակուց: Մարդկանց երկար տանջում ու մորթում էին, արեան առուակները ժայռերի արանքով դանդաղ հոսում էին ներքեւ, խառնուում գետի բուռն յորձանքին:

Երեք օր... եւ արեւը չէր խաւարում, մոլեգնած հողմը չէր շրջում ստամպուլեան մեղկ պարտէզների շէնշող սեղանները, որոնց շուրջը դերմանացի ու թուրք դաշնակիցները բաժակ-բաժակի էին խփում: Մորթուող երեխաների աղիողորմ ճիչերը նոյնիսկ արեւելեան գայթակղիչ պատկերները չէին ցրում, որ սրճարանների մշտական յաճախորդների երեւակայութեան մէջ ուրուագծում էին ոգելից ըմպելիքների գոլորշիները: Միթէ՞ գերմանացի ոչ մի պետական գործիչ գիշերը չգարթեց խղճի խայթից, որպէսզի բոսֆորեան պաշտօնակիցների դէմքին գոռար, որ նրանք շղթայուելու արժանի դեւեր են: Մերոնք այդ ամէնին այնքա՛ն անլուրջ էին վերաբերում...:

Պեռլին ուղարկած 1915 թուականի Մայիսի 31-ի գեկուցագրում գեպան Վազենհայմը գրում է «Դժբախտաբար, յիշատակուած դէպքերը, կրկնով թուրքիայի ռազմական ու քաղաքական ներկայ իրավիճակից, հնարաւոր չէր կանխել»: Դժբախտաբար՝ ինչ լա՛ւ, ուղղակի հիւանալի գտնուած բառ է:

Երեք օր: Այն մարդկանց ունեցուածքը, որոնց մարմինները նիւրաւոր կուլ էր տուել, տարան իրենց խի՛ անտէր մնացած եզան սայլերով: Ու միայն չորրորդ օրը 86-րդ հեծեալ շուկատը Քեմախ հասաւ, որպէսզի «պատփի» արիւնուշտ քրտերին: Այդ «արդարադատ» զինուորները, սակայն, պարզապէս նախճիրն աւարտեցին՝ անգթօրէն խողխողելով հատուկեղև ողջ մնացածներին: Կիրճի լանջերն ու լերկ ժայռերը պատած էր ուռած դիակներով, ձորից անտանելի գարշահոտութիւն էր բարձրանում:

Երզնկայում աշխատած երկու գերմանացի բուժքոյր պատմել են.

«Մի զինուոր-ոստիկան պարծենում էր, որ օրական տասը տասներկու հոգի է սպաննել, գետը նետել, երեխաներին, որոնք չեն կարողացել փախչել, խփել է ժայռերին, գանգերը փշրել: Կանանց, ճանապարհի բոլոր գիւղերում, նորից ու նորից բռնաբարել են»:

Այնուհետեւ նրանք շարունակում են.

«Յաջորդ առաւօտ շուտ մենք լսեցինք մահուան դատապարտուած քարաւանի աղմուկը, որն անվերջանալի նախրի էր նման: Յուսահատութիւնն աննկարագրելի էր, շատերը գոռում էին. «Փրկէ՛ք մեզ, մենք մահմետական, գերմանացի, ինչ ուզենաք՝ կը դառնանք, միայն թէ գուժ ունեցող, ազատէք...»: Հիմա Քեմախ կը տանեն, բոլորիս կը մորթեն»: Քիչ անց մօտեցանք ու տեսանք, որ թուրք հեծեալները երեխաներ, ջահել աղջիկներ են առեւանգում: Քաղաքի մուտքի մօտ դերմանական բժշկական հաստատութեան կողքին, դէպի Քեմախ շարժուելուց առաջ քարաւանը կանգ առաւ: Իսկոյն իսկական ստրկավաճառութիւն սկսուեց՝ այն տարբերութեամբ, որ «գնորդները» ոչինչ

չէին վճարում, մայրերն ինքնակամ էին յանձնում գաւակներին, շատ լաւ իմանալով, որ յամառելը զուր է»:

Յունիսի 21-ին Կարմիր Նաչի այս երկու աշխատակցուհիները թողնում են Երզնկան եւ երկու օր անց, ճանապարհին, աւելի ահաւոր իրավիճակների ակնատես լինում. «Սարսուցնոց լուռութեամբ փոքր ու մեծ, մինչեւ անգամ էջի թամբին դժուարութեամբ նստած պառւանները առաջ էին շարժում, որպէսզի քիչ անց բոլորին կապկպեն ու Քեմախ-պողազի կոչուող անիծեալ կիրճի բարձրաբերձ ժայռերից Եփրատի ալիքների մէջ նետեն: Մի յոյն սայլապան նկարագրեց, թէ ինչպէս է դա արւում: Մարդու սիրտը քարանում էր սարսափից: Մեզ ուղեկցող զինուոր-ոստիկանը պատմում էր,- Աւելի քան 3000 կնոջ եւ երեխայի Մամախաթունից Քեմախ եւ հասցրի: Հեփ պիղթի, պիղթի («բոլորն էլ վերացան, վերացան...»): Մենք հարցրինք-

- Եթէ ուզում էիք վերացնել, ինչո՞ւ գիւղերում չսպաննեցիք, նախ տանջեցիք, նուաստացրիք այդքան:

- Պա դիակներն ի՞նչ անէիք,- պատասխանեց նա,- կը նեխէին, վարակ կը տարածէին»:

Կանգ առնենք մի պահ: Հազար տարի առաջ, պուլկարների դահիճը՝ վասիլ 2-րդը 15,000 հոգու աչք էր փորել, ընդ որում 150-ի մի աչքը թողել էր, որպէսզի իրենց կոյր եղբայրներին պուլկար արքայի՝ Սիմէոնի մօտ հասցնեն: Ասում են 978 թուականին ռուս զօրավար Սվետոսլավը Ազրիանապոլսի մօտ 40,000 հոգու ցից է հանել տուել: Կրասոսը հրամայել է խաչել Սպարտակի գլխաւորութեամբ ապստամբած հազարաւոր ստրուկները: Երուսաղէմը գրաւելուն պէս Տիտոսը դժնդակ վայրագութիւններ է սանձագերծել: Ֆրանկենհաուզէնի դաշտավայրում՝ «Արեան Հովտում», գերմանացի իշխանները դաժան դատաստան են տեսել պարտուած գիւղացիների նկատմամբ...:

Բայց այդ ամէնը եղել է 2000, 1000, 400 տարի առաջ, յաղթողը պարտուողից վրէժ է լուծել, պատերազմի բիրտ օրէնքով հաշուեյարդարի ձգտել: Ամենայն հաւանականութեամբ, եթէ հակառակորդը յաղթէր, նոյն կերպ կը վարուէր: Դրանք ռազմամոլների դարեր էին՝ մարդը դեռեւս ինչ-որ բան «արժէր», չնայած այդ արժէքը դահիճ կամ գոհ լինելուց աւելին չէր: Ամէնքն էլ պատերազմի ստրուկ էին՝ զինուոր, հպատակ, հայրենիքի պաշտպան, պարզապէս մարդ: Սակայն մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը՝ կանանց ու երեխաների նպատակադրուած խողխողումով, բարբարոսութեան մի գազաթ էր, որին հասնելու համար նոյնիսկ մեր նախնիները բաւականաչափ չէին «հասունացել»: Պէտք է վերջիչել Պիսառոյի կարմրամորթներին ոչնչացնելու եղեռնագործութիւնը, անգլիացի «քրիստոնեաների» տասմանական, նորգելան-

տական մարդորսութիւնը, բուրական պատերազմի նախճիրները, դիր՝ մանացիների՝ հերերոնների հալածելով, ծարաւից տանջամահ անելու մանրամասները, գէթ մօտաւոր պատկերացում կազմելու համար, թէ 1915-ին ինչ է տեղի ունեցել Քեմախում: Ճիշդ է, մինչեւ հիմա էլ փորձում են կատարուածը տարբեր՝ արեան մոլուցքով, ընչաքաղցութեամբ, կրօնական ատելութեամբ, բռնատիրութեամբ, յիմարութեամբ եւ այլ շարժառիթներով բացատրել, սակայն 1915 թուականի եղեռնագործութիւնը անըմբռնելի է այն աստիճանի, որ իրաւամբ թւում է պատմութեան ամենաարիւնոտ, դժնդակ առեղծուածը: Սովորական, մարդկային բանականութեան համար հայերի սպանող անընդունելի ու անմեկնաբանելի է՝ ոճիր, որի հետ չի կարելի հաշտուել:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ՓԱՍՏԱԳՈՎԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈ

Հայոց Յեղասպանութեանը վերաբերող փաստագրական վաւերագրերի եւ ուսումնասիրութիւնների շարքում խիստ կարեւոր նշանակութիւն ունեն տուեալ ժամանակուայ գերմանացի գործիչների հաղորդած տեղեկութիւնները, ուր հաւաստի փաստերով աշխարհին են ներկայացուած 1915 թ. ծանրագոյն ողբերգութեան պատասխանատուները:

Նրանց թւում իր առանձնայատուկ տեղն ունի գերմանացի արեւելագէտ, հոգեւոր եւ հասարակական անխոնջ գործիչ Յովհաննէս Լեփսիուսը (1858-1926):

Դեռեւս Ապտուհամիտեան բռնատիրութեան շրջանում, Սասունում եւ այլուր տեղի ունեցած հայերի կոտորածների մասին նա բազմաթիւ փաստեր է հաւաքել:

Նոյնիսկ այս նպատակով 1896 թ. Մայիսին Յ. Լեփսիուսը Պերլինից մեկնում է Կ. Պոլիս անձամբ ուսումնասիրելու եւ տեղւոյն վրայ ակնատեսի վկայութիւններ հաւաքելու միտումով: Թուրքական կառավարութիւնը նկատելով նրա կատարած գործունէութիւնը, յատուկ հրամանագրով արտաքսում է Թուրքիայից:

Այդպիսով Օսմանեան կայսրութիւնում անցանկալի անձ համարուող գերմանացի հոգեւորականը, ստիպուած վերադառնում է Պերլին եւ կարճ ժամանակամիջոցում շարադրում է իր առաջին աշխատութիւնը եւ հրատարակում 1896 թ. վերջերին: Գրքի խորագիրն է «Հայաստանը եւ Եւրոպան. Մեղադրանք մեծ տէրութիւնների դէմ եւ կոչ քրիստոնէական Գերմանիային»:



Յոփհանես Լեփսիոս (1858-1926)

Նշենք, որ գրքի անգլերէն եւ ֆրանսերէն թարգմանութիւնները անմիջապէս լայն տարածում գտան Եւրոպայում: Գրքում փաստագրական նիւթերով ընթերցողին է ներկայացնում Արեւմտեան Հայաստանում տեղի ունեցած դաժան կոտորածները, որին ինչպէս յայտնի է զոհ գնացին 300,000 անմեղ հայեր: Յ. Լեփսիոսը հաւաստի փաստեր է բերում հայ ժողովրդին բռնի մահամետականացնելու Սուլթան Ապտուլ Համիտի քաղաքականութեան, ինչպէս նաեւ հայ հոգեւորականներին վերացնելու նենգ մտայղացման մասին: Հաւաստի փաստերով ապացուցելով հետեւեալ մեկնութիւններն է կատարում.

1. Քաղաքացիական ու զինուորական իշխանութիւնները չեն խանգարել հայ ազգաբնակչութեան ջարդի նախապատրաստմանը:
2. Նրանք մասնակցել են ջարդի նախապատրաստութեանը, սիստեմատիկ կերպով քրիստոնեայ բնակչութիւնից խլելով նրա մօտ եղած գէնքերը եւ միաժամանակ զինելով մահամետականներին:
3. Այդ իշխանութիւնները, նոյնիսկ ամենաբարձրաստիճան նրանց ներկայացուցիչները, ուղղակի եւ անձնական մասնկացութիւն են ունեցել կոտորածներին, թալանին, ինչպէս նաեւ քրիստոնեաներին բռնի կերպով մահամետականութիւն պարտադրելու գործում:

4. Քաղաքացիական իշխանութիւնները փորձել են ջարդերից յետոյ թաքցնել կամ արդարացնել կատարուածը՝ հայ երեւելիներին ստիպելով բանտ նետուելու սպառնալիքի տակ կեղծ ցուցումներ տալ այն մասին, թէ իբր նրանց հայրենակիցները հրահրիչ գործունէութիւն են ծաւալել, նաեւ արգելելով հայերին արտագաղթի դիմել, իսկ արտասահմանցիներին՝ շփուել նրանց հետ:

5. Իշխանութիւնները ոչ մի քայլի չդիմեցին ջարդի ու կողոպուտի աղետալի հետեւանքները մեղմացնելու համար: Նրանք նոյնիսկ խանդարել են Եւրոպական մի շարք երկրներում ստեղծուած օգնութեան կոմիտեաների գործունէութեանը:

6. Ոչ մի միջոց չի ձեռնարկուել կանխելու համար ջարդերը այն շրջաններում, որոնց յաջողուել էր խուսափել դրանցից: Ընդհակառակը, 1896 թուականի վերջին ջարդերը Վանում, Տրապիզոնում, Քղիում եւ այլ վայրերում, հայ ժողովրդի ոչնչացումը շարունակուում է անարգելք կերպով:

7. Չանգուածային ջարդերի, կողոպուտների ու բռնի դաւանափոխութեան հեղինակներն ու մասնակիցները մնացել են անպատիժ:

Յ. Լեփսիոսի երկրորդ գիրքը՝ «Հաղորդում Հայ ժողովրդի դրութեան վերաբերեալ Թուրքիայում» խորագրով նուիրուած է Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին երիտթուրքերի կողմից Արեւմտահայութեան բնաջնջման քաղաքականութեանը Թուրքիայում: Այն լոյս տեսաւ 1916 թ. Պոստղամում:

Այս գրքում եւս Յ. Լեփսիոսը հենուել է անմիջական ականատեսների վկայութիւնների վրայ, այդ թւում զանազան պետութիւնների դիւանագիտական ներկայացուցիչների գեկուցումների եւ գերմանացի միսիոնարների բերած փաստագրական տուեալների վրայ: Բոլոր փաստերն ու եզրահանգումները ցոյց են տալիս, որ հայերի տեղահանութեան բուն ծրագիրը հայ ժողովրդի ոչնչացումն էր:

Յ. Լեփսիոսի երրորդ գիրքը «Գերմանիան եւ Հայաստանը 1914-1918 թթ.» խորագրով լոյս տեսաւ պատերազմի աւարտից յետոյ 1919 թ. Պոստղամում: Այն հաւաստի փաստաթղթերի ժողովածու է, ուր ընդգրկուած են գերմանիայի դեսպանների, հիւպատոսների, դիւանագիտական եւ բարձրաստիճան զինուորականների խիստ գաղտնի գեկուցագրերը, որոնք նոյնպէս հաստատում են հայութեան բնաջնջման քաղաքականութիւնը:

Յ. Լեփսիոսի ծաւալած հայանպաստ գործունէութեան ասպարէզում կարեւոր տեղ է զբաղում նաեւ Սողոմոն Թեհլիրեանի դատա-

վարույթեան ընթացքում ներդրած ջանքերն ու յատկապէս ճշմարտութեան բացայայտմանը նուիրուած նրա անկողմնակալ ելոյթը:

Յայտնի է, որ 1921 թ. Յունիսի 2-3-ը Պերլինի նահանգային Երրորդ դատարանում տեղի ունեցաւ հայ ժողովրդի Յեղասպանութեան գլխաւոր յանցագործներից մէկի՝ Թալեաթ փաշայի սպանութեան համար ամբաստանուած, ուսանող Սողոմոն Թեւլիրեանի դատավարութիւնը:

Դատավարութեան վերջում, մեղադրեալ Սողոմոն Թեւլիրեանը լիովին արդարացուեց եւ ազատ արձակուեց դատարանի հետեւեալ որոշման հիման վրայ.

«Յանցաւոր է ամբաստանեալ Սողոմոն Թեւլիրեանը 1921-ի Մարտ 15-ին, Շարրուտտնուրգի մէջ դիտաւորեալ կերպով մարդ մը, Թալեաթ փաշան սպաննած ըլլալուն համար: Ո՞՞»¹:

Երկու օր տեւած այս դատավարութեան նիստերին, որպէս վկայ մասնկացում էր նաեւ Յովհաննէս Լեփսիուսը: Նրա ընդարձակ ելոյթը խիստ բովանդակալից էր, անկողմնակալ եւ ճշմարտացի, հիմնուած փաստագրական նիւթերի հիման վրայ:

Ստորեւ բերում ենք մի հատուած այդ վկայութիւնից, ուր լիովին ապացուցում է երիտթուրքերի գործադրած ջարդարարական քաղաքականութիւնը հայ ժողովրդի նկատմամբ: Միմիայն մի ճշդում պիտի կատարենք Յ. Լեփսիուսի նշած հայերի թուաքանակի մասին:

Բնականաբար Յ. Լեփսիուսը ճիշդ է նկատել, որ «բացարձակ ստոյգ ազգահամար չկայ Թուրքիոյ նման երկրի մը մէջ»: Բանն այն է, որ Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում եւ յետոյ, երբ հայկական հարցը դարձաւ միջազգային շահարկման առարկայ, թուրք պետական գործիչները, այդ թւում եւ պատմաբանները, բարենորոգումների անհրաժեշտութիւնը աւելորդ համարելու միտումով, դիտաւորեալ սկսեցին ամէն ջանք թափել նուազեցնելու հայերի թուաքանակը Օսմանեան կայսրութիւնում: Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ հաշուառման ընթացքում բազմաթիւ հայկական գիւղերի բնակչութիւնը դուրս է մնացել գրանցումից: Հայ եւ օտարազգի պատմաբանների ու մասնագէտների տուեալները այդ խնդրում բերել են այն եզրակացութեան, որ նախապատերազմական շրջանում հայ ազգաբնակչութեան թուաքանակը Օսմանեան կայսրութիւնում եղել է 2.5 միլիոն մարդ: Իսկ գոհուած հայերի թուաքանակի մասին խօսելիս մատնանշում է, որ Մեծ Եղեռնի ընթացքում նահատակուել են աւելի քան 1.5 միլիոն հայեր²:

*
**

«Ընդհանուր տեղահանութիւնը որոշեց Երիտասարդ Թուրքերու Կոմիտէն. Թալեաթ փաշան, իբրեւ ներքին գործոց նախարար (միւս կողմանէ նաեւ էնվեր փաշա իբրեւ պատերազմական նախարար) հրամայեց եւ օգնութեամբ Երիտասարդ Թուրքերու Կոմիտէի կազմակերպութեան ի գլուխ հանուեցաւ: Տեղահանութիւնը, ընդհանուր աքսորը, որ արդէն 1915 Ապրիլին որոշուած էր, կը յարէր Թուրքիոյ ամբողջ հայ ժողովրդեան, քիչ բացառութեամբ զոր դեռ պիտի յիշեմ, Թուրքիոյ բնակչութեան մէջ կար՝ պատերազմէն առաջ՝ 1,850,000 հայ: Բացարձակ ստոյգ ազգահամար չկայ բնականաբար Թուրքիոյ նման երկրի մը մէջ: Յիշեալ թիւը կը ստանանք եղած վիճակագրական ատաղձէն, որ կը համաձայնի հայ Պատրիարքարանի ազգահամարին: Հայ բնակչութիւնը պատերազմէն առաջ սիւռուած էր եւրոպական Թուրքիոյ վրայ (Կ. Պոլիս, Ադրիանապոլ, Ռոտոսթօ) եւ ասիական Թուրքիոյ (Անատոլու, Կիլիկիա, Հիւսիսային Ասորիք, Միջագետք):

«Հայոց մեծագոյն մասը կ'ապրէր Արեւելեան Անատոլու, հայկական լեռնաշղթային վրայ, ազգին հին հայրենեաց, վեց վիլայէթներու մէջ, Կարին, Վան, Բաղէշ, Տիարպէթիք, Սեբաստիա եւ Խարբերդ: Արեւմտեան Անատոլու, Կ. Պոլսոյ դիմաց, Մարմարայի հարաւային եզերքը կը կազմէն բնակչութեան մէկ զօրաւոր բեկորը: Հարաւային Անատոլուի մէջ Կիլիկիա՝ (Տաւրոսի տափաստանով եւ Աղեքսանդրիոյ ծովախորշին շուրջ գտնուող սահմանակից Հիւսիսային ասորական երկիրներով) մէկ մասն էր հայկական հին հայրենիքին:

«Անատոլուի ամբողջ հայ բնակչութիւնը բարձրագոյն հրամանով տեղահանուեցաւ դէպի հիւսիսային եւ արեւելեան եզրը Միջագետքի անապատին, Տէր էլ Ձօր, Ռաքքա, Մեսկենէ, Ռաս էլ Այն, մինչեւ Մուսուլ:

«Մերձաւորապէս, 1,400,000 հայ տեղահան եղած են:

«Ի՞նչ կը նշանակէ այս աքսորը:

«Թալեաթի կողմէ ստորագրուած հրամանագրի մը մէջ սա խօսքը կը գտնուի. «Աքսորավայրն է Ոչնչութիւնը»: Համաձայն այս հրամանագրին, հոն տարուեցաւ արեւելեան Անատոլուի նահանգներէն դէպի հարաւ տեղահան եղող ամբողջ բնակչութեան միայն 10 տոկոսը աքսորավայր հասան, մնացած 90 տոկոսը ճամբան արդէն սպաննուեցան, իացի ոստիկաններէն վաճառուած եւ քիւրտերէն առեւանգուած կիներէն ու աղջիկներէն, մնացածն անօթութեան եւ ուժասպառութեան մեռան: Այն հայերէն, որոնք արեւմտեան Անատոլուէ, Կիլիկիայէ եւ հիւսիսային Ասորիքէ անապատի եզրը քշուեցան, հաւաքատեղիներուն մէջ

հետզհետեւ հարիւր հազարաւոր մարդկանց նկատելի բազմութիւն մը հաւաքուեցաւ: Ասոնք յետոյ մեծ մասամբ սխտեմաթիք սովով ու պարբերական ջարդերով ոչնչացան: Երբ հաւաքատեղիները նոր խումբերով կը լեցուէին, այնպէս որ մարդկանց ալ տեղ չէր մնար, գունդ առ գունդ անապատ կը տարուէին եւ հոն կը մորթուէին: Թուրքեր յայտնած են թէ անգլիացուց օրինակով՝ հանդէպ Բուրբու հարաւ Ափրիկէի մէջ, իրենք հաւաքատեղիներու գաղափարին եկած են: Պաշտօնապէս կը յայտարարուէր, թէ աքսորները նախագուշակական կարգադրութիւններու կը ծառայեն, անհատապէս սակայն հեղինակաւոր անձեր բոլորովին յայտնի կերպով կը ծանուցանէին, որ հայ ազգը ոչնչացնել էր նպատակը:

«Ըսածս կը հետեւի նաեւ այն վաւերաթուղթերէն, որոնք կայսերական Դեսպանութեան եւ արտաքին գործոց նախարարութեան արձանագրութիւններէն հրատարակեցի, մանաւանդ գերման հիւպատոսներու եւ Կ. Պոլսոյ գերման դեսպաններու զեկոյցները»³:

Ծանօթագրութիւններ

1. Դատաւարութիւն Թալեաթ փաշայի, սղագրական զեկուցում, Վիեննա, Միսիթարեան տպարան, 1921, էջ 210:
2. Մանրամասն տե՛ս Ռուբէն Սահակեան, «Յեղասպանութեան Պատմութիւնից», երեւան, 1990, էջ 288-289: Հայկազուն Գալստեան, «Արեւմտեան Հայաստանի բնակչութեան Ազգային կազմը ըստ Վիդալ Բինեի վիճակագրութեան», «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովրդներ», XII, Թուրքիա, Երեւան, 1985, էջ 59:
3. Դատաւարութիւն Թալեաթ փաշայի, էջ 89-91:

ՄԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐԻ ՈՉՆՉԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Ստորեւ բերուած յօդուածը պատկանում է պուլկար պատմաբան, հրապարակախօս Տեյջօ Պալապանովի գրչին: Այն լոյս է տեսել պուլկարական «Օթեչեսթուէ Ֆրոնդ» թերթում «Հայկական պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների ճակատագիրը Թուրքիայի տարածքում» խորագրի տակ, իսկ հայերէն թարգմանութիւնը «Ս. Հայաստան» ամսագրում 1987 թ. թիւ 4, էջ 25-27:

Հարկ ենք համարում նշել, որ տողերիս հեղինակը եւս անդրադարձել է մշակութային ցեղասպանութեան խնդրին: Դեռեւս 2000 թ. մեր հրատարակած «Յեղասպանութիւն եւ գոյատեւման պայքար» խորագիրը կրող գրքում առանձին գլուխ ենք նուիրել հայկական եկեղեցիների, վանքերի եւ այլ յուշարձանների ցաւալի վիճակին: (Տե՛ս էջ

112-124): Այն կրում է «Պատմամշակութային արժէքների ոչնչացումը Արեւմտեան Հայաստանում» խորագիրը:

*

* *

«Թուրքերի նախահայրերը պատմութեան թատերաբեմում յայտնուել են որպէս նուաճողներ: Մօտաւորապէս մեր թուարկութեան հինգերորդ դարում նրանք Ասիայի կենտրոնական շրջաններից սկսում են շարժուել դէպի արեւմուտք, իսկ աւելի ուշ գրաւում են Կովկասը, Փոքր Ասիան եւ Պալքանեան թերակղզին: Նրանց ստեղծած Օսմանեան կայսրութիւնը իւրացնում է նաեւ Արեւմտեան Հայաստանի ընդարձակ տարածքը՝ մօտ երեք միլիոն բնակչութեամբ:

Պատմական աղբիւրները ցոյց են տալիս, որ հասարակական-տնտեսական, մշակութային բարձր մակարդակի եւ ձեւաւորուած ազգային ինքնագիտակցութեան շնորհիւ հայերն ստեղծել են աշխարհի առաջնակարգ քաղաքակրթութիւններից մէկը: Հայ ժողովուրդն զգալի աւանդ ունի մարդկութեան գանձարանում՝ դարեր շարունակ կերտելով մշակութային կոթողներ, առեւտրի կենտրոններ, վարչական ու հասարակական շէնքեր, եկեղեցիներ, վանքեր:

Անառարկելի փաստերը վկայում են, որ հայ ժողովրդի հանդէպ պործագրուող կոտորածների ու զանգուածային ցեղասպանութեան տարիներին երիտթուրքերի կառավարութիւնը ձգտում էր ոչնչացնել հայկական քաղաքակրթութեան ամէն մի նիւթեղէն ապացոյցը: Հենց այդ քաղաքականութեան տրամբանական հետեւանքն էր հայ ժողովրդի ցեղասպանութիւնն ու մշակոյթի, արուեստի շատ արժէքներ ոչնչացնելը:

Արդէն քանի տասնեակ տարի է, որ Հայաստան անունը հետեւողականօրէն ջնջւում է թուրքական ամէն տեսակ քարտէզներից, տեղեկատուներից, այլ վաւերաթուղթերից, եթէ մինչեւ անգամ պատահաբար սպորտում է որեւէ տեղ, բռնագրաւում է ողջ հրատարակութիւնը, իսկ հրատարակիչներն ու հեղինակները դատական պատասխանատուութեան են ենթարկուում: Սովորական երեւոյթ են դարձել թուրքական պաշտօնական բողոքները այլազգի այն հեղինակների ու հրատարակութիւնների դէմ, ովքեր յիշատակում են հայկական հին-աւուրց պետութեան գոյութեան մասին: Միացեալ Նահանգներում պործող «Ջօրեան» հաստատութեան վերջին տուեալների համաձայն Թուրքիայի արեւելեան շրջանների գիւղերի իննսուն տոկոսը վերանուանուած է: Առայժմ օգտագործւում են միայն Վան, Պիթլիս, Էրզրում քաղաքների անունները, ուր գրեթէ հայ չի ապրում:


Հայկական մշակութային յուշարձանները՝ եկեղեցիները, հասարակական շինությունները, առանձնատները միտումնաւոր աւերելու քաղաքականութիւնը զանգուածային կոստորածների ժամանակ (1915-1922 թթ.) օրէնքի ուժ ստացաւ: Հայոց պատրիարքարանի երեսնական թուականների տուեալների եւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի ուսումնասիրութիւնների համաձայն, Արեւմտեան Հայաստանում աւերուած է 1036 եկեղեցի եւ վանք, իսկ 691-ը լրջօրէն վնասուած է: Դրա ապացոյցն են Վանի, Մուշի տաճարներն ու պաշտամունքային կառոյցները, որոնց քարէ հիմքերը դեռ կարելի է նշմարել:

Առանձին դէպքերում յուշարձանները քանդուած են հրանօթային ումրակոծութեամբ: Այդ երեւոյթը նկատելի է մանաւանդ արեւելեան շրջաններում, որտեղ եկեղեցիներն ու վանքերը զինավարժութիւնների ժամանակ թիրախ են ծառայում: Աւերուած եւ լրջօրէն վնասուած են Զորադիրի եւ Խծկոնքի եկեղեցիները, որոնք ստեղծուել են 10-րդ դարում:

Մեծ քանակութեամբ մշակութային յուշարձաններ ոչնչացնում են առանձին թուրք բնակիչների նպատակային «անփութութեան» եւ հետեւողական չարամտութեան պատճառով: Հայկական եկեղեցիների, քաղաքացիական կառոյցների ճակատների սրբատաշ քարերը որպէս շինանիւթ լայնօրէն օգտագործուած են տներ, հասարակական շէնքեր, մզկիթներ, տարբեր կայաններ, ճանապարհներ կառուցելու համար: Սովորական երեւոյթ է դարձել եկեղեցիներն ու վանքերը մզկիթ, բանտ, պահեստ եւ Օսմանեան մշակութային ժառանգութեան «թանգարան» դարձնելը: Այսպէս օրինակ, Կարսի Մայր Տաճարը վերածուել է թանգարանի, Ուրֆայի եկեղեցին՝ մզկիթի: Ուշադիր նայելիս կարելի է որոշակիօրէն նշմարել այդ շինութիւնների վրայ փորագրուած խաչերն ու խաչաձեւ պատուհանները՝ անվիճելի ապացոյցներն այն բանի, որ դրանք քրիստոնէական արժէքներ են: Օրտուի եկեղեցին դարձել է բանտ, ուր հեծում են քուրա հայրենասէրները, իսկ իր ինքնատիպ որմնանկարներով նշանաւոր Վարազայ վանքը՝ գոմ:



Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին (10-րդ դ.), նախ վերածուեց թանգարանի իսկ յետոյ մզկիթի



Մշոյ Ս. Կարապետ վանքը (7-17-րդ դդ.), աւերուած




Մշոյ Առաքելոց վանքի ընդհանուր տեսքը, աւերուած



Դեկորի վանքը (10-13-րդ դդ.), աւերուած



Վարազայ վանքի ընդհանուր տեսքը (10-13-րդ դդ.), աւերուած



Խծկոնքի վանքին համալիրը (9-10-րդ դդ.), ավերուած



Կարսի Ս. Առաքելոց եկեղեցու ներքին տեսքը, վերածուած մզկիթի: Նկարը՝ Զրայր Խաչիկեանի, 1997 թ.



Ջուղայի խաչքարերը այլևս գոյութիւն չունին



Տապալուած խաչքար

Թուրք իշխանութիւնների կանխամտածուած գործողութիւնների հետեւանքով փլուզման վտանգի ենթակայ են նաեւ այն բոլոր եկեղեցիներն ու տաճարները, որոնք դեռ կանգուն են: Դա վերաբերում է մասնաւորապէս Աղթամարին, Անիի Մայր Տաճարին, շատ ուրիշ եկեղեցիների: Յուշարձանների մի մասն էլ աւերուած են ճանապարհ կամ ջրանցք անցկացնելու պատրուակով, մի այլ մասից քերուած են արձանագրութիւններն ու ներքին որմնանկարները: Նման հարիւրաւոր փաստերի կարելի է ականատես լինել Կիլիկիայում:

Անագնիւ կեղծարարութեան փորձ է, մասնաւորապէս, հայկական մշակութային կոթողներն անընդհատ Օսմանեան ճարտարապետութեան վաղ միջնադարին՝ սելճուկեան արուեստին վերագրելը:

Մնում է յուսալ, որ համաշխարհային հասարակայնութեան հետեւողական բողոքներից յետոյ Անգարայի կառավարող շրջանները կը դադարեցնեն մշակութային յուշարձանների ոչնչացումը, որոնք հայ ժողովրդի հարուստ անցեայի պերճախօս վկայութիւններն են:

THE ARMENIAN GENOCIDE

First 20th Century Holocaust

By Richard Diran Kloian, Richmond, CA 1980

Գալիֆորնիայի համալսարանի դասախօս Փրոֆ. Ռիչրդտ Տիրան Քլոյեանի 1980 թ. հրատարակած «Հայերի Յեղասպանութիւնը» ստուարածաւալ հատորը բովանդակում է 1913-1922 թուականներին ԱՄՆ-ի մամուլում լոյս տեսած Մեծ Եղեռնին վերաբերող յօդուածների պատճէնների հաւաքածուն:

Բերուած փաստագրական նիւթերն ու ականատեսների վկայութիւնները ամբողջութեամբ հերքում են թուրք պատմագրութեան ուրացումները:

Ստորեւ անգլերէնից մեր թարգմանութեամբ տրւում են մի քանի վկայութիւններ այդ հրատարակութիւններից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԶՆՋՈՒՄԸ

Մէկ հազարամեայ ժամանակաշրջանում քրիստոնեաների նկատմամբ ամենադաժան, ամենավայրագ եւ աններելի, համատարած կոտորածներ են տեղի ունենում Հայաստանում, արեան մէջ հեղեղելով տղամարդկանց, կանանց եւ երեխաներին: Ամբողջ գիւղեր ջնջւում են երկրի երեսից հրի ու սրի, բռնազաղթի միջոցով: Ակնյայտ է, որ հայերի նկատմամբ կատարուող այս շարժումը, Թուրքիայի ոչ-թուրք եւ քրիստոնեայ բնակչութեան դէմ գործադրուող փոխ համաձայնեցուած ծրագրի մը մասն է կազմում (THE MISSIONARY REVIEW OF THE WORLD, NOVEMBER 1915):

ԹՈՒՐԶԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերջին հրատարակություններում մի քանի անգամ համառոտակի մեր ուշադրությունը բեկեռեցինք թուրք-գերմանական իշխանությունների տակ հայերի կրած տառապանքների մասին: ԱՄՆ-ում բրիտանական նախկին դեսպան Վիլյամ Պրայսը «Associated Press»-ի միջոցով մի ազդեցիկ յայտարարություն կատարեց, որպեսզի Ամերիկյան ջանք գործադրի կանգնեցնելու հայերի կոտորածները: Լորտ Պրայսը այն անձնաւորությունը չէ, որ փաստերը չափազանցի եւ սխալ յայտարարություն կատարի: Այլ վկայություններով մէկտեղ նա նշում է հետեւեալը: Տրապիզոն քաղաքում, ուր հայություն թիւը անցնում է 10,000-ից, հրամաններ են եկել Կ. Պոլսից, որպեսզի ձեռքարկուէն բոլորը: Զինուորական ջոկատները հարածելով բռնել են հայերին եւ քշել դէպի ծովեզերքը: Այդտեղից նաւերով տարել են ծովի խորքերը եւ շարտել ջրի մէջ: Եւ այդպէս խեղդամահ են արել բոլոր տղամարդկանց, կանանց եւ երեխաներին: Այս արարքը անձամբ տեսել եւ յայտնել է Իտալիայի հիւպատոսը («The Outlook» An illustrated Weekly Journal of current events, September 29, 1915):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԲՆԱԶՆՋՈՒՄԸ

Հայ քրիստոնէաների կոտորածի, տանջանքի ու բռնազաղթի ցնցող լուրերը կոչ են անում Ամերիկային, որպէսզի օգնութիւն եւ պաշտպանութիւն ցուցաբերի հայերին: Թուրքիայից ստացուած բազմաթիւ եւ հաւաստի ազդիւրները ցոյց են տալիս, որ այդ կոտորածները տեղական անկարգութիւններ կամ անհիմն ճշման հետեւանքով կատարուող գործողութիւններ չեն, այլ նպատակադրուած ծրագրով հայ ազգի ոչնչացումը: Հազարաւոր ընտանիքներ քշուել են իրենց տներից, սովահարուելով ճանապարհին: Գիւղերն ու քաղաքները դատարկուել են իրենց բնակիչներից: Բռնութեան ու տանջանքի ազդեցութեան տակ շատերը ուրացել են իրենց քրիստոնէայ հաւատքը: Կանայք տարուել են հարեմները, իսկ երեխաները վաճառուել որպէս ստրուկ (The Independent, September 27, 1915):

Այս տարուայ կոտորածները իրականում առ աւելի առաջ գնացին, քան 1895-96 թուականներին էր: Արեւմտեան Եւրոպայից հասած տեղեկությունները կամ այլ աղբիւրներից ստացուած վկայությունները լիովին համընկնում են իրար հետ: Ծշմարտութիւնն այն է, որ Փոքր Ասիայի արեւելեան եւ հիւսիսային շրջանների, ինչպէս նաեւ Հայաստանի քրիստոնէայ բնակչութիւնը կանխամտածուածօրէն բնաջնջում է ամբողջութեամբ: Զինուորական տարիք ունեցող մարդիկ սպանուել են, իսկ երիտասարդ կանայք մտել են թուրքական հարեմները եւ երբեմն իրենց զաւակների հետ բռնութեամբ ընդունել մահմետականութիւն (The New York Times, October 10, 1915):

1915 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՀՈՈՍԻ ՊԱՊ ՊԵՆԵՏԻԿՂՈՍ XV-Ը ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՕՍՍԱՆԵԱՆ ԿԱՅՈՒՐՈՒԹԻՒՆՈՒՄ

Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեայ տարելիցի առթիւ հանրաձայնօթ լրագրող, հրատարակախօս եւ ազգային-հասարակական անխոնջ գործիչ Յարութ Սասունեանը անգլերէն լեզուով ընթերցողի սեղանին դրեց «Հայերի Յեղասպանութիւնը, Աշխարհի Կոչը 1915-2005 թթ.» խորագրով փաստաթղթերի եւ յայտարարությունների արժէքաւոր մի ժողովածու:

Այն սկսում է Գալիֆորնիայի Հայոց Յեղասպանութեան 90-ամեակի ոգեկոչման Մարմնի երկու խօսքով, ուր շնոհակալութիւն է յայտնուում Պրն. Յարութ Սասունեանին, նրա համար որ ինքը սիրալոյսով ընդունելով Մարմնի առաջարկը պատրաստել է վերոյիշեալ արժէքաւոր եւ բովանդակալից հատորը:

Նշենք, որ հատորը հրատարակուել է Մարմնի անմիջական հովանաւորութեամբ:

Հեղինակը առաջաբանում մատնանշում է հետեւեալը.

«Փաստաթղթերի եւ յայտարարությունների այս համառոտ ժողովածուն պարզապէս հաստատում է այն իրողութիւնը, որ Հայոց Յեղասպանութիւնը անցած 90 տարիների ընթացքում ճանաչուել եւ ընդունուել է իրազմաթիւ կառավարությունների, պետական ղեկավարների, հոչակաւոր անձնաւորությունների եւ միջազգային հեղինակաւոր կազմակերպությունների կողմից, միահամուր դատապարտելով 1915 թ. թուրք ոճրագործների հայերի նկատմամբ գործադրած կոտորածները» (էջ 9):

Հատորը բաղկացած է 4 գլուխներից, իսկ վերջում տրուած է օգտագործուած գրականութեան ցանկը:

Առաջին գլխում բերուած են առանձին երկրների նախագահների, պետական պաշտօնական եւ հեղինակաւոր անձանց հոչակագրերը:

Երկրորդ գլխում ազգային օրէնսդրական գրութիւններ, օրէնքներ, բանաձեւեր, յայտարարություններ:

Երրորդ գլխում՝ յայտարարություններ միջազգային կազմակերպությունների եւ գործիչների կողմից:

Չորրորդ գլխում՝ պայմանագրեր, մեղադրական եզրակացություններ եւ դատավճիռներ:

Բնականաբար գրքում ընդգրկուած փաստաթղթերն ու յայտարարությունները խիստ կարեւոր են եւ հրատապ, քանի որ բոլորն էլ պատապարտում եւ ճանաչում են Հայոց Յեղասպանութեան փաստը:

Այնուհանդերձ մենք նպատակաշարժար գտանք կանգ առնելու Հռոմի կաթողիկէ եկեղեցւոյ կրօնապետների տեսակէտների վրայ:

Յայտնի է, որ վերջերս բոլորս ականատես եղանք, թէ ինչպէ՞ս աշխարհը այնպիսի ուղեք ու յուզուեց Հռոմի Պապ Յովհաննէս Պօղոս Բ-ի դէպի յաւիտենականութեան գնալու տխուր իրականութեամբ:

Անցան օրեր եւ իրավիճակը հանդարտուեց: Հռոմի կաթողիկէ եկեղեցին արդէն ունի իր նոր Պապը՝ Պենետիկոս ԺԶ. (Ժողէֆ Ռացինկերը) որը սկզբունքային, բարեգութ եւ համամարդկային վեհ գաղափարներով օժտուած անձնաւորութիւն է եւ արմատապէս դէմ է թուրքոյ Եւրոպական Միութեան մուտքին:

Յատկանշական է, որ նորոգ հանգուցեալ Յովհաննէս Պօղոս Բ. Պապը, իր կենդանութեան օրօք 2001 թ. Սեպտեմբերի 26-ին եղաւ Հայաստանի մայրաքաղաք Երեւանում, մասնակցելու համար Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի տօնակատարութիւններին: Իր շքախմբով այցելեց Ծիծեռնակաբերդի Մեծ Եղեռնի յուշահամալիրը, իսկ այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ հռչակուեց համատեղ մի յայտարարութիւն, այդ յայտարարութեան անգլերէն թարգմանութիւնը գետեղուած է Յարութ Սասունեանի հատորի էջ 54-ում: Այսպէս.

Սեպտեմբեր 27, 2001 թ.

Համատեղ յայտարարութիւն

Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ-ի եւ Նորին Սրբութիւն Գարեգին Բ. Կաթողիկոսի կողմից.

«...20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը համարուող մէկուկէս միլիոն հայ քրիստոնէաների բնաջնջումը եւ յետագայում նախկին թոթալիթար վարչակարգի կողմից հազարաւոր մարդկանց ոչնչացումը մեծագոյն ողբերգութիւններ էին, որոնք դեռեւս շարունակուում են գոյատեւել ներկայ սերունդի յիշողութեան մէջ...»:

Տողատակին նշուած է նաեւ, որ Հայոց Յեղասպանութիւնը դատապարտուել է նաեւ նորին սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ-ի եւ Նորին Սրբութիւն Գարեգին Բ. Կաթողիկոսի կողմից դեռեւս Նոյեմբեր 9-ը 2000 թուականի համատեղ հռչակարգում: (էջ 54):

Յովհաննէս Պօղոս Բ-ը Ծիծեռնակաբերդ այցելութեան ընթացքում, Եղեռնի յուշահամալիրի լուսնային պատի վրայ դրուեց մի յուշաքար, որը նուիրուում էր Մեծ Եղեռնի օրերին Հռոմի կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր առաջնորդ՝ Պենետիկոս Տասնհինգերորդ Պապի անմար յիշատակին:

Յուշաքար դրեց նաեւ Յովհաննէս Պօղոս Բ-ը, որի վրայ գրուեցին նրա հետեւեալ տողերը. «Յիշիր, Տէ՛ր, այս ազգի որդիների տառապանքը եւ օրհնիր Հայաստանը»:

Ինչպէս վերեւում նշուեց Հռոմի Պենետիկոս XV Պապի յիշատակը յարգուեց ըստ պատշաճի, քանի որ Մեծ Եղեռնի օրերին նա խիստ մտահոգուելով հայերի կոտորածների համար 1915 թուականի Սեպտեմբեր 10-ին յատուկ նամակով դիմեց Օսմանեան կայսրութեան սուլթան Մեհմեդ V-ին, կանխելու համար հայութեան կոտորածները:

Յարութ Սասունեանի կողմից Ֆրանսերէնից անգլերէն թարգմանուած այս խիստ կարեւոր փաստաթուղթը տեղ է գտել հատորի 15-րդ էջում:

Ստորեւ, այն ընթերցողին ենք ներկայացնում հայերէն թարգմանութեամբ:

Եզրակացնելով մեր այս գրութիւնը ի սրտէ շնորհաւորում ենք հեղինակին՝ Պրն. Յարութ Սասունեանին, Մեծ Եղեռնի 90-ամեայ տարելիցի առթիւ այսպիսի բարձրաթէք փաստազրական ժողովածու կազմելու եւ հրատարակելու առթիւ, բարեմաղթելով նորանոր յաջողութիւններ Հայոց Մեծ Եղեռնը միջազգային շահանիշով աշխարհին ճանչնալ տալու, նրա ներդրած ջանքերի ու պայքարի սուրբ գործի համար:

*
* *

Հռոմի Պապ Պենետիկոս XV (1914-1922) Սեպտեմբեր 10, 1915 թ. Նորին Վսեմութիւն, Օսմանեան սուլթան Մեհմեդ V-ին

Նորին Վսեմութիւն

Այդ դառն եղելութիւնները, որոնք հետեւանք են այն անեղ մարտի, որի մէջ ընդգրկուած է Ձերդ վսեմութեան բարգաւաճող կայսրութիւնը՝ ընդդէմ Եւրոպայի մեծ պետութիւնների, խոցում են մեր սիրտը: Լայնածաւալ Օսմանեան իշխանութեան մէջ անասելի տառապանքների ենթարկուող մի ամբողջ ժողովրդի ցաւալի արձագանգները հասնում են մինչեւ մեզ:

Հայ ազգը ակնատես է լինում իր բազում զաւակների մահուան, շատերի բանտարկութեան կամ աքսորին: Նրանց մէջ շատերը հոգեւոր անձինք են, նոյնիսկ եպիսկոպոսներ: Իսկ հիմա մենք ականջալուր ենք լինում, որ ամբողջ գիւղերի եւ քաղաքների բնակչութիւնը պարտադրաբար, խորը վշտով ու տառապանքով թողնելով իրենց անիրը՝ տեղահանուում են դէպի հեռաւոր համակենտրոնացման ճամբարներ, ուր հոգեկան տառապանքներից առաւելի ենթարկուում են նոյնիսկ սովի արհաւիրքներին:

Ձերդ մեծութիւն, մենք այն հաւատքն ունենք, որ այդ բոլոր բունութիւնները տեղի են ունենում հակառակ Ձեր մեծութեան կառավարութեան ցանկութեան: Ուստի մենք խորը վստահութեամբ դիմում ենք Ձերդ մեծութեան եւ թախանձագին խնդրում, որ Ձեր մեծահոգի առատաձեռնութեամբ ցուցաբերէք խղճահարութիւն եւ միջամտէք մի ժողովրդի համար, որն ըստ իր կրօնական հաւատքի հաւատարիմ եւ հյու հնազանդ ենթարկւում է Ձերդ Մեծութեան անձին:

Իսկ եթէ հայերի մէջ կան դաւաճաններ կամ այլ ոճրային յանցադործներ, թող որ նրանք դատի ենթարկուեն եւ պատժուեն գործող օրէնքների համաձայն:

Սակայն, թող որ Ձերդ Մեծութիւնը արդարութեան բարձր բանականութեամբ թոյլ չտայ, որ անմեղ ժողովուրդը միեւնոյն պատիժը կրի մեղաւորների հետ: Եւ Ձերդ Մեծութեան գլխասրտութիւնը թող որ տարածուի նոյնիսկ նրանց վրայ, որոնք շեղուել են ճանապարհից:

Թող որ Ձերդ Մեծութիւնը արտայայտի իր խաղաղաբեր, ներողամտութեան, ինչպէս նաեւ ծանրակշիռ ու հմայիչ խօսքը:

Թող որ հայ ազգը, գերծ մնալով բունութիւններից եւ կեղեքումներից, հաղորդի օրհնութիւնը իր բարձր պաշտպանին:

Այս երանելի յոյսով աղօթում ենք Ձերդ Մեծութեան համար եւ բարեմաղթում մեր լաւագոյն ցանկութիւնները, Ձեր ժողովրդի ապահովութեան, բարգաւաճման եւ երջանկութեան համար:

Սեպտեմբեր 10, 1915 թ.

Վատիկան, Պենտեկիդոս XV Պապ

ՀԱՆՐԻ ՊԱՐՊԻ ՍԱՐՍԱՓԻ ԵՐԿՐԻՆ ՍԷՋ, ՆԱՅԱՏԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ

Հանրի Պարպին Ֆրանսացի լրագրող էր:

1916-1917 թթ. որպէս Փարիզի «Le Journal» թերթի թղթակից, եղել է Մերձաւոր Արեւելքի պատերազմական գործողութիւնների շրջանում, ինչպէս նաեւ Արեւմտեան Հայաստանում եւ ականատես եղել հայութեան դաժան տեղահանութիւններին եւ կոտորածներին:

Հայոց Յեղասպանութեան հետ առնչուող նրա գիրքը ըյս է տեսել 1917 թ. Ֆրանսերէն լեզուով Փարիզում, հետեւեալ խորագրով. «Au pays de L'épouvante, L'Armenie Martyre» («Սարսափի երկրին մէջ, նահատակ Հայաստան»):

Ականատեսի աչքով գրուած այս փաստագրական գիրքը կարճ ժամանակ անց, 1919 թ. թարգմանուել եւ հրատարակուել է հայերէն եւ ուսերէն լեզուներով: Հայերէնի թարգմանիչն է Միքայէլ Շամտանճեանը:

Ստորեւ տրոււմ է երկու հատուած այդ գրքից:

ՀԱՅ ՍԱՆՈՒԿՆԵՐՈ ԹԱՓԱՌՈՂ ՍԱՆՈՒԿՆԵՐՈ

Անցնելով նահատակ Հայաստանի մէջէն, որուն հողը այսօր ուռւս զօրագունդերը կ'ազատագրեն, թէ սարսափի եւ մահուան շատ մը պատմութիւններ հաւաքեցի, թէ գտայ հետքերը շատ մը արիւնագարկ տեսարաններու այս երկրին մէջ, որոնցմով կը թուի բարբարոս ժամանակներու մէջ փոխադրուած ըլլալ, հանդիպեցայ նաեւ տարօրինակութեան զիջեցուցիչ դրուագներու, որոնք միջին դարու ամէնէն անսովոր եւ ամէնէն եղբրական առասպելները կ'ոգեկոչեն ու կը վերանորոգեն, երբ տակաւին դողդոջուն պզտիկ ուրուածեւեր, հագիւ խօսելու կարող, կ'անցնին, կ'երթան առանձին, յուսաբեկութեան եւ աղէտի ընդմէջէն:

Հայ մանուկները: Ըսի արդէն թէ ինչ եղաւ բախտը անոնց, որոնք մահէն փախան եւ որոնք, ողորմելի փոքրիկ խլեակներ, իրենց ցեղի դահիճներու ձեռքերուն մէջ մնացին, թուրքերուն, որոնք զանոնք արգելափակեցին իսլամ ընտանիքներու մէջ, ուր ամէն բան իրենց օտար եւ աններող էր, քիւտներուն, որոնք զանոնք վայրենի լեռներու մէջ տարին:

Այս վերջին տղաքը, բաւական մեծ թիւով, զիրենք յափշտակողներէն փախելով եւ անգէտ վտանգին ու անյաղթելի դժուարութեանց, փորձեցին իրենց գիւղը դառնալ, հո՛ն ուր երբեմն իրենց հայրենի տունը կը գտնուէր...:

Որքա՛ն ճամբաներ մոլորեցան: Որքա՛ն իրենց տկար ուժերը շուտով սպառած, ճամբաներուն վրայ յոգնութենէ, անօթութենէ, ցուրտէն եւ վախէն փճացան...: Եւ անո՛նք, որոնք հրաշքով, իրենց տեղը հասան, ո՛չ գիւղ, ո՛չ տուն գտան, այլ միայն ամայի աւերակներ, պաղ մոխիրներ եւ տեղ տեղ կմախքներ...:

Այս աւերակներուն մէջ, ուր իրենց ընտանի յարկը կը գտնուէր երբեմն, հաստատուեցան այս տղաքը: Շաբաթներ, ամիսներ ապրեցան այնտեղ, ինչպէս յիշեցի արդէն, բոլորովին առանձին, սնանելով միացորդներէ, խոտերէ, արմատներէ, միջատներէ ու պահուրտելով մերկ ու վայրենացած: Ասոնցմէ շատերը տեսայ, զորս ուռւս զօրագունդերը կամ հայ կամաւորները հաւաքած էին:

Ի՞նչ զօրագունդներու վարդենիս հասնելուն, Մուշի դրացի գիւղ մը, Խազախները որոնք բանակին առջեւէն մտնողներու հետագօտութիւններ կը կատարէին, յանկարծ, սարսափի պատկերի մը առջեւ գտնուեցան, չորս տղաք, երթացեալ ու վտիտ, բոլորովին մերկ, ձիւ մը ներսած դիակին շուրջ ծալապատիկ նստած, անկից կտորներ կը փրցնէին ու արտոժակով կ'ուտէին: Ի տես զինուորներուն, անոնցմէ երեքը

արտաբոյ կարգի արագութեամբ մը դաշտին մէջ փախան ու չբռնուեցան: Միայն, ութամեայ աղջնակ մը մնաց հոն, շարունակելով իր պիղծ ճաշը եւ կարելի եղաւ ձեռք անցնելու զայն:

Ծեղակ գիւղի աւերակներուն մէջ, ութ տարեկան պզտիկ տղայ մը գտնուեցաւ: Անօթութեմէն մեռնելու աստիճանին հասած, ուժասպառ, կամախացած, հագիւ թէ ուժը մնացած էր շարժելու:

Երեք ամիսներէ ի վեր հոն կ'ապրէր, լքուած ու առանձին:

Խնուս-Գալէ ամայի գիւղին մէջ, ուրիշ մանուկ մը, տասը տարեկան մանչ մը գտնուեցաւ: Քիւրտերու եւ ռուսերու կողմէ մէկ քանի անգամներ զբաւուած ու պարպուած այս գիւղին մէջ, այդ մանուկը կրցած էր ութ ամիս պահուելու: Գնդակ մը կուրծքը ծակելով անցած էր, բայց վէրքը բուժուած էր: Մերկ, անհամբոյր, ոսկոր մնացած, վայրագ, ա'լ մոռցած էր խօսիլը, խուպոտ ճիչեր կ'արձակէր եւ երբոր զինքը բռնեցին, վայրենի անասունի մը պէս թօթուեցաւ, ճանկուտեց եւ խածաւ:

Ներկայիս ամայացած այս վայրերուն մէջ, մանուկներ՝ առանձին կամ խումբով, շաբաթներ ու ամիսներ թափառեցան աննպատակ:

Ահաւասիկ թէ ինչ բանի հանդիպեցայ օր մը:

Քեամիլ փաշայի թուրք բանակին կողմէ պաշտպանուած, քիւրտերը աւարով իրենց դարուխորդ լեռները կը քաշուէին, իրենց հետ գերեվարելով հայ կիներ ու մանուկներ:

Հայ կամաւորներու գունդը անոնց ետեւէն խոյացած էր, բայց անոնց հասնելու ոչ մէկ բարեպատեհութիւններով, քանի որ անոնք օր մը առաջ հեռացած էին:

Հասնելով ստորոտը այն բարձունքներուն, որոնցմէ վեր կը մագլցինք, հեռու կը նշմարենք եզակի պզտիկ կարաւան մը, որ դէպի մեզ կու գայ: Հետզհետէ ուրուածեւերը կը ճշդուին եւ մենք զարմանահար եղած ենք: Կարաւանը կը բաղկանայ չորս հշերէ, որոնցմէ իւրաքանչիւրին վրայ բազմաթիւ մանուկներ կան: Առաջին հշին վրայ մանչ մը կայ, աշտանակած կենդանին կը վարէ, ճիշդ իր առջեւ երկու տարեկան երեխայ մը ունենալով, մինչդեռ ուրիշ մը, երեք տարեկան, հշին կռնակը, իր ամբողջ ուժովը իրեն կռնակին փաթուած է: Միւս հշերէն իւրաքանչիւրին վրայ ալ երկու կամ երեք մանուկներ կան, չորսէն վեց տարեկան մանչեր ու աղջիկներ:

- «Ո՞վ էք դուք... ո՞ւր կէ կու գաք...»:

- Աղաճան, հայ տղաք ենք մենք, քիւրտերուն ձեռքէն փախանք:

- Ուր կէ՞ գտաք այս հշերը:

- Լերան վրայ, ամէն կողմ հշեր կան:

Այն որ ինծի կը պատասխանէ յստակ ու համարձակ ձեւով մը, առաջին հշին վրայ հեծած ութ տարեկան մանչ մըն է: Ինքն է կարաւանին պետը: Ան կը շարունակէ պատմել:

- Երկու օր կայ որ փախած ենք: Շատ քալած ըլլալով ա'լ չէինք կրնար ոտքով երթալ, մանաւանդ ամէնէն պզտիկները: Այն ատեն զաղափարը ունեցայ այս հշերը առնելու:

- Եւ ո՞ւր կ'երթաք:

- Մեր գիւղը կը վերադառնանք:

- Գիտե՞ս թէ ուր է գիւղերնիդ, ճամբան գիտե՞ս:

- Օ՛, այո՛, շատ աղէկ գիտեմ մեր գիւղը, Սուքիմ կը կոչուի, Տիգրիսի եզերքն է:

- Բայց քու գիւղդ քանդուած է, բան մը չէ մնացած:

Մանուկը թեթեւ մը ուսերը կը թօթուէ եւ չափահաս մարդու մը կատարութեամբ ինծի կը պատասխանէ:

- Մենք միշտ բան մը կրնանք գտնել: Ու յետոյ մեր ըրածը աւելի աղէկ է քան թէ քիւրտերուն քովը մնալը:

Բայց խօսքը կ'ընդհատէ, աչքերը կը սեւեռէ: Հայ կամաւորներու խումբը քալելով դէպի մեզ կու գայ:

Մօրեղբայրս:

Մանուկը վար կ'իջնէ հշէն եւ թեւերը բացած՝ զինուորներէն դէպի մէկուն կը վագէ: Իրարու կը փաթթուին, զիրար կը համբուրեն եւ կ'արտասուեն:

- Ուր են հայրդ, մայրդ, եղբայրներդ, քոյրերդ:

- Մայրիկս եւ քոյրերս քիւրտերուն քովն են: Հայրիկս եւ եղբայրներս ալ սպաննուեցան:

- Եւ... իմիննե՞րս, կը հարցնէ զինուորը երկբայելով:

- Սպաննուած են:

Տղան հանդարտութեամբ պատասխանած է: Այնքան արիւն տեսած է, այնքան ծանր պարտականութիւն մը ունի կատարելու, որ ա'լ չի յուզուիր: Բայց մարդը կը տժգունի ու արցունքներ կը հոսին իր այտերուն վրայ: Յանկարծ կարճ հրաման մը. «Յառա՛ջ»:

Հայ կամաւորները կը վերսկսին իրենց յառաջնադասման: Զինուորը անգամ մըն ալ կը գրկէ մանուկը եւ իր շարքին մէջ մտած, առանց ետին դառնալու կը հեռանայ: Մանուկներու կարաւանը եւս, հակառակ ուղղութեամբ կը շարունակէ իր ճամբան, ամայութեանց մէջէն, դէպի աւերակ այն գիւղը, որ իր նպատակակէտն է եւ շատ չանցած, անկիւնադարձի մը ետին կ'աներեւութանայ... (էջ 92-96):

Դժբախտ Հայաստանի նահատակութեան վրայ իմ հետաքննութիւնս փակելու համար, տակաւին հարկ է ոգեկոչեմ զարհուրելի տեսարաններ, աւելի զարհուրելի քան թէ միւս բոլորը, որովհետեւ ասոնց գոհերը մանուկներ եղան...: Եւ մանուկներ են որոնք այդ բաները ինծի պատմեցին:

Թիֆլիսի շուրջ, քաղաքէն դուրս, զայն շրջապատող բարձունքներուն վրայ, յարկաձեւ երբեմն գտնուած ազարակներն ու վիլլաները ներկայիս ապաստարաններու վերածուած են, որոնց մէջ մասնաւորն ըլլաւ բարեգործութենէն օժանդակուած, հայ ազգային բիւրոն հաւաքեց այն հայ մանուկները, որոնց ծնողքները, իրենց հայրենիքի աւերող խառնակութեանց պահուն սպաննուած կամ անբերելութեամբ են:

Թիֆլիսցի երիտասարդ աղջիկներ կամ երիտասարդ կիներ, ինչպէս նաեւ թրքական Հայաստանէն փախելով այդտեղ ապաստանող կիներ, կը խնամեն այս մանուկները, որոնց մէջ մէկ քանի ամսու եղողներէն սկսելով մինչեւ պատանեկան տարիքի մէջ գտնուողներ կան: Ասոնք խնամողները ամէն ջանք կ'ընեն որպէսզի այդ խեղճերը չզգան պակասը իրենց այն բոլոր սիրելիներուն, որոնցմէ մեծ մասը այժմ յաւէտ չպիտի տեսնեն:

Այս բոլոր մանուկները, գրեթէ ամբողջովին, Վանէն, Բաղեշէն եւ Շատախէն են եւ կովկաս հասած են թրքահայերու զանգուածին հետ որ եկած է այդտեղ ապաստանիլ:

Ես այցելեցի այս մանուկներուն, հարցուփորձեցի գիրենք: Իրենցմէ մեծ մասը տակաւին սարսափէն ապուշցած, համարձակութիւնը չունի խօսելու, կը դողայ եւ խելքը գլխէն կ'երթայ, եթէ իր քաջած տառապանքներէն մէկը յիշէ: Եօթը տարեկան աղջնակ մը կ'ըսէ ինծի. «Ախ, շատ զարհուրելի բաներ տեսայ, բայց չեմ ուզեր պատմել...նորէն մղձաւանջներ կրնամ ունենալ...»: Ուրիշ աղջնակ մը տասը տարեկան եւ Փայլուն անուով մը, ինծի սա պարզ պատասխանը կու տայ. «Երբ գիրկս առած պզտիկ եղբայրս սպաննեցին, ես լեզուս կորսնցուցի...պէտք էր որ պոռայի երբ մայրիկս սպաննեցին, բայց ա՛յ չէի...»: Լեզուն կը կարկամի, կը լռէ: Ան, ամբողջ շաբաթներ համը մնացած է եւ հիմա ամենապզտիկ յուզում մը ունենալուն, լեզուն կը բռնուի:

Ահաւասիկ այն պատմութիւնը զոր տասներեք տարեկան աղջնակ մը րրաւ ինծի: Անունը Արեգնազ էր, Վանայ մօտ Լիզ գիւղէն, պատմեց, ինչ որ 1915 Ապրիլին իրենց գիւղին մէջ պատահած էր:

«Օր մը կէս գիշերին, դուռները զարկին: Թուրք ժանտարմաներ էին: Հրաման ըրին որ այրերը հաւաքուին եւ հարցաքննուելու համար

ստիկանատուն երթան: Բայց փոխանակ ասոր լեռ տարին զանոնք եւ սպաննեցին: Թուրքերը յետոյ գիւղ վերադարձան եւ ամէն բան աւարի տուին: Մինչեւ մեր շրջագոյնները յափշտակեցին մեզմէ...: Առաւօտուն առաջարկեցին մեզ որ լեռ երթանք եւ մեր հրկամարդիկը տեսնենք: Ձէինք գիտեր տեղի ունեցածը եւ վազեցինք դաջինք տեսնելու համար մեր հայրերը եւ եղբայրները, եւ ահա քիւրտերը մեզ շրջապատեցին...եւ մեզմէ անոնք որոնք փորձեցին դիմադրել, քարերով սպաննուեցան...: Ամբողջ երեք օր այսպէս շարունակուեցաւ: Երբորդ օրը նոյն տեղը տեսանք վիրաւորներ, որոնք մինչեւ ուսերնին փոսի մը մէջ թաղուած էին, ասոնք կը պոռային որ կամ իրենց ջուր տան եւ կամ թէ մեռցնեն. այնքան կը շարշարուէին խեղճերը: Այն ատեն մեզի լսին թէ ջուր տանք իրենց եւ մեր ձեռքը տուին արիւնով լեցուն ամաններ: Եւ քիւրտերը կը խնդային եւ մեզի կ'ըսէին. «գացէք խմցուցէք իրենց, ատիկա կը զովացնէ գիրենք»:

Տասնըմէկ տարեկան աղջիկ մը, Սաթենիկ, Բրդաշէն գիւղէն ինծի պատմեց. «Քիւրտերը եկան. մենք չվախցանք, որովհետեւ կամացուկ մը, բարեկամներու պէս մտան տուներէն ներս:

«Եթէ գէնք ունիք, պէտք է յանձնել, լսին մեզի. ապա թէ ոչ ձեռքը հրկամարդիկը պիտի բանտարկուին»:

Երբ բոլոր գէնքերը առին՝ այրերը հաւաքեցին եւ լսին անոնց. «Խաղաղութիւնը կնքուած է, երթանք հաշտութիւնը տօնենք»:

Ու տարին զանոնք. գիշերը անցաւ: Առաւօտուն քիւրտերը վերադարձան այն գէնքերով զորս հաւաքած էին, անոնք արիւնէն կարմրած էին, ատիկա արիւնն էր մեր այրերուն զորս սպաննած էին: Ձէնքերը մեզի տուին որ մաքրենք եւ լսին. «Ձենք ուզեր ձեռքերնիս կեսփուրի արիւնով աղտոտել»: Յետոյ ուտելիք ուզեցին մեզմէ աւեցնելով. «Յոգնած ենք, շատ աշխատեցանք: Մեզմէ իւրաքանչիւրը գոնէ երեք չորս հոգի սպաննեց», ասկէց վերջ սկսան մեզի դէմ բռնարարքները:

Մեր քովի տան մէջ յաջողած էին ծխնելոյցին մէջ պահել երկու եղբայրներ, բայց քիւրտերը բռնած էին ասոնց քոյրը, երբ այս վերջինը կը կռուէր անոնց հետ, կը թօթուուէր եւ կը պոռար, եղբայրները վար իջան իրենց թաքստոցէն, պաշտպանելու համար իրենց քոյրը: Քիւրտերը բռնեցին զանոնք, իրենց քոյրը թեւերէն կապեցին գիրենք, յետոյ գնդակով պայթեցուցին գանկերնին: Քոյրերնին նուաղած ինկաւ, բոլորովին արիւնով ծածկուած եւ միաժամանակ ինկան նաեւ իր եղբայրները, մեռած...:

Տասնչորս տարեկան աղջնակ մը, Սիփան գիւղէն, ըսաւ ինծի. «Երբ թուրքերը եւ քիւրտերը գիւղ մտան, հայրս եւ եղբայրս թոնիրին մէջ պահեցի: Ամբողջ տունը խուզարկեցին: Հիւանդ ձեւանալով

Թոնիրին վրայ պառկած էին: Քիւրտերէն մէկը գլխու ճովանի հարուած մը տուաւ ու ես վար ինկայ, (այս հարուածին հետեւանօք խեղճը տեսողութիւնը կորսնցուցած էր): Այն ատեն Թոնիրին փակոցը բացուեցաւ եւ հայրս ու եղբայրս տեսան, սկսան խնդալ եւ ըսին ինծի. «Քանի որ փայտի տեղ դուն գանոնք փուռին մէջ դրեր ես, ասոնցմով տաքցնենք փուռը:

«Եւ հայրս ու եղբայրս իրար կապեցին եւ աչքիս առջեւ ողմ-ողմ ալրեցին»:

Տասներեք տարեկան ուրիշ աղջիկ մը, Ձետրէն անունով որբ մը, վանայ գերմանական ապաստարանին մէջ կը գտնուէր, երբ ջարդերը սկսան: Վան քաղաքը շուտ մը ամայացաւ: Ապաստարանին մէջ, որբուհիները սարսափած իրարու կը հարցնէին թէ ինչ պիտի ըլլար իրենց վիճակը: Վերջապէս գանոնք նաւահանգիստէն նաւ մը դրին եւ դիմացի եզերքը տարին: Բայց թուրքերը արդէն հոն էին, նաւը նշմարեցին եւ սկսան պզտիկ աղջիկներու վրայ կրակ ընել:

«Մենք անշարժ կեցած էինք, ըսաւ ինծի պզտիկ Ձետրէնը, չէինք պոռար, չէինք լար: Շուրջս նաւուն վրայ կը տեսնէի բոլոր իմ ընկերուհիներուս իյնալը: Նաւը դիակներով կը լեւնար: Այն ատեն մեզի հրաման ըրին որ մեռելները լիճը նետենք: Հնազանդեցանք: Այլեւս վախ ալ չէինք գգար: Կ'աճապարէինք: Իմ քովս, իմ բարեկամուհիներէս մէկը (անունը Նազելի էր եւ տասնչորս տարեկան) շուտ-շուտ «կ'աշխատէր», առանց ուշադրութիւն ընելու այն գնդակներուն որոնք չորս կողմէն կը սուլէին: Յանկարծ պզտիկ քոյրը իր վրայ ինկաւ գնդակէ մը սպաննուած: Նազելի մեծ աղաղակ մը արձակեց, յետոյ նորէն շարունակեց դիակները ջուրը նետել, քոյրն ալ մէջը ըլլալով:

«Գիշերը վրայ հասաւ: Թուրքերը դադրեցան կրակել: Մեր քուրը տարաւ, բայց Նազելին չքնացաւ: Ան դեկին քով կեցած էր եւ համը, պրկուած ու աչքը դարձած, կը շարունակէր նաւէն ջուրը բան մը նետելու շարժումը ընել: Չյաջողեցանք ասդին առնել զինք, բայց առաւօտուն նշմարեցինք որ ա'լ նաւուն մէջ չկար... հաւանաբար ինք ալ ջուրը նետուած էր...:

«Առաւօտուն եզերքին մօտեցանք, առանց թուրքերուն կողմէ նկատուելու, բայց այնքան գարհուրած էինք որ լեզունիս բռնուած էր: Այսուհանդերձ տակաւին միտքս է թէ ինչպէս գարմացայ ես ա'լ թուրքեր չտեսներով:

«Նաւէն դուրս ելանք կամ թէ աւելի ինքզինքնիս ցամաք նետեցինք եւ սկսանք վազել դէպի անտառ, ուր արդէն շատ մը կիներ եւ տղաք կային:

Յանկարծ մեր ետեւէն սրտակեղէք պոռալու ձայն մը լսուեցաւ: Ետիս դարձայ եւ տեսայ մեր նաւը, որ բոլորովին պարպուած էր, բացառութիւն ըլլալով միակ պզտիկ աղջիկ մը որ մագերը հովին տուած, յուսահատ շարժումներով մեզ կը կանչէր:

Աս ալ խենդացեր է, պոռած մէզմէ մէկը, ձգենք երթանք...»

Բայց հովը իր խօսքերը կը բերէր մեզի. «Ա'խ չեմ կրնար տեղէս երերալ... գլխացէք վրաս... ազատեցէք զիս... չեմ ուզեր մեռնիլ...»:

Չենք հասկնար թէ ինչ պատահած էր իրեն: Դէպի իրեն վազեցի, ուրիշ մէկ քանի ընկերուհիներու հետ, որովհետեւ ամէնքս ալ կը սիրէինք այս պզտիկ Արեգնազը- այս էր անունը- որ շէնշող էր եւ բարի սիրտ ունէր:

Իր քովը հասնելով, հասկցանք, թէ խենթացած չէր, այլ ոտքերը յանկարծ անդամալուծուած էին վախէն եւ անկարող էր քալելու:

Գրկեցինք զինքը եւ անտառ տարինք:

Մենք ստիպուած էին յարատեւօրէն փախչիլ, տեղ փոխել եւ ամէն անգամուն պէտք էր որ գրկէինք ու տանէինք Արեգնազը:

«Գլխացէք վրաս... զիս մի թողուք...» կը պաղատէր մեզի:

Քանի մը օրէն մեռաւ, հակառակ այն խնամքներուն, որոնցմով զինք շրջապատած էինք:

Շատ պարզութեամբ, կատարեալ հանդարտութիւնով մը, տասնչորս տարեկան աղջիկ մը, Սառա, հետեւեալը պատմեց ինծի. «Ձատկի խթման իրիկունն էր (1915): Թուրքերը մէր գիւղին մէջ խուժեցին (Արճէշ, Վանայ լիճի ափերուն վրայ), գինուած էին. այրերը հաւաքեցին, լիճին եզերքը տարին, իրար կապեցին եւ հրացանի բռնեցին: Այս գործողութիւնը տեւեց կէսօրէ վերջ ժամը մէկէն մինչեւ ժամը հինգ եւ յաջորդ օրը նորէն սկսաւ: Ամէն իրիկուն, թուրք գինուորները կու գային կիները տեսնել եւ իւրաքանչիւրին իր ամուսնոյն մարմինին մէկ մասը կը բերէին, ըլլայ ոտքերը, ըլլայ ձեռքերը: Եւ մանրամասնութիւններ կը պատմէին այն եղանակի մասին, որով գանոնք նահատակած էին: Երբ ա'լ ոչ այր եւ ոչ ալ մանչ մնաց, պէյ մը եկաւ գիւղ: Հրաման ըրաւ որ եկեղեցիի հրապարակին վրայ հաւաքեն բոլոր կիները եւ բոլոր երիտասարդ աղջիկները: Յետոյ հրաման ըրաւ որ ամէնքն ալ բոլորովին հանուին: Երբ ասիկա եղաւ (սպաննեցին գանոնք որոնք մերժեցին), իրենց հասակի կարգով շարեցին եւ պէյին առջեւէն անցուցին զիրենք: Քննեց գանոնք շօշափեց, ինչպէս անասուններուն կ'ընեն: Մէկ կողմ առին գանոնք գորս մատնանչեց եւ բոլոր միւսները ջարդեցին...»:

Կ'ուզեմ ներկայացնել նաեւ հետեւեալ տեսարանը գոր Յասմիկ անունով կնոջ մը կողմէ ինծի պատմուածէն կը քաղեմ: Այս կինը, իր

աղջիկներէն չորսին հետ փախած է եւ Թիֆլիսի Հայ Տիկիներու Ընկե-
րութեան ապաստարանին մէջ կը գտնուէի:

«Հառհնի մէջ, չորս հարիւր չէթէներ, այրերը ուղղակի գիւղին
փողոցներուն մէջ սպաննեցին: Սպանողը ի գլուխ հանելէ ետք ստիպեցին
կիները որ երկու անիւով սայլերը քաշեն եւ երթան հաւաքեն դիակները:
Եւ որովհետեւ խեղճերը ընդհանրապէս պէտք եղած ուժը չունէին այս
անմարդկային հրամանը գործադրելու, դահիճները որոշեցին՝ «Դուք
չէք ուզեր ձեր սիրելիները հաւաքել սայլերով, մենք այլապէս պիտի
ստիպենք ձեզ նոյն բանը ընելու:

«Եւ իւրաքանչիւր դիակի վիզէն չուանը կապեցին եւ մտրակի
հարուածներով ստիպեցին կիները քաշել գանոնք, չուանին ծայրէն բռնած:

«Այս մեռելական գործը երեք օր տեւեց:

«Յետոյ սկսան բռնապղծումները եւ առեւանգութիւնները:

«Անձնապէս, ինծի յայտարարեց այս կինը, առեւանգեցին իմ
աղջիկներէս մէկը, երկու ներերս եւ երեք զարմուհիներս»:

Ալ կանգ կ'առնեմ, պատմեցի այս պատմութիւնները, հակառակ
իրենց զարհուրանքին: Այսօրինակ արարքներ, պէտք չէ որ պահուած
մնան: Ամէն կողմ հարկ է տարածել գանոնք, որպէսզի քաղաքակիրթ
աշխարհը, որպէսզի պատմութիւնը դատեն յանցաւորները: (էջ 113-120):

ԱՌՆՈՒՂ ԺՈՋԷՖ ԹՈՅՆԲԻ

Անգլիացի պատմաբան եւ փրկիսոփայ, Լոնտոնի համալսարանի
միջազգային յարաբերութիւնների պատմութեան փրոֆ. Առնոլդ Ժոզէֆ
Թոյնբին (1889-1975) գրել է բազմաթիւ հրատարակախօսական յօդուածներ
եւ գրքեր, ուր մերկացուում է երիտթուրքերի գործադրած հայահալած
քաղաքականութիւնը արեւմտահայութեան նկատմամբ:

«Armenian Atrocities. The Murder of a Nation» (հայկական սար-
սափներ, մի ազգի բնաջնջումը) խորագրով նրա հեղինակած գիրքը, որը
լոյս է տեսել 1915 թ., հիմնուած է գերմանացի միսիոնարների, շուէյցա-
րացի, ամերիկացի եւ այլ ականատեսների հաղորդած վկայութիւնների վրայ:

Ստորեւ տրւում է քաղուածքներ այդ գրքից:

*
* *

...Այդ ամբողջ զարհուրանքը, այդ բոլոր ոճրագործութիւնները
կատարուել են հայերի նկատմամբ՝ չնայած նրանց կողմից ամենափոքր
խսկ մարտահրաւէրի բացակայութեան: «Մենք պատերազմական դրու-
թեան մէջ ենք», - հաւանաբար կ'առարկի թուրքական կառավարութիւնը
«Մենք պայքարում ենք մեր գոյութեան համար: Հայերը յոյս էին

տածում մեր թշնամու յաղթանակի նկատմամբ: Նրանք օգնութեան
ծրագրեր էին որոնում այդ յաղթանակի իրականացման համար: Նրանք
դաւաճաններ էին ազատութեան մէջ՝ մերձ ճակատային դօտում եւ
մենք ստիպուած եղանք նրանց դէմ գործել ռազմական ժամանակի ողջ
խստութեամբ»: Բայց այսպիսի արդարացումները լիովին հակասում են
փաստերին: Այդ հայերը մերձ ռազմաճակատային դօտու բնակիչներ
չէին: Ոչ մի քաղաք կամ գիւղ, որտեղից նրանց սխտեմատիկօրէն քշում
էին դէպի մահ, չէր գտնուում ռազմական գործողութիւնների թատերա-
բեմին մօտիկ: Դրանք բոլորը Անատոլիայի խորքերում էին, հաւասա-
րապէս հեռու էլ կովկասեան սահմանից, էլ Տարտանելից: Նրանք ոչ
մի հնարաւորութիւն չունէին համագործակցելու Անտանտի զօրքերի
հետ, ինչպէս եւ չէին կարող ապստամբութիւն բարձրացնել, քանի որ
մէկ հոծ համայնք չէին կազմում: Նրանք ոչ մեծ գաղութներով ցրուած
էին ընդարձակ երկրով մէկ եւ փոքրամասնութիւն էին կազմում իրենց
հարեւան թուրքերի համեմատութեամբ: Քաղաքացիական եւ զինուո-
րական իշխանութիւնը թուրքերը ամուր պահում էին իրենց ձեռքին եւ
խուովութիւն բարձրացնել ոչ մի լաւ բան չէր խոստանում հայերին:

Ես պէտք է կրկնեմ, որ այդ հայերը՝ քաղաքաբնակները, հիմնա-
կանում խաղաղ տրամադրուած եւ աշխատասէր մարդիկ են եղել, զէնք
գործածելու մէջ անհմուտ: Նրանց, ինչպէս որ Արեւմտեան Եւրոպայի
քաղաքային բնակչութեանը, խորթ է վրէժիմդրութեան գաղափարը:

Օսմանեան կառավարութիւնը ի վիճակի չէ թաքցնել իր յանցա-
գործութիւնը նախագգուչական միջոցառումների պատրուակի տակ,
քանզի հայերը հեռու են եղել վատ դիտաւորութիւններից...: Եւ իրօք,
մինչեւ այժմ գրանցուած է երկու դէպք, երբ տեղահանութեան ծրագիրը
հանդիպել է դիմադրութեան: Դա Անտիոքի շրջանում տեղի ունեցած
յաջող դիմադրութիւնն էր, երբ հայ գիւղացիները սարերը բարձրացան
եւ պաշտպանութիւն ունենալով ծովի կողմից՝ եօթ շաբաթ պայքարում
էին, մինչեւ որ համարեա հրաշքով փրկուեցին Փրանսիական նաւա-
տորմի օգնութեամբ...: Եւ մէկ էլ՝ անձնուրաց հերոսութիւնը Շապին
Գարահիսարի, մի քաղաքի, որ գտնուում է Տրապիզոնից ոչ հեռու, որտեղ
չորս հազար հայեր, ի պատասխան արտաքսման պահանջի, զէնքի դիմեցին
եւ թուրքական զօրքերին դիմադրեցին Մայիսի կէսից մինչեւ Յուլիսի
սկիզբը: Այնժամ թուրքերը համալրումներ ու հրետազօր բերեցին եւ
հեշտութեամբ կործանեցին քաղաքը: «Գարահիսարը,- ասուում է մի հայ
բահանայի հասցէագրուած նամակում,- ուբակոծութեան է ենթարկուել
եւ շրջակայ շրջանների ամբողջ բնակչութիւնը, ինչպէս եւ քաղաքները,
անողոքաբար կոտորուել է, չբացառելով իրեն՝ եպիսկոպոսին»: Ոչ մի
այլ բան չի կարող սրանից լաւ ապացուցել, թէ թուրքական կառավա-

րութիւնը որքան քիչ էր վախենում հայերից եւ ինչ եռանդով միջոցներ ձեռք առաւ նրանց արագ ոչնչացման համար, հենց որ դրա հնարաւորութիւնը եղաւ:

Այսպիսին է եղել կառավարութեան գործելակերպը անպաշտպան, ոչ մի կասկած չյարուցող քաղաքաբնակ հայերի նկատմամբ: Իսկ երբ բանը հասաւ նուազ հնազանդ գիւղացիական համայնքներին, որոնք հիմնաւորուել էին սարերում, կառավարութիւնը հրաժարուեց որեւէ ձեւացումից: չթաքցնելով իր մտադրութիւնները եւ չսպասելով, մինչեւ որ նրանք իրենք ենթարկուէին տարագրման հրամանին, խկոյնեւեթ սուրը մերկացրած յարձակուեց նրանց վրայ:

Նա (կառավարութիւնը) նոյնկերպ վարուեց Ձէյթունի հետ՝ հայկական մի մարզի, ուր ութ հարիւր տարի փաստօրէն անկախ ապրում ու բարգաւաճում էր Կիլիկիան հարթավայրի վրայ խոյսցող լեռների մէջ:

Ձէյթունցիները մնացած հայերից՝ Կիլիկիայի բնակիչներից, տարբերուել էին նրանով, որ գէնք ունէին եւ թուում է, ժամանակին նախապատրաստուել էին մօտեցող հանգուցալուծմանը: Բայց նրանք գէնքերը յանձնեցին, հենց որ խոստացան, որ հնազանդութեան դէպքում կը խնայեն նրանց անպաշտպան եղբայրակիցներին, որոնք ապրում էին հարթավայրի գիւղերում: Թուրքերը, հենց որ իրենց նպատակին հասան, իհարկէ, չպահեցին իրենց խոստումը: Այսպիսի անբարենպաստ դրութեան մէջ դրուած լինելով՝ քաջարի լեռնականները անխուսափ լիօրէն պէտք է որ պարտուէին: (Տե՛ս «Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում»), էջ 466-468:

ԳՐՈՂ, ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ ԱՆԱՏՈՒ ՖՐԱՆՍ

Ֆրանսացի մեծ գրող, հրապարակախօս Անատոլ Ֆրանսը (1844-1924) եղել է առաջին մարդասէր անձնաւորութիւններից մէկը, որն իր գրական ստեղծագործական աշխատանքին գուզընթաց եռանդուն մասնակցութիւն է ունեցել կանխելու արեւմտահայութեան հալածանքները Օսմանեան կայսրութիւնում: Իր հրապարակախօսական յօդուածներում եւ ճառերում տեւապէս դատապարտել է ապտուհամիտեան բռնատիրութեան շրջանում տեղի ունեցած հայերի հալածանքները, ինչպէս նաեւ յետագայում երիտթուրքական դահիճների արեւմտահայութեան ի սպառ բնաջնջելու ցեղասպան քաղաքականութիւնը:

Ստորեւ տրուում է մի հատուած 1916 թ. Ապրիլի 9-ին Սորպոնի համալսարանի մեծ դահլիճում, Հայաստանին նուիրուած երեկոյի ընթացքում արտասանած ճառից:

*
* *

Երբ քսան տարի առաջ Սուլթան Ապտուլ Համիտի կազմակերպած ջարդերը արեամբ հեղեղեցին Հայաստանը, Եւրոպայում միայն մի քանի ձայն՝ մի քանի վրդովուած ձայներ բողբոջեցին մի ամբողջ ժողովրդի խեղդելու դէմ: Ֆրանսիայում խիստ ընդդիմադիր կուսակցութիւնների պատկանող աննշան թուով մարդիկ միաւորուեցին պաշտպանելու խորապէս անարգուած մարդկութեան իրաւունքները: Գուք դիտէք նրանց: Ժորես, Տընի Կոչեն, Գաբրիէլ Սէյալ, Էռնեստ Լավիս, Ժաք Ֆինո, Վիքթոր Պերար, Ֆրանսիս դը Պրեսանսէ, Հայր Շարմրտան, Փիէր Կայար, Քլեմանսօ, Ալպեր Վանդալ եւ էլի մի քանի մարդ, որոնց անունները, ներեցէք, չեմ մտաբերում: Մնացածները համը էին: Շատերը խորին խղճահարութեամբ համակուեցին հայերի հանդէպ, բայց քանի որ սովորաբար մարդկանց մեծամասնութիւնը երես է թեքում դժբախտներից, ապա շատերը կարողացան հիմքեր գտնել մեղադրելու դո՛հերին, նրանց կշտամբելով թուլակամութեան մէջ: Ոմանք, պաշտպան կանգնելով դահիճներին, վերջիններիս պատկանում են իբրեւ մարդկանց, որոնք պատժում են խռովարարների կամ վրէժ լուծում այն թուրք բնակիչների համար, որոնց սնանկացրել են քրիստոնեայ վաշխառուները...:

Սակայն, չնայած հայասէրների բողբոջներին եւ մի քանի տէրութիւնների վեհերոտ դիմումներին, հակառակ թուրքական կառավարութեան հաւաստիացումներին, հալածանքները՝ երբեմն խլացուած ու քօղարկուած, չէին դադարում: Պալատական յեղաշրջումը անհարկի փոխեց կայսրութեան ղեկավարներին: Երիտթուրքերը, տիրանալով իշխանութեանը, իրենց դաժանութեամբ գերազանցեցին Ապտուլ Համիտին, կազմակերպելով Ատանայի կոտորածը: Ժամանակի ընթացքում Արեւելքի այդ քրիստոնեաների դժբախտութիւնները ձանձրացրին մարդկանց, հայերը մնում էին օտար՝ քաղաքակիրթ Եւրոպային: Հայ ժողովուրդին մենք գիտէինք ոչ այլ կերպ, քան այն հարուածներից, որ հասցնում էին նրան: Մենք պատկերացում չունէինք ոչ նրա անցեալի, ոչ նրա ոգու եւ դաւանանքի, ոչ էլ նրա բաղձանքների մասին: Անհասկանալի էր մնում, թէ ինչու էին նրան կոտորում:

Այդպէս էր դեռ մի երկու տարի առաջ: Պայթեց համաշխարհային պատերազմը: Թուրքիան նրա մէջ մտաւ որպէս Գերմանիայի կամակատար եւ յանկարծ Հայաստանն ու նրա մարտիրոսութեան պատճառները միանգամայն այլ լոյսի ներքոյ յառնեցին Ֆրանսիայի առջեւ: Մենք հասկացանք, որ թուրք կեղեքչի եւ հայի տեւական անհաւատար պայքարը՝ բռնակալութեան պայքարն է, բռնակալութեան պայքարը

ընդդէմ արդարութեան եւ ազատութեան ոգու: Եւ երբ մենք տեսանք թուրքիայի այդ զոհին՝ մեզ յառուած մարող աչքերով, որոնց մէջ յոյսի շող առկայծեց, մենք վերջապէս հասկացանք, որ այդ մեր քոյրն է մեռնում Արեւելքում եւ մեռնում է հենց նրա համար, որ նա մեր քոյրն է, որի յանցանքն այն է, որ նա համակուած էր մեր զգացումներով, սիրում էր այն, ինչպէս մենք ենք սիրում, մտածում էր այնպէս, ինչպէս մենք ենք մտածում, հաւատում էր նրան, ինչին մենք ենք հաւատում եւ մեր նման գնահատում էր իմաստութիւնը, արդարութիւնը, քերթութիւնը, արուեստը: Սա էր նրա անքաւելի յանցանքը:

Հետեւաբար, տիկնայք եւ պարոնայք, հարկաւոր է, որ Ֆրանսացիների հաւաքը պատշաճը հատուցի անհուն դժբախտութեան մատնուած այդ ժողովուրդին: Մենք կատարում ենք նրան արժանի մեծարանքները՝ ոչ այնքան բոլորին յայտնի տառապանքների համար, որքան այն տուկունութեան համար, որով նա դրանք տանում է...:

Ի դէպ, մեզ սիրող այդ ժողովուրդին բնաջնջելու որոշումն ընդունուել էր թուրքական կառավարութեան խորհրդակցութիւններում: Բոլոր հայերը, որքան որ կային Սամսոնից մինչեւ Տիարպեթի՝ երիտասարդներ, ծերունիներ, կանայք, երեխաներ, նրանց բոլորը զոհուեցին, սպանուելով սուլթանի հրամանով, Գերմանիայի յանցակցութեամբ:

Հայաստանը վերջին շնչումն է, բայց նա կը վերածնուի:

Արեան այն փոքր քանակութիւնը, որը նա դեռեւս պահպանում է, թանկագին արիւն է, որից հերոսական սերունդ է ծնունդ առնելու ժողովուրդը, որը մեռնել չի ուզում, երբէք չի մեռնի...: (Տէս «Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում», փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու), էջ 527-529:

ՃԱՓՈՆԱՏԻ ԻՐԱՒԱԳԷՏ՝ ՓՐՈՖ. ԶԻՐՈՅՈՍԻ ՍԵԳՎԱՆ ՐԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի գիտական խորհրդի որոշումով 2005 թ. Երեւանում հայերէն (180 էջ) եւ ճափոներէն (144 էջ) լեզուներով լոյս տեսաւ ՀԱՅԱՍՏԱՆ-ՃԱՓՈՆԻԱ խորագրով հատորը, որը բովանդակում է երկու երկրների քաղաքական, տնտեսական, մշակութային եւ գիտական յարաբերութիւններին վերաբերող խիստ շահեկան եւ այժմէական նիւթեր:

Այն բաղկացած է հետեւեալ 4 գլուխներից.

Գլուխ Առաջին. «Հայաստանը դարերի ընթացքում. համառօտ պատմաշխարհագրական ակնարկ», հեղինակն է Արեւելագիտութեան Ինստիտուտի տնօրէն՝ Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը:

Գլուխ Երկրորդ. «Դիւանագիտական յարաբերութիւններ եւ հայ-ճափոնական քաղաքական համագործակցութիւն»:

Գլուխ Երրորդ. «Հայ-ճափոնական տնտեսական, առևտրական եւ ֆինանսավարկային համագործակցութիւն», հեղինակն է Արեւելագիտութեան Ինստիտուտի Ասիայի բաժնի վարիչ, ՀՀ Արտաքին Գործերի նախարարութեան հարաւարեւելեան Ասիայի երկրների վարչութեան պետ, պատմ. գիտութիւնների թեկնածու՝ Ռուբէն Կարապետեանը:

Գլուխ Չորրորդ. «Հայ-ճափոնական պատմամշակութային, գրական, գիտական առնչութիւններ եւ շփումներ», հեղինակն է Երեւանի Հումանիտար Ինստիտուտի ղեկավոր, Դոկտ. Փրոֆ. Միքայէլ Ամիրխանեանը:

Այս չորրորդ գլխում առանձին ենթավերնագրերով ընդգրկուած են նաեւ հայ գիտնականների եւ արուեստագէտների հրապարակախօսային յօդուածները, ինչպէս նաեւ ճափոնացի չորս փրոֆեսօրների զանազան թեմաների շուրջ շարադրած ուսումնասիրութիւնները:

Հատորի նախաբանի եւ ծրագրի գիտական ղեկավարն է Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը: Յօդուածների հայերէնից ճափոներէն թարգմանութիւնները կատարել է Կ.Գ. Քարամեանը խմբագիրն է Փրոֆ. Կումիկօ Կոբայաչին:

Յայտնի է, որ 1991 թուականից յետոյ, երբ Հայաստանը վերագտաւ իր պետական անկախութիւնը, պաշտօնական դիւանագիտական յարաբերութիւններ հաստատուեցին Հայաստանի Հանրապետութեան եւ Ճափոնիայի միջեւ:

Գիտականօրէն բարձր յազեցուած եւ իր տեսակի մէջ առաջին անգամ հրատարակուող այս հատորը արժանի է բարձր գնահատանքի եւ խրախուսման: Միեւնոյն ժամանակ այն առաջին փորձն է ճափոնացիներին իրենց լեզուով ծանօթացնելու հայ ժողովուրդի պատմութեան բոլոր ծայրերին, բնականաբար Հայոց Ցեղասպանութեան մասին եւս: Այս տեսանկիւնից Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը Առաջին գլխում հաւաստի փաստերով ճափոնացի ընթերցողներին է ծանօթացնում Սուլթան Ապտուլ Համիտի եւ երիտթուրքերի Արեւմտահայութեան նկատմամբ գործադրած ցեղասպանութիւնը:

Երկրեզու հրատարակուած այս հրատապ հատորի մասին որոշակի պատկերացում կազմելու համար նախ ընթերցողին ներկայացնում ենք Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանի նախաբանը, իսկ այնուհետեւ ամբողջութեամբ բերում ենք ճափոնացի իրաւագէտ՝ Փրոֆ. Հիրոյոսի Սեզավայի յոյժ կարեւոր ուսումնասիրութիւնը Հայոց Ցեղասպանութեան մասին: (Տէս էջ 156-162):

Հայաստանը եւ Ճափոնիան գտնւում են միեւնոյն մայր ցամաքում՝ Ասիայում, սակայն նրա տարբեր ծայրամասերում եւ միմեանցից հեռու են հազարաւոր քիլոմետրեր: Բայց դա խոչընդոտ չէ, մասնաւանդ մեր օրերում՝ գիտութեան եւ տեխնիկայի աննախադէպ զարգացման դարաշրջանում, նրանք միջեւ տարաբնոյթ մօտ յարաբերութիւններ հաստատելու եւ զարգացնելու համար: Իսկ դրա համար անհրաժեշտ է փոխադարձ հետաքրքրութիւն եւ քաղաքական կամքի դրսեւորում, Բարեբախտաբար, այս երկու գործօններն էլ առկայ են:

Ճափոնիան աշխարհի ամենազարգացած երկրներից մէկն է, որը հասել է տպաւորիչ յաջողութիւնների գիտութեան, տեխնիկայի եւ մշակոյթի ասպարէզներում եւ առաջատար դիրքեր է զբաղում համաշխարհային տնտեսութեան մէջ:

Հայաստանն աշխարհի հինաւուրց երկրներից մէկն է իր ինքնատիպ քաղաքակրթութեամբ, որը համաշխարհային մշակոյթը հարստացրել է անկրկնելի կոթողներով: Նա ունի բարձր զարգացած մշակոյթ եւ յայտնի է իր գիտական ներուժով ու այսօր ձգտում է ստեղծել ժամանակակից առաջաւոր տնտեսութիւն՝ օգտագործելով զարգացած երկրների, այդ թւում նաեւ Ճափոնիայի ուսանելի փորձը:

Չնայած աշխարհագրական հեռաւորութեանը՝ այս երկու երկրների միջեւ հաստատուել են բարեկամական բնոյթի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կապեր, որոնք զարգանում են յաջողութեամբ՝ ի շահ երկու երկրների: Հայերը եւ ճափոնացիները միմեանց նկատմամբ տածում են խոր յարգանք եւ բարձր են գնահատում միմեանց հոգեւոր եւ նրկութեան արժէքները:

Բոլոր տարբերութիւններով հանդերձ Հայաստանը եւ Ճափոնիան բազում նմանութիւններ ունեն՝ բնական հարուստ պաշարների բացակայութիւն, հզօր մարդկային եւ մտաւոր ներուժ, աշխատասիրութիւն, հակում գիտութեան նկատմամբ, պատմական հարուստ անցեալ, ազգային ինքնատիպ մշակոյթ եւ այլն:

Եւ Հայաստանում, եւ Ճափոնիայում մարդը եւ բնութիւնը գտնւում են մշտական մրցակցութեան ու պայքարի մէջ: Երկուսն էլ գտնւում են ակտիւ սէյամիկ գօտիներում: Ճափոնիան նոյնքան լեռնոտ երկիր է, որքան Հայաստանը: Անգամ նման են երկու երկրների խորհրդանիշ լեռները՝ պիլպիական Արարատը եւ Ֆուճին:

Սակայն բնութեան դաժանութիւնը եւ ժլատութիւնը Հայաստանում եւ Ճափոնիայում փոխ հատուցւում են հայ եւ ճափոնացի ժողովուրդների ստեղծագործական կենսաուժով, աշխատասիրութեամբ եւ

յամառութեամբ: Նրանք կարողացել են մշտապէս համընթաց գնալ համաշխարհային զարգացումների հետ: Հայաստանը, հանդիսանալով աշխարհում առաջին քրիստոնեայ պետութիւնը եւ կարեւոր ռազմական դիրք զբաւելով Արեւմուտք-Արեւելք եւ Հիւսիս-Հարաւ տանող ճանապարհների խաչմերուկում, եղել է պատմական «Մետաքսի ճանապարհի» ամենաակտիւ մասնակիցներից մէկը: Իսկ ժամանակակից աշխարհն անհնար է պատկերացնել առանց Ճափոնիայի նուաճումների առաջաւոր տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի, տարբեր գիտութիւնների ասպարէզներում:

Հայաստանի եւ Ճափոնիայի միջեւ միջպետական յարաբերութիւնների հաստատման առաջին քայլերն արուել են 1918-1920 թթ., երբ վերականգնուեց հայոց պետականութիւնը եւ կազմակերպուեց Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը: Չնայած այդ հանրապետութեան կարճատեւ գոյութեանը եւ նրա առջեւ կանգնած դժուարութիւններին՝ նա կարողացաւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել աշխարհի մի շարք պետութիւնների հետ, բացել իր դիւանագիտական ներկայացուցչութիւնները եւ հիւպատոսութիւնները, այդ թւում նաեւ Ճափոնիայում: Այս երկրում Հայաստանի առաջին հիւպատոսը եղել է Տիանա Արգարը:

Հայ եւ ճափոնացի ժողովուրդների միջեւ յարաբերութիւնները որակական նոր մակարդակի բարձրացան 1991 թ.: Հայաստանի անկախութեան հռչակումից եւ երկու երկրների միջեւ 1992 թ. Սեպտեմբերի 7-ին դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումից յետոյ: Այդ պահից սկսած հայ-ճափոնական յարաբերութիւնները զարգանում են որպէս միջպետական յարաբերութիւններ, որոնք ներառում են քաղաքական, տնտեսական, առեւտրաֆինանսական, գիտական, մշակութային եւ մարզական ոլորտները:

Այդ բոլորը հիմք հանդիսացան նախաձեռնելու սոյն աշխատութիւնը, որն առաջին լուրջ փորձն է ամփոփ կերպով հետազօտելու եւ ներկայացնելու հայ-ճափոնական երկկողմ յարաբերութիւնները, որը, համոզուած ենք, ունի ոչ միայն գիտական, այլեւ քաղաքական նշանակութիւն:

Աշխատութիւնը կազմուած է չորս գլուխներից, որոնցից իւրաքանչիւրը նուիրուած է որոշակի հիմնախնդրի լուսաբանութեանը:

Առաջին գլխում համառօտակիօրէն տրուած են Հայաստանի զարգացման պատմական ուղին եւ պետական, քաղաքական եւ հոգեւոր զարգացումները դարերի ընթացքում: Այն զրուած է հաշուի առնելով գլխաւորապէս օտար, տուեալ դէպքում ճափոնացի ընթերցողին, որին շատ բան յայտնի չէ Հայաստանի մասին:

Երկրորդ գլխում ներկայացուած է հայ-ճափոնական քաղաքական յարաբերութիւնների ողջ պատմութիւնը եւ ժամանակագրութիւնը: Այստեղ ընդգծուած է այն միտքը, որ Հարաւային Կովկասում ռազմավարական կարեւոր դերը զբաղեցնող Հայաստանը՝ որպէս տարածաշրջանի առաւել կազմակերպուած եւ կայուն երկիր, կարող է վստահելի գործընկեր լինել Ճափոնիայի համար:

Երրորդ գլուխը նուիրուած է Հայաստանի եւ Ճափոնիայի համագործակցութեանը տնտեսական ոլորտում:

Եւ, վերջապէս, չորրորդ գլխում քննարկուում են հայ-ճափոնական յարաբերութիւնները մշակոյթի եւ գիտութեան բնագաւառներում:

Եւ եթէ միջպետական յարաբերութիւնների քննարկումը ժամանակագրական առումով ընդգրկում է 1991-2004 թթ., այսինքն՝ հիմնականում Հայաստանի Երրորդ Հանրապետութեան շրջանը, երբ Հայաստանը դարձաւ անկախ պետութիւն, դուրս եկաւ միջազգային ասպարէզ եւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատուեցին նրա ու Ճափոնիայի միջեւ, ապա ժամանակագրական այդ սկզբունքը չի պահպանուել, երբ խօսքը վերաբերում է նրանց յարաբերութիւններին կամ շփումներին տնտեսական, մշակութային եւ գիտական ոլորտներում:

Սոյն աշխատութեան իրականացմանը նպաստող գործօնների շարքում հարկ ենք համարում նշել երկու հանգամանք:

Առաջինը՝ Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի կազմում Հայաստանի կառավարութեան 2003 թ. որոշումով Արեւելեան Ասիայի երկրների բաժնի ստեղծումը, որը Հայաստանում Ճափոնիայով, Չինաստանով եւ Հնդկաստանով զբաղուող միակ գիտական կենտրոնն է:

Երկրորդը՝ Երեւանի հումանիտար ինստիտուտի ստեղծումը, որտեղ առաջին անգամ Հայաստանում սկիզբ դրուեց ճափոնական գրականութեան եւ արուեստի, ճափոներէնի մասնագիտական ուսումնասիրութեանը: Այդ ինստիտուտն արդէն տուել է իր առաջին շրջանաւարտը:

Հեղինակները խորին շնորհակալութիւն են յայտնում «ճափոնական հիմնադրամին»՝ համապատասխան դրամաշնորհ տրամադրելու համար, ինչպէս նաեւ Մոսկուայում Ճափոնիայի դեսպանութեանը՝ ի դէմս Ճափոնիայի արտակարգ եւ լիազօր դեսպան Իսսէյ Նոմուրայի՝ սոյն աշխատութեանը մեծապէս օժանդակելու համար:

*

* *

1. Ինչպէս ես առաջին անգամ լսեցի ցեղասպանութեան մասին:

Ես մասնագիտութեամբ իրաւագէտ եմ եւ միջազգային իրաւագիտութիւն եմ ուսումնասիրում: Փորձեմ պատմել, թէ ինչպէս պատահեց, որ ես սկսեցի ուսումնասիրել հայերի ցեղասպանութիւնը: Դոկտորանտուրան աւարտելուց յետոյ երկար ժամանակ իմ հետաքրքրութեան կենտրոնում էր եղել «Ցեղասպանութեան նախապայմանները» թեման: Այդ հետազօտութիւնները իրենց նպատակին հասցնելու համար ինձ անհրաժեշտ էր կոնկրետ փաստեր բերել: Դա մօտ 20 տարի առաջ էր: Այդ ժամանակ ՄԱԿ-ի արխիւներում ուսումնասիրում էի ցեղասպանութիւնների հետ կապուած նիւթեր եւ յանկարծ հանդիպեցի «1915 թ. հայերի ցեղապանութիւնը» վերնագրով մի նիւթի:

Ամօթալի է, բայց այն ժամանակ ինձ անծանօթ էր «Հայաստան» անունը: Հիմա մտածում եմ, որ միջազգային իրաւագէտ լինելով հանդերձ պէտք է որ իմանայի Հայաստանի մասին: Այդ օրուանից սկսեցի ջանասիրաբար Հայաստանի մասին նիւթեր հաւաքել: Սակայն այն տարիներին Ճափոնիայում Հայաստանի մասին, առաւել եւս հայերի ցեղասպանութեան վերաբերեալ նիւթեր գրեթէ չկային: Ճիշդ նոյն ժամանակ Կանսայի օտար լեզուների երկամեայ համալսարանը, որտեղ ես դասաւանդում էի, կազմակերպեց ուսանողների համար երկու մէկամսեայ ճանապարհորդութիւն Հառաւայան կղզիներ, որ ԱՄՆ-ի տարածքին էր: Ես նշանակուեցի խմբի ղեկավար:

Հառաւայան կղզիներում ազատ ժամանակ գտայ եւ այցելեցի տեղի համայնարանի գրադարանը, որը հայերի ցեղասպանութեան վերաբերեալ անգլերէն նիւթերի մի գանձարան էր: Ես ամբողջ ազատ ժամանակս անց էի կացնում այդ գրադարանում, կարդում եւ պատճենահանում էի նիւթերը եւ իմ ուրախութեանը սահման չկար: Տուն վերադառնալուս պէս ամբողջովին կենտրոնացայ այդ նիւթերի վրայ: Որքան կարդում էի, այդքան աւելի էի հասկանում թեմայի կարեւորութիւնը եւ չնայած սարսափով էի լցւում որոշ նիւթեր կարդալիս, հետզհետէ աւելի էր ուժեղանում հետազօտելու ցանկութիւնը: Ինձ մօտ տարրեր հարցեր էին առաջանում, օրինակ՝ ինչու Ճափոնիայի դպրոցների բարձր դասարաններում (16-18 տարեկան) աշխարհի պատմութիւնը դասաւանդելիս ոչիչն չի ասւում հայերի ցեղասպանութեան մասին, իսկ հրեաների ցեղասպանութիւնը ներկայացուած է բաւականին ծաւալով: Իմ կարծիքով, այդ իրավիճակը չի կարելի արդարացնել ո՛չ հայերի ցեղասպանութեան գոհների քիչ քանակով, ո՛չ էլ յանցանքի վաղեմութեամբ:

Ամէն դէպքում, բարեբախտաբար թէ դժբախտաբար, այս բախումնային դէպքի մասին իմանալուց ի վեր, գերազանցելով հետազօտողիս տեսակէտը, մարդկութեան հանդէպ պատասխանատուութեան

զգացումով դրդուած, որոշեցի ինձ վրայ վերցնել հայերի ապրած ողբերգութեան մասին անտեղեակ ճափոնացիների աչքերը բացելու պարտականութիւնը:

Բայց այս երկու տասնեակ տարին, որ ես զբաղուեմ եմ հայերի ցեղասպանութեան վերաբերեալ հետազոտութիւններով, շատ երկար եւ ոչ հարիւր ճանապարհ էր: Ճափոնիայում ոչ միայն իմ կոլեգաները, այլեւ ուրիշ գիտնականներ ինձ քննադատում էին, ոմանք ասում էին, որ իմ հետազոտութիւնները անիմաստ են: Չնայած դրան՝ որ խորապէս համոզուած էի, որ իմ հետազոտութիւնները կարելու էր են, յամառօրէն յօդուածներ էի գրում, տպագրում դրանք գիտական ամսագրերում եւ հրատարակում գիտաժողովներում: Երկար ժամանակ դրանք չէին արժանանում ճափոնացի գիտնականների ուշադրութեանը, բայց այս տարի (2004 թ.) լոյս տեսած «հայերի մոռացուած ցեղասպանութիւնը՝ հետազոտութիւն եղեռնագործութեան կանխման եւ պատժի վերաբերեալ» վերնագրով գիրքս նշանաւորեց հետազոտութիւններին աւարտը: Դա զուտ մասնագիտական աշխատութիւն է, բայց ես փորձել եմ հնարաւորին չափ խուսափել մասնագիտական չոր տերմիններից, արտայայտուել հասկանալի լեզուով, որ մատչելի լինի ճափոնացի ընթերցողին: Շապիկի վրայ տեղադրեցի Միժեռնակաբերդի Եղեռնի գոհերի յուշարձանի լուսանկարը, որն ինքս եմ նկարել, իսկ միւս կողմը՝ էջմիածնի խաչքարերից մէկի լուսանկարը:

Այդ գիրքը ներկայացուեց Հայաստանի ազգային գիտութիւնների ակադեմիայում՝ որպէս ճափոնիայում առաջին աշխատութիւն Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ: Ներկայացումն անցաւ հանդիսաւոր, բազմաթիւ գիտնականների եւ լրագրողների ներկայութեամբ, որոնց հաղորդագրութիւնները հասան մինչեւ ճափոնիա եւ իմ հայրենակիցների մօտ, չնայած ուշացումով, հետաքրքրութիւն առաջացրեցին հայոց Յեղասպանութեան վերաբերեալ:

2.- Հայերի ցեղասպանութեան իմ հետազոտութեան նպատակը:

Հայերի ցեղասպանութեան հիմնական պատճառների եւ դրդաւորիների մասին իմ մեկնաբանութիւնը համընկնում է ուրիշ գիտնականների կարծիքների հետ, որի համար այստեղ դրանց չեմ անդրադառնում: Հետազոտութիւններին ժամանակ աչքի անցակցրած զրականութեան եւ նիւթերի ուշադրաւ կէտն այն էր, որ հեղինակների մեծ մասը կամ պատմաբաններ էին, կամ էլ միջազգային քաղաքականութեան պատմութեան մասնագէտներ: Եւ ահա, լինելով միջազգային իրաւագէտ, հայերի ցեղասպանութեանը անդրադարձայ ոչ թէ պատմաբանի, այլ իրաւագէտի տեսակէտից: Եւ մտածեցի՝ չեմ կարող, արդեօք, իրաւա-

գէտի նոր տեսակէտից մօտենալով այդ շատ դժուար լուծելի խնդրին, մեկնաբանել այն:

Յիշեցնեմ, որ ցեղասպանութիւն՝ «genocide», տերմինը մտցրել է միջազգային իրաւագէտ Ռաֆայէլ Լեմկինը, որը լեհաստանցի հրեայ է: Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ, երբ նացիստական Գերմանիան զրաւեց Լեհաստանը եւ լեհերը փախուստի դիմեցին Ամերիկա, նա 1944 թ. Ամերիկայի ցամաքային՝ ուժերի վարչութեան առաջարկով տպագրեց մի աշխատութիւն: Այդ աշխատութեան մէջ առաջին անգամ հնչեց «genocide» նոր տերմինը: «Genocide» բառը նա ստեղծել էր, միացնելով յունարէն «genos» («ազգ», «ցեղ») առաջին մասին լատիներէն «cidium» («սպանել») բառի «cide» բայական ձեւը:

Երկրորդ Համաշխարհային Պատերազմի գլխաւոր դաշնակից երկրները՝ ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան եւ Սովետական Միութիւնը, 1945 թ. Օգոստոսի ութին ստորագրեցին «Եւրոպայի առանցքային պետութիւնների կոնվենցիա՝ գլխաւոր յանցագործների դատական հետապնդման եւ պատժելու նպատակով» փաստաթուղթը եւ նրան կից ընտրեցին «Միջազգային զինուորական թրիպունալ»: Այդ երկու համաձայնագրերի հիման վրայ անգամ պատմութեան մէջ միջազգային զինուորական թրիպունալի կողմից իրականացուեց Նիւրնբերկեան դատավարութիւնը, որը սկսուեց 1945 թ. Նոյեմբերի 20-ին: Այդ դատավարութեան ժամանակ առաջին անգամ միջազգային ատենուում ցեղասպանութեան յանցագործութեանը սահմանում տրուեց: Բայց ցեղասպանութեան յանցագործութիւնը դատապարտող օրինական փաստաթուղթը ընդունուեց ՄԱԿ-ի կողմից միայն 1948 թ.: Դա «Յեղասպանութեան յանցագործութեան կանխման եւ մեղաւորներին պատժելու վերաբերեալ կոնվենցիան» («Յեղասպանութեան կոնվենցիան») էր: Այդ կոնվենցիան ուժի մէջ մտաւ 1951 թ. Յունուարի 12-ին: Կոնվենցիայում ցեղասպանութիւնը սահմանուեց որպէս «պլանաւորուած գործողութիւններ, որոնց նպատակն է ազգային (national), էթնիկական (ethnic), ռասայական (racial), կրօնական խմբերի լրիւ կամ մասնակի ոչնչացումը»: Տրուած էր ցեղասպանութեան զաղափարի բացատրութիւնը, որում նշուեց էր, որ ցեղասպանութիւն է համարուում «մարդկանց խմբերի ոչնչացման մտադրութիւնը (the intent to destroy an entire group), ռասայական, կրօնական յատկանիչներից ելնելով՝ վերոյիշեալ բնակչութեան խմբերի մի մասի ոչնչացման մտադրութիւնը (to eliminate portions of the population marked by their racial, religious...): Այսինքն՝ պարտադիր չէ, որ խումբը ոչնչացուած լինի լրիւ: Սակայն եթէ խումբը ոչնչացուել է մասամբ, դա ցեղասպանութիւն է համարուում, եթէ «ոչնչացուած մասի մէջ է գտնուել խմբի կարեւորագոյն մասը, օրինակ՝

դեկավարները (a significant section of a group such as its leadership)», կամ «բաւականին մեծ թուով մարդիկ են ոչնչացուել (imply reasonably significant number)»: Այսպիսով՝ ցեղասպանութիւն համարուելու պայմանները, ինչպէս տեսնում ենք, կարելի է բաժանել երեք մեծ վերոյիշեալ խմբերի:

Հիմնուելով այդ պայմանների վրայ՝ ցեղասպանութիւնը, միջազգային իրաւունքի համաձայն, համարում է յանցագործութիւն՝ անկախ նրանից՝ կատարուել է այն խաղաղ թէ պատերազմական պայմաններում: Ցեղասպանութեան կանխելու եւ պատժի մասին ընդունուած «Ցեղասպանութեան կոնվենցիայի» 2-րդ յօդուածի սահմանուած վերոյիշեալ հիմունքներից ելնելով՝ 1915 թ. Օսմանեան կայսրութեան մէջ երիտթուրքերի կոլուակցութեան կառավարութեան կողմից իրագործուած հայերի կոտորածները պէտք է որակել որպէս ցեղասպանութեան յանցակազմ, որը պատժի է ենթակայ: Բացի դրանից, 4-րդ յօդուածում նշուած է, որ անկախ նրանից՝ յանցագործը, տուեալ երկրի սահմանադրութեան համաձայն, պատասխանատու քաղաքական գործիչ է, պաշտօնական ծառայող թէ անհատ անձ, նա ենթակայ է պատժի: Հետեւաբար, հայերի ցեղասպանութիւնը փլանաւորած ե՛լ երիտթուրքերի կոլուակցութեան ղեկավարները, ե՛լ պաշտօնական ծառայողները, ե՛լ անհատ անձինք պէտք է պատիժ կրեն արուածի համար:

3.- Հայոց Ցեղասպանութեան խնդիրը:

1915 թ. Օսմանեան կայսրութեան երիտթուրքերի կոլուակցութեան կողմից իրագործուած ցեղասպանութիւնը, որն ուղեկցուած էր կեանքի անտանելի պայմանների ստեղծումով, հայերի ստիպողական տեղափոխութիւններով, ստիպողական կրօնը փոխելու գործողութիւններով, մասսայական ջարդերով, տեղի էր ունեցել 1914 թ. սկսուած Առաջին Համաշխարհային Պատերազմի կէսերին: Եւրոպական մեծ պետութիւնները, նոյն քրիստոնեայ ժողովրդի՝ հայերի օր ու գիշեր տեղացող տառապանքների մասին իմանալով հանդերձ, իրենց երկրների շահերը միայն հետապնդելով, ոչ միայն մարդասիրական միջամտութիւն չձեռնարկեցին երիտթուրքերի կառավարութեան ոճրագործութիւնը կանխելու համար, այլեւ լուռ համաձայնութեան գնացին:

Այն, որ XX դարի սկզբի այդ ցեղասպանութիւնը լուռութեան էր մատնուել աշխարհում, որ մեծ պետութիւնները ականջները փակել էին հումանիտանների բողոքի ձայները չլսելու համար, յանգեցրեց նրան, որ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ իրագործուեց հրեաների ցեղասպանութիւնը (հոլոքոսթը), որը համարում է XX դարի ամենամեծ ողբերգութիւններից մէկը: Հոլոքոսթի գաղափարախօս Ատոլֆ Հիթլերը հրեաների ջարդերը սկսելու հրամանով ենթականերին ուղար-

կած իր հեռագրում գրել է. «Ո՞վ է յիշում հիմա հայերի ջարդերի մասին» Անկասկած, ինքը՝ Հիթլերը, շատ լաւ էր յիշում հայերի եղեռնի մասին: Հայերի ցեղասպանութիւնն ու հոլոքոսթը մի քանի նմանութիւններ ունեն:

Փորձեմ շարադրել, թէ ինչն է, իմ կարծիքով, ընդհանուրը այդ երկու ցեղասպանութիւնների մէջ: Առաջինը՝ երկուսի սկսուելու նախապայմաններն են.

1) Թուրքիայում, ինչպէս եւ Գերմանիայում, պետութեան կողմից ստեղծուել էր կեանքին վտանգոյ միջավայր:

2) Չնայած էթնիկական մաքրումների թիրախն են եղել շարքային մարդիկ, նրանց հասարակական, տնտեսական դիրքը բարձրացնում է այն փաստը, որ նրանք պատկանում էին ազգային եւ կրօնական խմբերի:

3) Չնայած երկու ոճրագործութիւնները կատարուել են տարբեր ժամանակաշրջաններում, երկուսն էլ իրենցից ներկայացնում են համաշխարհային պատերազմների կէսերին իրագործուած էթնիկական մաքրումներ, որոնց իրականացման յաջողութեանը նպաստեցին միջազգային սանկցիաների եւ դատապարտութեան բացակայութիւնը: Աւելին՝ նախապայմանների այս երեք գլխաւոր կէտերից բացի կարելի է բերել եւս երկուսը:

4) Իտալիկիայի առարկուութիւնն է: Ե՛ւ Թուրքիայում, ե՛ւ Գերմանիայում լեզուն, կրօնը, մշակոյթը նոյնատիպ դարձնելու, պետութեան կենտրոնաձիգ ուժերը աւելի ամրապնդելու նպատակով, էթնիկական մաքրումներ իրագործելու համար այդ իրագործումները որդեգրել էին համապատասխան գաղափարախօսութիւն՝ պանթուրքիզմը Թուրքիայում եւ նացիզմը Գերմանիայում:

5) Ոճրագործների ընդհանուր կողմերից նաեւ այն է, որ երիտթուրքերի կոլուակցութեան պարագլուխները եւ կոլուակցութեան անդամները, ինչպէս նաեւ նացիստները եւ Հիթլերն ու նրա կողմնակիցները, լրիւ նոյնանման չլինելով հանդերձ, հասարակական տեսակէտից կողմնապահ գաղափարախօսութեան մոլի կողմնակիցներ էին եւ դա ապացուցում է դրանց նոյնութիւնը, ապացուցում են, որ դրանք նոյնատիպ հիւանդագին ֆանատիկներ են եղել:

Նմանատիպ մեթոտներ: Յաջողութեամբ կիրառուած են նաեւ ներկայ միջազգային հանրութեան մէջ տարբեր երկրներում, տարբեր սոցիալական պայմաններում վտանգաւոր բնոյթի տիկտատորների կողմից՝ որպէս պետութեան իշխանութեան գլուխ գալու միջոց: Դացոյց է տալիս նորից, որ մեր ժամանակներում էլ վտանգաւոր միջավայր եւ թաքցրած սպառնալիքներ կան: Այդ տեսակէտից նաեւ չի կարելի մոռանալ բազմաթիւ տարածաշրջաններում իրագործուած էթնիկական մաքրումների մասին, որոնք ցեղասպանութեան կոնվենցիայի ընդունե-

լույց յետոյ միջազգային հանրութեան մէջ, միջազգային իրաւագիտութեան կողմից սահմանուած են որպէս յանցագործութիւն: Մեր սերունդը, որն ապրում է XXI դարում, հայերի ցեղասպանութիւնը չկանխելու, ի սկզբանէ նրա հիւանդ արմատները չկտրելու համար, միջազգային հանրութեան պատասխանատուութիւնը կրելով, պէտք է ուղղակի կերպով դիմի ներկայ թուրքիայի կառավարութեանը՝ ցեղասպանութեան յանցագործութեան փաստը ընդունելու պահանջով եւ անուղղակի կերպով դիմի ՄԱԿ-ի հեղինակաւոր գործող անդամներին՝ միջպետական եւ ներպետական հանրութիւններում մարդու իրաւունքի մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու նախագիծ փլանաւորելու առաջարկով, որպէսզի այդ հանրութիւններում ուժեղ համոզմունք առաջանայ, որ էթնիկական մաքրումների սիմպտոմները տեսնելիս պէտք է մարդասիրական միջամտութիւն սկսել եւ դրանցից հրաժարուել չի կարելի: Այդ նախապայմաններից յետոյ երեւի թէ կարելի լինի մեղքերը քաւել ողբերգութեան ճաանապարհով անցած հայերի, հրեաների եւ շատ ուրիշ սպանդների զոհերի առջեւ:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՅԵՐՔԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հայոց ցեղասպանութեան 90-ամեայ տարելիցի օրերին Երեւանում լոյս տեսաւ Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեանի (1909-1999) «ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՅԵՐՔԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ» հատորը: Այն հրատարակուեց ՀՀ ԳԱԱ Պատմութեան եւ Արեւելագիտութեան ինստիտուտների գիտական խորհուրդների համատեղ որոշմամբ:

Այս հատորում ընդգրկուած են Մկրտիչ Ներսիսեանի «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» անտիպ աշխատութեան 2-րդ հատորից ընտրուած նիւթերը: Այն հրատարակութեան է պատրաստել հեղինակի երկար տարիների գործընկեր՝ Նունէ Դերոյեանը:

Այս յոյժ կարեւոր եւ հրատապ փաստագրական ժողովածուն խմբագրել եւ «երկու խօսքով» ընթերցողին է ներկայացրել Դոկտ. Փրոֆ. Պարոյր Մուրատեանը:

«Երկու խօսքում» ուշադրութեան արժանի է Փրոֆ. Պարոյր Մուրատեանի հետեւեալ ճշմարիտ գնահատականը իր ժամանակի անխոնջ գիտնական Մկրտիչ Ներսիսեանի մասին:

«Մեզանում Մ.Գ. Ներսիսեանը առաջինը քաղաքացիական համարձակութիւն եւ գիտական հասունութիւն ունեցաւ յաղթահարելու քաղաքական ու գաղափարական արգելքները եւ 1946 թ. դոկտորական թէզ ներկայացնելու «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետութեան դէմ 1850-1870 թթ.» խորագրի տակ: Մեղադ-

րանքի տարափին հակառակ՝ նա վերանայեց Բաֆֆու եւ Ռ. Պատկանեանի ժառանգութեան գնահատութիւնը, թուրքական բռնապետութեան դէմ հայոց պայքարը յայտարարեց ազատագրական, իսկ թուրքական պատմագրութեան բարբառանքները՝ կեղծարարութիւն: Դարձեալ Մկրտիչ Ներսիսեանն էր, որ 1965-ին «Փրաւտա»-ում (Մոսկուա) տպուած յօդուածով Խորհրդային Միութիւնում համարձակ խօսք ասաց Հայոց ցեղասպանութեան մասին, ապա եւ առաջինը խմբագրեց վաւերագրերի այն ժողովածուն, որով հիմք դրուեց հայաստանեան ցեղասպանագիտութեանը («Հայերի կենցիտը Օսմանեան կայսրութեան մէջ», 1966, 1982, 1991):

Իրօք որ 1966 թ. Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեանի խմբագրութեամբ Երեւանում առաջին անգամ լինելով ուսուերէն լոյս տեսած «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» խորագիրը կրող փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածուն, հայերի կոտորածներին վերաբերող փաստագրական առաջին հրատարակութիւնն էր:

Այդ հատորը բաղկացած էր երկու մասից: 1) «Հայերի կոտորածները սուլթան Ապտուլ Համիտի (1876-1908) օրօք» եւ 2) «Հայերի գանդուածային կոտորածները երիտթուրքերի կողմից (1909-1918)»: Այս երկու մասերում ամփոփուած են գերազանցապէս արխիւային եւ տարբեր լեզուներով հրատարակուած դիւանագիտական փաստաթղթեր. Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների դեսպանութիւնների եւ հիւպատոսութիւնների՝ իրենց երկրների արտաքին քաղաքական գերատեսչութիւններին ուղղուած զեկույցներ ու զեկուցագրեր, որոնք լիովին բացայայտում են թուրքիայի կառավարող չրջանների կողմից հայ բնակչութեան գանդուածային ջարդերի եւ բնաջնջման իրականացման քաղաքականութիւնը:

Արդէն 8 տարի է ինչ Մկրտիչ Ներսիսեանը մեզ հետ չէ, բայց նրա ամուր հիմքերի վրայ, վեր խոյացած ազգօգուտ գործը շարունակուում է: Վկայ է նրա յետ մահու հրատարակուած այս բարձրարժէք հատորը:

Հայերէն (177 էջ) եւ ուսուերէն (160 էջ) երկլեզուեան լոյս տեսած վերոյիշեալ այս նոր հատորը բաղկացած է հետեւեալ 6 գլուխներից:

ա.- Արեւմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանութեան պատմութեան մի քանի հարցերի շուրջ:

բ.- Օսմանեան պետութեան «քաղաքակրթական միսիայի» մասին:

գ.- Անհրեքելի փաստաթղթեր արեւմտահայութեան ցեղասպանութեան մասին:

դ.- Մի բանավէճ Չմիււնիայի 1922 թուականի ողբերգութեան մասին:

ե.- Մուսթաֆա Քեմալ փաշան արեւմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանութեան մասին:

դ. - Քեմաբազման գործերի բարբարոսութիւնները Արեւելեան Հայաստանում 1920 թ. վերջին եւ 1921 թ. սկիզբներին:

Ստորեւ ընթերցողին ենք ներկայացնում Զ. գլխից երկու օտարազգի ներկայացուցիչների վկայութիւնները:

ՌՈՒՄԻՆ ԶԱՂԱԶԱՅԻ ԿԱՍԻԼ
ԻՈՆԵՏԿՈՅԻ ԿԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վրաստանում հայկական ՍՍՀ լիազօր ներկայացուցչութեանը

27 Յունուարի 1921

Թիֆլիս

Թարգմանութիւն ռուսերէնից

Անցեալ տարուայ Հոկտեմբերի 30-ին գերի ընկնելով կարսում թուրքերին՝ ես տեսայ հետեւեալը.

Քաղաքի բնակիչները, խուճապի ժամանակ վերցնելով իրենց ամէն արժէքաւոր բան, փրկելու համար իրենց կեանքն ու ապրանքները, լցուեցին Մեյքե-քոյ կայարանի ճանապարհին ընկած կիրճը: Առաւօտեան ժամը մօտ 11-ն էր: Երբ թուրքական հեծելախումբը գրաւեց ճանապարհի վրայի բարձունքները, եւ միաժամանակ ամրոցի պարէտի կողմից բարձրացուեց սպիտակ դրօշ եւ պատուիրակութիւն ուղարկուեց՝ թուրքական փաշային յայտնելու, որ հայկական բանակն ամբողջովին յանձնուած է: Երբ թուրքերը գրաւեցին կարեւոր բարձունքները, նրանք բարձրացրին կարմիր եւ սպիտակ դրօշները: Ժողովուրդը, տեսնելով այդ, հանդարտուեց եւ դրանից օգտուելով՝ թուրքերը գնդացրային կրակ բաց արին ժողովրդի վրայ, որը տեւեց մէկ ժամից աւելի: Վերջապէս յայտնուեցին թուրք սպաները եւ բռնեցին շէնքում գտնուող ամրոցի պարէտին, մարդկանց ու քեցիցն դէպի կայարան: Ես էլ ընկայ նրանց մէջ ու ճանապարհին մեզ քարկոծում էին եւ ուղեկցում հայհոյանքներով: Բազմաթիւ կանայք նետուեցին կարս-չայ գետը եւ խեղդուեցին: Տեսայ Ամերիկայի ներկայացուցիչ պ. Փակսին ամբողջովին մերկ եւ դողողացող: Մեզ տեղաւորեցին քաղաքում, 42 մարդ մի փոքրիկ սենեակում եւ 4 օր թողին առանց հացի, այնուհետեւ տեղափոխեցին բանտ, որտեղ առաջին օրը տուին իւրաքանչիւրին 1 Փ. հաց, բայց մնացեալ 3 օրերի ընթացքում ոչ միայն հաց չտուին, այլեւ հրաժարուած էին ջուր տալ, ինչի պատճառով շատերի լեզուները ուռել էին: 5-րդ օրը 700-800 մարդ տեղափոխեցին ամերիկեան թեյի գործարան, որտեղ թուրք գինուորները մեզ էլ ամբողջովին մերկացրին: Ողջ գիշերը խուզարկում էին մեզ եւ տարան նոյնիսկ ամբողջ հնոտիները: Ստիպ-

ուած բոլորը ծածկուեցին բամբակով, իսկ վրայից՝ թելերով (գործարանում թել չատ կար): Երկրորդ օրը մեզ գնացքով ուղարկեցին Սարիղամիշ, իսկ այնտեղից՝ էրզրում...: Եղան տղամարդկանց բռնաբարման դէպքեր: Ես՝ որպէս ռումին, շուտով, այսինքն մի ամիս յետոյ ազատուեցի եւ եկայ Կարս, որտեղ ապրեցի մօտ երեք շաբաթ: Կարսում ես թուրք դոկտոր Նուրի պէյից իմացայ, որ քաղաքում սպաննուած են 8 հազար հայեր (կանայք, երեխաներ եւ տղամարդիկ), բայց իմ դիտարկումներով սպաննուածների թիւը 10-12 հազարից քիչ լինել էր կարող, քանի որ մի ամիս անց քաղաքի շրջակայքում դեռեւս կարելի էր տեսնել բազմաթիւ դիակներ: Բոլոր կանայք, բացառութեամբ 2-3 ընտանիքների, որոնց պաշտպանել են օսեթները, բռնաբարուած ու վարակուած են: Շատերը այժմ գտնուում են թուրք սպաների ու գինուորների մօտ, մի մասին էլ քրտերն են տարել իրենց գիւղերը: Քաղաքում կան մօտ 15-20 տղամարդ, որոնք էլ աշխատում են թուրքերի մօտ: Հայերի ապրանքներով լի բոլոր խանութները թուրքերը գրաւեցին ու առեւտուր են անում: Տները ամբողջովին թալանուած են: Վերջին ժամանակներս շրջում էին խուզարկութիւններով, իբր փնտռում են պետական հանդերձանք եւ գէնք եւ այդ պատրուակով յափշտակում էին ամէն ինչ, որ գտնում էին տանը (սեղաններ, մահճակալներ եւ այլն) եւ բոլորը տանում են էրզրում: Անմարդաբնակ տներում հանում են պատուհանների շրջանակները եւ յատակի փայտը եւ տանում են, իսկ մնացեալ մասը քանդում են վառելու համար: Ես՝ որպէս ռումինացի, իշխանութիւններից թոյլտուութիւն ստացայ եւ, հաւաքելով փողոցի որբերից 50 երեխայ (իսկ դրանք շատ շատ են եւ ամէն գիշեր տասնեակներով սառչում են), բերեցի Ալեքսանդրապոլ եւ յանձնեցի Յեղկոմին...: Յունուարի 18-ին Ալեքսանդրապոլում, աղբանոցներում յայտնաբերուած են մօտ 100 դիակներ, որոնց թուում էր գտնուում եւ Տէր Խորէն Քահանան: Պարզուել է, որ այնտեղից, երբ բանուորներին քշում են աշխատանքի, երեկոները յափշտակում են 2-3 հոգու եւ քաղաքից դուրս սպաննում են: Ալեքսանդրապոլից մինչեւ Նալբանդ կայարանը գտնուում է թուրքերի ձեռքին եւ ըստ տուեալների ոչնչացուած է 140 գիւղ եւ գլխովին կոտորել են 18-էն 45 տարեկան բոլոր տղամարդկանց: Մի խօսքով այդ շրջաններում մնացած հայերի, ինչպէս նաեւ գերիների վիճակը յուսահատական է: Գերիներից շատերը սառչում են եւ շատերը մեռնում են սովից:

Վ. Իոնեսկո
Փ. 114, ց. 2, գ. 33, 72-73
եւ գ. 43, թ. 34

Հայերի կոտորածը Ջաջուրի շրջանում
(ամերիկացի Չարլզ Ֆ. Գրանտի վկայութիւնները)

20 Մայիսի 1921 թ.

Ղարաքիլիսա
Թարգմանութիւն ռուսերէնից

Ես՝ ներքոստորագրեալս Չարլզ Ֆ. Գրանտ, Ղարաքիլիսայի Ամերիկեան կոմիտէի ներկայացուցիչը, այն բանից յետոյ, երբ ինձ հասան լուրեր, որ վերջերս թուրքերի կողմից հլաղակոտորած Աղբուլաղի շրջանում յայտնաբերուել են հսկայական քանակութեամբ հայերի դիակներ, Ամերիկեան կոմիտէի անդամներ Ռէյ Լ. Օզդենի եւ Ջորջ Ա. Բեյ-Մամիկոնեանի ուղեկցութեամբ մեկնեցի այնտեղ 1921 թ. Ապրիլի 28-ին:

Մենք Աղբուլաղ հասանք, այնտեղից ուղեկցի հետ խճուղով ճամբայ ընկանք դէպի Ջաջուր լեռնաշղթայ:

Ջաջուր լեռնանցքի համարեայ կատարին ուղեկցողը կանգնեցրեց ավտոմեքենան եւ մեզ հրաւիրեց հետեւել իրեն ճանապարհի հիւսիսային կողմում ընկած նեղ եւ խորը հեղեղատի հատակով հոսող գետի հունով: Մօտ երկու հարիւր ոտնաչափ հեռաւորութեան վրայ մենք հանդիպեցինք զգալի թւով դիակներին՝ մեծ մասամբ երեխաների: Այդտեղից մօտ երկու հարիւր յիսուն ոտնաչափ տարածութեան վրայ թափուած էին մարմինների կոյտեր, որ ընկած էին կիրճի երկու կողմերում՝ մասամբ ավազով ծածկուած: Որոշ մարմիններ ընկած էին հունի հատակի խորքում՝ ըստ երեւոյթին գազաթների ճնահալքի պատճառով ավելացած ջրի ճնշման միջոցով քշուած իրենց նախնական գտնուած վայրից:

Դատելով վէրքերի բնոյթից եւ մարմինների դիրքից եւ շատ այլ նշաններից՝ մենք եկանք միաձայն եզրակացութեան, որ հարեւան գիւղերի մի խումբ հայեր, ինչը հաստատուում է այն փաստով, որ կենդանի մնացած գիւղացիները հասցրել են ճանաչել եւ թաղել զգալի թւով տուժածներին, կոտորուել են երեք կամ չորս ամիս դրանից առաջ, ինչի մասին բաւական պարզ խօսում էր մարմինների վիճակը:

Չոհերի թիւը տատանուում է մօտաւորապէս 1200-1500-ի միջեւ, որոնք ըստ գտնուած պարկուճների քանակի մօտ 200 է, մեծ մասամբ սպանուել են սուիճներով կամ որեւէ այլ սառը գէնքով, ինչը հաստատուում է բազմաթիւ բնորոշ վէրքերով, օրինակ կտրուած կուրծքեր, յղի կանանց պատռուած որովայններ եւ այլն:

Առաւել բացորոշ առանձնայատկութիւնն է տղամարդկանց դիակների լրիւ բացակայութիւնը, տղամարդ գոհերից ամենից ավագը հագիւ 14 տարեկան էր:

Պարկուճների վրայ թուրքական զրբերը եւ կիսալուսնով ու աստղով մի քանի փամփուշտների պատեանները կասկած չթողեցին, թէ ովքեր են մարդասպանները:

Չոհերը գնդակահարուել են շատ մօտ տարածութիւնից՝ կանգնեցուած լինելով զառթափի ամենածայրում: Ջառթափից հինգ կամ վեց քայլի վրայ եղած մի շարք փամփուշտներ կասկած չեն թողում այդ մասին: Դրանից յետոյ մարմինները թափուել են դետահունի կողքերին եւ ծածկուել են հողով՝ հետքերը ծածկելու համար:

Ես լրիւ համոզուած եմ, որ կիրճից քիչ վեր գտնուող կանացի սպիտակեղէնի ծուկներով ծածկուած ոչ մեծ հարթ սարահարթը վկան է եղել ոչ քիչ բռնութեան:

Մեզ յայտնեցին, որ այդ նոյն կիրճից վեր՝ հինգ վերստի վրայ, գտնուում էին մեծ քանակութեամբ դիակներ, սակայն անբարենպաստ եղանակի պատճառով մեզ չյաջողուեց հասնել այդտեղ, ինչպէս նաեւ նկարահանել տեսածը:

Կոտորածի տեղում թափուած փամփուշտների ուղիղ հաւասար շարքը, պարզ կերպով ցոյց էր տալիս, որ տեղի ունեցածը իրագործուել էր ուսուցուած եւ դիպուկ ղեկավարուած զօրքի ջոկատի կողմից:

Մենք բոլորս ցանկացած ժամանակ պատրաստ ենք հաստատել բոլոր վերը ասուածը:

Չարլզ Ֆ. Գրանտ
Ղարաքիլիսայի Ամերիկեան կոմիտէի նախագահ
ն. 114, ց. 1, գ. 124, թ. 8 եւ գ. 131, թ. 13, գ. 134, թ. 1:

ԷՂՈՒԱՐՂ Ս. ԼԻՏԼԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ»
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՄՆ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ,
1918 Թ. ՓԵՏՐՈՒԱՐԻ 7-ԻՆ

Վերջերս մի հաղորդում էինք հրապարակել Դոկտ. Գուրգէն Սարգսեանի անգլերէնից թարգմանուած եւ հրատարակուած գրքի բնագրի մասին: Խօսքը «Հոշոտուած Հայաստան» փաստավաւերագրական գրքի մասին է: Այն լոյս տեսաւ «Նոր Օր» շաբաթաթերթի Օգոստոս 27-ի համարում:

Մեր այս գրութեամբ ուզում ենք անդրադառնալ յարգարժան Գուրգէն Սարգսեանի կատարած մի այլ խիստ կարեւոր աշխատանքի մասին եւս: Այն է՝ Էրուարդ Ս. Լիտլի «Հայկական Հարցը» խորագրով գրքոյին է, որը լոյս տեսաւ 2003 թ. Երեւանում, ՀՀ ԳԱԱ Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ (40 էջ):

Նշենք, որ այս գրքովում ընդգրկուած է 1918 թ. Փետրուարի 7-ին, ԱՄՆ-ի Գոնկրէսում ընթերցուած գնդապետ-լէյտենանտ Էդուարդ Ս. Լիտլի ընդարձակ գեկուցումը, ուր հիմնականում խօսուած է «Հայկական Հարցի», Հայոց Մեծ Եղեռնի եւ ընդհանրապէս հայ ժողովրդի հետ առնչուող այլ հարցերի մասին:

Բանը այն է, որ հազուագիւտ դարձած այս գեկուցման անգլերէն ընդգրկը մինչ այդ, նոյնպէս մոռացութեան մատնուելով դուրս էր մնացել մասնագէտների տեսադաշտից: Պրպտող-որոնող վաստակաշատ գիտնական Գուրգէն Սարգսեանը երկար փնտռութեան յետոյ կարողանում է յայտնաբերել այս հազուագիւտ շահեկան գեկուցումը եւս եւ անմիջապէս թարգմանելով յանձնում հրատարակութեան: Բարձր գնահատելով Դոկտ. Գուրգէն Սարգսեանի կատարած գիտական, թարգմանական բարեխիղճ եւ ազգօգուտ աշխատանքը, բարեմաղթում ենք քաջաւուղղութիւն եւ նորանոր ստեղծագործական աշխատանքներ հայ ժողովրդի պատմութեան վերաբերող նորայայտ նիւթերի յայտնագործման եւ հրատարակման գործում:

Յայտնի է, որ 1914 թ. սկսուած Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի հախագահն էր մարդասիրական վեհագործներով օժտուած, բարի եւ ազնիւ Թոմաս Վուտրօ Ուիլսոնը ((1913-1921): Բնականաբար նա մանրամասն տեղեակ էր Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքական կուսակցութեան եւ կառավարութեան գործադրած հայաջինջ քաղաքականութեանը ամբողջ Օսմանեան կայսրութիւնում: Այնպէս որ հայ ժողովրդին օգնելու, հայկական հարցի դրական լուծման եւ անկախ հայկական մի պետութիւն ստեղծելու կողմնակից լինելով դեռեւս նախքան պատերազմի աւարտը ձգտում էր, որ ԱՄՆ-ը ստանձնէր Հայաստանի մանտաղը (խնամակալութիւնը): Պատերազմի աւարտից յետոյ էլ, Սեւրի հաշտութեան պայմանագրի պահանջից ելնելով, Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանների որոշման հարցը 1920 թ. Իտալիայի Սան Ռեմօ քաղաքում տեղի ունեցած միջազգային համագումարի առաջարկով ստանձնեց ինքը՝ Վուտրօ Ուիլսոնը:

Այս նպատակի բարեյաջող զարգացման համար, դեռեւս 1918 թ. պատերազմի աւարտից 8 ամիս առաջ, Փետրուար 7-ին, բազմաչարչար հայ ժողովրդին օգնելու միտումով ԱՄՆ-ի ներկայացուցիչների Պալատում, նրա նախաձեռնութեամբ օրակարգի հարց դարձաւ «Հայկական Հարցը»: Զեկուցողն էր Քանզաս նահանգից գնդապետ-լէյտենանտ Էդուարդ Ս. Լիտլը: Այս բարձրաստիճան գիտնորականը մինչ այդ 25 տարի եղել էր Մերձաւոր Արեւելքի մի շարք երկրներում: Բնականաբար

չփուել եւ ծանօթացել էր քաղաքական, դիւանագիտական, ազգային-հասարակական, կրօնական հանրայայտ գործիչների հետ:

Էդուարդ Ս. Լիտլը մօտիկից ուսումնասիրել էր նաեւ հայ ժողովրդի պատմութիւնը, աշխարհագրութիւնը, մշակոյթը: Տեղեակ էր հայունկարագրին, աշխատասիրութեանն ու ձեռներէցութեանը:

«Հայերը որքան որ աչքի են ընկնում արուեստի եւ դրականութեան ասպարէզում, նոյնքան էլ ռազմական գործի եւ պետութեան ղեկավարման բնագաւառում...», - մատնանշել է նա:

Բնականաբար, գեկուցման մէջ ամենայն մանրամասնութեամբ խօսում է նաեւ 1915 թ. Օսմանեան կայսրութեան տարածքում տեղի ունեցած արեւմտահայութեան տեղահանութեան եւ կոտորածների մասին: Ծճարտութեան վրայ հիմնուած այդ ընդարձակ գեկուցումով, գոնկրէսականները պէտք է, որ գաղափար կազմէին բազմաչարչար հայ ժողովրդի մասին եւ օգնութեան ձեռք մեկնէին ինչպէս որ հարկն էր:

Հայաստանի ինամակալութիւնը ընդունելու Ուիլսոնի ազնիւ նպատակի համար, նոյնիսկ 1919 թ. Մարտի 20-ին ԱՄՆ-ի կառավարութեան որոշումով, Մերձաւոր Արեւելքի եւ յատկապէս Հայաստանի իրազրութիւնը ուսումնասիրելու համար յատուկ գիտնորական յանձնախումբ ռազարկուեց ամերիկեան բանակի գեներալ Ճ. Հարպորտի գլխաւորութեամբ:

Դժբախտաբար միջազգային դիւանագիտական խարդաւանքների հետեւանքով ուիլսոնեան մանտաղի ընդունումը ձախողուեց: Այն մերժուեց նաեւ ԱՄՆ-ի ներկայացուցիչների Պալատում (1920 թ. Յունիս 1-ին):

Ստորեւ Էդուարդ Ս. Լիտլի վերոյիշեալ գեկուցումից քաղուածաբար բերում ենք առանձին հատուածներ, որպէսզի ընթերցողը որոշակի գաղափար կազմի նրա հայանպաստ բովանդակութեան մասին:

Միմիայն ուզում ենք մի ճշգրտում կատարել հետեւեալի մասին. «Հայ ժողովուրդը» խորագիրը կրող բաժնում, հայ բնակչութեան թուի մասին նաեւ նշել է. «Թուրքական Հայաստանում երեք տարի առաջ աւելի քան մէկ ու կէս միլիոն հայեր էին ապրում: Կայ կարծիքների որոշակի տարբերութիւն հայերի կոտորածների թուի առնչութեամբ: Ես կարծում եմ, ճիշդն այն է, որ նուազագոյնը 500,000 հայեր սպանւնրւած են՝ 1915 թ. կոտորածների ժամանակ այս երկրում, թուրքերի եւ քրտերի կողմից: Նրանց նպատակն էր ջնջել, վերացնել հայ ազգը, որպէսզի տիրանան նրանց երկրին, նրանց ունեցուածքին եւ ոչնչացնեն քրիստոնէական եկեղեցին» (էջ 18):

Այս մասին անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տուեալ ժամանակ պատերազմը դեռեւս չէր աւարտուել եւ հնարաւոր չէր հայութեան բնաջնջման մասին ստոյգ տեղեկութիւն տալ: Բացի այդ անհրաժեշտ է

նկատի ունենալ նաեւ, որ արեւմտահայութեան բնաջնջման քաղաքականութիւնը շարունակուեց յետագայում, քեմալականների վարած ազգայնական շարժման շրջանում: 1919-1923 թուականներին նրանք զանգուածային նոր կոտորածներ կազմակերպեցին Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանում, Կիլիկիայում եւ Թուրքիայի մի շարք վայրերում:

Հայ եւ օտարազգի պատմաբանների ու մասնագէտների տուեալներով հայ ազգաբնակչութեան թուաքակտելի Օսմանեան կայսրութիւնում եղել է երկու եւ կէս միլիոն մարդ: Իսկ գոհուած հայերի թուաքանակի մասին խօսելիս մատնանշուում է, որ Մեծ Եղեռնի ընթացքում, նահատակուել են աւելի քան մէկ ու կէս միլիոն անմեղ հայեր: (Տէս ա. Հայկական Գալստեան, Արեւմտեան Հայաստանի բնակչութեան ազգային կազմը ըստ Վիտալի Քինէի վիճակագրութեան. «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ... XII, Թուրքիա», Երեւան 1985, էջ 59: Բ. Ռուբէն Սահակեան, «Յեղասպանութեան պատմութիւնը», Երեւան, 1990, էջ 288-289):

ՔԱՂՈՒԾՆԵՐ ՁԵՎՈՒՑՈՒՄԻՑ
(ԱՐԵՒՏԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՅԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ)

Մենք շատ ենք խօսում Պելգիային հասած դժբախտութիւններին մասին, բայց ես վստահօրէն կարող եմ յայտարարել Գոնկրէսին, Հայաստանը տառապել է հարիւր անգամ աւելի, քան Պելգիան: Սուլթանը ոչնչացնում էր փոքր ազգերին շատ աւելի վաղ, քան Կայզերը: Հարիւրաւոր տարիներ այս կոտորածը շարունակուում է առաւել կամ նուազ չափերով: Կոյսերի պատուազրկումը, կանանց բռնաբարումը, տղամարդկանց սպանութիւնները, ծերերի գազանաբար մորթոտումը, ժողովրդին հաւաքել ու լցնել հայկական եկեղեցիներում եւ այրել, գողանալ, յափշտակել նրանց ունեցուածքը, այրել նրանց կահ-կարասին, քչել, տանել այն, ինչ որ մնացել էր նրանց տներում, առօրեայ դէպքեր են Հայաստանում: 1914 թ. ի վեր այսպէս տառապել են հարիւր հազարաւորներ: Ես կ'երկմտէի նման յայտարարութիւն Գոնկրէսի այս դահլիճում կատարել, եթէ բացարձակապէս համոզուած չլինէի իմ յայտարարութեան մէջ (էջ 18):

Աւելի քան քառասուն տարի առաջ պուլկարական յիսուն գիւղեր ոչնչացուեցին բնակիչներով հանդերձ: Մօտաւորապէս իննսուն տարի առաջ Քիոս եւ յունական այլ կղզիների բնակչութեան կոտորածը թուրքերի կողմից սոսկալի էր, բայց ոչ մի համեմատութիւն նրա հետ, ինչ որ եղել է Հայաստանում: 1915 թ. հարիւր հազարաւոր մարդիկ մորթուեցին, հարիւր հազարաւոր կանայք անպատուեցին: Կոտորածն ու ջարդը յաճախ սկսում է շեփորների ազդանշանով: Հարիւր հազար

ուր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների, բոլորն էլ բարի ու ազնիւ ընտանքիներէր, դուրս էին քաշուում եւ ստիպուում էին քայլել առանց սննդամթերքի կամ ուտելիքի անյայտ ուղղութիւններով՝ դէպի բնաջնջում, դէպի ոչնչացում. բազմաթիւ կանայք նետուեցին Եփրատ գետը՝ անպատուութիւնից փրկուելու համար: Մի քանի տարի առաջ Ուրֆա քաղաքում երեք հազար հայ հաւաքեցին, լցրին եկեղեցում ու կրակ տուին: Վերջին մի քանի տարիներին դրութիւնը այնպիսին էր, որ դժոխքն աւելի լաւ ապրելավայր էր, քան Հայաստանը, դժոխքում չեն պատուազրկում կանանց: Ես չեմ կարծում, որ հայերի ոչնչացումն օգուտ կը բերի քաղաքակրթութեանը, ես չեմ հաւատում, որ այդ կայսրութեանը ապահովութիւն կը բերի, քանի որ միակ ազգն է, որ ընդունակ է կառավարելու եւ զարգացնելու, հետեւապէս այդ ազգը չպէտք է արմատապէս բնաջնջուի կամ տեղահանուի:

...Հայաստան կոչուող այս տարածքում ապրում է հայ ժողովուրդը, նրա սահմանները հասնում են մինչեւ Ռուսաստան, մինչեւ Կովկաս, մեծաւ մասամբ զբաղւում է գիւղատնտեսութեամբ, նրանք հողագործներ են եւ անասնապահներ: Եթէ իրենց երկրում զբաղւում են երկրագործութեամբ, օտար երկիր գաղթելիս օգուտում են հնարաւոր ամէն մի առիթից: Դարեր շարունակ հայերը հանդիսացել են Սուլթանի ֆինանսական հարցերի խորհրդատուները: Նրանք առաջնակարգ, բարձր ֆինանսական հարցերի խորհրդատուները: Օսմանեան կայսրութեան մակարդակի վաճառականներ եւ բանկիրներ են: Օսմանեան կայսրութեան առեւտրի եւ պիղնեսի մի խոշոր մասը նրանց ձեռքում է, ոչ թէ թուրքերի կամ այլոց: Նրանց նախանձելի ջանասիրութիւնը, գործիմացութիւնը, առողջ դատողութիւնը, առեւտրագործարքային ձեռնարկութիւններ զարգացնելու նրանց ընդունակութիւնները, այս բոլորը բացարձակ հաւաստիացումն են, որ եթէ քրիստոնեայ աշխարհը թիկունք չկանգնի թուրքերին ու քրտերին, որոնք թուաքանակով գերազանցում են հայերին, կամ զէնք ու ռազմական հանդերձանք տրամադրուի նաեւ հայերին այնքան, որքան նրանց թշնամիներին, որոնց ներկայումս անգլիացիները վտարում են Պաղատից ու Երուսաղէմից, նրանք՝ հայերը, ոչ միայն ձեռք կը բերեն իրենց անկախութիւնը թուրքական լծից, այլեւ կը գերազանցեն մի հիանալի երկիր, որ ոչ մի ժողովրդի չի յաջողուել երկրագնդի երեսին՝ խաղաղութեան եւ բարգաւաճման պայմաններում: (էջ 20-21):

...Եւրոպան ոչինչ չի արել Հայաստանի համար կամ նրա թուրքական մասի համար: Փաստօրէն քրիստոնեայ պետութիւնները աւելի շատ վնաս են բերել, քան բարիք, որովհետեւ նրանք պաշտպանել են Պելգիայի պայմանագիրը, մի սնամէջ ծաղր, որով ռեւոլուցիոնայն այդ ժողովուրդներին, ապա հեռացան, թոյլ տալով թուրքերին սպաննելու նրանց,

պատուազրկելու, հազարներով ոչնչացնելու: Ես նշեցի, որ կառավարութիւնը ճիշդ վարուեց, մերժելով պատերազմ յայտարարել Պուլկար-խային: Յոյս կայ իմաստուն, խելօք քաղաքականութեան համար: Ինչ վերաբերում է թուրքերին, դրուժիւնը շատ տարբեր է: Ինչպէր փաշան իր երկիրը քաշեց այս պատերազմի մէջ առանց որեւէ պատճառի, բացի համակրանքը դէպի գերմանական ռազմական ինքնակալութիւն. կամ նրանք միասին կը կռուեն, կամ միասին կը տապալուեն, ինչպէս հարկն է:

Միացեալ Նահանգները վտանգի է ենթարկում միլիոնաւոր տուրաններ եւ միլիոնաւոր ամերիկեան կեանքեր ներկայ պատերազմի արդիւնքի առումով: Թուրքերը կռուում են մեր դէմ, ինչո՞ւ նոյնը չէք անում մենք: Նրանք անում են այն, ինչին մենք դէմ ենք եւ Մերձաւոր Արեւելքում չի լինի ոչ խաղաղութիւն եւ ոչ դիմոկրատիա, եթէ թուրքերը չպարտուեն: Եթէ մենք պատերազմ չյայտարարենք թուրքիային եւ պատերազմ չսկսենք նրանց դէմ, նրանք կը նուաճեն Հայաստանն ու պատերազմ չսկսենք նրանց դէմ, նրանք կը նուաճեն Հայաստանն ու կովկասը, գերմանական դրօշը կը ծածանուի այդ լեռնաշղթայի վրայ, Սեւ ծովի եւ Կասպիականի վրայ եւ նրանք կը տիրեն աշխարհին: Մենք հասել ենք այնտեղ, ուր ճակատագիրը պարտադրում է, որ մենք պէտք է շարժուենք աւելի առաջ՝ մեր ինքնապաշտպանութիւնը նկատի ունենալով: Մեր դրօշակը պէտք է բարձրանայ, ծածանուի եւ դրա համար աւելի լաւ պատճառ, աւելի խելամիտ նպատակ, աւելի բարձր արժանապատուութիւն չկայ, քան դրօշի ծածանուիլը Միջագետքի, Հայաստանի լեռների ու Պաղեստինի վրայ՝ պաշտպանելու Յիսուս Նազովրեցու վարդապետութիւնը եւ ոչնչացնելու ռազմական ինքնակալութիւնը, որի դէմ նա պատերազմ յայտարարեց տասնինը դար առաջ (ծափահարութիւններ) ... (էջ 34-35):

ՀԱՅ ՆՇԱՆԱԿՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՌԻ ՄԱՍԻՆ

Պաքուի փողոցներից մէկում մի ռուս սպայ բռնութիւն է կոշկակար հայ Լազարեւին, ասելով. «Հեռացիր ճանապարհից, կեղտոտ հայ»: Լազարեւը նրան պատասխանել է. «Ես քեզ ցոյց կը տամ իմ կեղտոտ հայ լինելը»: Անմիջապէս կամաւոր մտնում է զինուորական ծառայութեան մէջ եւ շուտով հասնում զօրավարի աստիճանի, դառնում ռազմավարութեան իսկական տաղանդ. նա բերեց 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի յաղթանակը Ռուսաստանի համար՝ Կարսի ու Էրզրումի պատերի տակ:

Լորիս Մելիքովը ծնուել է Հայաստանում, հայ ընտանիքում, անցեալ դարի 20-ական թուականներին եւ ծառայել է ռուսական բանակում: Ռուսաստանը վերջին հարիւր տարուայ ընթացքում չի ծնել մի այլ անհատականութիւն, որ գերազանցէր նրան թէ՛ որպէս զինուոր-

ական եւ թէ՛ որպէս քաղաքական գործիչ: Նա էր հրամանատարը ռուսական այն բանակի, որտեղ ծառայում էր Լազարեւը, որ պարտութեան մատնեց թուրքական բանակին 1878 թ. եւ որպէս զօրավար ցուցաբերած իր տաղանդի եւ իմ բարեկամ Մուխթար փաշային պարտութեան մատնելու համար նրան շնորհուեց գնդապետ լինելու աստիճան: Նա մեծատաղանդ էր որքան ռազմական, նոյնքան եւ քաղաքացիական հարցերում:

Խրիմեանը ծնուել է Հայաստանում, առեւտրականի ընտանիքում: Լինքոլնի նման նա էլ բարձրացել է իր ժողովրդի ամենահասարակ խաւից ամենաբարձր պատուի՝ արժանանալով իր ժողովրդի հիացմունքին եւ սիրուն, իր անձնական ջանքերի եւ զոհողութեան շնորհիւ: Նա եղաւ առաջինը, որ 1865 թ. տպագրական մեքենայ բերեց Հայաստան, դարձաւ ուսուցիչ, հեղինակ, բանաստեղծ, առաջնորդ եւ քաղաքական գործիչ: Համընդհանուր գովք ու գովասանքի պայմաններում նա ճանաչուեց իր ժողովրդի Մեծ Հայրը: Նա դուրս եկաւ խաւարից՝ առաջնորդելու իր ժողովրդին, իր բաժին ընկած լուծման ներդնելու քրիստոնէական քաղաքակրթութեան մէջ: Պեռլինի Գոնկրէսի պայմանագրում նա ձեռք բերեց մի համաձայնութիւն, որով ապահովուում էին հայերի իրաւունքները Եւրոպայի մեծ տէրութիւնների կողմից. եւ թուրքիան համաձայնեց: Այդ օրուանից հայերին հասած բոլոր դժբախտութիւնների պատճառը եղաւ այն, որ աշխարհի քաղաքակիրթ ազգերը մոռցան իրենց ստորագրութիւնները, չպարտադրեցին թուրքիային յարգելու պայմանագրի պարտաւորութիւնները, հայերի հետ վերաբերուելու աւելի մարդավայել, որ եթէ հայ մարդը ձեռք է բերել ունեցուածք, կարողանայ տէր կանգնել, եթէ կին ունի, կարողանայ պահել: Նա ձգտում էր իր երկրի, իր հնագոյն ազգի, իր քրիստոնէայ ժողովրդի՝ բոլոր ժամանակներում ամէնից շատ ճնշուած, ոտնակոխ եղած ժողովրդի համար ձեռք բերել օրէնք, կարգ ու կանոն, անվտանգութիւն եւ ապահովութիւն, կրթութիւն եւ ազատութիւն, որ ամէն մի ամերիկացի վայելում է: Նա իսկապէս հաւատում էր, որ կեանքի, ազատութեան եւ երջանկութեան հետամուտ լինելը ամէն մի հայի իրաւունքն է: (էջ 23-26):

... 2 միլիոնիա քաղաքում ծնուած Նուպար Փաշան՝ թուրքական կայսրութեան վերջին տարիների մեծագոյն քաղաքագէտն էր: Նա իր քաղաքական կենսագրութիւնը սկսել էր 40 տարեկանում Մոհամէտ Ալիի պալատում, որպէս քարտուղար, ապա նրա յաջորդի եւ խորթ որդու իշխանութեան տարիներին: Նուպար Փաշան վերջինիս, այն է՝ Իբրահիմ փաշային անուանում էր «ռազմական մեծատաղանդ բարբարոս»: Նուպար Փաշան Իբրահիմ փաշայի օրօք մի քանի անգամ բարձրացել էր վարչապետական աթոռին, եղել Եգիպտոսի բոլոր իշխողների ամե-

նահաւատարիմ խորհրդականը: Այժմ նա կոչուած է հանգստի եւ ապրում է հարուստ կեանքով: Նա Գահիրէի բարձր խաւի սեղանների եւ հիւրասիրութիւնների անպակաս ու հետաքրքիր մարդն է: (էջ 8):

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՄԵԾ ԲԱՌԵԿԱՍ ՎՈՒՏՈՐ ՈՒԽԼԱԸՆԻ ԱՆՍԱՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

2006 թ. Դեկտեմբերին լրանում է հայ ժողովուրդի մեծ բարեկամ Վուտրո (Թոմաս) Ուիլսոնի (1856-1924) ծննդեան 150-ամեակը:

Նա եղել է Ամերիկայի Միացեալ Նահանգների 28-րդ նախագահը (1913-1921 թթ.) դեմոկրատական կուսակցութիւնից:

Վուտրո Ուիլսոնը մարդասիրական վեհ գաղափարներով օտուած, բարի, ազնիւ եւ արդարամիտ մի անձնաւորութիւն էր: Իր նախագահական պաշտօնավարութեան տարիներին մեծ դեր է խաղացել 1914-1918 թթ. Առաջին Համաշխարհային Պատերազմի դադարեցման եւ աշխարհում խաղաղութիւնը հաստատելու խիստ կարեւոր գործում: Փարիզի (1919-1920) խաղաղութեան խորհրդաժողովում եղել է աւագ քաղաքական գործիչ, իսկ այնուհետեւ Ազգերի լիկայի հիմնադիրը: Արժանացել է Նոպելեան խաղաղութեան Մրցանակին:

Համառօտակի անդրադառնալով կենսագրութեանը նշենք, որ Վուտրո Ուիլսոնը ծնուել է Վիրժինիա նահանգի Սթոնթըն քաղաքում 1856 թ. Դեկտեմբերի 28-ին, հոգեւորականի ընտանիքում: Նրա հայրը՝ Ժոզէֆ Ռակկըլս Ուիլսոնը մեծ դեր է խաղացել իր որդու կրթութեան եւ դաստիարակութեան խնդրում: Վուտրո Ուիլսոնը դպրոց յաճախելով հանդերձ, հօրից ժառանգել է մարդասիրութիւն եւ նրանից ստացել շատ կարեւոր գիտելիքներ: Ուսանել է Հիւսթոնային Գարովիա նահանգի Դաւիթսոնի անուան գոլէճում, այնուհետեւ ուսումը շարունակել է Նիւ Ճրքլիի Գոլէճում (1875 թ.): Համալսարանական ուսումնառութեան ընթացքում ձեռք է բերել իրաւաբանութեան եւ փիլիսոփայութեան մասնագիտութիւնները:

1886 թ. Ճոն Հոփինկսի համալսարանից ստացել է փիլիսոփայութեան դոկտորայի աստիճան: Մօտ 12 տարի (1890-1902) դասախօսել է Փրինսթոնի համալսարանում:

Ինչպէս նշեցինք, Վ. Ուիլսոնը եղել է Դեմոկրատական կուսակցութեան անդամ եւ եռանդուն մասնակցել է նաեւ ԱՄՆ-ի քաղաքական կեանքին: 1911-1913 թթ. եղել է Նիւ Ճրքլիի նահանգապետը:


Բնականաբար, Վ. Ուիլսոնը մանրամասն տեղեակ էր Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում հայ ժողովուրդի նկատմամբ երիտթուրքական կուսակցութեան եւ կառավարութեան գործադրած հայաջինջ քաղաքականութեանը ամբողջ Օսմանեան կայսրութիւնում:

Այնպէս որ հայ ժողովուրդին օգնելու, հայկական հարցի դրական լուծման եւ անկախ հայկական մի պետութիւն ստեղծելու կողմնակից լինելով դեռեւս նախքան պատերազմի աւարտը ձգտում էր, որ ԱՄՆ-ը ստանձնէր Հայաստանի մանտաղը (խնամակալութիւնը):

Գալիֆորնիայի UCLA համալսարանի «Հայ ժողովուրդի Արդի Պատմութեան Ամպիոնի» վարիչ՝ գիտնական Փրոֆ. Ռիչրտ Յովհաննէսեանը «Հայաստանի Հանրապետութիւն» (The Republic of Armenia) խորագրով անգլերէն (1971-1996 թթ.) հրատարակած քառահատոր բարձրարժէք աշխատութեան համապատասխան մասերում մանրամասն անդրադարձել է Վ. Ուիլսոնի հայանպաստ գործունէութեանը:

2005 թ. Երեւանում հայերէն թարգմանուած եւ հրատարակուած Փրոֆ. Ռիչրտ Յովհաննէսեանի աշխատութեան առաջին հատորից բերում ենք մի նմուշ, ուր նախագահ Վուտրո Ուիլսոնը 1919 թ. Փետրուարի 28-ին Դեմոկրատական կուսակցութեան ազգային վարիչ մարմնի անդամների հետ հանդիպման ընթացքում յայտնել է հետեւեալ անկեղծ ցանկութիւնը. «Այժմ, ինչ կ'ուզենայի առաջարկել, հետեւեալն է. անձամբ եւ միայն այս սենեակի շրջանակներում, ես կարող եմ բացայայտ ասել այն, ինչը, կարծում եմ, պէտք է անենք: Ես կարծում եմ, որ շատ խոստումնալից սկիզբ կայ Հայաստանի նման երկրների վերաբերմամբ: Ամերիկայի ամբողջ սիրտը տողորուած է Հայաստանով: Նա աւելի շատ գիտի Հայաստանի եւ նրա տառապանքների մասին, քան որեւէ ուրիշ եւրոպական տարածաշրջանի, մենք գոլէճներ ունենք այնտեղ, մենք միսիոնարական մեծ ձեռնարկումներ ունենք այնտեղ, ինչպէս ունենք Ռուսերտ Գոլէճը՝ Կոստանդնուպոլսում: Դա աշխարհի մի մասն է, որտեղ ամերիկեան ազդեցութիւնը արդէն տարածուած է, մի փրկարար ազդեցութիւն, կոթող եւ բարձրացնող ազդեցութիւն...: Ես յոյս ունեմ, որ Միացեալ Նահանգների ժողովուրդը ընդունելի կը համարի ընդառաջել եւ դառնալ հայ ժողովուրդի շահերի խնամատարը, եւ անտանելի թուրքին ու գրեթէ նոյնչափ անգիջում քրտին, որոնք բաւական երկար ժամանակ նստած են եղել նրա վզին, վարուելակերպ ու քաղաքավարութիւն կը սորվեցնի եւ ժամանակ կը տայ Հայաստանի աշխատասէր ու եռանդուն ժողովուրդին՝ զարգացնելու իր երկիրը, որն ի բնէ ունի հարուստ հնարաւորութիւններ»:

«Ուիլսոնը խնդրեց վարիչ մարմնի բոլոր անդամներէն՝ հրապարակայնօրէն պաշտպանել ամերիկեան մանդատը Հայաստանի եւ Կոստանդնուպոլիս-Նեղուցներ տարածաշրջանում» (էջ 346):



Նախագահ Վուտրո Ուիլսոն

Հարկ է նշել, որ Հայաստանի խնամակալութեան ծրագրի բարի-
յաջող զարգացման համար, դեռևս 1918 թ. պատերազմի ավարտից 8
ամիս առաջ, Փետրուար 7-ին, բազմաչարչար հայ ժողովրդին օգնելու
միտումով ԱՄՆ-ի Ներկայացուցիչների Պալատում, Վուտրո Ուիլսոնի
նախաձեռնութեամբ օրակարգի հարց դարձաւ «Հայկական հարցը»:
Զեկուցողն էր Քանգաս նահանգից գնդապետ-լէյտենանտ էդուարդ Ս-
Լիտլը: (Այս զեկուցումը առաջին անգամ հայերէն թարգմանելով հրա-
տարակել է դոցենտ Գուրգէն Սարգսեանը. (տես էդուարդ Ս. Լիտլ
«Հայկական հարցը» Երեւան, 2003):

Հայաստանի խնամակալութիւնը ընդունելու Վ. Ուիլսոնի ազնիւ
նպատակի համար, նոյնիսկ 1919 թ. Մարտի 20-ին ԱՄՆ-ի կառավարութեան
որոշումով, Մերձաւոր Արեւելքի եւ յատկապէս Հայաստանի իրադրութիւնը
ուսումնասիրելու համար յատուկ զինուորական յանձնախումբ ուղարկուեց
ամերիկեան բանակի զօրավար՝ Ճէյմս Հարպորտի ղեխաւորութեամբ:

Պատերազմի ավարտից յետոյ, Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ
սահմանների որոշման հարցը 1920 թ. Ապրիլի 19-26-ը Իտալիայի Սան
Ռեմօ քաղաքում տեղի ունեցած միջազգային խորհրդաժողովի առա-
ջարկով ստանձնեց Վուտրո Ուիլսոնը:

Յայտնի է, որ 1920 թ. Օգոստոսի 10-ին ստորագրուեց Սելրի
(Փարիզի մօտ) պայմանագիրը: Պայմանագրի 88-րդից մինչեւ 93-րդ յօդ-
ուածները վերաբերում էին Հայաստանին: Թուրքիան 89-րդ յօդուածով
պարտաւորուում է ճանաչել Միացեալ Հայաստանի անկախութիւնը:
Այնուհետեւ 1920 թ. Նոյեմբերի 22-ին Վուտրո Ուիլսոնը մեծ տէրու-
թիւններին ներկայացրեց Արեւմտեան Հայաստանի սահմանագիծը
(90,000 քառ. քմ.), որով Արեւելեան Հայաստանի հետ Միացեալ Հայաս-
տանն ունենալու էր մօտ 162 հազար քառ. քմ. տարածք: Միեւնոյն
ժամանակ Սելրի դաշնագրի 351 եւ 352 յօդուածներով Հայաստանին
իրաւունք էր տրուելու Պաթմաի եւ Տրապիզոնի նաւահանգիստների
վրայով ազատ մուտք գործել դէպի Սեւ Մով:

Դժբախտաբար ԱՄՆ-ի Գոնկրէսում Պատմական Հայաստանի
խնամակալութիւնը ստանձնելու նախաձեռնութիւնը յաջողութիւն չու-
նեցաւ, որը եւ բացասաբար ազդեց 1920 թ. Սելրի դաշնագրի վաւերացմանը:

Գոյութիւն ունեցող քաղաքական տարածայնութիւնների եւ մի
չարք եւրոպական պետութիւնների անբարեացակամ դիրքորոշման
հետեւանքով, այն չվաւերացուեց եւ մնաց թղթի վրայ:

Անցած 91 տարիների ընթացքում Հայոց Ցեղասպանութեան դա-
տապարտման եւ ճանաչման գործընթացում արձանագրուել են զգալի
յաջողութիւններ: Աշխարհի 20 պետութիւնների խորհրդարանները ճա-

նաչել եւ դատապարտել են Հայոց Յեղասպանութիւնը: Այն ճանաչել եւ դատապարտել են նաեւ ԱՄՆ-ի 39 նահանգների խորհուրդները:

Կարծում ենք, որ 2006 թ. Նոյեմբերի 7-ին տեղի ունեցած ԱՄՆ-ի Գոնկրէսի նորընտիր ղեկավարութիւնը նոր Հնարաւորութիւններ կ'ունենայ Հայոց Յեղասպանութեան բանաձեւի դրական եւ վերջնական ընդունման խնդրում:

Այդպիսով իրականութիւն կը դառնան Ուիլսոնեան արդարամիտ եւ մարդասիրական վեհ գաղափարները հայկական հարցի լուծման խնդրում: Կը վաւերացուի եւ կեանքի կը կոչուի 1920 թ. Օգոստոսի 10-ի Սեւրի դաշնագրի արդար որոշումները Պատմական Հայաստանի տարածքի նկատմամբ:

Այս օրերին հայ ժողովուրդը Հայաստանում եւ սփիւռքում խորը երախտագիտութեամբ իր յարգանքի տուրքն է մատուցում Վուտրո Ուիլսոնի անմար յիշատակին, ինչպէս նաեւ նրա աւանդած մարդասիրական վեհ գաղափարներին:

Գոհունակութեամբ պիտի նշենք նաեւ, որ Երեւանում տեղի ունեցան մի շարք ձեռնարկներ Վուտրո Ուիլսոնի ծննդեան 150-ամեակի կապակցութեամբ: Եղան առաջարկներ, որպէսզի Երեւանի դպրոցներից եւ փողոցներից մէկը անունանկոչուի Վուտրո Ուիլսոնի անունով եւ տեղադրուի նրա արձանը, Հայաստանի ամերիկեան համալսարանը կոչուի նրա անունով, միեւնոյն ժամանակ հրատարակուեն գրքեր եւ յօդուածներ նուիրուած Վուտրո Ուիլսոնի յիշատակին եւ սպազորուեն յատուկ նամականիշներ:

ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՕՏԱՐԱԶԳԻ ԱԿԱՆԱՏԵՄՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Հայոց Յեղասպանութեան 90-ամեայ տարելիցին նուիրուած յօդուածաշարքում մենք բերեցինք օտար գործիցների վկայութիւններէրց առանձին հատուածներ, որոնք լիովին հաստատում են Ապտուլ համիտեան բռնատիրութեան շրջանի կոտորածներն ու երիտթուրքերի գործադրած 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը հայ ժողովրդի նկատմամբ: Բնականաբար այդ գործիչների թիւը շատ է ու շատ եւ հնարաւոր չէ մէկ առ մէկ կանգ առնել այդ բոլորի վրայ: Ուստի նպատակայարմար գտանք բերել նաեւ Մեծ Եղեռնի ողբերգութեան անմիջական ականատես օտար գործիչների վկայութիւններից առանձին քաղուածքներ, որոնք նոյնպէս ամբողջական պատկերացում են տալիս Հայոց Յեղասպանութեան մասին:

*
* *

Օ. Կայդանովա,- Ռուս ականատեսի նամակից,- 1896 թ. Օգոստոս 14 եւ 15-ին մենք կանգնած էինք Կ. Պոլսի նաւահանգիստում: Մենք ականատես եղանք թուրքերի կողմից կատարուող հայերի կոտորածներին: Այդ ահաւոր տեսարանները այսօր էլ աչքիս առաջ են: Հագիւ թէ հաւատաս այն բանի, որ դա իրապէս տեղի է ունեցել իրականում եւ ոչ թէ մենք այդ սարսափները տեսել ենք երազում (Եղբայրական օգնութիւն թուրքիայում տուժած հայերին, Մոսկուա, 1897, էջ 75, ռուսերէն):

Ա. Ադոսիդես,- Ֆրանսահայտակ յոյն լրագրող,- Ատանա քաղաքում հրոյ ճարակ են դարձել 1190 տուն, 6 եկեղեցի եւ ամբողջ հայկական շուկան: Մենք տեսանք, որ Տարսոնում հրկիզել էին 800 տուն, Հասանպէյիկում՝ 416, Բախչէում՝ 115, Լապագլիում՝ 120, Ինջիրլիքում՝ 145, Օսմանիէյում՝ 200 տուն: Տեսանք, որ շատ աւաններում, գիւղերում եւ քաղաքներում ոչ մի անվնաս տուն չէր մնացել: Հենց միայն ձեպել Պէրէքէթի մարզում այրուել-մոխրացել էին 915 բնակելի տուն, 6 եկեղեցի, 12 դպրոց, չհաշուած կրպակներն ու խանութները (A Adossides, Armeniens et jeunes Turcs, Les Massacres de Cilicie, Paris, 1910, p. 115-116):

Մուհամմէտ Ալի Ճամալզատէ,- Պարսիկ գրող, նովելիստ,- Ես ականատես եղայ մի շարք դաժանաբարոյ տանջանքների ու խոշտանգումների, որոնք գործադրում էին թուրք զինուորները հայերի գլխին Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին եւ որի հետեւանքը, ինչպէս գիտենք, եղաւ միլիոնաւոր հայերի ջարդը...: Հարիւրաւոր հայ սղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք արդէն անզօր էին սղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք արդէն անզօր էին քայլելու, մտրակի եւ գէնքի ուժով հետիոտն ու անզօր, անխնայ քշում էին առաջ: Տղամարդկանց մէջ երիտասարդներ չկային: Նրանց ուղարկել էին ռազմաճակատ կամ կասկածելով, որ կարող են միանալ ռուսական բանակին, կոտորել էին: Ես գարհուրելի օրեր անցկացրի, օրեր, որոնք հարելի մղձաւանջի պէս ծանրացել են հոգուս վրայ: Մղձաւանջ, որ երբեմն տարբեր առիթներով ճնշում է ողջ էութիւնս, անհանգստացնում ու տանջում է ինձ (Պատմա-Բանասիրական հանդէս, Նոյեմբեր 2, 1987, Երեւան, էջ 232-233):

Ըկասթա Բերնո,- Նիւ Եորքի «Vacuum Oil» ընկերութեան ներկայացուցիչ. 1915-1916 թթ. Թուրքիայում ականատես է եղել ամբողջ Եփրատ գետի երկայնքով տեղահանուած հայերի ողբերգական վիճակին,- Եփրատ գետի երկայնքով տեղահանուած հայերի ողբերգական վիճակին,- Կառավարութիւնը, որը յանձնարարել էր տեղափոխել այս ժողովրդին անապատի միջով, բոլորովին մտադրութիւն չունէր կերակրելու նրանց, անապատի միջով, բոլորովին մտադրութիւն չունէր կերակրելու նրանց, անապատի միջով, բոլորովին մտադրութեան ծրագրով նրանք պէտք է նոյնիսկ ակնյայտ էր, որ կառավարութեան ծրագրով նրանք պէտք է մահանային սովից...: Այս բոլորը, որ ես տեսայ ու լսեցի վեր էր ամէն

երևակայութիւնից: Որպէս Տանթէի դժոխքի ճամբարի մուտքի վրայ՝ «Դու, որ մտար այստեղ, մոռացիր բոլոր յոյսերդ»: Հատուածը բերուած է 1916 թ. Սեպտեմբեր 21-ին Հալէպում ԱՄՆ-ի հիւրընկալման ճ.Բ. Ճեքսոնի ուղղուած գեղուցագրից: Տէս (Stanley E. Kerr, The Lions of Marash, New York, 1973, էջ. 273):

Ֆայէզ էլ Ղոսէյն,- Արաբ փաստաբան,- Ուրֆայից մեկնելուց յետոյ հանդիպեցինք ցնցոտիների մէջ կորած, սովից ու հիւծուածութիւնից մեռնող կանանց խմբերի, տեսանք ճանապարհի եզրերին ընկած բազմաթիւ դիակներ: Մենք դադար առանք Ղարա Ջուրն գիւղին մօտիկ մի վայրում՝ Ուրֆայից վեց ժամուայ հեռավորութեան վրայ: Ես փոքրինչ հեռացայ աղբուրի կողմը եւ այստեղ մի սարսափելի ու նողկալի տեսարան բացուեց աչքերիս առջեւ. գետնին պառկած էր մի կիսամերկ կին՝ կապկպուած արնաթաթախ շապիկով, կրծքից չորս փամփուշտով գնդակահար եղած: Ես այնպէս էի ցնցուած այդ տեսարանից, որ սկսեցի հեկեկալ: Երբ գրպանիցս հանում էի թաշկինակը, որ արցունքներս սրբեմ եւ շրջուեցի, որ համոզուեմ թէ ուղեկիցներից ոչ ոք չի նկատել դա, տեսայ մօտաւորապէս ութ տարեկան մի տղայի՝ կացնով փեղկուած գանգով: Այդ տեսարանը էլ աւելի ուժեղացրեց ցաւս...: Մենք շարունակեցինք մեր ճամբան դէպի Ղարա Ջուրն: Մեր կառապանը, որն ազգութեամբ թուրք էր, ցոյց տուեց քարերի մի կոյտ հեռուում՝ մի բլրի մօտ եւ բացատրեց, որ այդ տեղում էին սպաննուել Ջօհրապն ու Վարդգէսը՝ երկու նշանաւոր հայ երեսփոխանները: (Faiez el Ghocein, Temoignage d'un Arab musulman sur L'innocence et le massacre des Armeniens. Trad. De L'arabe par A. El, - G (Bombey), 1917, էջ 20-22. Հատուածը քաղուած է «Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» գրքից, Մ.Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1991, էջ 484):

Ուրիւրմ ճեկս,- Անգլիացի միսիոնար,- Ես ականատես եղայ մի ամբողջ ժողովրդի ոչնչացման եւ այն մասին, որ ես գրում եմ հիմա, հանդիսանում է մի փոքր ամփոփագիր, մի պարզ ընդհանրացած նկարագրութիւն, տեղի ունեցած դէպքերի մասին, որը չի կարող պատկերացում տալ իմ ամբողջ հազարապտիկ տեսածների եւ ապրումների մասին (Հայկական լրատու, Մոսկուա, 1916, թիւ 3, էջ 7, ռուսերէն):

Ռոսլեր,- Հայէպի գերմանական հիւպատոս,- Այն իրողութիւնը, թէ Եփրատ գետի ջուրերուն վրայ ծփացող դիակները զոյգ-զոյգ կապուած են իրարու, կը բացայայտէ, որ հայերը չկանխամտածուած բնաջնջումի զոհերը չեն, այլ՝ իշխանութիւններուն կողմէ բժախնդրօրէն կազմակերպուած սպանդի մը զոհերը: Կ'ըսուի, թէ եւ շատ հաւանաբար

այս է իրականութիւնը - դիակները թուրք զինուորներուն կողմէ գետը նետուած են Ատեամանի մօտ: (Տէս «Բագին» ամսագիր, Հոկտեմբեր-Դեկտեմբեր 1995, Պէյրութ, էջ 27, «երբ օտար դիւանագէտները կը վկայեն»):

Հէնրի Հարրիսոն Ռիգս,- Խարբերողի ամերիկեան «Եփրատ» գոյէճի նախագահ, ակնատես,- Տարբեր աղբուրներից մենք տեղեկացանք, որ արքայականները կոտորածի են կնթարկուում Խարբերողի հարաւ արեւելեան ճանապարհի ամբողջ երկայնքով: Եւ այս հաղորդման ճշմարտութիւնը ստուգելու եւ իրենց աչքերով տեսնելու համար նշանակուեցին երկու ամերիկացիներ՝ հետեւելու արքայականների թափօրին...:

Այս երկու ամերիկացիները, որոնք ձիերով հետեւել էին թափօրին ասացին ինձ, որ նրանք տեսլ էին ոչ պակաս քան 10,000 մարդկային անթաղ դիակներ: Նրանք նկատել էին նաեւ, որ մէկ կամ երկու վայրերում փորձեր են եղել դիակների կոյտերը վարելու, որպէսզի վերացուի տուեալ շրջանի մթնոլորտի անտանելի ապականումը...: (Հատուածը քաղուած է «Ողբերգական օրեր Հայաստանում» գրքից: Days of Tragedy in Armenia):

Հեղվիզ Բիւլ,- Հայ գաղթականներին եւ որբերին հովանաւորող էսթոնացի գթութեան քոյր,- Ծրագիրը դժոխային էր ու մարդկային բառեր անկարող են նկարագրելու այն խոշտանգումներն ու խժոժութիւնները, որոնք ի գործ դրուեցան: Հայ ժողովուրդը ինքնապաշտպանութեան բոլոր միջոցներէ մերկացնելով եւ անոնց բոլոր առաջնորդները արգելափակելով՝ յանձնեցին զանոնք թուրք բարբարոս խուժանին եւ գազանաբարոյ ուժերուն...: Արեան գետեր հոսեցան եւ միլիոնէ աւելի հայեր ապրեցան ու մեռան իբր հաւատարիմ հետեւորդներ Քրիստոսի (Նուրիցա Վարժուհի Լեւոնեան, Օր. Հեղվիզ Բիւլ, Հալէպ, 1957, էջ 35):

Մարտին Նիպագէ,- Գերմանացի ուսուցիչ, ականատես,- Տեղահանութեան նպատակը ամբողջ հայ ժողովուրդին գլխովին ոչնչացնելն է: Այդ մտադրութիւնը բացայայտ երեւում է այն փաստից, որ կառավարութիւնը կանոնաւոր կերպով հակազդում էր այն միսիոնարներին, գթութեան քոյրերին եւ այլ եւրոպացիներին, որոնք գտնուելով երկրում ձգտում են օգնել հայերին (Quelques documents sur le sors des Armeniens en 1915. Fascicul III, Geneva, 1916, p. 161):

Կարրի Շթիւրմեր,- Գերմանացի լրագրող, 1915-1916 թթ. Կ. Պոլսում «Քյոլնիայը Յայտունկ» թերթի թղթակից,- Թող յայտնի լինի, որ այդպիսի հնարամիտ գազանութեամբ մէկուկէս միլիոն մարդկանց ոչնչացումը, այն էլ բարձր մշակոյթով ամբողջ մի ժողովրդի, համընկաւ

Թուրքիայի վրայ Գերմանիայի ունեցած ամենաազդեցիկ մի ժամանակաշրջանում (H. stuermer, Zwei Kriegsjahre in Konstantinopel, Skizzen deutsch-turkischer Moral und politik, Lausanne, 1917, s. 14):

Ատա Զեմբերս,- Պարտիզակի ամերիկեան դպրոցի ուսուցչուհի, ականատես,- Թուրքիայի գոյութիւնը ապահովելու պատրուակով կառավարող խմբակը ձեռնամուխ եղաւ հայերի ազգային անարգմանն ու հալածանքներին: Պատերազմը դրա համար միայն հնարաւորութիւն էր եւ ոչ թէ պատճառ: Նա մերկացրեց թուրքական կառավարութեան խորագոյն գաղտնիքները (Ada Piers Chambers. In an Anatolian valley, New York, 1955, p. 221):

Գ. Սըրրոզն,- Դիւանագէտ, ականատես,- Գիւղերում կոտորածները սկսեցին Վանի իրադարձութիւններից շատ առաջ: Այդ կոտորածների թիւը հասնում է մինչեւ 16,000 մարդու: Թէեւ հայ գիւղացին գինուած էր, բայց պաշտպանուելու փոխարէն իր գէնքը յանձնեց իշխանութիւններին եւ դրանով կործանեց իրեն: Բոլոր այդ ջարդերը կատարուեցին անախաղէպ դաժանութեամբ: Պատուում էին երեխաների փորերը, մերկացնում կանանց եւ աղջիկներին եւ այդպէս քշում դէպի լեռները՝ վայրի գազանների նման (Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, խմբագրութեամբ Մ.Գ. Ներսիսեանի, Երեւան, 1982, էջ 285, ռուսերէն):

Քարէն Եփիէ,- Դանիացի միսիոնարուհի, ականատես,- Իմ կողքին մահուան ճիրաններում թպրտում էր իր պատմութեամբ, մշակոյթով, լեզուով հարուստ քրիստոնեայ մի ժողովուրդ: Մահուան դուռ էր հասել ոչ միայն դրսի ու ներսի իր թշնամիներից, այլեւ քրիստոնեայ իր բարեկամների խաբէութիւններից (Ս. Հայաստան, 1985, Նոյեմբեր 4, էջ 13):

Մարիա Եակոբսոն,- Դանիացի բուժքոյր, 1907-1915 թթ. Խարբերդում ականատես,- Ես չեմ կարող բառեր գտնել նկարագրելու համար այս ժողովրդի ցաւերն ու տառապանքները, հալածանքներն ու սարսափը: Ինչպիսի երկիր, ինչ ժողովուրդ եւ ինչ դժբախտութիւն («Լրաբեր», Հոկտեմբեր 13, 1984):

Ալմա Յոհանսոն,- Շվեդացի միսիոնարուհի, ականատես,- Դեռ մինչեւ օրս անկարելի է ըմբռնել, թէ մի ամբողջ ժողովրդի դէմ թուրքերի կողմից ձեռնարկուած բնաջնջման մեծածաւալ «պատերազմը» տեղի ունեցաւ առանց բողոքի՝ բոլոր քաղաքակիրթ երկրների աչքերի առջեւ («Հայաստանի Աշխատաւորութիւն», 1989, Նոյեմբեր 3, էջ 18):

Վերջաբանի Փոխարէն

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՃԱՆԱԶՈՒՄՆ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ
ՇԱՐՈՒՆԿԱՌԻՄ Է

2007 թուականի Ապրիլի 24-ին աշխարհն ականատես եղաւ Հայոց Մեծ եղեռնի 92-ամեայ տարելիցի ոգեկոչումներին:

Աշխարհի ժողովուրդները կրկին անգամ միահամուռ դատապարտեցին 20-րդ դարի հայոց առաջին ցեղասպանութիւնը, որպէսզի այլեւս չկրկնուեն նման ծանրագոյն ողբերգութիւններ:

Այո՛, 92 մղձաւանջային տարիներ անցան այդ ահաւոր եղեռնային օրերից, երբ երիտթուրքերի կառավարութեան կիրառած ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով, արեւմտահայութիւնը կանգնեց ի սպառ ոչնչացման վտանգի առջեւ:

1914-1918 թթ. Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում երիտթուրքական «Իթիհատ վէ թերաքքի» (Միութիւն եւ Առաջադիմութիւն) կուսակցութեան կողմից դաժանօրէն ծրագրուած եւ կազմակերպուած զանգուածային ջարդերին զոհ գնացին աւելի քան մէկ ու կէս միլիոն անմեղ հայեր:

Անցած 92 տարիների ընթացքում, չնայած թուրք պատմագրութիւնը չարամտօրէն ազաւաղեց ու նենգափոխեց իրականութիւնը եւ այսօր էլ չարունակում է նոյնը կատարուել թէ՛ պատմաբանների եւ թէ՛ պետական գործիչների կողմից, այնուհանդերձ, հայ ժողովրդի եւ աշխարհի առաջադէմ, արդարամիտ պետական գործիչների, պատմաբանների, գիտնականների, հրապարակախօսների անխոնջ պայքարով հայոց Յեղասպանութեան դատապարտման եւ ճանաչման գործընթացում արձանագրուեցին զգալի յաջողութիւններ:

Սոյն հատորը տպագրութեան յանձնելու նախօրէին Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման գործընթացում եղան հետեւեալ կարեւոր միջոցառումները: ԱՄՆ-ի մի շարք նահանգների խորհուրդները, այդ թւում եւ Գալիֆորնիան կրկին անգամ վերահաստատեցին իրենց զօրակցութիւնը հայոց Յեղասպանութեան ճանաչման գործընթացում:

Ընթացքի մէջ է ԱՄՆ-ի քոնկրէսի ներկայացուցիչների պալատին յղուած Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերող թիւ 106-րդ բանաձեւը: Այն նախ պիտի լսուի ներկայացուցիչների Տան Արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նիստում եւ այնտեղ վաւերացուելուց յետոյ դրուելու է ներկայացուցիչների Տան լիազուածար նիստի քննարկման եւ վաւերացման:

2006 թ. Դեկտեմբերին «Early day Motion 357» անուն տակ Մեծ Բրիտանիայի խորհրդարան էր ներկայացուել նաև Հայոց Ցեղասպանության ճանաչման բանաձևը: Նշենք, որ խորհրդարանի 100 անդամներ իրենց ստորագրություններով համաձայնուել են ճանաչելու Հայոց Ցեղասպանությունը: Հարկ եմ համարում նշել նաև, որ թէ՛ Ֆրանսիայի խորհրդարանում եւ թէ՛ Եւրոխորհրդարանում քննարկման մէջ են Հայոց Ցեղասպանության ուրացումը քրէական պատժի ենթարկելու բանաձևերը:

Ահա այսպիսի իրավիճակում էր գտնուում Հայոց Ցեղասպանության դատապարտման եւ ճանաչման գործընթացը:

Մեծ Եղեռնի 92-ամեայ տարելիցին, Հայաստանում եւ աշխարհի հայահոծ գաղութներում հայութիւնը մէկ բռունցք դարձած կրկին անգամ իր յարգանքի սուրբը մատուցեց մէկ ու կէս միլիոնից ավելի անմեղ զոհերի անմար յիշատակին:

Տեղի ունեցան սգոյ երեկոներ, հսկում-քայլարշաւներ, մոմավարություն, միեւնոյն ժամանակ զետեղուեցին հազարաւոր ծաղկեպսակներ Մեծ Եղեռնի յիշատակին կառուցուած յուշարձաններին:

Բողոքի ցոյցեր տեղի ունեցան թուրքական դեսպանատների եւ հիւպատոսարանների առաջ:

Բնականաբար, ձեռք բերած բոլոր յաջողութիւններով հանդերձ, պայքարը շարունակուում է եւ պիտի շարունակուի, մինչեւ որ Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչուի եւ դատապարտուի միջազգային հանրութեան եւ բոլոր պետութիւնների կողմից եւ արդար հատուցում ստանայ նրա հողային, արեան եւ նիւթական պահանջատիրութիւնը:

Միայն միասնական եւ սերտ համագործակցութեամբ պիտի հասնենք մեր սուրբ նպատակին:



Բովանդակութիւն

1. Առաջաբան	4
2. Հայերի կոտորածները Ապտուլ Յամիտի բռնատիրութեան շրջանում	7
3. Երիտթուրքերի կուսակցութեան հայաջինջ քաղաքականութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում	13

Մաս Առաջին
Մեծ Եղեռնի վերապրողների վկայութիւնները

4. Չայն տառապելոց	22
5. Կարապետ Գաբիկեան, Եղեռնապատում	30
6. Արիս Գալֆայեան, Չոմախլու	35
7. Գրիգոր Յ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն	39
8. 1915 Աղետ եւ վերածնունդ	44
9. Վերծինե Ավազեան, Հայոց Տեղասպանութեան ականատես վերապրողների վկայութիւններ	57
10. Տոնալտ Ի. Միլլեր եւ Լորնա Թուրեան-Միլլեր, Վերապրողներ, Հայոց Տեղասպանութեան բանաւոր պատմութիւն	63
11. «Պատմութիւն Անթեպի հայոց»	67
12. Տեր Ներսէս Աւագ Քահանայ Պապայեան «Էջեր իմ օրագրից»	74
13. Յուշամատեան Քիլիսի հայոց	76
14. Զորա Իսկէստերեան, Յուշեր պատմութեան համար	81
15. Կրկին «Յօշոտուած Հայաստան» փաստավաւերագրական գրքի մասին	92
16. Լիպարիտ Ազատեան, Հայ որբերը Մեծ Եղեռնի	96
17. «Ես երբեք չէի ցանկանայ նման որբանոցի հետ գործ ունենալ»	102
18. Ալետիա Փափագեան, ՌՎ Ե Թագուհի Մանուկեանը	107
19. Սարգիս Չուլճեան, Պատմութիւն Ատիամանի (ինքնակէսագրութիւն)	110
20. Սկրտիչ Էմինեանի յուշերը	115
21. Յակոբ Ս. Տեր Կարապետեանի եղեռնային յուշերը	125
22. Քեմալ Եալչըն, «Սիրտս հրճում է Քեզանով»	128
23. Ֆեթիհե Չեթին, Մեծ Մայրիկս	134
24. «Ակոս» շաբաթաթերթի խիզախ եւ անխոնջ խմբագիրը	139

Մաս Երկրորդ
Օտար Գործիչների վկայութիւնները Հայոց Տեղասպանութեան մասին

25. Վկայում է Գերմանացի սպայ Արմին Վեզները	147
26. Բոհտան Կեմպարսկու «Նամակ իմ վաղեմի թուրք ծանօթիս» գրութեան մասին	152
27. Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, կազմողներ՝ Սկրտիչ Ներսիսեան, Ռուբէն Սահակեան	165
28. Հայերի զանգուածային կոտորածները երիտթուրքերի կողմից (1909-1918 թթ.), հատուածներ Անտոյե Մանտելշտամի «Օսմանեան կայսրութեան ճակատագիրը» գրքից	169
29. Հրպարող Էտրմզ Կիպլըզը հայոց Տեղասպանութեան մասին	176
30. Լեւի Ղեպիս, «Սպանդի Նահանգը»	179
31. Հայնրիխ Ֆիրբիխեր, Հայաստան 1915	189
32. Յովհաննէս Լեփսիոսի փաստագրական վկայութիւնները	193
33. Մի հաղորդում Հայոց պատմամշակութային արժեքների ոչնչացման մասին	198
34. «Հայերի Տեղասպանութիւնը» կազմեց Ռիչըրտ Տիրան Քլոյեան	203


35. 1915 թ. Սեպտեմբերի 10-ին Հռոմի Պապ Պենտիկոնո XV-ը	205
դատապարտեց հայերի կոտորածները Օսմանեան կայսրութիւնում	208
36. Հանրի Պարպի, Սարսափի երկրին մէջ, Նահատակ Հայաստան	216
37. Առնոլդ ժոզէֆ Թոյլբի	218
38. Գրող, Հրապարակախօս Անատոլ Ֆրանս	
39. Ճափոնացի իրաագետ՝ փրոֆ. Հիրոյոսի Սեզավան	220
Հայոց Տեղասպանութեան մասին	230
40. Հայոց Տեղասպանութեան անհերքելի փաստաթղթեր	
41. Էդուարդ Ս. Լիտլի զեկուցումը «Հայկական հարցի» վերաբերեալ	235
ՎՄՆ-ի ներկայացուցիչների պալատում, 1918 թ. Փետրուարի 7-ին	242
42. Հայ ժողովրդի մեծ բարեկամ Վուրո Ուիլսոնի անմար յիշատակին	
43. Հայերի Տեղասպանութիւնը օտարազգի	246
ականատեսների վկայութիւններում	
44. Վերջաբանի փոխարէն, Հայոց Տեղասպանութեան	251
ճանաչումն ու դատապարտումը շարունակում է	

ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Քեաթիպ Չելեպիի «Ճիհան-Նիման» եւ «Ֆեզլեքէն», որպէս աղբիւր Հայաստանի Պատմութեան (17-րդ դար), Երեւան, 1973, ռուսերէն:
2. Վաւերագրական նիւթեր արեւմտահայերի մասին (ՀՀ ԳԱ հասարակական գիտութիւնների գիտական տեղեկատուութեան բաժին), Երեւան, 1983, No 2(56).
3. Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի, Երեւան, 1988, 1989: Երրորդ հրատարակութիւն, Լոս Անճելըս, 2005:
4. Հայերի Տեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, Լոս Անճելըս, 1996:
5. Թուրքական վաւերագրերը Հայաստանի եւ հայերի մասին (16-19-րդ դարեր), Երեւան, 1999:
6. Հայկական հարցը եւ Մեծ Եղեռնը 1876-2000, ժամանակագրութիւն, Երեւան, 2000:
7. Տեղասպանութիւն եւ գոյատեւման պայքար, Երեւան, 2000:
8. Հայերի ցեղասպանութիւնը թուրք քաղաքական գործիչների յուշագրութիւններում, Երեւան, 2001:
9. Թուրքական վաւերագրական նիւթեր՝ Օսմանեան կայսրութեան ոչ-մահմետական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.), Երեւան, 2002:
10. Պայքար յանուն արդարութեան, հատ. Ա., Երեւան, 2003:
11. Պայքար յանուն արդարութեան, հատ. Բ., Երեւան, 2004:

Ունի մօտ 300 յօդուածներ, լոյս տեսած Երեւանի ակադեմական պարբերականներում եւ Լոս Անճելըսի հայ մամուլում:

ՋԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ



Աւետիս Փափագեանը ծնունդ է 1931 թ. Սիրիայի Լաթաքիա քաղաքում: Սկզբնական կրթութիւնը ստացել է տեղի Ս. Յակոբեանց Ազգային երկսեռ վարժարանում եւ այնուհետեւ՝ Պէյրուֆի Ս. Նշան դպրոցում:

1946 թ. ընտանեօք հանդերձ ներգաղթել է Հայաստան եւ հաստատուել քաղաքամայր Երեւանում: Բարձրագոյն ուսումը ստացել է 1955-1960 թթ. Երեւանի Պետական համալսարանի Ռոմանօ-գերմանական բաժնում:

1961 թ. ընդունուել է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան իստիտուտի թուրքական բաժինը եւ բարեյաջող յանձնելով ասպիրանտուրայի քննութիւնները մեկնել է Մոսկուա, Միութենական Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան իստիտուտ, ուր 3 տարուայ ուսումնարութիւնից յետոյ պաշտպանել է գիտական աւարտաճարը՝ «Քեաթիբ Չելեպիի ճիհան կիման եւ Ֆեզլեքէն որպէս աղբիւր Հայաստանի պատմութեան» (17-րդ դար) խորագրով եւ ձեռք բերել միջնադարի Թուրքիայի պատմութեան աղբիւրագետ-պատմաբանի մասնագիտութիւնը: Այնուհետեւ 32 տարի շարունակաբար աշխատել է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան իստիտուտում: 1988-92 թթ. ղեկավարել է ինստիտուտի աղբիւրագիտական բաժինը:

1968-75 թթ. Երեւանի Պետական համալսարանի Արեւելագիտութեան բաժնում դասաւանդել է Թուրքիայի պատմութիւնն ու օսմաներէն լեզուն (արաբատառ թուրքերէն):

Իր հրատարակութիւնների մեծ մասը նուիրուած է Հայաստանի եւ Հայ ժողովրդի մասին միջնադարի թուրք պատմագիրների հաղորդած նիւթերի ուսումնասիրութեանը, ինչպէս նաեւ Հայոց Տեղասպանութեան հարցերին: Օսմաներէնի գիտակ աղբիւրագետ պատմաբանը 1983 թուականից սկսել է զբաղուել հայերի ցեղասպանութեան հարցերով:

Գիտական զեկուցումներով հանդէս է եկել միջազգային մի շարք գիտաժողովներում: ՓոռՖ. Աւետիս Փափագեանն այսօր էլ բուռն կերպով շարունակում է զբաղուել միջնադարի թուրքական աղբիւրների, արխիւային նիւթերի, ինչպէս նաեւ հայկական հարցին եւ Մեծ Եղեռնին վերաբերող նիւթերի ուսումնասիրութեամբ: